

ԷՋՄԻԱԾԻՆ



Գ.
2024




ՉԼ. ՏԼԻԻ

ԳԼՇՏՕՆԿԱՆ ԱՐԱՆԻՐ
ԱՐԵՆԵՅՆ ՀԼՅՈՑ ԿԼԹՈՂԻԿՈՍԻԹԵԼՆ
ՄԼՅՐ ԱԹՈՒԻՅ ՄԲԻՅ ԷԶՐԻԼՏԻ

Երբէկ

2024

II. ԷԶՐԻԼՏԻ




ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական


Գլխավոր խմբագիր՝ **Գեորգ Մադոյեան**

Լեզուատնական խմբագիր՝ **Նարէ Սարգսեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,
Տ. Չաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Գոհար Աւագեան,
Ազատ Բոզորեան,
Խաչիկ Րաֆֆի Գազեր
Վահէ Թորոսեան**





“Etchmiadzin”

Journal of Religious and Armenological Studies

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Gohar Avagyan,
Azat Bozoyan,
Hacik Rafi Gazer
Vahe Torosyan**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал


Редакционный состав

Главный редактор **Геворг Мадоян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекян,
Гоар Авакян,
Азат Бозоян,
Хачик Рафи Газер
Ваге Торосян**



ԻՐԵԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍԵՍԱՏՈՒՆԵԱՆԻՆ՝ ՍՊԱՍԵԼԻՍ

Նախապատերազմեան տարիներ էին: Դժուար, դժնի տարիներ: Ընդհանրապէս լինում են հանգիստ, խաղաղ տարիներ: Հաւանաբար ո՛չ: Ընդհակառակն. տարիները լինում են կամ նախա-, կամ յետ- կամ հէնց պատերազմեան: Յամենայնդէպս սառնամած փողոցում խաղացող երեխաներն այդպէս էին կարծում՝ Հռիփսիմէն, Արտակը, Յունօն, Արմէնն ու կրտսեր Սէյլանը, որ երբեք ու որեւէ մէկից չէին լսել, թէ խաղաղ, հանգիստ ժամանակներ են եղել: Իրենք Եղեռնից փրկուածների՝ արեւմտահայոց շառաւիղներ էին, կարնեցիների սերունդներ: Երեխաների մեծ պապերը Արեւմտեան Հայաստանում էին... հեռու, շատ հեռու, բարձր սարահարթին փռուած Կարին քաղաքում, որ կառուցել էր իրենց Կարաննի թագաւորը²: Նրանցից խլել էին իրենց պապենական քաղաքը, և հիմա երեխաներն ստիպուած էին խաղալ Կարնոյ պէս բարձրադիր ու սառնաշունչ՝ Ճերմակ³ քաղաքի փողոցներում... Մայիսմէկեան, կամ յարակից՝ Չկալովի: Մայիսմէկեան ու Չկալովի... Տարօրինակ, երկար բառեր, որ տեսքից իրենց լեզուով էին, բայց հասկանալ չէր լինում... Բացովի, փակովի, ծալովի, կախովի... Իրենց փողոցն էլ չկալովի էր: Միայն «ովի»-ն էին քիչ թէ շատ հասկանում, սակայն ի՛նչ ասել էր «չկալ»-ը... ամենեւին պարզ չէր: Կամ միւս անունը՝ Մայիսմէկեան: Դա ի՛նչ էր, կամ ո՞վ էր... Գուցէ փողոցի վաղուցուայ բնակի՛չ... այսինքն՝ մարդ: Այդ դէպքում նոր հարց էր առաջանում... տեսնես լա՛ւ մարդ է եղել: Երեխաները չգիտէին: Փողոցում

¹ Իրական դէմք, մոռացուած հերոս:

² Հայաստալի արքայ (Ք. ա. 1400–1375 թթ.):

³ Աւելի ուշ ստուգաբանութեամբ՝ Նոր քաղաք:

ապրող բոլորին գիտէին, ճանաչում էին, բայց այսպիսի ազգանուն չէր հանդիպել. անծանօթ ու անյայտ էր:

Չէ՛, անհնար է, որ բնակիչ լինէր, ու իրենք չճանաչէին: Գոնէ Հռիփ-սիմէն կիմանար, չէ որ բոլորին անգիր գիտէր՝ ով-ու՞մոնցէն է... Ասենք՝ մի տունը Ենգիբարեաններինն էր՝ քաղաքի ամենամեծ տոհմերից, հսկայական գերդաստան: Գիտէին Դեմիրճօղլեանների տունը, դիմացը՝ Մատոյեաններինը, հարևանութեամբ՝ Տէր-Յովհաննիսեաններինը, Մարանգօզեաններինը, յետոյ՝ Մեծատունեան գերդաստանինը: Աւելի ճիշտ՝ միակ Մեծատունեանինը. ի՞նչ գերդաստան: Միւս փողոցում Սարգսեաններն էին, Շիրինեանները և մի ուրիշ տոհմ, որ նահապետ Ակոբի գլխաւորութեամբ Պանդրենց էին կոչուում...

Երեխաները գրեթէ բոլորին էլ լաւ ճանաչում էին, տեսնում էին ամեն օր: Ու այս ամենը ե՛ւ զարմանալի էր, ե՛ւ մի քիչ էլ ցաւալի. ինչո՞ւ փողոցները Մեծատունեան, Սարգսեան, Դեմիրճօղլեան կամ Մատոյեան չէին կոչուել, որ հէշտ ու պարզ լինէր: Երեխաները չէին հասկանում: Իրենք դէմ չէին լինի, որ փողոցի բնակիչներից ցանկացած մէկի ազգանունով կոչուի իրենց փողոցը... Ո՛ւմ պատահի... Թէ չէ Մայիսմէկեանն ո՞վ էր, ի՞նչ էր արել, որ իր անունով փողոց լիներ: Այն էլ հէնց իրենց փողոցը՝ հակառակի պէս... Ուրիշ փողոց չկա՛ր:

Երեխաները գիտէին, որ Դեմիրճոնց աւագագոյնը գրող է: Համաձայն էին, որ փողոցն իր պատուին կոչուէր, չնայած ինքը շատ ու շատ հեռու էր ապրում՝ Հայաստանում: Եւս մի զարմանալի բան. փաստօրէն՝ իրենցից հեռու էլ մի Հայաստան կար: Ուղղակի իրենց նախնիներն այդ Հայաստանից չէին: Այդ մէկը հարաւում էր, իսկ իրենց պապերի Հայաստանը դէպի արևմուտք էր՝ աւելի հեռու: Գիտէին նաև, որ կողքի փողոցի Սարգսեաններից Մկօն⁴ ուզում է Դեմիրճոնց Դերենիկի⁵ ճանապարհով գնալ՝ գրող դառնալ: Գրող էր նաև Մատոյեանների նահապետը՝ Սիլուանը: Իր գրքերը տպուել էին Կոստանդնուպօլսում⁶, Ալեքսանդրապօլում⁷,

⁴ Մկրտիչ Սարգսեան — բանաստեղծ, արձակագիր: ՀեՍՀ մշակույթի վաստակաւոր գործիչ, ՀեՍՀ պետական մրցանակի դափնեկիր, Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան պետական մրցանակի դափնեկիր: ԽՍՀՄ գրողների միութեան անդամ:

⁵ Դերենիկ Դեմիրճեան — բանաստեղծ, հրապարակախօս, թատերագիր, արձակագիր, թարգմանիչ: ՀեՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀեՍՀ արուեստի վաստակաւոր գործիչ, ԽՍՀՄ գրողների միութեան անդամ:

⁶ Բախտի մէկ խաղը, 1890:

⁷ Լէօն-Կայսր, 1904:

Թիֆլիսում⁸: Երիտասարդութիւնը պապերի հայրենիքում էր անցկացրել՝ Կարինի շրջակայքում դպրոցներ հիմնելով: Յետոյ գնացել էր Սասուն, սասունցիների հետ մասնակցել կռիւներին... Իր թոռ Արմէնը՝ կրտսեր Սէյլանի մեծ եղբայրն էր մի օր պատմել: Ասել էր, թէ սասունցիք էլ սամսրցիների նման լեռնական, կռուազան⁹ ժողովուրդ են: Սասունի մարտերը շատ լաւ էին տպաւորուել մանկական մտքերում... յատկապէս սասունցիների զէնքերը, որ կրտսեր Սէյլանն էր վարպետօրէն նկարագրել. հրացաններն ու ատրճանակներն առանձին, թրերն ու դաշոյններն առանձին... Մանրամասն, հատուած առ հատուած... պատկերել էր, շնայած ինքն էլ տեսած չկար, բայց այդ շնչին պակասը լեզուի ճարտարութեամբ ու անսպառ երևակայութեամբ լրացրել էր:

Երեխաները պարբերաբար նորից ու նորից էին խօսում փողոցների և բնակիչների մասին: Մէկ վիճում էին, մէկ համաձայնում, որ ցանկացած մի հարևանի անունով կոչուեն փողոցները: Եւ անգամ կարևոր չէր՝ ձախ թէ աջ շարքի տներից, կամ՝ զուգահեռ փողոցից կրնարուէր անունը: Կարևորն իրենցից լինէր փողոցի անուանադիրը, իսկ թէ իրենցից ո՞ր մէկին աւելի մօտիկ կլինէր տուեալ մարդը, ո՞ւմ ազգից, տոհմից կամ գերդաստանից՝ ընդհանրապէս կարևոր չէր: Հօ՛ այդպիսի բաների համար իրարից չէին նեղանալու: Կարևորը՝ հարազատ անուն լինէր, կարևորը՝ հասկանալի, ծանօթ բառ լինէր: Միայն Յունօն էր մի քիչ կամուկացի մէջ. «Փոքր քաղաք, երկու՛ իրար կպած փողոց, և այսքան գրող: Ուրիշ բան չգիտեն այս մարդիկ»,— անվերջ նեղսրտում էր նա: Յունօն ամենափոքրն էր: Նոր էր սկսել դպրոց գնալ: Ամեն բան դեռ անծանօթ էր, անսովոր ու դժուար իր համար: Այդ իսկ պատճառով գրել-կարդալու, սովորելու հետ Յունօն դեռ այնքան էլ սէր չունէր, ուստի մի մեծ վախ կար իր սրտում. եթէ իր ընկերների պահանջով մի հարևան-գրողի անունով կոչեն փողոցը, ծնողներն ստիպելու են, որ այդ հեղինակի բոլոր գրքերը կարդայ: Ասես դպրոցի պարտադրածը քիչ էր, նոր հոգս էր բացուելու: Այս առումով Տէր-Յովհաննիսեան Յովհաննէսի տարբերակն աւելի դուրեկան էր Յունոյի համար. հօ՛ չէին ասելու, թէ գնա՛ Բաքու, մեր հարևան Քաջազնունու կառուցած՝ Սուրբ Թադէոս-Բարթուղիմէոս մայր տաճարը կարդա՛: Այս հանգամանքն ամբողջովին Յունոյի

⁸ 1904, Խան-Միրան, 1892, Հալթա-Ֆիրատ:

⁹ Սա բնորոշ է տարածաշրջանի բոլոր գիւղերին. տուեալ դէպքում սասունցի—սամսրցի նմանութիւնն է առաջնային դեր խաղացել:

նախապատուութիւնը Քաջագնունու կողմն էր դարձնում: Սակայն իրենից մեծ ընկերներին համոզել, առաւել ևս ստիպել չէր կարող: Բայց և յաջողութեան հասնելու եղանակներ, այնուամենայնիւ, փորձում էր մտմտալ, մինչդեռ եթէ իմանար, որ Քաջագնունին գրքեր չի գրել, սակայն բազում յօդուածների հեղինակ է, աւելորդ չէր մտատանջուի: Իսկ առայժմ փորձում էր հնարաւոր կողմնակիցներ գտնել: Ուրախութեամբ յիշեց, որ մի անգամ Արտակն ու Հռիփսիմէն ասել էին, թէ Տէր-Յովհաննիսեանների՝ Քաջագնունու տոհմն իրենց խնամի է: Թէ խնամին ինչ էր, ստոյգ չէին բացատրել, բայց ինքը տեսել էր, որ այդ հարեանի դռնով նրանք ցանկացած ժամանակ կարող են մտնել և այգու ծառերից քաղել թթուաշ, ջրալի խնձորները:

Անունների անվերջ ու ծանր որոնումներում Յունօն միայնակ չէր: Միւսները նոյնպէս ձգտում էին հոգեհարազատ, շահեկան տարբերակներ գտնել... Կարճ ասած՝ երեխաներն ամեն առաջարկի համար անհատական դիրքորոշումներ էին դրսևորում, կշռում թեր և դէմ կողմերը, որոնում ամենաընդունելին: Իրենց քննարկումների ժամանակ փողոցի բնակիչներից երևի միայն Մեծատունեանի հարցում էր, որ դրական կարծիք յայտնող չկար: Հին, խարխուլ, կիսաւեր տան միակ բնակիչը՝ զառամեալ, նիհար, կծկուած-չորացած մարդն ինչո՞ւ էր Մեծատունեան կոչւում, անհասկանալի էր բոլորի համար:

Ծերունին քիչ էր երևում փողոցում, դա ևս անհանգստացնում էր երեխաներին: Նրանք քաշւում էին միայնակ ծերունուց: Գուցէ նաև այն էր պատճառը, որ Հռիփսիմէն ասել էր, թէ ծնողների խօսակցութեան ժամանակ վախենալու բան է լսել... Մեծատունեանը ոչ այն է մարդ էր սպանել, ոչ այն է կենդանի էր սատկեցրել: Ուստի զգուշանում էին Մեծատունեանից, երկիւղում: Եւ, չնայած երեխաների հետաքրքրասիրութեանը, ծերունուն պարուրած խորհրդաւոր շղարշն աւելի ու աւելի էր թանձրանում: Յատկապէս որ իրենց հարցուփորձերին ծնողները չէին արձագանքում, չէին պատմում իրականութիւնը, որ Մեծատունեանի իսկական տունը՝ ապարանքը, Կարինի կենտրոնում էր մնացել, գերդաստանը՝ գաղթի ճանապարհին: Իսկ Մեծատունեանն ինքն այդ ժամանակ անհաւասար կուում էր եղել Հաւատամք լեռան լանջերին: Ընկերների խմբով գնացած են եղել գերեալ մանուկներին ազատելու: Որբերին ազատել են, իրենց ընտանիքներին օգնութեան հասնող չի գտնուել:

Երբ իր Արևմտեան հայրենիքից բաժանուել, եկել-հասել էր Ճերմակ քաղաք, միակ փրկուածից՝ Փոքր ձորի հիւղակում հանգրուանած մամիկից, իմացել էր, որ ընտանիքն անհասանելի, ապահով վայրում պահուած է եղել, սակայն մատնիչ-դաւաճան մէկը տեղը ցոյց է տուել փողի դիմաց: Իսկոյն վերադարձել էր Մեծատունեանը, թէ՛ դաւաճանի, թէ՛ մարդասպանների պարտքերը տուել: Որոնումների, թափառումների տարիներից յետոյ Արևմտեան Հայաստանից եկել, հաստատուել էր պապի եղբօր տանը, ուր ժամանակին յաճախ էին հանգրուանում ընտանիքով, երբ գալիս էին հարազատներին տեսութեան: Իսկ հիմա միայն ինքն էր՝ հին, խարխուլ յարկիներքոյ, որն ասես ամեն պահի կարող էր փուլ գալ: Սակայն նորոգութեան միտք անգամ չէր անցել ծերունու գլխով... Չնայած իմացել էր, Կարինում ստուգել, ճշտել էր և հաստատապէս գիտէր, որ ընտանիքը գլխովին բնաջնջուել է, այնուամենայնիւ յոյսով սպասում էր նրանց գալստեանը... դրա համար չէր ուզում, որ հարազատ տան տեսքը դոյզն անգամ փոխուի, որպէսզի... եթէ... յանկարծ... աստուածային մեծագոր հրաշքով... հարազատները վերադառնան, չշփոթուեն՝ տունը հեռուներից տեսնեն, անմիջապէս ճանաչեն, մտնեն... անգամ հարցուփորձի կարիք չունենան, իզուր չտանջուեն: Երկար ճանապարհից են գալու, յոգնած կլինեն:

Մերունին միշտ էր սպասում էր ընտանիքի անդամներին: Վառ էր պահում նրանց գալստեան յոյսը: Դրա համար տնից հագուագիւտ էր դուրս գալիս, որ երբ գան, տանն անպայման մարդ լինի, սպասող լինի... Անվերջ էր սպասում... Սակայն նրանք չէին գալիս:

Տարիներ յետոյ երեխաներն իմացան, որ մի օր միայնակ մնացած ծերունին յոգնել է սպասելուց, ինքն է գնացել հարազատներին տեսութեան: Ասում էին գնացել-հասել էր Կարին՝ աստուածային արդարութիւնն իրականացնելու: Մեծերի խօսակցութեան՝ սպանելու և սատկեցնելու տարբերութիւնն այլևս վաղուց գաղտնիք չէր: Գիտէին, որ Մեծատունեանը չի սպանել... երբեք չի սպանել: Զէնք է վերցրել ձեռքը, կռուել է ու մարտնչել, բազմաթիւ կռիւներից յաղթող է դուրս եկել, բայց երբեք չի սպանել: Թէ՛ ինքը, թէ՛ ընկերները... Ուղղակի այդպիսի պատմութիւններն Արտակի հայրը՝ Գէգէն, վստահեց ու շփարխուլ տան մեծատուն բնակչի հեռանալուց յետոյ միայն, որովհետև նրա գաղտնիքն, անգամ մանկական շուրթերից պատահաբար դուրս թռչելով, անտարակոյս վնասելու էր. Մեծատունեանի մեծութիւնն օտար ականջներին և աչքերին պէտք է անհաս լինէր:


* * *

Փողոցների անուանափոխութեան մասին վաղուց խօսակցութիւններ չէին լինում: Դրանցից շատերն արդէն իսկ նոր անուններ էին ստացել: Թէ՛ Մկրտիչի, թէ՛ Դերենիկի անունով փողոցներ կային... և ոչ միայն Ճերմակ քաղաքում: Հիմա հերթը Մեծատունեանինն էր: Եւ բոլորն էին սպասում այդ օրուան, կամ աւելի շատ և աւելի շուտ՝ Մեծատունեանի վերադարձին, որ հերթական պատերազմների, հերթական կոտորածների, հերթական մատնութեան ու դաւաճանութեան... Հերթականների երկար ձգուած շղթան վերջապէս կտրելով՝ գալու է՝ մատնիչների, դաւաճանների, ասպատակիչների ու մարդասպանների պարտքերը մարելու:

Եւ ոչ միայն պարտքերը:



ՀԱՅԲԱՊԵՏԱԿԱՆ
ԿՈՆԳՐԱԿՆԵՐ



ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
ԳՐԵՐ

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԲ ՆԱԿԱՏԱԿՆԵՐԻ
ՅԻՆԱՏԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ**

(24 ապրիլի, 2024 թ.)

Միրելի՛ ժողովուրդ հայոց ի հայրենիս և ի սփյուռս,

Վերստին աղոթքով և խոնարհումով հիշատակում ենք Հայոց ցեղասպանության մեր սուրբ նահատակներին, որոնք ամուր պահելով իրենց հավատքը, սերն ու նվիրումը առ ազգն ու հայրենին՝ մարտիրոսության պսակն ընդունեցին:


Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակը նշում ենք մի շրջանում, երբ մեր ժողովուրդը գտնվում է գոյաբանական նոր սպառնալիքների և անվտանգային լրջագույն հիմնախնդիրների հանդիման: Հայրենի Արցախում իրականացված ցեղասպանական գործողություններից և Արցախի հայաթափումից հետո ներկայիս մտահոգիչ ծանր իրավիճակ է Հայաստանի սահմանային տարածքներում:

Սուրբ նահատակների լույս հիշատակի առջև մեր նվիրական պարտքն է՝ պաշտպանել ամբողջականությունը մեր հայրենի երկրի, նախանձախնդիր լինել հայոց անկախ պետականության զորացմանը և որպես սրբազան մասունք՝ պահպանել մեր նախնյաց ավանդներն ու ժառանգությունը:

Մեր ժողովուրդը հզոր է իր հերոսական անցյալով, չարի ու չարիքի դեմ պայքարի վճռականությամբ և նույն ոգով պիտի հեռացնի իր կյանքից ազգային շահերին հակառակ կործանարար դրսևորումները, առկա բարդ իրադրությունից ջանքերի մեկտեղումով ելքի ուղիներ գտնի և կերտի իր հաղթական ապագան:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, այս նվիրական օրը միասիրտ աղոթքով հայցենք մեր սուրբ նահատակների բարեխոսությունը, որ հարուցյալ Քրիստոսի շնորհների և օրհնության ներքո խաղաղ, անվտանգ ու բարօր լինեն մեր հայրենիքն ու ազգը, և մենք հավատով ու հույսով հաստատենք մեր ընթացքը ապահովության ու առաջընթացի շավիղներում:

Թող Տիրոջ սերն ու խնամքը հովանի լինեն մեր հայրենիքին ու համայն մեր ժողովրդին այսօր և միշտ, ամեն:





Տ. ՎԱԶԳԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐՉԱԽԱՆՅԱՆԻ ՔԱՐԱՉԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ՎԱՅՆՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՍԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(24 ապրիլի, 2024 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Այսպէս ասէ Տէր Տէր ցոսկերսդ ցայրոսիկ. Ահաասիկ եւ ածից ի վերայ ձեր շունչ կենդանի. եւ տաց ի ձեզ ջիւս, եւ ածից ի վերայ ձեր մարմինս, եւ ձգեցից ի վերայ ձեր մորթ. եւ տաց զոգի Իմ ի ձեզ, եւ լինիջի՛ք ի կենդանի...»

(Յգեկ. Լէ. 5):

Սիրելի՛ հավատացյալներ, այս խոսքերն ընթերցեցի՛նք Յզեկիել մարգարեի գրքից, որը նկարագրում է Բաբելոնում գերութեան մեջ ապրած հրեաների վիճակը, երբ քանդվել էին Երուսաղեմի տաճարն ու պարիսպները: Օտարութեան մեջ հրեաները սաղմոսներ էին երգում եւ հիշում Երուսաղեմն ու Իսրայելը: Այդ նեղութեան ընթացքում Աստուծոյ Յզեկիել մարգարեին երեւաց եւ վերցրեց նրան, տարավ մի բաց դաշտ, որտեղ ամենուր մարդկային ոսկորներ էին թափված, եւ ասաց. «Այսպէս է ասում Տէր Աստուած այդ ոսկորներին. «Ահա եւ ձեզ վրայ կենդանի շունչ եմ բերելու, ձեզ ջղեր եմ տալու, ձեզ վրայ միս եմ բերելու եւ մաշկ քաշելու, Իմ հոգին եմ տալու ձեզ եւ դուք կենդանանալու էք» (Յգեկ. Լէ. 5): Այս խոսքերը հետագայում իրականություն դարձրեց պարսից Կյուրոս թագավորը. Բաբելոնը վերջնականորեն ջախջախվեց, եւ հրեաները վերադարձան Երուսաղեմ, որտեղ Եզրաս քահանայի եւ Նեեմի իշխանի միջոցով կարողացան վերականգնել ինչպէս Երուսաղեմի պարիսպները, այնպէս էլ Սողոմոնի տաճարը:

Այդ մեծ խորհուրդը բնորոշ է նաեւ մեր ժողովրդի այսօրվա մեծ ցավին ու վշտին: Այսօր մեր ազգը Հայաստանում եւ Սփյուռքում հիշատա-

կում է մեր Սուրբ նահատակներին, որոնք ցեղասպանվեցին Թուրքիայում 1915–1923 թվականներին, եւ մենք զրկվեցինք հազարամյակների մեր հողերից, մեր բնօրրանից: Օսմանյան թուրքերի կողմից ծրագրված ցեղասպանության ընթացքում ունեցանք մեկ ու կես միլիոն զոհ, չխնայվեցին ո՛չ կանայք, ո՛չ ծերերը եւ ո՛չ երեխաները: Ունեցանք նաեւ մշակութային եղեռն. քանդվեցին մեր տաճարները, ավերվեցին սրբավայրերը, հրո ճարակ դարձան հազարավոր ձեռագիր մատյաններ, ավերակների վերածվեց մեր ծաղկուն Հայաստանը:

Եւ այս ապրումները մենք նմանեցնում ենք Բաբելոնում իսրայելացիների կրած տառապանքներին, մեր առջեւ բացվում է այդ մեծ ողբերգությունը: Հայերի մի ստվար մասը մազապուրծ եկավ Արեւելյան Հայաստան, սակայն այստեղ էլ տարբեր հիվանդությունների ու համաճարակների զոհ դարձավ: Եւ այն պահերին, երբ շատերը մտածում էին, թե արդեն ամեն ինչ ավարտված է հայության համար, Աստված օրհնեց մեր ժողովրդին եւ վերականգնեց Հայոց պետականությունը պատմական Հայաստանի արեւելյան հատվածում: Մեր ժողովուրդը կարողացավ վերագտնել իր բնօրրանը, իր պատմական հողերի այս մի հատվածի վրա վերականգնեց պետականությունը, հիմնեց Հայաստանի Հանրապետությունը եւ ամոքեց վերքերը: Հանրապետությանը հաջորդած խորհրդային տարիները Հայաստանի համար, գուցե դժվարություններով, սակայն օրհնաբեր տարիներ եղան մեր ժողովրդի համար, քանի որ գործում էր Աստծու օրհնության փրկության խորհուրդը: Մենք մտանք խորհրդային Միությունն որպես ազրարային մի երկիր, բայց դուրս եկանք իբրեւ ատոմային էներգետիկա ունեցող երկիր, մտանք ծխական դպրոցներով, դուրս եկանք Գիտությունների ազգային ակադեմիայով: Ավերված Հայաստանը վերականգնվեց եւ կարողացավ իրեն գտնել ցեղասպանությունից հետո, վերականգնվել ու դառնալ ինքնիշխան պետություն:

Ինչպես Աստված Եզեկիել մարգարեին ասում է. «Ահա ես վերցնում եմ Իսրայելի տունը ազգերի միջից, որոնց մէջ մտել էին, հաւաքելու եմ նրանց իրենց շուրջը գտնուող բոլոր ազգերից ու տանելու եմ Իսրայելի երկիրը: Նրանց դարձնելու եմ մէկ ազգ՝ իմ երկրում...» (Եզեկ. Լէ. 21–22):

1930–1970-ական թվականներին, մարգարեական տեսիլքի համաձայն, Աստված աշխարհի տարբեր կողմերից հավաքեց մեր ժողովրդին, բերեց պատմական Հայաստանի այս հատվածը, որտեղ հայերը շարու-

նակեցին ապրել եւ կերտել հայրենիքը: Համոզված եմ, որ այս աստվածային շնորհն էր, որ հետագայում արդարութեան վերականգնման համար մեզ հնարավորութիւն տվեց ազատագրել Արցախը, ամրացնել եւ հզորացնել Հայաստանի Հանրապետութիւնն ու Արցախը:

Սա մեր հայրերի Աստծու տեսիլքով տրված եւ Սուրբ Գրքի օրենքներով շարժվող, մեր ժողովրդին փոխանցված օրհնութիւնն էր: Ինչ եղավ հետագայում, ինչպես կորցրինք Արցախը, ինչո՞ւ այսպիսի իրավիճակների առջեւ կանգնեցինք: Ինչո՞ւ տեղի ունեցավ Հայոց ցեղասպանութիւնը՝ Մեծ եղեռնը, մենք դրա մասին էլ պիտի մտածենք, խորհենք, որպեսզի ապագայում կարողանանք խուսանավել նման իրավիճակներից եւ թույլ չտալ, որ օտարները մեր պատմական հայրենիքում ցեղասպանութեան ենթարկեն մեզ:

Սիրելի՛ հավատացյալներ, հիշատակի եւ ոգեկոչման շատ հուշարձաններ ունենք աշխարհի տարբեր անկյուններում: Ապրիլի 24-ին հավաքվում ենք Միծեռնակաբերդում՝ հիշատակելու մեր Սուրբ նահատակներին: Սուրբ նահատակներ, քանի որ 2015 թվականին Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա.-ի օրհնութեամբ եւ բարձր տնօրինութեամբ սրբադասվեցին եւ միացան մեր այն սուրբ զորքերին, նահատակներին, որոնք երկնքից շարունակում են բարեխոս լինել ու պաշտպանել մեր սիրելի Հայաստանը:


Ինչպես Մեծի Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Գարեգին Ա. Հովսեփյանց Կաթողիկոսն էր ասում. «Յրբեմն ազգերին եւ անհատներին պատուհասած վիշտն ու տառապանքը դառնում են դաստիարակչական արժեք»: Հիրավի, միշտ չէ, որ հիվանդութիւնը մահ է բերում: Շատ անգամ հիվանդութիւնը, տառապանքն ու վիշտը դաստիարակում են մեզ ու վերստին բերում դեպի ճշմարտութիւնն ու լույսը, որպեսզի ապրենք եւ գործենք այնպես, որ թույլ չտանք այս ամենի կրկնութիւնը: Իսկ դրա համար ի՞նչ է հարկավոր: Պետք է, որ մենք՝ եկեղեցականներս, մեր հավատացյալներին շարունակենք ուսուցանել Սուրբ Գիրքը, նրա ամբողջական խորհուրդը: Որպեսզի հավատացյալներն ապրեն ոչ թե այս ու այն քաղաքական, կուսակցական, հասարակական շարժումների գաղափարներով, այլ հենց Սուրբ Գրքով, նրա խորհուրդներով ու խորհրդաբանութիւններով:

Իսրայելի մարգարեները պատմական իրադարձութիւններին նայում էին Սուրբ Գրքից բխող լույսերի միջոցով: Այս ճանապարհն են տես-

նում նաեւ այսօրվա հրեա ուսուցիչները՝ րաբբիները: Մենք խորը պիտի թափանցենք Սուրբ Գրքի իրադարձությունների մեջ, վերադառնանք մեր հոգեւոր արմատներին, որպեսզի տեսնենք Աստուծու խորհուրդները, լսենք Նրա ձայնը, մեր պատմության այդ ժամանակներն ընկալենք Աստվածաշնչի ուղիներով:

Թեեւ այս օրերին շատ բան է խոսվել, ու թերեւս շատ բան կա ասելու, բայց մենք խնդրենք մեր Սուրբ նահատակների բարեխոսությունը, որ առավել իմաստությամբ օժտվեն մեր առաջնորդները, որ մեր ժողովուրդը լցվի սիրով, համերաշխությամբ եւ կարողանա պահել, պահպանել Հայաստանը, որպեսզի ապրենք ու արարենք մեր երկրում, որ աշխարհի տարբեր երկրներում ծվարած հայությունը վերադառնա Մայր Հայրենիք, որ Տիրոջ օրհնությամբ ավելանանք ու շատանանք: Կարոտելով Մասիսին՝ շարունակենք սիրել Արագածը, երազելով Վանա լիճը՝ խնամքով պահենք Սեւանը, թախծելով Մուշի ու Անիի համար՝ չմոռանանք Վաղարշապատն ու Գյումրին: Եւ ամենակարեւորը՝ երբ գտնվում ենք Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում կամ Եռաբլուր պանթեոնում, մեր խղճի մտոք խորհրդածենք, թե ինչ պիտի անեինք, որ չարեցիք, եւ ինչ ունենք անելու, որ պիտի անենք գալիքի տեսիլքով, գալիքի ապրումներով, եւ երբեք չվախենանք, շարունակենք ապրել մեր Հիսուս Քրիստոսով, որ հաղթեց մահվանը եւ մեզ կյանք պարգեւեց:

Թող Տիրոջ շնորհը եւ մեր Սուրբ նահատակների բարեխոսությունը սիրելի ժողովրդի հետ լինեն այժմ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:





ՄԵԽԱԿ ԱՅՎԱԶՅԱՆ

Փիլիսոփայական գիտ. դոկտոր,

Ֆրիդրիխ Ալեքսանդրի համալսարան, էրլանգեն-Նիւրնբերգ

ՎԱՆԱԿԱՆ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԸՄԲՈՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՆԱՐԵԿԱՎԱՆՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ

Սկիզբը՝ թիվ 9.

Ե. ՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՓՐԿՉԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ

Երբ Ուխտանեսը հորդորում է՝ «պարտ է զհետ ընթանալ, եւ բուռն հարկանել զբարի գործոց, եւ զնալ ի ճանապարհս Տեառն՝ անխէթ եւ անխոտոր», նա այս ճանապարհն ըմբռնում է նաեւ որպէս հավատքի առաքինութեան ուղի: Ուխտանեսի համար հույժ կարեւոր է մարդու եւ Աստծու սիրո փոխկապվածութիւնը փրկաբանական տեսանկյունից: Նախ եւ առաջ Ուխտանեսը, վստահաբար ելնելով փիլիսոփայական աստվածաբանութիւնից, բնորոշում է Աստծուն՝ որպէս բարձրագոյն բարութեան աղբյուրի, քանզի նա Իր էութեամբ բարի է¹: Այն, որ Աստված բարեգործ է, բխում է իմաստունների եւ աստվածասերների իմացութիւնից, որոնք «կարիցեն ճանաչել իմաստութեամբ զխրատ՝ ըստ իմաստնոցն բանի [Առակք Ա. 2]. զի սիրել զՏէր Աստուած՝ բարի է ամենայն սրտէ [...]»²: Այս կապակցութեամբ նշելով, որ այս սերն ամենաբարձր սերն է՝ «կարի կարգաւոր եւ կատարելագոյն քան զամենեսեան», եւ որ աստվածասե-

¹ ՈՒԽՏԱՆԵՍ, Պատասխան, Ա. 16, էջ 448, նույն տեղում. «...եւ ինքն է բարի եւ աղբիւր բարութեանց, եւ ի նմանէ բղխէ ամենայն բարիք»: Այս առումով բավական է միայն ընդգծել «բարու» ըմբռնումն անտիկ փիլիսոփայական՝ հատկապէս պլատոնյան եւ նորպլատոնյան (օրինակ՝ ՊԼՈՏԻՆՈՍ, էննեագղներ Ա. 6. 6), աշխարհըմբռման մեջ: Տես նաեւ՝ Հ. ԹԱՄՐԱԶՅԱՆ, Գրիգոր Նարեկացիի եւ նորպլատոնականութիւնը, Երեւան, 2004:

² ՈՒԽՏԱՆԵՍ, Պատասխան, Ա. 15-16, էջ 448:

րը երբեք չի հագենում «առ ի սիրել Աստուած», Ուխտանեսն ընդգծում է հոգեւոր կյանքի սկզբունքը՝ վերելք դեպի Աստված եւ Նրա տեսությունն³:

Աստծու բարեգործությունը մարդու հանդեպ Ուխտանեսնը մեկնաբանում է անմիջապես փրկաբանական տեսանկյունից՝ Աստծու փրկչական տնօրինութեան առանցքից՝ կապված Աստծու սիրո հայտնութեան հետ: Բարեգործութունն այստեղ ուղղակի ընկալվում է որպես Սուրբ Երրորդություն սիրո գործելակերպի բացահայտում:

Աստվածային սերը, ըստ Ուխտանեսնի, ներհատուկ է Սուրբ Երրորդութեան համագոյությունը. «Արդ Աստուած սէր է, եւ սէր՝ թիւ, եւ զանուն, եւ խորհուրդ Երրորդութեանն բերէ համար եւ աւրինակ»⁴: Աստվածային սերը բացահայտվում է Երրորդութեան փրկչական գործելակերպի միջոցով: Հայրն Իր կամքով բերում է Քրիստոսին՝ Նրա մարդեղինական խոնարհմամբ, դեպի Խաչի զոհողութեան, եւ այդ կերպ բացահայտում Իր անշափելի սերը մարդու նկատմամբ. «[...] արդ ետ զանձն իւր ի մահ վասն մեր, եւ ա՛յն կամաւ Հաւր, զի զՈրդին իւր Միածին ետ: Եւ այսմ Առաքեալ վկայէ, թէ՛ «Որ յիւր Որդին ո՛չ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զՆա [Հռովմ. Ը, 32]». եւ յայլում տեղուոջ, եթէ՛ «Ետ զանձն իւր վասն մեր ի շարշարանս խաչի եւ մահու, զի զմեզ փրկեսցէ ի մահուանէ [տէս Գաղատ. Ա. 3]»⁵:

Այսուհետեւ Քրիստոսը հանդիսանում է իբրեւ Երրորդութեան փրկարար սիրո մարմանցում, աստվածային սիրո միջնորդ, որը փոխադարձում է Իր հանդեպ տածվող սերը. «[...] նաեւ որք սիրեն զՆա, սիրին ի նմանէ. «Որ սիրէն զիս,– ասէ,– սիրեսցին ի Հաւրէ իմմէ, եւ Ես սիրեցից զնա [Յովհ. ԺԳ. 21]» այլովքն հանդերձ. զի ո՛չ ոք այնչափ սիրէ զՆա, որչափ Նա զմեզ սիրեաց. «Այնչափ,– ասէ,– սիրեաց Աստուած զմարդիկ, մինչեւ զՈրդին Իւր Միածին ետ [Յովհ. Գ. 16]»,– լուաք յԱւետարանէն: Եւ դարձեալ, թէ՛ «Յայսմ երեւեցաւ սէր Նորա ի մեզ, զի զանձն իւր ետ վասն մեր [տէս Բ. Պետր. թղթ. Դ. 9]»⁶:

³ Գիրք հարցողաց, է. 111, էջ 44. «Որպէս ի կապանաց յայսմ կենաց ծանրացեալք, այսպէս դժվարագելիք էին յաւժարութեանց, որոց աստուածային գութն յոգիս մերձեցաւ: Իսկ նոքա անյազ ունելով զտեսութիւն աստուածային գեղեցկութեանն, աղաւթս առնէին յաւիտենական կենացն հասու լինել եւ տեսութեանցն Տեառն»: Տէս նաեւ՝ Մատեան, Բան ԺԲ., Բ.: Աղոթողը տենչում է իր սիրով Քրիստոսի տեսութեան:

⁴ ՈՒԽՏԱՆԵՍՆ, Պատասխան, Ա. 21, էջ 449:

⁵ ՈՒԽՏԱՆԵՍՆ, Պատասխան, Ա. 18, 448–449:

⁶ ՈՒԽՏԱՆԵՍՆ, Պատասխան, Ա. 16–17, էջ 448:

Աստծու սիրո բացահայտումը բովանդակում է, ըստ էության, Սուրբ Երրորդությունից փրկագործական տնօրինությունը, եւ այս սիրով է պայմանավորված մարդու մուտքը Երրորդության փրկագործություն, որը մշտապես բաց է նրա համար. «[...] եւ այն՝ սիրոյ է պատճառ, զի զդարձն մեր խնդրէ առ ինքն. «Դարձարուք,– ասէ,– առ իս, եւ ես դառնամ առ ձեզ [Մաղ. Գ. 3]». արդ ետ զանձն իւր ի մահ վասն մեր, եւ այն կամաւ Հաւր, զի զՈրդին Իւր Միածին ետ»: Սիրո փոխադարձ կապով է, ուրեմն, մարդը մասնակից լինում Աստծու փրկագործությունը,– «Արդ այն սէրն Նորա ի մեզ. իսկ մերն առ Նա՝ սիրել զՆա ի բոլոր սրտէ եւ ի բովանդակ մտաց եւ ի զաւրութիւնէ, եւ առնել զհաճոյսն Նորա առաջի Նորա յամենայն ժամ. եւ շարշարակից լինել Նմա եւ նմանող ամենայնիւ, յամենայնի, որպէս եւ Պաւղոս, թե՛ «Նմանողք ինձ եղերուք՝ որպէս եւ ես՝ Քրիստոսի [Ա. Կորնթ. ԺԱ. 1]»⁷: Ուխտանեսի այս ամփոփումը կազմում է, ինչպէս արդեն նշվել է, վանական ապրելակերպի կիզակետը, որից հետո նա կոչում է. «Արդ գնասցու՛ք այսուհետեւ հաւատով, յուսով եւ սիրով, եւ սիրեսցու՛ք զմիմիանս. որպէս եւ Աստուած զմեզ սիրեաց, եւ մեք սիրեսցուք զՆա, եւ զպատուիրանս Նորա պահեսցու՛ք. Վասն զի ինքն իսկ ասաց. «Եթէ սիրէք զԻս, եւ զպատուիրանս Իմ պահեսցիք [Յովհ. ԺԴ. 14]»⁸:

Այս փրկագործական սիրո արարքով խոստովանվում եւ երկրպագվում է Սուրբ Երրորդությունը՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին. «Հայր է՝ Որդի՝ Հոգի. եւ այսու Երրորդութիւն Սուրբ խոստովանեալ լինի ի մէնջ, եւ երկրպագեալ անձնաւորութեամբ, եւ անուամբ բաժանեալ, իսկ բնութեամբ եւ Աստուածութեամբ միաւորեալ եւ երկրպագեալ. եւ սաւքա մնան մեզ, եւ են մեր բաժին եւ ժառանգութիւն. [...]»⁹, այսինքն՝ փրկության ընդմիջտ շնորհատվությունը: Մարդը հանդիման է լինում Երրորդության ինքնագոհողության շնորհատվությանը հավատքի երեք առաքիներություններով՝ հավատով, հույսով, սիրով. «Արդ մնան մեզ հաւատք, յոյս, սէր. հաւատն՝ ի Հայր, յոյսն՝ ի յՈրդի, սէրն՝ ի Սուրբ Հոգին: Քանզի այսոքիկ մնան մեզ, եւ սոքաւք գործին ամենայն արդարութիւնք»¹⁰: Գործնականորեն այս առաքիներություններով պետք է «գնալ ի ճանապարհս Տեառն՝ անխեթ եւ

⁷ ՈՒԽՏԱՆԵՍՄԱՆ, Պատասխան, Ա. 21, էջ 449:

⁸ ՈՒԽՏԱՆԵՍՄԱՆ, Պատասխան, Ա. 28, էջ 450:

⁹ ՈՒԽՏԱՆԵՍՄԱՆ, Պատասխան, Ա. 30–31, էջ 450.

¹⁰ ՈՒԽՏԱՆԵՍՄԱՆ, Պատասխան, Ա. 31:

անխոտոր, եւ առեալ իրաւունս, եւ գործել զարդարութիւն յամենայն ժամ մինչեւ ի կէտ սահմանեալ կոչմանն Քրիստոսի [...]»¹¹:

Սա հստակ ցույց է տալիս, որ առաքինական վարքը գործնականում սերտորեն կապված է Սուրբ Երրորդութեան փրկութեան տնօրինութեան հետ: Երբ մարդը գնում է մինչեւ վերջ՝ «ի ճանապարհս Տեառն», ապա վերածվում է Սուրբ Երրորդութեան բնակարանի. «[...] «Ես յո՞ բնակեցայց, եթէ ո՞չ ի հեզս եւ ի խոնարհս [տէն Եսայի 49, 2]», որ արդարեւ բնակարան են այնպիսիքն Սրբոյ Երրորդութեանն. «Ես եւ Հայր իմ առ նա եկեսցու՞ք՝ ասէ, եւ աւթեանս առ նա արասցուք [տէն Յովհ. ԺԴ, 23]», զի ուր Հայր եւ Որդի բնակի, եւ Հոգին Սուրբ անմեկնելի իսկ լինի. քանզի. «Որ խոնարհեցուցանէ զանձն իւր, բարձրացի նոքաւք [տէն Մատթ. ԻԳ, 12, Դուկ. ԺԴ, 11]». «Զոր սիրէ զԱստուած, Աստուած ի նա բնակէ, եւ նա յԱստուած [տէն Մատթ. ԻԳ, 12]»: Եւ պարտ եւ արժան է սուրբ սրտիւ եւ հաստատուն հաւատով սիրել եւ պաշտել զսուրբ եւ անբաժանելի եւ զերկրպագելի Երրորդութիւնն»¹²: Այս իմաստային շրջանակում Ուխտանեսը կապում է պարզորոշ հավատի դավանանքը ներանձնական առաքինական վարքի հետ, ինչպես նա արդեն նախապես նշում է՝ դառնալ «շնորհաւք (եւ) որդեգրութեամբ եւ տուն եւ տաճար բնակութեան Բանին Աստուծոյ, շինեալ ի վերայ հիման հաւատոյ առաքելոց եւ մարգարեից [Ա. Կորնթ. Գ. 16–17, Եփ. Բ. 20]»¹³:

Պաշտամունքի եւ առաքինական վարքի կապվածությունը Եկեղեցում սկզբունքորեն կանոնակարգում է կրոնական ապրելակերպը, Եկեղեցու փրկչական խորհրդի պատկանելիությունը: Այս կանոնակարգումը պարզորոշ ի հայտ գալիս Գրիգոր Նարեկացուն վերագրվող՝ «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան»¹⁴ խրատում: Բարեպաշտությունն սկսվում է հավատքի ճշմարտությանից՝ «ի դաւանութիւն հաւատոյն ճշմարտութեան, որ է հիմն եւ արմատ ամենայն բարեց». ճշմարիտ դավանութեամբ՝ «ի սուրբ Երրորդութիւն. յորոյ վերայ գեղեցկապէս յարմարի ամենայն առաքինութիւն»¹⁵: Սուրբ Երրորդութեան դավանանքը ներառում է փրկութեան տնօրինությունը՝ Երրորդութեան փրկչական բացահայտ գործելակերպը. «Այսորիկ համառօտիւք Երրորդութեանն

¹¹ ՈՒԽՏԱՆԵՍ, Պատասխան, Ա. 27, էջ 449:

¹² ՈՒԽՏԱՆԵՍ, Պատասխան, Ա. 34–35, էջ 450:

¹³ ՈՒԽՏԱՆԵՍ, Պատասխան, Ա. 27, էջ 450:

¹⁴ Անդ:

¹⁵ ՆԱՐԵԿԱՅԻ, Բան խրատու, Գ., էջ 683:

խոստովանութիւն. յորս պարտ է յարել եւ զխորհուրդ տնօրինութեան [...]»¹⁶, եւ այսպէս. «Այս է հաւատ ուղիղ դաւանութեան կարճառօտ բանիւ ի փրկչական տնօրինութիւն մարդացելոյն վասն մեր կամաւ Հօր եւ Հոգւոյն միածին Բանին»¹⁷:

Խրատի հիմքում մարդու բարքի բարեձեւության խնդիրն է, որով ուղղվում են հոգու շարժումը եւ արտաքին վարքը դեպի աստվածայինը՝ մասնակցելու Սուրբ Երրորդության փրկչական տնօրինությանը¹⁸: Նույն իմաստային հանգույցն սկզբունքային է նաեւ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» ստեղծաբանության մտահղացման մեջ: Իր բնորոշմամբ՝ Մատյանն ուղղակի դավանանքի կոթող է. «Եւ սկզբնաւոր ողբերգութեան այսր աղբրսանաց / Զհաւատոցն շինուած կառուցից», քանզի հավատն է «սկզբնաշաւիղ առաջնորդ կենաց», «Աներկմիտ պաշտաւն առ Աստուած» (Բան Ժ., Բ.): Այս դավանանքի քերթվածով է, որ պետք է «Գթութեան մեծիդ յանդիման լինել սովաւ հանապազ [այսինքն՝ այսու մատենիւ]» (Բան Գ., Բ.): Սա է ի սկզբանե Մատյանի ճանապարհը. դավանողը՝ «Եւ արդ, ես՝ յետինս դաւանողաց» (Բան ԺԱ., Ա.), իր հավատով, սիրով եւ հույսով ապավինում է Սուրբ Երրորդության փրկության տնօրինությանը՝ շնորհիվ Քրիստոսի սիրո գթության¹⁹. «Աստանաւր ի յոսոյն կերպարան փոխեալ՝ յարգահատել համարձակեցայց՝ / ԶԵրրորդութիւնն Սուրբ կարդալով յաւգնականութիւն ինձ մեղաւորիս» (Բան ԺԲ., Ա.), եւ. «Քանզի արդարեւ վերաձայնեալս այս խոստովանութիւն (սա կատարվում է հակիրճ՝ ԺԳ. Բանի առաջին մասում.՝ Մ. Ա.) / Երեքփառատրեանդ դաւանութեան զվէմն հաւատոյ Պետրոս երանեաց, / Իսկ զդատապարտելոյս անձն մեղաւք բարեհրաման քո ակնարկութեամբ, / Ով խնդրողդ գերելոյս, հրաշանորոգ արդարացուցէ» (Բան ԺԳ., Բ.): Հետեւապէս Մատյանի ԺԳ. Բանում տրվում է հակիրճ հավատի կանոնա-

¹⁶ ՆԱՐԵԿԱՅԻ, Բան խրատու է.–Ը., էջ 684–685. «[...] Քանզի մինն ի յերից այս անբաւից անձնաւորութեանց, ծնեալն ի Հօրէ անժամակ եւ անմարմին նախ քան զյաւիտեանս, էակից եւ փառակից Հոգւոյն, կամաւ եւ հաճութեամբ համաբնից՝ խոնարհի յանճառ փառացն եւ յանբաւ բարձրութենէն ի խնդիր եղծեալ եւ ապականեալ իւրաստեղծ պատկերին»:

¹⁷ Տես ՆԱՐԵԿԱՅԻ, Բան խրատու, Ը.–ԺԱ., էջ 684–686, մեջբերում՝ էջ 686:

¹⁸ Հակառակ դեպքում. «[...] ոչ խոհականն զբարւոք խորհի, եւ ոչ ցասմնականն ընդդէմ բարին կքրի [մաքառի] եւ ոչ ցանկականն ողջախոհաբար Աստուծոյ եւ աստուածայնոցն ցանկայ», Բան խրատու, Ը., էջ 695:

¹⁹ Հավատը, ըստ Նարեկացու, ծնում է սեր դեպի Աստված, եւ սերն այն հանգույցն է, որը մարդուն մղում է փրկության հույսով դեպի Աստված՝ միանալու նրան եւ ապրելու Նրա կենդանության մեջ. տես Մատյան, Բան Ժ., Գ.:

կան սահմանումը. «Իսկ զհաւատոյ սահման բանի ընտրութեան շնորհի կենաց կանոնի առ համագոյ Սուրբ Երրորդութեանն զայս վարդապետեցի, զոր շաւիղ կարգիդ վերանկարէ» (Բան ԺԳ.): Իսկ Մատյանի Բան ԼԴ., Գ.–Թ. հատվածում ամբողջությամբ տրվում է հավատքի դավանանքը, որով դավանողը նվիրում է իրեն Երրորդության փրկչական տնօրինությանը՝ մտնելով փրկության խորհրդագործության բուն տաճար, որտեղ ներկա է քավչության Քահայանապետը՝ Քրիստոսը²⁰:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ուխտանեսի՝ Անանիա Նարեկացուն ուղղված պատասխան-թղթում ընդգծվում են վանական ապրելակերպի կարեւոր բնորոշումներ եւ հասկացություններ, որոնք լրացնում են վանական ապրելակերպի աստվածաբանական եւ հոգեւոր ընթացումը Ժ. դարի եկեղեցական շրջանակում:

Նախապես պետք է նշել Բարսեղ Կեսարացու վանական սահմանադրության սկզբունքային դերը վանական ապրելակերպի կազմավորման մեջ: Այս շրջանակում է ձեւակերպվում վանական ապրելակերպի առաջնորդող դրույթը. այն Քրիստոսին նմանվելն է, որը սահմանված է յուրաքանչյուր քրիստոնյայի համար. «Զի եթէ սահմանք քրիստոնէի նմանութիւն Քրիստոսի չափով մարդանալոյն [...]» (Գիրք հարցողաց, Հարց. ԼԵ., 366, էջ 126): Այսպես՝ վանական առաջնորդը պետք է լինի Քրիստոսին նմանվելու կատարյալ նախօրինակ եւ իր օրինակով պիտի իրեն վստահված համայնքն առաջնորդի Քրիստոսին նմանվելու մեջ՝ «յառաջ ածել պարտին ի Քրիստոսի նմանութիւն» (անդ): Հետեւապես Քրիստոսին նմանվելու անհրաժեշտությունը (ըստ Մատթ. ԺԱ., 29 եւ Ա. Կորնթ. ԺԱ. 1) առանցքային նշանակություն է ստանում վանական կենցաղավարության մեջ: Երբ Ուխտանեսը ներկայացնում է Անանիա Նարեկացուն որպես վանական առաջնորդի, առաջնորդվում է ճիշտ այս առաջնային դրույթով: Այսպես բնորոշվում է վանական ապրելակերպը՝ որպես Քրիստոսի հետեւորդություն Քրիստոսին նմանվելու միջոցով:

Քրիստոսին հետեւելու պահանջը հիմք է դնում միաժամանակ Քրիստոսի աշակերտության գաղափարին՝ որպես առաքելական ճանապարհի շարունակություն: Նույն այս ճանապարհով է ընթանում Անանիան եւ առաջնորդում վանական համայնքն այդ ճանապարհով: Այս կապակցու-

²⁰ Տես Մատյան, Բան ԼԴ., ԺԲ.:

Թյամբ շեշտվում է ճշմարիտ աշակերտության ընդհանուր գաղափարը Եկեղեցում ըստ Ա. Կորնթ. ԺԲ. 28 խոսքի՝ «...վասն զի աշակերտք եմք աւրինացն Աստուծոյ եւ մագարէիցն, նաեւ առաքելոցն իսկ, եւ ամենայն սուրբ հարցն եւ վարդապեացն»: Վանականությունը, ըստ էության, Քրիստոսի ճշմարիտ աշակերտությունն է:

Ուխտանեսը սեւեռում է իր ուշադրությունը սիրո պատվիրանների իրագործման վրա, որը վանական ապրելակերպի առանցքն է (ըստ Գիրք հարցողաց, Հարց. 1 եւ 2): Այն ամենը, ինչ որ նա այս իմաստային շրջանակում ընդգծում է, բխում է փիլիսոփայական աստվածաբանությունից. Աստված Իր էությամբ բարի է եւ բարձրագույն բարության աղբյուր է²¹: Աստու բարեգործությունը մարդու հանդեպ Ուխտանեսը մեկնաբանում է անմիջապես փրկաբանական տեսանկյունից՝ Աստու փրկչական տնօրինության առանցքում, Աստու սիրո հայտնությամբ՝ Քրիստոսի միջոցով: Սա բնորոշվում է որպես բարձրագույն բարեգործություն, որտեղ եւ բացահայտում է Աստված Իր Երրորդությունը: Սիրո այս բացահայտ փրկագործական արարքով խոստովանվում, երկրպագվում, սիրվում են Սուրբ Երրորդության անձերը: Այս մեկնաբանությամբ բնորոշվում է Եկեղեցին՝ որպես Սուրբ Երրորդության փրկագործության վայր, որտեղ եւ գտնվում է վանական համայնքը:

Ուխտանեսի շարադրանքից հետեւում է, որ վանական համայնքը կոչված է Սուրբ Երրորդության խոստովանության եւ երկրպագության եւ հավատի, հույսի, սիրո առաքինությունների կատարյալ օրինակ լինելու: Այս առումով լավագույն օրինակներ են Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» ստեղծագործությունը՝ որպես հավատքի դավանության կոթող, եւ «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր առաքինութեան» խրատը:

ՀԻՄՆԱԲԱՈՒԵՐ

Վանական ապրելակերպ, Անանիա Նարեկացի, Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան:

²¹ Այս առումով բավական է միայն ընդգծել «բարու» ըմբռնումը անտիկ փիլիսոփայական՝ հատկապես պլատոնյան եւ նորպլատոնյան (օրինակ՝ ՊԼՈՏԻՆՈՍ, էննեագներ Ա. 6. 6) աշխարհըմբռման մեջ: Տես նաեւ՝ Հ. ԹԱՄՐԱԶՅԱՆ, Գրիգոր Նարեկացին եւ նորպլատոնականությունը, Երեւան, 2004:

РЕЗЮМЕ

В ответном письме епископа Ухтанеса, адресованном Анании Нарекаци, переплетаются мысли, позволяющие уловить понимание монашеской жизни койнобитов в X веке. Прежде всего необходимо подчеркнуть центральное значение монашеских правил Василия Кесарийского в формировании армянских монашеских общин. В рамках этих монашеских правил формулируется главная цель монашеского образа жизни: она состоит в сообразовании Христу, что является задачей, которую Василий определяет для каждого христианина (Василий Кесарийский, Книга вопросов, 35, 366, стр. 126). Поэтому настоятель монастыря должен сам стать совершенным примером сообразования Христу, чтобы по тому же пути вести вверенную ему общину. Таким образом, требование соответствия Христу (согласно Мф 12:29 и 1 Кор. 11:1) становится руководящим принципом монашеского образа жизни. С этой точки зрения Ухтанес определяет образ жизни Анании Нарекаци как настоятеля монастыря. Таким образом, монашеский образ жизни определяется как следование Христу через уподобление Ему. В то же время требование следовать за Христом порождает идею непрерывного ученичества Христа, как продолжения апостольского пути. Анания следует этим апостольским путем и ведет на этом пути свою монашескую общину к совершенству. В этом контексте Ухтанес определяет истинное ученичество в церкви в соответствии с 1 Кор. 12, 28. Монашество по сути представляет собой истинное ученичество Христа. Кроме того, Ухтанес в центр своего внимания ставит двойную заповедь любви к Богу, а именно как основу монашеского добродетельного образа жизни, основанного на монашеских правилах Василия Кесарийского (Книга вопросов 1 и 2). То, что он подчеркивает в этом контексте, основано на философском богословии: Бог по своей сути добр и источник высшего добра, поэтому Он — благодетель. Ухтанес интерпретирует благосклонность Бога к человеку непосредственно с искупительной точки зрения, а именно через событие воплощение Христа, как откровение любви Бога к человеку. В этом благодеении раскрываются почитаемые и любимые лица Святой Троицы. Таким образом, церковь определяется как священное место спасения, к которому привязана монашеская община. Из этого толкования следует, что монашеская община призвана быть совершенным примером исповедания и почитания Святой Троицы через веры, надежды и любви. Лучшим примером этого является произведение монаха Григора Нарекаци «Книга скорбных песнопений» как свидетельство веры и его наставление: «Наставление к истинной вере и правой добродетели».

SUMMARY

Bishop Ukhtanes' reply letter to Anania of Narek interweaves thoughts that allow us to grasp an understanding of the Coenobitic monastic life in the tenth century. First of all, the central importance of the monastic rules of Basil of Caesarea in the formation of the Armenian monastic communities must be underlined. Within the framework of these monastic rules, the main goal of the monastic way of life is formulated: it consists in conformity to Christ, which is the task that Basil defines for every Christian (Basil of Caesarea, Book of Questions 35, 366, pg. 126). Therefore, the abbot of the monastery must himself become a perfect example of conformity to Christ in order to lead the community entrusted to him along the same path. Thus, the requirement of conformity to Christ (according to Matthew 12:29 and 1 Corinthians 11:1) becomes the guiding principle of the monastic way of life. From this perspective, Ukhtanes defines the way of life of Anania of Narek as the monastery abbot. Thus, the monastic way of life is determined as following Christ through conformity to Him. At the same time, the demand to follow Christ gives rise to the idea of constant discipleship of Christ as a continuation of the apostolic path. Anania follows this apostolic path and leads his monastic community to perfection on this path. In this context, the true discipleship in the church is defined in 1 Cor. 12, 28. Monasticism essentially represents the true discipleship of Christ. Furthermore, Ukhtanes puts the double commandment of love for God at the center of his attention, namely as the basis of the monastic virtuous way of life based on the monastic rules of Basil of Caesarea (Book of Questions 1 and 2). What he emphasizes in this context is based on philosophical theology: God is inherently good and the source of supreme goodness; therefore He is benevolent. Ukhtanes interprets God's benevolence towards human beings directly from a redemptive perspective, namely through Christ's incarnation as a revelation of God's love for humans. In view of this redemptive act of love, the persons of the Holy Trinity who are to be venerated and loved are revealed. The church is thus defined as the sacred place of salvation to which the monastic community is bound. From this interpretation it follows that the monastic community is called to be a perfect example of the confession and of the veneration of the Holy Trinity through the virtues of faith, hope and love. The best example of this is the work of the monk Gregory of Narek "Book of Lamentations" as a testimony to the creed and his instruction: "Instruction for true faith and right virtue".

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՄԱՐԴԱՎԱՆՑ ՆԱԽՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ ԴԱՍԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԿԱՅԱՏԱՆՈՒՄԻ
(Վարկած)

Մխիթար Գոշի «Դատաստանագրքի»՝ շինականներին նվիրված գլխում կարդում ենք հետևյալ միտքը. «Ազատ յԱրաչէն եղեւ մարդկայինս բնութիւն, այլ ծառայել տերանց յաղագս պիտոյից եղեւ հողոյ եւ ջրոյ»²: Մեր հոգւածի նպատակն է ցույց տալ, որ ի հակադրումն արտահայտված տեսակետների՝ Գոշի այս գաղափարը ոչ միայն դեմ չէ, այլև համահունչ է քրիստոնեական վարդապետութեանը: Ավելին. այն ոչ այլ ինչ է, քան Ծննդոց գրքի մի հատվածի յուրօրինակ մեկնություն:

Հին Կտակարանի Ծննդոց գրքում (Ա. 26–28) եւ Սաղմոսներում կա ցուցում առ այն, որ մարդ արարածը կերտվել է իբրեւ ազատ արարած՝ իշխելու աշխարհի բարիքների վրա. «Եւ արար Աստուած զմարդն ի պատկեր իւր, ըստ պատկերի Աստուծոյ արար զնա, արու եւ էգ արար զնոսա: Եւ արհնեաց զնոսա Աստուած եւ ասէ. Անեցիք եւ բազմացարոմ եւ լցիք զերկիր եւ տիրեցիք դմա եւ իշխեցիք ձկանց ծովու եւ թռչնոց երկնից եւ ամենայն անասնոց եւ ամենայն սողնոց, որ սողին ի վերայ երկրի»³:

¹* Ստացվել է՝ 14.12.2023, գրախոսվել է՝ 27.12.2023:

էլ. հասցե՝ vardanyanareg1@yahoo.com:

² ՄԽԻԹԱՐ ԳՈՇ, Գիրք Դատաստանի, աշխատ.՝ Խ. Թորոսեանի, հրատ. պատ. Գ. Գասպարեանը, Մատենագիրք Հայոց, հտ. ԺԹ., Երեւան, 2014, էջ 176:

³ Գիրք Ծննդոց, աշխատ.՝ Ա. Զեքեթիսյանի, Երեւան, 1985, էջ 149–150, հմմտ. Սաղմ. Ը. 4–9: Այս հատվածի գաղափարական էությունը եւ միջավայրի շուրջ կան բազում կարծիքներ (տես W. R. GARR, In His Own Image And Likeness: Humanity, Divinity, And Monotheism, Leiden/Boston, 2003, էջ 219, H. WOLFF, Anthropology of the Old Testament, tr. M. Kohl, Philadelphia, 1974, pp. 160–161, D. J. A CLINES, The Image of God in Man, “Tyndale Bulletin”, № 19, 1968, էջ 53–103, B. SOMMER, Hebrew Humanism: A Commentary on Psalm 8, “Studies in Bible and Exegesis”, № 11, 2020, pp. 7–32, C. CROUCH, Made in the Image of God: The Creation of օֿֿֿֿ the Commissioning of the King and the Chaoskampf of YHWH, “Journal of Ancient Near Eastern Religions”, № 16, 2016, էջ 1–21):

Այս միտքն արտահայտվել է նաև Սիրաքի գրքում (Ժէ. 1–4). «Տէր հաստեաց ի հողոյ մարդ, եւ դարձեալ դարձոյց զնա ի նոյն: Աուրս թուոց ժամանակաց ետ նոցա, եւ ետ նոցա իշխանութիւն այնց՝ որ ի նմա: Առանձին զգեցոյց նոցա զօրութիւն, եւ ըստ պատկերի իւրոյ արար զնոսա: 4. Եղ զահ նորա ի վերայ ամենայն մարմնոյ, եւ տիրել զազանաց եւ թոչնոց»⁴: Հայ թարգմանական մատենագրութեան մեջ այս միտքը հանդիպում է Գրիգոր Նյուսիրացու⁵ եւ Բարսեղ Կեսարացու⁶ երկերում: Այսպիսի գաղափարներ է արտահայտում մարդու մասին նաև Կապադոկիական հայրերի հետ սերտ կապ ունեցող Նեմեսիոս Եմեսացին. «Արդ ո՞վ ո՞ք արժանաւորապէս սքանչացի ընդ բարետոհմութիւն այսր կենդանոյս՝ շաղկապողիս ընդ ինքնեան զմահկանացուս ընդ անմահիցն.... վասն որոյ եւ փոքր աշխարհ ասի.... վասն որոյ եւ Աստուած մարդ եղև.... ըստ պատկերի եւ ըստ նմանութեան Աստուծոյ եղեալք, Քրիստոսի կենակիցք, Աստուծոյ ժառանգք, ամենայն իշխանութեանց եւ պետութեանց գահերէց նստեալք»⁷: Հայ մատենագրութեան առաջին ինքնուրույն գործերից մեկում՝ Գրիգոր Լուսավորչին վերագրվող ճառերում, նույնպես առկա է սույն մտքի երկրորդում⁸: Այն արտահայտվել է նաև ԺԳ. դարի ասորի բժիշկ Իշոխի հայերեն աշխատութեան մեջ.

⁴ Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ եւ թուղթ Երեմիայ Մարգարէի առ գերեալսն ի Բաբելոն, Վենետիկ, 1833, էջ 64: Ինչպէս նկատել են հետազոտողները, Սիրաքի գրքի այս տարբերակը տարբերվում է գրաբարչան Հին Կտակարանի կանոնական զոհրաբայական տարբերակից (տե՛ս Գ. ԱՐԳԱՐՅԱՆ, Սիրաքի գրքի հնագույն թարգմանութեան նորահայտ հատվածներ, «էջմիածին», 1966, ԺԱ. –ԺԲ., էջ 59–70): Սիրաքի գրքի հայկական ավանդույթի մասին ամենից համապարփակ քննությունը պատկանում Գարեգին վրդ. Համբարձումյանին (տե՛ս G. HAMBARDZUMYAN, The Book of Sirach in the Armenian Biblical Tradition: Yakob Nalean and His Commentary on Sirach, Berlin/Boston, 2015): Սիրաքի գրքին վերաբերող բանասիրական շատ հարցեր դեռևս կարոտ են լուծման: Մենք, հետեւելով հետազոտողներին, ընտրել ենք վենետիկյան հրատարակությունը՝ նաև հաշվի առնելով, որ այն ավելի մոտ է Յոթնամասնիցի բնագրին:

⁵ ԳՐԻԳՈՐ ՆԻՒՍԱՅԻ, Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն, աշխատ.՝ Ս. Վարդանյանի, Ս. էջմիածին, 2007, էջ 51, 57, 69:

⁶ ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՅԻ, Գիրք պահոց, աշխատ.՝ Կ. Մուրադյանի, Ս. էջմիածին, 2017, էջ 97: Նույնի Յաղագս վեցարեայ արարչութեան, աշխատ.՝ Կ. Մուրադյանի, Երեւան, 1985, էջ 293–294: «Վեցօրեայքի» ասորերենից թարգմանված լինելու մասին, որ բացատրում է աշխատասիրողի մի շարք տարակուսանքները, տե՛ս Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքի» հայերեն թարգմանութեան նախօրինակը (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1983, թիվ 2–3, էջ 264–278):

⁷ ՆԵՄԵՍԻՈՍ ԵՄԵՍԱՅԻ, Յաղագս բնութեան մարդոյ, աշխատ.՝ Կ. Մոսիկյանի, Երեւան, 2019, էջ 135–136:

⁸ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ, Յաճախապատում ճառք, Մատենագիրք Հայոց, հտ. Ա., Անթիլիաս, 2003, էջ 20–21:

«Արուեստ՝ իմաստութիւնն Աստուծոյ, որ կոչեցաւ բնութիւն, արար զմարդ իբրեւ զաշտարակ ի մէջ ֆաղափի, որպէս զի երեւեսցի յայտնապէս թագաւոր եւ պաշտօնատար զոլ ամենեցունց»⁹: Նորից տեսնում ենք նշված մտքի կիրառութիւնը եւ փրկեմ Աստուծոյ վերագրվող մի մեկնութիւն մեջ¹⁰: Դիտելի է, որ այս հատվածն ընկալվում է առավելապես հոետորական լույսի ներքո՝ իբրեւ Աստուծու կողմից ստեղծված կատարյալ արարածի գովաբանութիւն: Եկեղեցու որոշ այլ հայրեր տվել են այս մտքին ավելի փիլիսոփայական մեկնութիւն՝ դիտելով այն որպէս մարդու ոգեղենութիւն կամ բանականութիւն¹¹:

Խնդրո առարկա մտքի առավել մանրակրկիտ ներկայացնելը թողնելով հետագային՝ այստեղ արձանագրենք, որ հայ հեղինակներին հասանելի մեկնութիւններում մեծ մասամբ շեշտվում է նրա հոետորական բնույթը: Սակայն ԺԲ. դարի հեղինակների երկերում որոշակի միտում է նկատվում նրանում հասարակական իմաստ տեսնելու¹²: Այսպէս՝ Սարգիս Շնորհալին գրում է. «Զայս ուսուցանէ եթէ թագաւորի պատիւ, եւ դատաւորի, եւ իշխանի, մարդկան մտաց ստեղծուածք են եւ զանազանութիւնք. վասն զի ի ստեղծմանն Աստուծոյ ոչ ոք աւելի ունի քան զընկերն, քանզի համապատիւ ստեղծ արարիչն: Իսկ տէրութիւն եւ ծառայութիւն յետոյ սպրդեալ ի ներքս եմուտ. եւ միտք մարդկան սակս գահապիռութեան պատիւս պէսպէսս եւ զանազանս իմացան: Զումն ի ծայրագոյն պատիւ թագաւորութեան պատուեցին լինել զկնի Աստուծոյ իշխան կենաց եւ մահու համաստեղիցն»¹³: Եթէ Սարգիս Շնորհալին մարդկանց համարում է հասարակական առումով սկզբնապէս ազատ արարածներ եւ նրանց հետագա ծառայական վիճակը՝ մարդկանց կողմից պետական իշխանութիւն ստեղծման հետեւանք, ապա Մխիթար Գոշը Դատաստանագրքի հայտնի հատվածում մատնանշում է տնտեսական պատճառներ՝ «հողը» եւ «ջուրը»:

⁹ Ի Ծ Օ Խ, Գիրք ի վերայ բնութեան, աշխատ.՝ Ս. Վարդանյանի, Երեւան, 1979, էջ 95:

¹⁰ Տէս The Armenian Commentary on Genesis Attributed to Ephrem the Syrian, ed. Ed. G. Mathews, Jr., Lovanii, 1998, էջ 9–10:

¹¹ Տէս K. BARTH, Church Dogmatics, v. III/1, ed. G. Bromiley and T. Torrance, Edinburgh, 1958, էջ 192–94:

¹² Այս հատվածի հասարակական մեկնաբանութիւն շուրջ որոշակի դիտարկումներ անում է նաեւ Գրիգոր Նյուսացին, սակայն միայն հոետորական հարցի մակարդակում (տես ԳՐԻԳՈՐ ՆՆԻՍԱՅԻ, նշ. աշխ., էջ 122):

¹³ ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթողիկեաց, աշխատ.՝ Ա. վրդ. Նարինեան, Կ. Պոլիս, 1826, էջ 261:

Բնական հարց է ծագում. ինչո՞վ է պայմանավորված այս մեկնությունը, որը ոչ միայն խորթ է թվում միջնադարյան խիստ անազատ հասարակությանը, այլև առհասարակ Ծննդոց գրքի՝ հայ հեղինակներին հասանելի մեկնողական ավանդույթին: Հայագիտության մեջ կա մի քանի կարծիք: Վ. Չալոյանն այն հակված է կապելու «Հայկական վերածնունդ» կոչվող երեւույթի հետ¹⁴, Ա. Հովհաննիսյանը դրա մեջ տեսնում է Գոշի հանճարի հերթական արտահայտումը¹⁵: Որոշ հետազոտողներ այստեղ տեսնում են զուտ բնական օրենքներ ներմուծելու խնդիր¹⁶, իսկ Խ. Թորոսյանը գտնում է, որ Գոշի իրավական միտքն անկախ է եղել Աստվածաշնչից, իսկ երկուսն էլ առնչությունները կրում են զուտ «ձեռական» բնույթ¹⁷: Չալոյանի մոտեցումները, որոնք հիմնավոր քննադատության է ենթարկել հայագետների մի քանի սերունդ¹⁸, մեծ հաշվով արդյունք էին 1960-ականների խորհրդային արեւելագիտության մեջ ընդունված նոր գաղափարախոսության, որի դիրքերից հիմնովին սխալ էին մեկնաբանվում Ժ.–ԺԳ. դարերի հասարակական փոփոխությունները: Չալոյանի հետազոտական մոտեցումների մասին կարելի է բավարար պատկերացումներ կազմել՝ բերելով միայն նրա այն տեսակետը, որի համաձայն՝ Գոշի հայացքները «որոշակի ձերբազատում են եկեղեցաաստվածաշնչյան գաղափարաբանության ճնշումից»¹⁹: Ինչ վերաբերում է «բնական օրենք» հասկացությանը մեկնաբանությանը, ապա այն նույնպես խնդրահարույց է: Բանն այն է, որ եւրոպական իրավունքի այս հասկացությունը գոյություն

¹⁴ Տէս Ե. ЧАЛОЯН, Армянский ренессанс, Москва, 1963, էջ 110–111:

¹⁵ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Իրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հտ. 1, Երեւան, 1957, էջ 281–282:

¹⁶ Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, Մխիթար Գոշը եւ «Հայոց դատաստանագիրքը», Երեւան, 1965, էջ 21–27, Ն. ԹՈՎԱԾՅԱՆ, Հայ սոցիալ-տնտեսագիտական միտքը IX–XIV դարերում, Երեւան, 1970, էջ 113–118:

¹⁷ Խ. ԹՈՐՈՍՅԱՆ, Մխիթար Գոշի Դատաստանագրքի առնչությունը Աստվածաշունչ Գրոց հետ, «ՀՄՄԻ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտություններ», թիվ 4, 1963, էջ 61–74: Խ. Թորոսյանի՝ ակնհայտորեն իրականությանը չհամապատասխանող սույն տեսակետը հիմնավոր քննադատության է ենթարկել է. ՊԻՎԱԳՅԱՆ (տես է. ՊԻՎԱԳՅԱՆ, Մխիթար Գոշի Դատաստանագրքի բանասիրական քննություն, Երեւան, 1987, էջ 151–158): Միսալ է նաեւ Թոբերտ Թոմսոնի կարծիքը, ըստ որի՝ սույն հատվածը չի ծագում Ծննդոց գրքից (տես R. THOMSON, The Lawcode [Datastanagirk'] of Mxit'ar Gosh, Amsterdam/Antlanta, GA, 2000, էջ 141):

¹⁸ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Արդյո՞ք միջնադարյան Հայաստանում տեղի ունեցել է կապիտալի նախասկզբնական կուտակում, «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 1, 1959, էջ 202–222: Չալոյանի եւ իր ընդդիմախոսների մասին ավելի մանրամասն տես Վ. ԲԱՐԽՈՒԿԱՐՅԱՆ, Ուրվագիծ միջնադարյան հայկական մշակույթի պատմության, Երեւան, 2016, էջ 198–209:

¹⁹ Տէս Ե. ЧАЛОЯН, նշ. աշխ., էջ 111:

չի ունեցել Գոշի ժամանակների Հայաստանում: Իհարկե տեսականորեն Գոշը կարող էր դրան ծանոթ լինել, սակայն այդ դեպքում նա կանդորադառնար այդ տեսութայանը, այլ կերպ ասած՝ ուղիղ քաղվածքներ կաներ լատին հեղինակներից, «Դատաստանագրքում» տեղ կգտնեին մտահայեցական (սքոլաստիկական) մտքին բնորոշ զեղումներ: Հետեւապես Գոշը չէր կարող հղում կատարել մի սկզբունքի, որին ծանոթ չէր: Ավելին. «բնականության» կամ «նախնական վիճակի» հասկացությունը միջնադարում հիմնվել է նախ եւ առաջ Աստվածաշնչի վրա, քանի որ Հին Կտակարանի գրքերն են համարվել մարդու նախապատմության աղբյուրը:

Այսպիսով՝ համոզվում ենք, որ այս միտքն ինքնին Աստվածաշնչից է գալիս²⁰: Ա. Հովհաննիսյանը, տալով ճիշտ գնահատական, համարում է, որ Գոշը ոչ թե հակադրվում է եկեղեցական ավանդույթին, այլ համադրում է այն «բնական» իրավունքի տարրերի հետ: Ամեն դեպքում Հովհաննիսյանի միտքը չի բացում ամբողջ պատկերը, քանի որ Գոշից առաջ մարդկանց նախնական ազատության մասին խոսել է դեռ Սարգիս Շնորհալին: Ավելին. Ներսես Շնորհալու ժառանգության մեջ կա շատ հետաքրքրական մի տեղեկություն այս մտքի շուրջ: «Թուղթ ընդհանրական»-ում, խոսելով եկեղեցու կարգավորության պակասի մասին, նա հավելում է. «Նաեւ եւս ծայրագոյն յիմարութեան բանք, զորս պատասխանեն նոքա խրատատուաց իւրեանց մի լինել հետաշրջողս, ասեն՝ Աստուած ազատ արար զմեզ եւ իմքնիշխանս, զիա՞րդ զազատութիւնս մեր ի ծառայութիւն դիցում մարդկան»²¹:

Այսպիսի պատկերացումները մարդկանց նախնական ազատության մասին հատուկ են եղել ԺԲ. դարի հայ ուսյալ այրերին: Եթե Գոշը եւ Սարգիս Շնորհալին այս գաղափարի ջատագովներն են, ապա Ներսես Շնորհալին դրա հակառակորդն էր: Այս առումով պարզ է դառնում, թե ինչու է Ներսես Լամբրոնացին մարդու սկզբնական ազատության մասին խոսելիս մտնում վերացական մտքերի դաշտ: Նա «ազատ» բառի փոխարեն նախընտրում է «անձնիշխան» բառը, որը, ինչպես գիտենք, ավելի իմաստասիրական եզրույթ էր՝ ի տարբերություն «ազատի», որը

²⁰ Ի դեպ՝ ասվածը լիովին համահունչ է է. Պիվազյանի՝ տարիներ առաջ կատարած եզրակացության հետ Գոշի աղբյուրներից օգտվելու մոտեցմանը (տես է. ՊԻՎԱԶՅԱՆ, նշ. աշխ., էջ 155–157):

²¹ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Թղթեր, աշխատ.՝ Ա. Բոգոեանի, Մատենագիրք Հայոց, հտ. ԻԲ., Երեւան, 2022, էջ 70:

նաեւ հայ հասարակութեան վերնախավի միջնադարյան անվանումն էր²²: Թվում է, սակայն, որ Գոշի միտքը նույնպէս ունեցավ հետեւորդներ: Այսպէս՝ Վարդան Այգեկցին հակված է մարդկանց նախապէս ազատ տեսնելու, սակայն, ի տարբերութիւն Սարգիս Շնորհալու եւ Մխիթար Գոշի քաղաքական եւ տնտեսական բացատրութիւններին, նա այդ ազատութեան կորուստը բացատրում է հայ մատենագրութեան մէջ տարածված՝ «վասն մեղաց մերոց» բանաձեւով. «Եւ արդ յառաջ զանձնիշխանութիւն դիցում գոր քաջ գիտէ ամենայն մարդ որ հմուտ է Աստուածաշունչ գրոց, քանզի որպէս եւ է Աստուած ազատ յամենայն հարկաց եւ անձն իշխան եւ գոր կամի կարէ առնել. եւ ոչ է ընդ հրամանաւ ուրում. այլ նա տիրէ եւ իշխէ ի վերայ ամենայնի գոր արար. եւ նոյնպէս արար զհրեշտակք եւ զմարդն ազատ եւ անձնիշխան կամամք ի նմանութիւն պատկերի իւրոյ. զի գոր սիրեն եւ կամին զայն գործեն եւ յայն աշխատին եւ յոր վաստակեն զայն ժառանգեն. զի եւ Աստուած կամաւ որ բարին կամի եւ զայն խնդրէ ի մենջ վասն որոյ եւ անձնիշխանութեան ետ Աստուած զպատուէր հրամանին. եւ ոչ արար Աստուած զմարդս ծառայական իբրեւ զանասունս զի ակամա կապեսցեն զնոսա եւ տարցեն. իսկ անիծեալ եւ պեղծ շունն կատաղի սատալ անձնիշխան կամօքն գոր ունէր ի բաց վարեաց զբարին ի սրտէն իւրմէ եւ բուսոյց զչար հպարտութիւն ի հոգւոյ իւրում վասն որոյ] Աստուած յերկիր կործանեաց զնա եւ նա կորոյս եւ զԱդամ նոյն հպարտութեամբ եւ զրկեաց յԱստուծայ փառացն...»²³:

Ստացվում է, որ գոյութիւն ունեցող բացատրութիւնները չեն լուծում այս գաղափարի ծագման հարցը: Այսպիսով՝ կարիք կա քննելու Ծննդոց գրքի այս հատվածի հասարակական մեկնաբանութեան ակունքը: Մենք հակված ենք դա տեսնելու վարդապետաց դասի կայացման մէջ: Ժ. դարից սկսած՝ վարդապետները դառնում են Հայ Եկեղեցու կառուցողական շերտերից մեկը²⁴: Կողբունին վերագրվող «Տեսիլ»-ում մե-

²² ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ, Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ եւ Մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847, էջ 33: Կարեւոր է նշել, որ «անձնիշխան» եզրույթը կարեւոր դեր ունի Եզնիկ Կողբացու իմաստասիրական համակարգում: Բացառված չէ, որ Լամբրոնացին հղում էր Կողբացուն (տես Լ. Գ. ԽԱՉԵՐԵԱՆ, Եզնիկեան ազատականութեան տեսութիւնը իբրեւ մարդու կրթութեան եւ դաստիարակութեան մեկնակէտ, «Հանդէս Ամսօրեայ», թիւ 1-12, 1996, էջ 206-269: Ս. ԱՐԵՒՇԱՏՅԱՆ, Եզնիկ Կողբացու փիլիսոփայութիւնը, «Պատմա-բանասիրական հանդէս», թիւ 3, 1997, էջ 143-144):

²³ ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ, Հարցմունք տէր Միքայէլի Անտիոքու եպիսկոպոսին (տես ՄՄ 770, թ. 176բ-177բ):

²⁴ Վարդապետաց դասի տեղը եւ դերը Միջնադարյան Հայաստանում արժանացել է հպանցիկ ուշադրութեան միայն (տես Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ, Ուրվագիր հայ դպրոցի եւ մանկավար-

ծամեծ իշխանավորները հավաքվում են՝ խորհուրդ հարցնելու վարդապետից²⁵: Կարելի է շարունակել այս օրինակների շարքը հետագա դարերում նույնպես: Վարդան Այգեկցին խրատներ է տալիս Ռուբինյան Պաղտին իշխանին²⁶, Հովհաննես Երզնկացին՝ Եկեղյաց իշխաններին²⁷, Մխիթար Գոշը Զաքարե Զաքարյանի վրա ազդեցություն ունեցող գործիչ էր²⁸ եւ այլն:

Կարելոր է նկատել, սակայն, որ Ժ. դարից սկսած՝ հասարակական բարձր դիրք վայելող այս դասն ուներ կարելոր մի քանի առանձնահատկություն: Նախ այն իր իշխանությունը եւ հասարակական դերը ձեռք էր բերում որոշակի գիտելիքների տիրապետելու շնորհիվ: Վարդապետից ակնկալվում էին խոր գիտելիքներ այս կամ այն ոլորտում:

Հայ վարդապետերն այդ գիտելիքներն ստանում էին՝ խորապես յուրացնելով Աստվածաշնչում արտահայտված գաղափարները: Այս առումով բացառություն չէր նաեւ հասարակական մտածողությունը: Սակայն Աստվածաշնչում առկա է հաճախակի արծարծվող երկու գաղափար: Մի կողմից հանրահայտ է շատ լուրջ ձգտումը դեպի արդարություն, ինչն արտահայտվում է մարգարեների կերպարներով, նախ եւ առաջ Քրիստոսի վարդապետությանը: Աշխարհիկ իշխանությունը համարվում է սին, կա հզորագույն մղում դեպի հալածվածների եւ աղքատների պաշտպանությունը: Հաճախ քաղաքական իշխանությունը դիտվում է իբրեւ չարիք²⁹: Սակայն նույն Աստվածաշնչում կարելի է գտնել բազում հղումներ առ այն, որ չնայած աշխարհի կարգի անարդարությանը, անհրաժեշտ է հպատակվել տիրակալներին: Ավելին, տիրակալների իշխանությունն ինքնին կարող է համարվել ի վերուստ ընդունելի³⁰: Արդարության

ժուլիան պատմության, Երեւան, 1958, էջ 349–350), Բ. Մ. ՎՐԳ. ԿԻՐԵՍԵՐԵԱՆ, Վարդապետութեան աստիճանները հայ եկեղեցւոյ մէջ, Անթիլիաս, 1980): R. THOMSON, Vardapet in the Early Armenian Church, “Le Muséon”, թիվ 3–4, 1962, էջ 367–384:

²⁵ Լ. ԽԱՉԻՎՅԱՆ, Հակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի, «Աշխատություններ», հտ. Ա., Երեւան, 2012, էջ 192:

²⁶ Խոսքը վերջինիս «Խրատք առ Պաղտին իշխան» երկի մասին է (տե՛ս ՄՄ 1880):

²⁷ Է. ԲԱՂՎԱՍՏՐՅԱՆ, Հովհաննես Երզնկացին եւ նրա խրատական արձակը, Երեւան, 1977, էջ 204 եւ հետ:

²⁸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՅԻ, Հայոց պատմություն, աշխատ.՝ 4. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 167, 173:

²⁹ SÉA P.H. NEMO, Histoire des idées politiques dans l’Antiquité et au Moyen Âge, Paris, 2014, էջ 669–679:

³⁰ Անդ, էջ 719–724:

ձգտման եւ անարդար աշխարհում իշխանություններին հպատակության գաղափարները ժառանգել էին նաեւ հայ վարդապետերը, որոնք իրենց քաղաքական մտածողությունն առաջին հերթին բխեցնում էին Աստվածաշնչից: Նույն Սարգիս Շնորհալին³¹, Մխիթար Գոշը եւ Վարդան Այգեկցին³² այլուստ հանդես են գալիս իբրեւ աստիճանակարգված հասարակությունն ընդունող գործիչներ:

Մեկ այլ կարեւոր հանգամանք է վարդապետերի հասարակական ծագումը: Քիչ չէին այն վարդապետները, որոնք ծագում էին շինական կամ քահանայական դասից³³: Սա բնական էր նաեւ ժողովրդագրական տեսանկյունից, քանի որ դժվար թե իշխանական տներն այդքան արու գավակներ ի վիճակի լինեին կտրել ռազմական գործից եւ նվիրել հոգեւոր կյանքին: Հայտնվելով այսպիսի դիրքում եւ յուրացնելով աստվածաշնչյան արդարության պատկերացումները՝ վարդապետերը պետք է առավել խորությամբ հասկանային արդարության պակասը միջնադարյան հասարակությունում: Չէ՞ որ քահանան կամ շինականը շատ ավելի հաճախ էր դառնում կամայականության զոհ, քան թե՛ ազատները եւ իշխանները: Սակայն մյուս կողմից՝ այս հեղինակներն ապրում եւ գործում էին վանքերում, որոնք հիմնված էին նույն այդ հասարակության տնտեսական կառուցվածքի՝ վանական կալվածատիրության վրա: Ավելին. առանձին իշխանների եւ համակարգի դեմ ապստամբելու դեպքում նրանք ոչ միայն դեմ կգնային աստվածաշնչյան հնազանդության գաղափարին, այլեւ կհայտնվեին տհաճ իրավիճակներում: Նրանց քաղաքական գիտակցությանը, միապետական կարգերից բացի, ոչ մի այլ տարբերակ հասանելի չէր: Չնայած այն բանին, որ հայ ընթերցողը ԺԱ. դարից սկսած ծանոթ էր Պղատոնի «Օրենքներին», որտեղ քննարկվում են կառավարման տարբեր ձեւեր, այդ գրքի քաղաքական տեսությունը ոչ ոքի չէր հետաքրքրում

³¹ Մասնավորապես նա շեշտում է ծառաների հնազանդության պահանջը (տե՛ս ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ, նշ. աշխ., էջ 290):

³² Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 282, 284, 288, 296–297 եւ այլն:

³³ Կիրակոս Գանձակեցու, Վարդան Արեւելցու, Մխիթար Գոշի, Վանական վարդապետի եւ մի շարք վարդապետերի կենսագրություններում հայտնի չէ որեւէ ազդեցիկ բարեկամ, ինչը խոսում է նրանց՝ ցածր խավերից ծագման հավանականության մասին: Նման հղում կա նաեւ Գանձակեցու պատմության մեջ Սարկավագի եւ Ժամանակի այլ վարդապետերի մասին (տե՛ս ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑԻ, նշ. աշխ., էջ 116): Իհարկե կային նաեւ ազնվական ծագմամբ վարդապետեր, որոնք որոշ դեպքերում դառնում էին եպիսկոպոս, ինչպես կամբրոնացին, Օրբեյլանը եւ այլն:

քննությունն առարկա դարաշրջանում³⁴: Հետաքրքիր է նաև, թե Գրիգոր Մագիստրոսից բացի³⁵ քանին էին ընթերցել այն:

Ավելին. պետք չէ մոռանալ, որ վարդապետերը, չնայած աշխարհիկ արդարությանն իրենց նվիրումին, ի վերջո, ապրում էին իրենց կյանքը Վերին Երուսաղեմի սպասումով: Պատահական չէ, որ նրանց ստեղծած երկերի ճնշող մեծամասնությունը նվիրված է դավանաբանական հարցերին: Աշխարհիկ խնդիրները նրանց հետաքրքրությունների շրջանակում ստորադասված էին: Ահա այս գործոնների ազդեցության համապատկերում է պետք դիտարկել «ժողովրդամետ» եւ «իշխանամետ» հայացքների այն հակասությունը, որ հետազոտողները հաճախ տեսել են մեր միջնադարյան մատենագրության մեջ³⁶:

Հարկ ենք համարում ավելացնել, որ այս հարցն ավելի մանրազնին լուսաբանման կարիք ունի, որը, սակայն, մեր խնդրից դուրս է: Օրինակ՝ պետք է հաշվի առնել, որ նույն Ներսես Շնորհալին, որ դիմակայում էր այս մասնավոր մտքին, իր հայացքներով նույնպես մոտ է հասարակական արդարության քրիստոնեական գաղափարներին: Նույնը թերեւս կարելի է ասել Ներսես Լամբրոնացու մասին³⁷: Չնայած այս հոդվածով փորձեցինք պարզաբանել Միջնադարյան Հայաստանում վարդապետաց դասի կայացման եւ նրա դերի հետ կապված մի քանի հարցեր, այդուհանդերձ՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ խնդիրն ավելի համապարփակ մշակման կարիք ունի՝ առավել լայն աղբյուրագիտական հիմքով եւ ժամանակագրական ընդգրկումով: Հույս ունենք մոտ ապագայում ավելի մանրամասն անդրադարձ կատարելու այս կարեւոր խնդրի զանազան կողմերին:

³⁴ Մեզ չի հաջողվել գտնել Պղատոնի՝ հասարակության տիպերի տեսության ազդեցության գեթ մեկ օրինակ հայ մատենագրության մեջ:

³⁵ Թերեւս պղատոնական քաղաքական մտածողության՝ մեզ հայտնի միակ անդրադարձը պատկանում է Խաչատուր Կեչառեցուն: Նա «Ալեքսանդրի պատմության» սկզբում դրված իր «նախադրության» մեջ գրում է. «Իսկ արդար դատաստանաւ, որ է մասն քաղից խոնկեմութեանց, ըստ իմաստնոյն Պղատոնի, որ գրեալ է ի տիմեական տրամաբանութիւն»: Այստեղից ակնհայտ է, որ խոսքը «Տիմեոս» եւ ոչ «Օրենքներ» աշխատության մասին է (տե՛ս Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացոյ, աշխատ.՝ Հ. Սիմոնյանի, Երեւան, 1989, էջ 494):

³⁶ Ա. Հովհաննիսյան, նշ. աշխ., էջ 296–297, Գ. Գրիգորյան, Հովհաննես Երզնկացու փիլիսոփայական հայացքները, Երեւան, 1962, էջ 121–122, Գ. Գրիգորյան, Վահրամ Բաբունու փիլիսոփայությունը, Երեւան, 1969, էջ 39:

³⁷ Գ. Գրիգորյան, Հասարակական-փիլիսոփայական միտքը Հայկական Կիլիկիայում, Երեւան, 1979, էջ 59, 70–71, 73:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Մխիթար Գոշ, «Դատաստանագիրք», Վարդապետաց դաս, Ներսես Շնորհալի, Ծննդոց գիրք, Եկեղեցու հայրեր

РЕЗЮМЕ

В знаменитом «Судебнике» Мхитара Гоша есть следующая, несвойственная церковному иерарху мысль: люди были созданы Богом свободными, но они служат господам по экономическим причинам. В арменистике есть две интерпретации происхождения этой мысли: некоторые связывают это с так называемым «Армянским Ренессансом», другие видят в этой мысли некий «гуманистический гений» Гоша. Суть нашей статьи показать, что это мысль не что иное, как интерпретация стихов 1:26–28 Книги Бытия. Кроме того, мы показываем, что такая интерпретация в некотором отношении отличается от взглядов, дошедших до нас в древнеармянской переводной патристической литературе. В конце статьи мы предлагаем гипотезу о происхождении такого рода мышления в эпоху Мхитара Гоша.

SUMMARY

In the famous “Lawcode” of Mkhitar Gosh, one encounters a peculiar remark on the original human society. The essence of Gosh’s idea is that people were created free by God, but they serve masters for economic reasons. Traditionally, this idea has been interpreted as evidence of the so-called *Armenian Renaissance* or, on the contrary, as a reflection of Gosh’s unconventionally humanistic worldview.

The purpose of this paper is to show that this idea is derived from Gosh’s interpretation of Genesis 1:26–28. Moreover, it is worth noting that Gosh diverges significantly from the patristic tradition of its interpretation available in his time through classical Armenian translations. As a result, we present a hypothesis about the social origin of Gosh’s idea.



ԱՎԵՏԻՍ ՔԱԼԱՇՅԱՆ

Փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ

Ն. Ա. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ՍԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ
ԵՒ ԱՍԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԸ
ԵՒ ՍՓՅՈՒՌԱՅԱՅ ԴՊՐՈՅԸ

Սկիզբը՝ թիվ Գ.

Գարեգին Բ. Կաթողիկոսը հավաստում է նաև, որ գիտատեխնիկական աննախադեպ առաջընթացի մեր դարաշրջանում ազգային իղձերի ու երազների իրականացման գործում կրթության դերն առավել ու առավել է կարևորվում: Քննական մոտեցմամբ նա նաև նկատում է, որ մարտահրավերներ դիմագրավող հայոց սփյուռքում նույնպես առաջնային է գիտության զարգացումը, որպեսզի սփյուռքահայ երիտասարդներն իրենց իմացության պաշարով ոչ միայն մրցունակ լինեն, այլև կարողանան շենացնել ազգային կյանքը: Այդ կապակցությամբ նա բարեմաղթում է, որ մեր ազգային «ուսումնական հաստատությունները հայրենիքում եւ սփյուռքում օրեցօր զորանան եւ առավել արդյունավորեն իրենց առաքելությունը՝ կրթելով մեր զավակներին համակողմանի իմացությամբ, հավատավոր ու հայրենասեր հոգով, որպեսզի կարող լինեն նորարարությունների, ստեղծագործական սլացքների եւ շարունակեն քրիստոնյա մեր ժողովրդի ներկայությունը աշխարհում, որ թեպետ փոքրաթիվ, բայց իր ստեղծածով միշտ համեմատվել է մեծերի հետ»¹:

Եւ քանի որ Հայոց Հայրապետը վստահ է, որ ուսյալ եւ կիրթ հասարակությունն է ընդունակ բարեփոխելու կյանքը, բարվոք վճիռներ գտնելու իր առջեւ կանգնած խնդիրների լուծման եւ սեփական առաջընթացն իրականություն դարձնելու գործում, դիմելով սփյուռքահայ երիտասարդներին՝ նա վկայում է, որ այդ դիտանկյունից եւս նրանցից սպասումները մեծ են: Այդ ամենի քննական վերլուծությամբ նա կոչ է անում, որ նրանք «ուսման մեջ լինեն քաջեռանդ ու հետեւողական եւ իրենց միտքն ու հոգին բացեն իմացության լույսի առջեւ»: Այդ գործընթացում Հայոց Նվիրապե-

¹ «Քրիստոնյա Հայաստան», 2017, սեպտեմբեր, Ա., թիվ 17 (493), էջ 1:

տը մեծապես կարեւորում է նաեւ, որ նրանք հասակ առնեն իբրեւ հոգով զորավոր, գիտելիքներով ամուր եւ հայրենիքի սիրո մեջ նախանձախնդիր հավատավոր անձեր: Եւ առ Բարձրյալն աղոթքով մաղթում է, որ ուսումնառութեան գործընթացը սաներին տոգորի նոր հույսերով, ուսումնատենչ ոգով ու աննկուն ջանասիրութեամբ, որպեսզի նրանց կյանքում շարունակաբար առանցքային եւ հիմնարար լինեն գիտելիքն ու իմացութեանը, հոգեւոր եւ բարոյական արժեքները: Այդ նպատակով նա երիտասարդներին հիշեցնում է. «Մեր զորեղ հավատքն է, որ պիտի մշտապես պայծառ պահվի մեր Ս. եկեղեցում: Մեր զորեղ հավատքն է եւ ամբողջական սերը, որ շեն պիտի պահեն Հայոց երկիրը, եւ այդ հավատքով ու սիրով մենք պիտի կարողանանք դիմակայել բոլոր դժվարութիւնները մեր կյանքի»²: Եւ վերստին իր գնահատանքն է հայտնում երիտասարդներին իրենց գիտակցութեան եւ ոգու համար, որ առաջնորդել է նրանց մերձենալ Եկեղեցուն, փարված մնալ ազգային սրբութիւններին, ազգային ավանդութիւններին ու արժեքներին:

Սփյուռֆահայ կրթական հաստատությունների նկատմամբ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հոգատար վերաբերմունքի վկայություններից մեկն էլ Մայր Աթոռում կազմակերպվող սփյուռֆահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներն են, որպեսզի էլ ավելի ամբողջական գիտելիքներով ու հավատով նրանք ձեռնամուխ լինեն իրենց նվիրական եւ պատասխանատու կոչման եւ առաքելութեան մեջ:

Մայր Աթոռում սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ անցկացնելու անհրաժեշտութիւնը Հայոց Նվիրակետը հիմնավորում է մի շարք գործոններով: Այդ կապակցութեամբ նա հավաստում է, որ վերապատրաստման դասընթացներ կազմակերպելով՝ «առաջին հերթին, բնականաբար, Մեր ցանկութիւնն էր, որպեսզի ինչպես դարեր շարունակ Ս. էջմիածինը հովանավորել է եւ իր գավիթներում կազմակերպել կրթութեան գործը, դաստիարակութեան գործը մեր ժողովրդի գավակաց, այնպես էլ այսօր այդ առաքելութեան մեջ պիտի շարունակի իր ներդրումն ունենալ»³: Մայր Աթոռում սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ անցկացնելու կարեւոր մեկ այլ գործոնն այն է, հավաստում է Վեհափառը, որ «մենք կարողանանք Մեր գնահատ

² «էջմիածին», 2013, Ժ., էջ 150:

³ «էջմիածին», 2005, է.-Ը., էջ 169:

տանքն արտահայտել հայ ուսուցչին այն կարեւոր ծառայութեան համար, որ իրականացնում է հայ կյանքից ներս»⁴, որպեսզի իր օրհնութիւնը փոխանցի ուսուցիչներին՝ հորդորելով առավել նախանձախնդրութեամբ, ջանասիրութեամբ եւ հավատով շարունակել իրենց նվիրյալ եւ պատասխանատու ծառայութիւնը՝ հայաշունչ ոգով եւ մեր հայրերի հավատքով կրթելով հայ մանուկներին ու պատանիներին⁵:

Երրորդ գործոնը Վեհափառը համարում է մեր պատմութեան խորհրդի հետ սփյուռքահայ մանկավարժների ծանոթութիւնը: Այդ գործընթացում նա առաջնային է համարում սփյուռքահայ ուսուցիչների այցելութիւնը Հայաստան, որի ընթացքում, ինչպես Վեհափառն է հավաստում, տարբեր ուխտատեղիներ այցելելով՝ նրանք հաղորդ են դառնում մեր ազգային սրբավայրերին, ըմբռնում են Մայր Աթոռի խորախորհուրդ երեկոները եւ մեր պատմութիւնը, այդ սուրբ մթնոլորտում հաղորդակից են դառնում մեր անցյալի, մեր ներկայի եւ գալիքի խորհրդին, զորանում են հոգով եւ լավատեսութեամբ՝ դեպի մեր ժողովրդի վաղվա օրը եւ առնչվելով ժողովրդի կյանքին՝ հաղորդ են դառնում մեր ժողովրդի ձեռքբերումներին⁶: Հետեւաբար սփյուռքահայութեան համար մեկ անգամ եւս հիմնավորելով դպրոց-եկեղեցի անխզելի կապի անհրաժեշտութիւնը՝ հավաստում է. «Այս կապը պետք է ամրապնդել, որովհետեւ այս երկուսի համադրութեամբ պետք է կարողանանք արժանավոր, հավատարմոր ու բարի զավակներ կրթել մեր ժողովրդի համար: – Եւ պարզաբանում է:– ...Բարի զավակ կրթել՝ նշանակում է ապահովել հավերժութիւնը, հարատեւ ընթացքը մեր ժողովրդի եւ բարօրութիւնը Հայրենիքի»⁷:

Մեծապես կարեւորելով սփյուռքահայութեան կյանքում ուսուցիչների «ազնվագոյն եւ ամենապատվական ծառայութիւնը»՝ Գարեգին Բ. Կաթողիկոսը բարձր է գնահատում նաեւ նրանց նախանձախնդիր, համբերատար եւ հետեւողական աշխատանքը սփյուռքահայ մանուկի, պատանու եւ երիտասարդի հոգեկերտվածքը ձեւավորելու գործում: Այդ հոլովութիւնը նրա հայրապետական հորդորն է՝ ուղեցույց ունենալ ժամանակի փորձութիւնն անցած այն պատգամը, որ «ազգը պահողը լեզուն եւ հավատն է»: Եւ որպեսզի այն «վերստին ու վերստին հնչի մանկավարժների

⁴ Անդ:

⁵ Տէն «Քրիստոնյա Հայաստան», 2014, հուլիս Բ., թիվ 14 (418), էջ 1:

⁶ Տէն «Էջմիածին», 2005, է.-Ը., էջ 169:

⁷ «Էջմիածին», 2006, է.-Ը., էջ 166:

հոգիներում», Հայրապետը պնդում է. «Այս նվիրական գործի մշակներն եք դուք, ազգը պահպանող նվիրական գործի մշակներն եք դուք, ուրեմն անաղարտ պահեք հայոց լեզուն մեր մանկանց շուրթերին եւ ամուր հայոց հավատքը նրանց հոգիներից ներս, որպեսզի հավերժորեն ապրի ազգս հայոց եւ վստահությամբ իր հայացքն ուղղած դեպի նոր ժամանակները մեր կյանքի՝ ապրի, արարի, շարունակի կերտել փառքը մեր ժողովրդի»⁸:

Ընդհանրացնող այդ տեսակետն Ամենայն Հայոց Կաթողիկոսի անփոփոխ մոտեցումն է, որը նա շարունակաբար փոխանցում է սփյուռքի ազգային վարժարանների ուսուցիչներին եւ սաներին: Նրա համար կասկածից վեր է, որ երեխաներին կրթելն ու դաստիարակելը մարդկային կյանքի օրհնյալ առաքելություններից են, իսկ Աստծու պատվիրանների համաձայն սերունդներ կրթելը նշանակում է մարդկության համար կերտել շարագործություններից, անօրենություններից եւ բռնություններից զերծ լուսավոր ապագա, ապագա՝ լեցուն բարություն, սիրով եւ խաղաղություն: Հանուն այդ վեհ նպատակների՝ Հայոց Հայրապետը հայցում է Աստծու օգնականությունն ու առաջնորդությունը, որպեսզի իրենց սրբազան առաքելության մեջ մանկավարժները լինեն աներեր ու հաստատուն եւ հայեցի դաստիարակության գործում նորանոր հաջողություններ արձանագրեն⁹:

Ընդգծելով, որ «նոր սերնդի դաստիարակության եւ կրթության գործում բարձր է գնահատում ուսուցիչների նվիրյալ ծառայությունը»՝ Նորին Սրբությունը հավելում է նաեւ, որ իր սպասումն է, որ ուսուցիչները, հայագիտական առարկաներ դասավանդելուց զատ, երիտասարդ սերնդին հաղորդ դարձնեն նաեւ մեր ազգային, հայրենական եւ համայնքային կյանքի իրողություններին, նրանց առիթ ընձեռեն ներգրավվելու տարբեր ծրագրերում եւ այդպիսով մասնակից դառնալու ազգային կյանքին: Եւ հավաստում է, որ դա է հայրենասեր, ազգասեր եւ նախանձախնդիր սերունդ կրթելու միակ ճանապարհը¹⁰: Ազգային կյանքում կարեւորելով հայ դպրոցի առաքելությունը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավով նշում է, որ Սփյուռքում հայեցի կրթությունն այսօր նահանջ է ապրում¹¹: Այդ կապակցությամբ նա կոչ է անում, որ ինչպես Մայր հայրենիքի, այն-

⁸ «Էջմիածին», 2005, է.-Ը., էջ 168:

⁹ Տէս «Քրիստոնյա Հայաստան», 2018, հունիս Բ., թիվ 12 (512), էջ 4:

¹⁰ Տէս «Քրիստոնյա Հայաստան», 2015, հուլիս Բ., թիվ 14 (442), էջ 1:

¹¹ Տէս «Քրիստոնյա Հայաստան», 2017, հուլիս Բ., թիվ 14 (490), էջ 1:

պես էլ սփյուռքահայ ազգային կառույցերը պահանջվող ուշադրություն նվիրեն «հայեցի կրթության եւ դաստիարակության գործին», եւ դա հիմնավորում է այն պարագայով, որ ազգային «դպրոցն ազգի ինքնության պահպանության ամենակարեւոր կառույցներից է»: Այդ առիթով նա մեկ անգամ եւս պատասխանատու եւ նախանձախնդիր գործունեության համար իր գոհունակությունն է հայտնում մանկավարժներին եւ հիշեցնում է, որ նրանք «սփյուռքում կարեւոր առաքելություն ունեն հայ մանուկների կրթության ու դաստիարակության, ինչպես նաեւ հայ ինքնության պահպանության գործում»¹²:

Նորին Սրբությունը սփյուռքահայ դպրոցի առաքելության անբաժան մաս է համարում նաեւ հայրենիքի նկատմամբ սեր, ապագայի հանդեպ հավատք եւ տեսիլք ունեցող, ինչպես նաեւ հայոց հոգեմտավոր հարուստ ժառանգությունը յուրացրած սաների պատրաստումը: Եւ այդ մտահոգությամբ ուսուցիչներին հորդորում է սփյուռքահայ աճող սերնդին կրթել ու դաստիարակել պահանջվող գիտելիքներով, Ավետարանի լույս պատվիրաններով ու պատգամներով եւ մեր հայրերի կերտած սրբազան ժառանգությամբ ու ավանդներով: Այդ կապակցությամբ նա նաեւ հիշեցնում է, որ «հայ դպրոցի միջոցով է փոխանցվում ազգային ոգին, այնտեղ է կերտվում հայորդին եւ ձեռք բերում ազգային սրբազան արժեքների, պատմության ու հայոց մեծերի ճանաչողությունը, գիտելիքներ, որոնք նպաստում են ազգային ինքնության ու գիտակցության զորացմանը՝ այդպիսով երաշխավորելով նաեւ հետագա ներգրավումը ազգային կյանքում»¹³: Եւ նշյալ գործընթացում բարձր գնահատելով սփյուռքահայ ուսուցիչների նախանձախնդիր առաքելությունը՝ Վեհափառ Հայրապետը շեշտում է, որ նրանք «կարեւոր պատասխանատվություն են կրում այսօրվա եւ գալիք սերունդների դաստիարակության եւ կրթության համար», եւ հույս է հայտնում, որ այցելությունը Հայաստան եւ վերապատրաստման դասընթացներին մասնակցությունը «նոր լիցք կհաղորդի նրանց՝ նոր ուժով ու ավյունով շարունակելու ուսուցչական իրենց բարդ ու դժվարին առաքելությունը»¹⁴:

Հայրենիքում վերապատրաստվող սփյուռքահայ ուսուցիչների հետ հանդիպումների ընթացքում Հայոց Կաթողիկոսն անդրադարձել է նաեւ

¹² Անդ:

¹³ Տէն «Քրիստոնյա Հայաստան», 2017, հուլիս Բ., թիվ 14 (490), էջ 1:

¹⁴ Տէն «Քրիստոնյա Հայաստան», 2018, հուլիս Բ., թիվ 14 (514), էջ 4:

Սփյուռքի հայկական գաղթօջախներում առկա մարտահրավերներին, որոնք հաղթահարման գործում առաջնային է համարել հատկապես սփյուռքահայ համայնքներում հայապահպանության, հայեցի դաստիարակության, ինչպես նաև մատաղ սերնդի մեջ աստվածսիրություն եւ հայրենասիրություն սերմանելու կարեւորությունը: Մարտահրավերները հաղթահարելու գործում Ամենայն Հայոց Կաթողիկոսը վճռական դեր է վերապահել նաև եկեղեցական կառույցների եւ ազգային կրթական հաստատությունների համագործակցությանը¹⁵: Այդ կապակցությամբ նա հավաստում է, որ հրատապ այդ խնդիրների լուծման համար իր հովվապետական այցերի ընթացքում սփյուռքահայ թեմակալ առաջնորդների եւ հոգեւոր դասի հետ բազմիցս քննարկել է մտահոգիչ այդ խնդիրը՝ շեշտելով եկեղեցիների կողմից հայկական դպրոցներ հիմնելու ամհրաժեշտությունը հայ ինֆնությունը անվտանգ պահելու առաւելությամբ¹⁶:

Փաստական նյութի վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ, աչքաթող շանելով Սփյուռքում գործող հայկական կրթօջախների եւ ուսուցիչներին հուզող խնդիրները, Նորին Սրբությունն ուրախությամբ է արձանագրում, որ վերապատրաստման համար Հայաստան ժամանած սփյուռքահայ ուսուցիչների մեջ մեծ թիվ են կազմում երիտասարդները: Այդ առնչությամբ նա հավելում է, որ դա վկայությունն է այն բանի, որ Սփյուռքում նոր սերունդը գալիս է ստանձնելու ավագ սերնդի աստվածահաճ գործը: Այդ դիտանկյունից նա, սփյուռքահայ ուսուցիչներին մատնանշելով, «որ միայն հայրենիքի նկատմամբ սեր, ապագայի հանդեպ հավատք եւ տեսիլք ունեցող անհատը կարող է հաղթահարել կյանքի բոլոր դժվարությունները», հույս է հայտնում, որ «ուսուցիչները դասընթացի ավարտին իրենց երկրները կվերադառնան ոչ միայն նոր գիտելիքներով եւ փորձառությամբ, այլև հոգեւոր-ազգային ապրումներով խանդավառված եւ ներշնչված ազատ ու անկախ հայրենիքի իրողությամբ»¹⁷: Եւ մաղթելով, որ բարին Աստված սփյուռքահայ ուսուցիչներին զորացնի իրենց կարեւոր առաքելության մեջ, Վեհափառ Հայրապետը միաժամանակ գոհունակությամբ է արձանագրում «հայապահպանության գործում նրանց դրսևորած նախանձախնդրությունը» եւ մաղթում է, որ Աստված օրհնի ու քա-

¹⁵ Տե՛ս անդ:

¹⁶ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2017, հուլիս Բ., թիվ 14 (490), էջ 1:

¹⁷ «Քրիստոնյա Հայաստան», 2015, հուլիս Բ., թիվ 14 (442), էջ 1:

ջառողջ պահի մանկավարժներին՝ ի սեր աշխարհասփյուռ մեր ժողովրդի իրականացնելու իրենց սրբազան առաքելությունը: Նա նաեւ շեշտում է, որ «մանկավարժները կարեւոր պատասխանատվություն են կրում այսօրվա եւ գալիք սերունդների դաստիարակության եւ կրթության համար»¹⁸:

Գարեգին Բ. Կաթողիկոսը գոհունակությամբ է հավաստում այն փաստը, որ հովվապետական այցերի ժամանակ աշխարհի տարբեր երկրներում տեսել է ազգային խնդիրների լուծմանը հետամուտ նախանձախնդիր հայ երիտասարդություն: Եւ պնդելով, որ «ազգային ոգու վերազարթնությունը երաշխիքն է ազգային ինքնության պահպանության», նա աշխարհասփյուռ հայ ժողովրդի առջեւ ծառայած խնդիրների հաղթահարման ուղիղ ճանապարհ է համարում ազգի հոգեւոր միասնականությունը, միաբանությունը եւ համընդհանուր ջանքերի մեկտեղումը¹⁹: Եւ այդ հովվություն մեկ անգամ եւս բարձրաձայնելով իր այն վստահությունը, որ «կրթությունն ամենահզոր զենքն է», լիահույս է այն հարցում, որ հայոց դպրոցներում «մատուցվող գիտելիքը եւ կրթությունը ամբողջովն հաստատված պիտի լինեն ազգային-ավանդական արժեհամակարգի վրա»²⁰: Այդ համատեքստում Հայոց Հովվապետը մեկ անգամ եւս վստահեցնում է, որ սաներին գիտելիքի հանդեպ սեր եւ նվիրում փոխանցելով՝ ազգային դպրոցը նույնքան նախանձախնդիր ջանքեր պետք է ներդնի մեր հոգեւոր արժեքներով սաների ոգին կրթելու գործում: Եւ քանի որ Վեհափառը համոզված է, որ «Եկեղեցին նաեւ մեր ազգային ամբողջականության հոգեւոր մարմնացումն է, հոգեւոր մեր Հայրենիքը, մեկ ու միասնական աշխարհասփյուռ մեր ժողովրդի կյանքում»²¹, հավաստում է նաեւ Հայ Եկեղեցու հանձնառությունը, որ «հոգեփրկչական իր ծառայությանը համընթաց շարունակելու է ազգապահպան առաքելությունը հայ ժողովրդի կյանքում՝ Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքի բոլոր համայնքներում մշտապես գործափոց լինելով նաեւ կրթօջախներին, մանկավարժներին, կրթական բարեփոխումներին, որոնք ուղղված կլինեն կրթելու եւ դաստիարակելու ազգային ինքնության բարձր գիտակցությամբ եւ բարոյական ամուր նկարագրով սերունդներ»²²:

¹⁸ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2019, հուլիս Բ., թիվ 14 (538), էջ 1:

¹⁹ Տե՛ս «Էջմիածին», 2007, Զ.-Է., էջ 171:

²⁰ «Քրիստոնյա Հայաստան», 2021, օգոստոս Բ., թիվ 16 (588), էջ 1:

²¹ «Էջմիածին», 2005, Զ., էջ 10:

²² «Քրիստոնյա Հայաստան», 2022, օգոստոս Բ., թիվ 16 (612), էջ 2:

Այդ առումով Վեհափառ Հայրապետը շարունակ հիշեցնում է, որ ավանդականն ու ազգայինը մեր ինքնությունն ու դիմագծի ամուր հիմքն են, համազգային միասնության ուժի խորհրդանիշը, նաև՝ քրիստոնեական նվիրական արժեքների վրա խարսխված ոգեկերտումի ու առաքինությունների խտացումը: Ուստի միանգամայն հիմնավոր է համարում այն պնդումը, որ «Հայ Եկեղեցին հայ հոգու ծննդավայրն է, հայ ինքնության երաշխավորը, եւ լինել եկեղեցասեր, լինել աստվածասեր նշանակում է, առաջին հերթին, լինել հայրենասեր»²³: Եւ պարզաբանում է, որ իր պատմությանը, իր անցյալին, իր հոգեւոր արժեքներին, իր ժողովրդի կյանքի ու գոյության լուսավոր խորհրդի հետ կապված դարերի ընթացքում մեր Եկեղեցին ոչ միայն դարձել է ազգային արժեքների գանձարանը, այլեւ այդ արժեքների պահպանը, հարստացնողն ու թրծողը: Այդ իրողության վրա է խարսխված նաև Վեհափառի հորդորը երիտասարդներին՝ իրենց գիտելիքները եւ կարողությունները ի սպաս դնել հայ ժողովրդի եւ մեր Հայրենիքի բարգավաճմանը՝ մշտապես հայացքն ուղղված պահելով դեպի Հայրենիք, Արարատ եւ Սուրբ Էջմիածին²⁴:

Այդ ամենով պետք է բացատրել նաև այն փաստը, որ Գարեգին Բ. Կաթողիկոսը՝ ի սեր Մայր Հայրենիքի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, սփյուռքահայ մանուկներին հորդորում է առավել զորացնել դպրոցում ամբարած գիտելիքները եւ հոգեւոր արժեքների ճանաչողությունը: Եւ քանի որ սաներն ուսում են առնում եւ կրթվում մանկավարժների հոգածությունմբ, նա մանկավարժ լինելը որակում է «պատասխանատվություն եւ մեծ պատիվ», բարձր է գնահատում մանուկների հայեցի դաստիարակության, ճշմարիտ ազգային կրթության եւ ավանդական արժեքների զորացման գործում նրանց անուրանալի ներդրումը:

Այդ հոլովությունում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորում է ավելի կարեւորել թեմական կյանքի աշխուժացմանն ուղղած ձեռնարկներն ու միջոցառումները՝ մասնավոր ուշադրություն դարձնելով երիտասարդ սերնդին, նրանց կրթել ու դաստիարակել հայրենասիրության եւ եկեղեցասիրության ոգով: Եւ մեկ անգամ եւս իր գնահատանքն ու օրհնությունը փոխանցելով սփյուռքահայ ուսուցիչներին՝ հորդորում է «առավել նախանձախնդրությամբ, ջանասիրությամբ եւ հավատով շարունակել

²³ «Էջմիածին», 2008, Զ.-է., էջ 4:

²⁴ «Էջմիածին», 2007, Զ.-է., էջ 171:

իրենց նվիրյալ եւ պատասխանատու ծառայությունը՝ հայաշունչ ոգով եւ մեր հայրերի հավատքով կրթելով հայ մանուկներին ու պատանիներին»²⁵։ Սփյուռքի «վաղվա օրվա» մտահոգությամբ՝ Նորին Սրբությունը սփյուռքահայ ուսուցիչներին հորդորում է նաեւ «նախանձախնդիր լինել աստվածապարգեւ հանճարագործ մեսրոպյան գրի, ոսկեղենիկ մեր տառերի եւ մայրենի լեզվի պահպանման եւ տարածման գործում» եւ հավաստում է, որ «հայոց լեզվի իմացությունն այն բանալին է, որը բացում է դռները մեր հարուստ հոգեմտավոր ժառանգության եւ առավելաբար զինում ամենքիս՝ դիմագրավելու համար բոլոր փորձություններն ու խոչընդոտները»²⁶։

Հովվապետական այցելությունների ընթացքում սփյուռքահայ թեմերում բարձր գնահատելով թեմական կյանքի աշխուժացմանն ուղղած քայլերն ու միջոցառումները՝ Նորին Սրբությունը հորդորում է մեծ ուշադրություն դարձնել նաեւ սփյուռքահայ երիտասարդ սերնդի ինքնության պահպանության հարցին, ինչը, նրա համոզմամբ, ենթադրում է նաեւ նրանց կրթել ու դաստիարակել հայրենասիրության եւ եկեղեցասիրության ոգով։ Այդ հոլովույթում աշխարհասփյուռ հայության հոգեւոր խնամքը արդյունավետ իրագործելու համար Հայոց Նվիրապետը կոչ է անում «քաջարթուն, զորավոր ու պայծառ պահել եկեղեցական ու ազգային մեր անդաստանը», քանի որ համոզված է, որ հակառակ մահաշունչ փորձությունների՝ հայ ինքնությունը քրիստոնեական համամարդկային արժեքներով, ազատության, արդարության, խաղաղության ձգտումներով է հանդերձավորված, որով, դարերի մեջ արարել է միշտ, ի զորու գտնվել հաղորդ լինելու եւ ներդրում բերելու մարդկային քաղաքակրթության առաջընթացին։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը բազմիցս բարձրաձայնել է այն մասին, որ ազգապահպանության հրամայականը ենթադրում է աշխարհասփյուռ հայության հոգեւոր խնամքի արդյունավետ իրագործում, ինչը, իր հեր-

²⁵ «Քրիստոնյա Հայաստան», 2014, հուլիս Բ., թիվ 14 (418), էջ 1:

²⁶ Անդ: Վեհափառ Հայրապետը նաեւ հավաստում է, որ աստվածապարգեւ հանճարագործ մեսրոպյան գիրը եւ ոսկեղենիկ մեր տառերը «...սնեցին ու աճեցրին մարդկության սիրտ եւ ստեղծագործելու Թարգմանչաց ոգին, հայրենյանց պաշտպան անխախտ ոգին Վարդանանց: Հայացքն ուղղած դեպի շնորհով բացված երկինքը՝ մեր ժողովուրդը Արարատի փեշերին սփռված իր երկրում վանք ու դպրոց հաստատեց, մատյաններ ծաղկեց, կառուցեց ու հաց արարեց: Առ Փրկիչը սիրով մեր ժողովուրդը զորացյալ պահեց հավատարմությունը իր հողին, ազատության սերը, արարումի ու վերածննդի ոգին», «Էջմիածին», 2005, Զ., էջ 15:

թին, «հրամայաբար պահանջում է Սփյուռքում քաջարթուն, զորավոր ու պայծառ պահել եկեղեցական ու ազգային մեր անդաստանը»: Եւ ընդհանրացնող այդ տեսակետը բացատրում է այն պարագայով, որ «Ռարերի ընթացքում մեր Սուրբ Եկեղեցին օրրան է եղել դպրութեան ու գիտութեան եւ Աստուծոյ օրհնութեամբ այսօր էլ իր առաքելութեան ծիրում վառ է պահում իմացութեան ջահը՝ աղբյուրը հոգեւոր այն զորութեան, որը բարեփոխում է մարդկային կյանքը, կերտում նրա առաջընթացն ու բարօրութիւնը»²⁷: Ահա ինչու Վեհափառը սփյուռեակայութեամբ հորդորում է հայկական ինֆոնոթիքի արմատներէն սնվող ու արդունավորվող իմաստութեամբ զուգակից դառնալ հյուրընկալ ժողովուրդների հետ: Քննարկվող խնդիր հետ կապված՝ համազգային հնչեղութիւն ունի նաեւ Հայոց Հովվապետի այն պնդումը, որ «Հայ Առաքելական Եկեղեցին ոգին է Հայրենիքի: Հայրենիք հասկացութիւնը միայն հող, տարածք չէ, այլ նաեւ այն հոգեւոր արժեքները, որ մեր հայրերը կերտել են այս հողի վրա: Մեր Եկեղեցու զավակների հոգու եւ մտքի արգասիք այդ արժեքներն ստեղծվել են շնորհիվ Հայ Եկեղեցու կրթադաստիարակչական աշխատանքի եւ գործունեութեան»²⁸:

Նշված հրատապ խնդիրների լուծման գործում Հայոց Հայրապետը հայ ժողովրդի առջեւ ծառայած մարտահրավերների լուծման գործում կարեւորում է հատկապէս երիտասարդութեան ներգրավումը: Նա ուրախութեամբ է անդրադառնում Մայր Աթոռ Սփյուռքահայ երիտասարդների այցելութիւններին եւ հայրապետական իր սերն ու օրհնութիւնը բերելով նրանց՝ հավաստում է. «Ձեր այցը Մայր Աթոռ Ս. էջմիածին արտահայտում է ձեր նախանձախնդրութեան ոգին, ձեր սերը հանդէպ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, ազգային մեր արժեքները եւ Հայրենիքը: Նախանձախնդիր եք, որպէսզի կարողանաք մոտ լինել այն ակունքներին, որոնցից հագեցնելով ձեր պապակ սրտերը՝ պիտի զորացնեք ձեր հոգին, ձեր միտքը՝ լինելու համար արժանավոր հայորդիներ»²⁹: Հայրապետական օրհնութեան ու գնահատանքի իր խոսքն ուղղելով երիտասարդներին՝ նա միաժամանակ հորդորում է «ոգեւորութեամբ, խանդավառութեամբ ու նախանձախնդրութեամբ իրենց մասնակցութիւնը եւ ներգրումը բերել իրենց համայնքների կյանքում, որպէսզի հայ կյանքը

²⁷ «էջմիածին», 2012, Ժ., էջ 135–136:

²⁸ «էջմիածին», 2007, Զ.–է., էջ 172:

²⁹ «էջմիածին», 2011, է., էջ 143:

լինի աշխույժ, հայ համայնքը լինի ավելի կենսունակ եւ գործունյա, իսկ հայորդիները աշխարհասփյուռ համայնքներում լինեն ավելի նախանձախնդիր իրենց ազգային արժեքների, ինքնության պահպանության գործի մեջ՝ այդպիսով իրենց ուխտը կատարելով Հայրենիքի, Ս. Էջմիածնի եւ մեր հայրերի սուրբ հիշատակի առջեւ»³⁰։

Հավաստելով, որ հակառակ բոլոր դժվարությունների՝ մեր հայրերը գիտեցիքի եւ իմացության լույսը փոխանցել են սերնդեսերունդ եւ շարունակել մատաղ սերնդի կրթության գործը, Նորին Սրբությունը գոհունակությունամբ փաստում է նաեւ «որ աշխարհի տարբեր ծայրերից երիտասարդ հայորդիները նախանձախնդիր ոգով ու նվիրումով, հավատարիմ իրենց հայրերի հավատքին ու սիրուն, գալիս են շարունակելու Հայ Եկեղեցու սրբազան առաքելությունը»³¹։ Նա սփյուռքահայ երիտասարդներին հորդորում է նաեւ «սեփական արմատներին ավելի հարազատորեն կապվելու համար լավագույնս օգտվել Հայրենիքում գտնվելու հնարավորությունից» եւ սովորեցնում է, որ միայն Հայրենիքը կարող է հաղորդել այն ոգին, որ անհրաժեշտ է ազգային դիմագծի եւ հավատի պահպանման համար, քանի որ հայրենիքը միաժամանակ մեր ժողովրդի պատմությունն է, ներկա կյանքն ու ապագան։ Նա նաեւ երիտասարդների ուշադրությունը հրավիրում է այն փաստին, որ ուխտագնացության միջոցով հայրենիքի հետ կապը խիստ տարբեր է սովորական այցելությունից. «Ուխտի գալ Հայրենիք՝ նշանակում է նվիրական զգացումներով գալ եւ այդ նվիրական զգացումներն այստեղ սնել հայրենի պատմությամբ եւ ներկայով»³²։

Սփյուռքահայությունն առնչվող մարտահրավերներից Գարեգին Բ. Կաթողիկոսը անդրադառնում է նաեւ աշխարհայնացման հետեւանքներին։ Նա մատնանշում է, որ թեեւ այսօր մարդկությունը հասել է բարձրագույն նվաճումների, սակայն ողջ աշխարհում «տարատեսակ համահարթեցման գործընթացների հետեւանքով խեղաթյուրվում են արժեքները, նահանջ ապրում հոգեւորն ու ազգայինը»³³։ Աշխարհայնացման համամարթեցնող գործընթացների արդյունքում է նաեւ, որ բարձրագույն արժեք են հռչակվել այնպիսի սկզբունքներ, մատնանշում է Հայոց Նվիրապետը, որոնց հարկադիր արմատավորումը խաթարում է հասարակական

³⁰ Անդ, էջ 143–144։

³¹ «Քրիստոնյա Հայաստան», 2014, հուլիս Ա., թիվ 13 (417), էջ 2։

³² «Էջմիածին», 2007, Զ.–է., էջ 172։

³³ «Էջմիածին», 2019, ԺԲ., էջ 10։

համակեցությունը: Նա նշյալ երեւոյթների առկայութեամբ է բացատրում այն փաստը, որ աշխարհայնացման համահարթեցնող գործընթացը «հաճախ ձախողվել է քրիստոսապատվեր սիրո, աստվածային խոսքի գերակայութեան, համերաշխ գործակցութեան ու փոխըմբռնման հաստատման ընթացքներում: Սոսկ նյութական ձեռքբերումները երաշխավոր չեն մարդու հոգեւոր առաջընթացի ու կատարելութեան եւ այնքան փափագելի խաղաղութեան հաստատման համար»³⁴: Այդ ամենի պատճառով է նաեւ, վկայում է նա, որ «Այսօրվա հարափոփոխ աշխարհում տարածված են հոգեւոր-բարոյական տարբեր մերժելի երեւոյթներ, որոնք իրենց արտացոլումն են գտնում եւ հայ կյանքից ներս»³⁵:

Ուրույն արժեք է ներկայացնում հոգեւոր կյանքում տեղ գտած մարտահրավերների՝ Գարեգին Բ Հայրապետի քննական վերլուծութիւնը: Այդ ոլորտում նրա համոզումն այն է, որ «համամարդկային արժեքներն այսօր, ցավոք, հաճախ ընկալվում են իրենց հոգեզուրկ տարբերակով, իսկ հոգեւորը բոլոր հարցադրումներում կարծես դառնում է երկրորդական»³⁶: Դրա արդյունքում երկրորդական են դառնում դարերով սրբագործված ազգային արժեքները, խաթարվում է ազգի միասնականությունը, թուլանում ինքնութեան գիտակցությունը: Մասնավորապես անդրադառնալով կրոնի ոլորտին՝ նա հավելում է. «Կրոնական ոլորտում հիմնարար իրավական սկզբունքներն են այսօր խղճի եւ դավանանքի ազատությունը, հանդուրժողականությունն այլադավանի հանդեպ, պետութեան եւ Եկեղեցու՝ աշխարհիկ եւ հոգեւոր իշխանութեան տարանջատումը: Հիմնարար այս դրոյթները Եվրոպան այսօր ներկայացնում է աշխարհին, նաեւ մեզ՝ իբրեւ արդի քաղաքակրթութեան ձեռքբերում: Այդ սկզբունքները, սակայն, ծագել են քրիստոնեութեան հետ մեկտեղ, եւ մենք ընդունում ենք դրանք ոչ թէ որպէս օտարամուտ, այլ սեփական, ոչ թէ որպէս այսօրվա գյուտ, այլ երկհազարամյա քննութիւն բռնած ճշմարտութիւններ: Ինչ է Հիսուսի սիրո քարոզը՝ անգամ թշնամու հանդեպ, եթէ ոչ՝ հանդուրժողականութեան կոչ ու հրավեր: Ո՞րն է իմաստը «Կայսրինը կայսեր, եւ Աստծունը՝ Աստծուն» խոսքի, եթէ ոչ՝ աշխարհիկ եւ հոգեւոր իշխանութիւնների տարբերակում իրենց գործառույթում: 301 թվականից՝ Հայաստանում

³⁴ «Քրիստոնյա Հայաստան», 2014, սեպտեմբեր Ա., թիվ 17 (421), էջ 2:

³⁵ «էջմիածին», 2005, Զ., էջ 19:

³⁶ «էջմիածին», 2003, Թ., էջ 9:

ֆրիստոնետությունը պետական կրոն հռչակումից ի վեր, խաղաղասիրության եւ հանդուրժողականության ոգին է առաջնորդել հայ ժողովրդին (ընդգծումը մերն է.– Ա. Ք.)»³⁷:

Վեհափառ Հայրապետն անդրադառնում է նաեւ աշխարհայնացման պայմաններում դավանանքի ազատության խեղաթյուրված ըմբռնումներին: Այդ կապակցությամբ նա մատնանշում է. «Կրոնի ազատությունն այսօր էլ գերակա սկզբունք է: Այն ամրագրված եւ երաշխավորված է միջազգային հիմնարար հռչակագրերով, պայմանագրերով, ժողովրդավարական երկրների սահմանադրություններով եւ օրենքներով: Կրոնական ազատության գաղափարը, սակայն, հաճախ իրագործվում է խղճի ու դավանանքի համամարդկային արժեքների ներքո քողարկվող կրոնական ազատության չարաշահումով: Ակնհայտ է, որ դավանանքի ազատության իրավունքի շղարշի տակ ներկայում ձեւավորվում եւ գործունեություն են ծավալում կրոնական նորօրյա ամբողջատիրական աղանդներ, որոնք, խեղելով մարդկանց հոգեւոր եւ հոգեկան վիճակը, քայքայիչ գործունեությամբ պառակտում են մտցնում ընտանիքներում, հասարակության կյանքում, թշնամանք սերմանում ավանդական կրոնական կառույցների նկատմամբ»³⁸: Նշյալ իրողությունների քննական վերլուծությամբ Հայոց Նվիրապետը անվերապահ պնդում է նաեւ, որ «Եկեղեցու համար անընդունելի է խղճի ազատության մի տարբերակ, երբ մարդու առաջադիմության շնորհիվ հաղթահարված հեթանոսական բազմաստվածությունն այսօր աղանդների անվերահսկելի ներմուծումով անձից տեղափոխվում է հասարակություն: Դավանանքի ազատությունը չի կարող նշանակել, որ հասարակությունը պետք է անտարբեր լինի այն հարցում, թե ում են երկրպագում իր անդամները՝ Աստծուն, թե՞ սատանային, որ նորմերն են առաջնորդողը հասարակական կյանքի: Խղճի ազատությունը չի կարող վերաիմաստավորվել որպես ազատություն խղճից»³⁹:

Եւ միանգամայն բնական է, որ արդի մարտահրավերներին դիմագրավելու ճանապարհին առաջնային համարելով հայ ժողովրդի միասնականության հրամայականը՝ Վեհափառը մեծապես կարեւորում է մեր ազգային կյանքում դարերով արմատավորված հոգեւոր արժեքների ան-

³⁷ Անդ, էջ 8:

³⁸ «Քրիստոնյա Հայաստան», 2021, սեպտեմբեր Ա., թիվ 17 (589), էջ 4:

³⁹ «Էջմիածին», 2003, թ., էջ 9:

խաթար պահպանությունը, ինչպես նաև՝ ազգային ինքնության զորացումը: Նա համամիտ է եւ կոչ է անում յուրացնել այն բարիքը, որն առկա է համաշխարհայնացման երեւոյթում: Սակայն նաեւ մատնանշում է. «Մենք ունենք Հայոց դարձի 1700-ամյա պատմություն, ուր նաեւ մշակված եւ բանաձեւված են այն արժեքները, որոնց վրա խարսխելով մեր կյանքը, որոնց ապավինելով՝ մենք պետք է կարողանանք ներկա ժամանակների մարտահրավերների դեմ վստահորեն կանգնել, վերցնել այն, ինչ որ բարիք է համաշխարհայնացման այս նոր երեւոյթում, եւ մերժել ու վանել մեզնից հեռու այն ամենը, որ կարող են վտանգել մեր ազգային ինքնությունը, մեր ազգային հոգեբանությունը, մտածողությունը, նկարագիրը եւ մեր ազգային արժեքային համակարգը»⁴⁰: Եւ ընդհանրացնելով այդ ամենը՝ մեկ անգամ եւս բարձրաձայնում է, որ «Այսօր՝ աշխարհայնացման ընթացքների, այլակարծությամբ սքողված կեղծ ու սին գաղափարների առկայության պայմաններում անհրաժեշտ է, որ զորացնենք նաեւ մեր խնամքն ու ջանքերը՝ Սփյուռքում եւ Հայրենիքում մեր գավակներին հայրենյաց ավանդներով կրթելու համար, որպեսզի ապրեն ազգային ջերմ ու կենդանի զգացումով, ազգի, Հայրենիքի սիրով եւ ընթանան հավատքով ու տիրավանդ պատվիրաններով»⁴¹:

Ակնհայտ է, որ համաշխարհայնացման եւ բազմամշակութային տարածքներում առկա մարտահրավերների հանդիման հայկական Սփյուռքը կենսունակ պահելու համար Գարեգին Բ. Կաթողիկոսը մեծապես կարեւորում է մի քանի գործոն՝ Մայր Եկեղեցին, դարերով սրբագործված ազգակրոնական ավանդույթը եւ ազգային դպրոցը: Այդ կապակցությամբ նա հավաստում է. «Մեր ժողովուրդը, լինելով Քրիստոսին հավատացող ժողովուրդ, ընդունելով Քրիստոսի Ավետարանը եւ մեր սուրբ հայրերի պատվիրաններն ու պատգամները, մեզ է փոխանցել նաեւ բանալին՝ հաղթահարելու դարերի եւ ժամանակի ընթացքին մեր Եկեղեցու եւ ազգի առջեւ ծառայող ամեն հիմնախնդիր, ամեն մարտահրավեր»⁴²: Եւ հավելում է, որ աշխարհասփյուռ մեր ժողովրդի համար այդ բանալին մեր ազգային կյանքի անկյունաքարերն են՝ Մայր Եկեղեցին ու ազգային դպրոցը, իսկ վերջինս նաեւ այն կենտրոնատեղին է, որտեղ դրվում են հայրենասիրու-

⁴⁰ «Էջմիածին», 2005, Զ., էջ 31:

⁴¹ «Էջմիածին», 2014, Թ., էջ 20–21:

⁴² «Էջմիածին», 2005, Զ., էջ 30:

թյան ու մարդասիրության հիմքերը, կերտվում է ընդհանուր մի մասնիկը լինելու գիտակցությունը:

Վեհափառի քննախույզ հայացքը կանգ է առել նաեւ այն իրողության արժեւորման վրա, որ համաշխարհայնացման քաղաքականությունը կյանքի կոչված տարատեսակ համամարթեցման գործընթացների հետեւանքով նահանջ են ապրում ազգային ու հոգեւորը, խեղաթյուրվում ավանդական արժեքները, որոնք, ցավոք, իրենց բացասական հետք են թողում նաեւ երիտասարդության վրա: Այդ փաստով պայմանավորված, մատնանշում է Վեհափառը, Հայ Եկեղեցին այսօր մտահոգ է մեր երիտասարդ սերնդի ընկերային-հասարակական եւ ընտանեկան բարոյական կյանքով⁴³: Այս պարագայում եւս նա հավաստում է, որ այդ մարտահրավերների առջեւ առավել քան անհրաժեշտ է ազգային ու հոգեւոր մեր արժեքների վրա խարսխված արդիական կրթության ապահովումը, որպեսզի հայ երիտասարդները հարազատ մնան իրենց ինքնությունը եւ աստվածային պատգամների կենսագործմամբ կառուցեն իրենց կյանքն ու ապագան: Եւ նաեւ հավելում է, որ այդ խնդիրները խիստ արդիական են նաեւ քրիստոնեական արժեքների պահպանման դիտանկյունից: Հայազգի մանուկներին եւ պատանիներին անցանկալի երեւույթներից ու մոլորություններից զերծ պահելու եւ նրանց հոգում ազգային ինքնագիտակցության ոգին զորացնելու ազգանվեր գործընթացում Վեհափառ Հայրապետը կարեւոր է համարում հատկապես մանկավարժների ամենօրյա նախանձախնդիր աշխատանքը եւ սփյուռքահայ ուսուցիչներին պատգամում է. «կենսագործել դարերի խորքից փոխանցված ավանդները եւ կոչման բարձր գիտակցությամբ շարունակել իրենց ծառայությունն ազգին»⁴⁴: Միաժամանակ մաղթում է նաեւ, որ այդ ոլորտում եւս Աստված օրհնի, զորացնի եւ արդյունավոր դարձնի նրանց ջանքերը:

Այս առումով համազգային հնչեղություն ունի հատկապես Գարեգին Բ. Կաթողիկոսի այն պնդումը, որ ազգային կյանքում օրախնդիր է ոչ թե, այսպես կոչված, աշխարհաբաղաճախ, այլ հայրենասեր, բարոյական բարձր հատկանիշներով օժտված, ազգային դիմագիծ ունեցող, ուսյալ, բարեկիրք անձ եւ նախանձախնդիր ֆաղափացի պատրաստելը: Եւ այդ հորովույթում մեկ անգամ եւս հավաստում է, որ «Գլոբալիզացիայի համահարթեցնող ընթացքների եւ օրեցօր նորացող գիտական ձեռքբերումների հանդի-

⁴³ Տե՛ս անդ, էջ 19:

⁴⁴ «Քրիստոնյա Հայաստան», 2017, հուլիս Բ., թիվ 14 (490), էջ 1:

ման՝ այսօր արդիական գիտելիքի ուսուցմանը հավասարազոր կարեւորվում է հոգեւոր նկարագրի ու ներաշխարհի ձեւավորումը»⁴⁵։ Ուստի հավելում է նաեւ, որ այն պարագայում, երբ համահարթեցման գործընթացների հետեւանքով խեղաթյուրվում են արժեքները, իսկ հոգեւորն ու ազգայինը նահանջ են ապրում, «առավել կարեւորվում է նաեւ գրականութեան դերն ու առաքելությունը որպէս մարդկային բարձր արժեքներ կրթելու, աշխարհայացք եւ ինքնություն ձեւավորելու միջոց»⁴⁶։ Եւ այդ պնդումը բացատրում է նրանով, որ «գիրքը դարձել է մեր ինքնության մի մասը», իսկ ազգային գրականությունը «կրթել է մեր ժողովրդի հոգին ու միտքը, եղել է նրա ինքնության նախանձախնդիր պահպանը, ներգործուն ուժականութեամբ միավորել աշխարհասփյուռ մեր ժողովրդին ազատ ու անկախ հայրենիքի, հայոց բարօր կյանքի տեսլականի շուրջ»⁴⁷։

Անդրադարձ կատարելով աշխարհայնացման հետեւանքով Հայ Եկեղեցու եւ հավատացյալների առջեւ ծառայած խնդիրներին ու մարտահրավերներին՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր մտահոգությունն է հայտնում նաեւ որոշ կրօնական կազմակերպությունների եւ շարժումների քայքայիչ գործունեության, ինչպէս նաեւ Հայ Եկեղեցու հեղինակությունը վարկաբեկող հակակեղեցական ուղղորդված քարոզչության առիթով։ Այդ առումով նույնպէս նա կարեւորում է ազգային-եկեղեցական կյանքում նման անցանկալի երեւոյթների կանխարգելմանը եւ հոգեւոր-ազգային արժեքների գորացմանն ու քարոզչությանը միտված երիտասարդական կառույցների գործունեությունը⁴⁸։

Առկա նյութի վերլուծությունը թույլ է տալիս վստահաբար պնդել նաեւ, որ սփյուռֆահայ դպրոցի նկատմամբ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հոգատար վերաբերմունքի անբաժան մասն են կազմել նաեւ գործնական հանդիպումները։ Խոսքը մասնավորապէս վերաբերում է սփյուռքահայ դպրոցականների հետ Հայոց Նվիրապետի ունեցած բազում հանդիպումներին՝ ինչպէս սփյուռքահայ թեմերում՝ հովվապետական այցերի ընթացքում, այնպէս էլ՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում։

⁴⁵ «Քրիստոնյա Հայաստան», 2021, օգոստոս Բ., թիվ 16 (588), էջ 1։

⁴⁶ «Էջմիածին», 2019, ԺԲ., էջ 10։

⁴⁷ Անդ, էջ 10։ Հատկանշական է, որ Հայկական գրադարանների միջազգային երկրորդ համաժողովը եւս հորդորում է խրախուսել ազգային նկարագրի ձեւավորմանն ու կերտմանը միտված գրքերի հրատարակությունները, տես «Էջմիածին», 2012, Ժ., էջ 124։

⁴⁸ Տես «Քրիստոնյա Հայաստան», 2014, հունիս Ա., թիվ 13 (417), էջ 2։

Թե Գարեգին Բ. Կաթողիկոսն ինչպիսի հոգատար վերաբերմունք է ունեցել սփյուռքահայ դպրոցի նկատմամբ, պերճախոս կերպով վկայում են հովվապետական անդրանիկ այցելություններից (2001 թ.) մինչ մեր օրերը Հայ Եկեղեցու սփյուռքահայ թեմերում Նորին Սրբության հանդիպումներն ազգային դպրոցների սաների, ուսուցիչների, կրթության բարերարների, համալսարանական ուսանողների եւ երիտասարդ սփյուռքահայերի հետ: Այդ փաստն է վկայում նաեւ Նորին Սրբությանը, որը հավաստում է. «Հայրապետական Մեր ուղեւորությունների ընթացքում առանձնակի սիրով ենք այցելում հայկական դպրոցները, որոնք ճանաչողություն ու լույս են սերմանում մեր զավակների հոգում եւ փոխանցում նրանց ոսկեղենիկ մեր մայրենին, մեր պատմությունն ու հայրենի սրբությունները»⁴⁹: Հողվածում անդրադարձ է կատարվել միայն Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի հովվապետական անդրանիկ այցելությունների ընթացքում տեղի ունեցած հանդիպումներին⁵⁰: Այդ ընտրության նպատակն է ցույց տալ, որ թեմական խնդիրներին ծանոթանալու, առաջնորդարանների պաշտոնեության հետ քննարկումների, այցի առիթով տարբեր երկրների պետական գործիչների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, ազգային քաղաքական կուսակցությունների, հայրենակցական միությունների, ՀԲԸՄ, մշակութային եւ համայնքային բոլոր կառույցների ներկայացուցիչների հետ գերբեռնված հանդիպումների հոլովույթում Վեհափառն ինչ դեր է վերապահել դպրոցներին եւ սփյուռքահայ երիտասարդներին: ԱՄՆ հայոց արեւմտյան թեմ հովվապետական այցելության ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շքախմբով հանդիպել է Ֆրեզնոյի Համագաղութային հայկական վարժարանի սաներին եւ զրուցել է աշակերտների հետ: Վեհափառ Հայրապետն այցելել է նաեւ Ֆրեզնոյի պետական համալսարան, որտեղ հանդիպել է Alise Peteres լսարանի ուսանողներին: Նա հանդիպում է ունեցել է նաեւ Հայ ուսանողների միության եւ Կենտրոնական Կալիֆոռնիայի Հայ եկեղեցիների երիտասարդների հետ եւ պատասխանել է նրանց հարցերին⁵¹: Այցի ընթացքում Վեհափառը հանդի-

⁴⁹ «Էջմիածին», 2004, Ե., էջ 37:

⁵⁰ Ինքնին հասկանալի է, որ հողվածի շրջանակներում հնարավոր չէ ամենայն մանրամասնությամբ անդրադառնալ բոլոր այդ հանդիպումներին: Հարկ է ավելացնել միայն, որ հովվապետական հետագա այցերի ընթացքում նման հանդիպումների քանակը շարունակաբար աճել է:

⁵¹ «Էջմիածին», 2001, Ե., էջ 13:

պել է նաեւ Հարավային Կալիֆոռնիայի տասներկու ամենօրյա հայկական վարժարանների աշակերտների հետ, որի ավարտին հավաստել է. «Սիրելի աշակերտներ, շատ հուզված եւ ուրախ եմ ի տես այս հավաքի, սիրո եւ հարգանքի հանդիպումի» եւ վարժարանների աշակերտներին հորդորել է. «Ջանացեք լինել միշտ ճշմարիտ հայ քրիստոնյաներ»⁵²: Հովվապետական այցելութեան ընթացքում թեմի առաջնորդարանում Վեհափառ հանդիպել է նաեւ Հայաստանյայց Եկեղեցու Երիտասարդաց կազմակերպութեան կենտրոնական վարչութեան անդամների հետ եւ գնահատելով Արեւմտյան թեմի երիտասարդների եկեղեցասեր ծառայությունները՝ կոչ է արել էլ ավելի շատ երիտասարդներ համախմբել Եկեղեցու շուրջ եւ ընդարձակել իրենց ծառայութեան հորիզոնը: Միութեան անդամները նաեւ իրենց մտահոգող զանազան հարցեր են ուղղել Նորին Սրբութեանը եւ իրենց ապագա գործունեութեան համար ստացել են լուսաբանություններ ու հորդորներ⁵³:

ԱՄՆ հայոց արեւելյան թեմ հովվապետական այցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նյու Յորքի Սբ. Վարդան եկեղեցում հանդիպել է Երիտասարդական կազմակերպութեան կենտրոնական խորհրդի անդամների եւ ծխերից ընտրված պատգամավորների հետ: Երիտասարդ հայորդիներին ուղղված հայրապետական պատգամում նա հավաստել է. «Հայ ինքնությունը պայմանավորող միակ ճանապարհը, միակ ելքը, միակ արժեքը հավատարմությունն է մեր սրբազան հավատքին, հավատարմությունը՝ Լուսավորչի հավատքին: Ուրեմն պատգամս ու աղոթքս է, որ միշտ Լուսավորչի հավատքով քայլեք, Ս. էջմիածինը ձեր հոգու մեջ լինի եւ Ս. էջմիածինը դառնա ձեզ օրհնություն»⁵⁴: Իսկ Նյու Ջերսիի Սրբոց Ղեւոնդյաց եկեղեցում Վեհափառը ներկա է գտնվել Հայ Եկեղեցու երիտասարդական կազմակերպութեան Կրտսերների համագումարին⁵⁵: Հայոց Հայրապետը ներկա է գտնվել նաեւ Հայաստանյայց Եկեղեցու երիտասարդաց կազմակերպութեան համագումարին, ուր Նորին Սրբութեան նախագահութեամբ տեղի է ունեցել նորընտիր անդամների ուխտառության արարողությունը⁵⁶:

Կանադա կատարած հովվապետական անդրանիկ այցելութեան ընթացքում Վեհափառ Հայրապետը հանդիպումներ է ունեցել Մոնրեա-

⁵² Տես անդ, էջ 16–17:

⁵³ Տես անդ, էջ 18:

⁵⁴ Տես անդ, էջ 28:

⁵⁵ Տես անդ, էջ 29:

⁵⁶ Տես անդ, էջ 33:

լի հայկական Արմեն Քեբեկ-Ալեք Մանուկյան, Նարեկ եւ Սուրբ Հակոբ վարժարանների երիտասարդ հայորդիների հետ: Շնորհաբեր առաջին այցելությունը նա կատարել է Ալեք Մանուկյան վարժարան, հանդիպել տեսչական-ուսուցչական կազմի եւ սաների հետ: Հանդիսության ավարտին իր օրհնության խոսքն ուղղելով բոլոր ներկաներին՝ Հայոց Հայրապետը վարժարանի սաներին հորդորել է արժանի ժառանգորդները լինել վարժարանի հիմնման համար զոհողություն ստանձնած պատվարժան բարերար Ալեք Մանուկյանի՝ երախտահատույց լինելով վախճանյալ բարերարին: Հաջորդ «Նարեկ» վարժարանում Կաթողիկոսը, իր օրհնության պատգամը բերելով վարժարանի սաներին ու ուսուցչական կազմին, հորդորել է՝ լինելով Կանադայի հյուրընկալ պետության հավատարիմ քաղաքացիները՝ ամուր կառչած մնալ հայրենական ավանդներին: Իսկ Սուրբ Հակոբ վարժարանում Նորին Սրբությունը իր օրհնությունը բերելով ամենքին, իր ուրախությունն է հայտնել վարժարանում հայեցի դաստիարակության ու կրթական առաքելության մեջ տարվող աշխատանքների համար⁵⁷: Այնուհետեւ Մոնրեալի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում Գարեգին Բ. Կաթողիկոսը շուրջ շորս ժամ տեւողությամբ հանդիպում է ունեցել է բազմաթիվ հայ երիտասարդների հետ: Նորին Սրբությունը հատկապես շեշտադրել է Հայ Եկեղեցու հոգեւոր ու ազգապահպանման դերի կարեւորությունը գաղութահայության կյանքում եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դերակատարությունը հայության պատմական գոյատեւման մեջ: Վերջում Վեհափառը ջերմ ու անմիջական միջնորդությամբ պատասխանել է Կանադայի երիտասարդ հայորդյաց հարցումներին՝ լուսաբանելով հատկապես ընկերային կյանքում նրանց հուզող հարցերը⁵⁸: Հայ երիտասարդների հետ Վեհափառը մեկ այլ հանդիպում է ունեցել Տորոնտոյում: Այստեղ նա այցելել է նաեւ նույն քաղաքում գործող վեց հայկական վարժարաններից երեքը⁵⁹:


Շարունակությունը՝ հաջորդիվ

⁵⁷ Տես անդ, էջ 21–22:

⁵⁸ Տես անդ, էջ 24:

⁵⁹ Տես անդ, էջ 25:





ՄԱՇԿԵՒՈՐԻ ՎԱՆԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՒ ԶԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ (ԺԲ.–ԺԳ. ԴԴ.)¹

Մաշկեւոր վանքը Կիլիկիայի հայկական պետութեան հոգեւոր մշակույթի հնագույն կենտրոններից է: Ըստ անապատում գրված մատյանների հիշատակարաններից ավանդվող վկայությունների՝ այն գտնվել է Տավրոս լեռան լանջին՝ ոչ հեռու Դրազարկ վանքից՝ Սիս քաղաքի մերձակայքում: Վարդան գրիչը վանքի դիրքի մասին նշում է. «...ի սահմանս Սիսովն քաղաքիս, ի գաւառիս Կիւղիկեցւոց, ի լերինս, որ կոչի Տորոս»²: Շմավոն գրիչը հայտնում է. «Շնորհիւ Տեառն սկսայ եւ... կատարեցի... Աւետարանս, ի Փոսանահանգ գաւառս Կիլիկեցւոց... ի վանս Մաշկաւոր կոչեցեալ, մերձ առ գերամաքուր սուրբ ուխտ[ս], որ Դրազարկ յորջորջի»³: Մաշկեւոր վանքը որոշ ուսումնասիրողներ տեղադրում են Կիլիկյան Հայաստանի հարավարեւելյան կողմում՝ ձկեր գավառում՝ Մարաշ քաղաքից ոչ շատ հեռու⁴: Ըստ Ղ. Ալիշանի՝ Մաշկեւորը գտնվել է «ի Սեաւ լերինս, եւ մերձ նմին ի յԱնտիոքայ սահմանս՝ Յեսուանց վանք»⁵: Հր. Աճառյանը Մաշկեւոր եւ Հեսվանց վանքերը

¹* Ստացվել է՝ 22.05.2023, գրախոսվել է՝ 31.05.2023, էլ. հասցե՝ hasbadalyan@gmail.com:
² Ս. ՏԷՐ-ԱՐԵՏԻՍԵԱՆ, Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հտ. Ա. (այսուհետ՝ Յուցակ), Վիեննա, 1970, էջ 33, Ն. ՊՈՂԱՐԵԱՆ, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Սրբոց Յակոբեանց (այսուհետ՝ Յուցակ), հտ. Ա., Երուսաղէմ, 1966, էջ 351:
³ ՄՄ 6273, Ղ. ՓԻՐԱԼԵՄԵԱՆ, Նշխարք, էջ 76–77, Ա. ՄԱԹԵՐՈՍՅԱՆ, Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ. դար (այսուհետ՝ Հիշ., ԺԳ.), Երեւան, 1984, էջ 493:
⁴ Տէն Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, կազմեցին՝ Թ. ՀԱՎՈՐՅԱՆ, Ս. ՄԵԼԻՔ-ԲԱՆՇՅԱՆ, Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, հտ. Յ, Երեւան, 1991, էջ 615, 696: Ըստ բառարանի հեղինակների՝ «ձկեր գավառի կենտրոնում, համանուն բերդից եւ Մաշկեւոր վանքից բացի, գտնվել է Պայաս կամ Բայաս (Abaessa) քաղաք նավահանգիստը»:
⁵ Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսուան, Վենետիկ, 1835, էջ 62, 469:

նույնացրել է⁶: Կիրիկիայի գրչության կենտրոններին նվիրված քարտեզում Մաշկեւորը տեղադրված է Սիս քաղաքից հյուսիս-արեւմուտք, իսկ Յեսվանց վանքը՝ հարավ: Նկատի ունենալով Մաշկեւորի տեղադրման տարբեր տեսակետներն ու հիշատակարաններում առկա հաղորդումները՝ թերեւս վանքի տեղադրությունը լրացուցիչ ուսումնասիրության եւ ճշգրտման կարիք ունի:

Վանքի հիմնադրման ստույգ ժամանակը նույնպես հայտնի չէ: Պատմիչների երկերում Մաշկեւորի մասին տեղեկությունները սակավաթիվ են եւ վերաբերում են վանքի հիմնադրին, կառուցման կամ նորոգման պատմությանը: Անապատի հիմնադրի մասին հաղորդում ունի Լեւոն Գ. (1270–1289 թթ.) թագավորի ժամանակակից Վահրամ Սելեւոնեցին՝ Բաբունին⁷: Իր վիպասանության՝ Թորոս Ռուբինյան իշխանին (1100–1129) նվիրված հատվածում Վահրամ Բաբունին մանրամասնում է. «Այսու եղև նա (Թորոս.— Հ. Բ.) զօրացեալ, / Զազգն Յունաց՝ յաղթահարեալ, / Որով բազում՝ տեղեաց տիրեալ, / ԶԱնարզաբա՝ յինքն գրաւեալ: / Յորում գտաճարն՝ մեծ շինեալ, / Զօրավարացն՝ անուամբ պատուեալ / ...եկեղեցիս՝ բազում շինեալ, / Եւ վանորայս՝ յոյժ հոշակեալ: / Յորոց Դրազարկն՝ է մակադրեալ, / Եւ Մաշկեւորն անուն ձայնեալ»⁸: Հիշատակված իրողությունները թվագրվում են 1100–1102 թթ.⁹: Նման հաղորդում տալիս է նաեւ Սամվել Անեցու շարունակողներից մեկը. «Շինեաց սա եւ զսուրբ ուխտն Դրազարկ եւ զՄաշկեւորն եւ զայլ բազումս, զոր վերստին նորոգեցաւ եւ պարգեւօք փարթամացոյց»¹⁰:

Նկատենք, որ պատմական տեղեկությունը, թե վանքը «շինեաց» Թորոսը, մեկնաբանվում է ոչ միանշանակ: Մ. Զամչյանը գրում է. «Ասեն ոմանք, թէ սա (Թորոս.— Հ. Բ.) շինեաց եւ զայլ բազում եկեղեցիս. բայց թուի թէ վասն նորոգելոյ ասեն, քանզի որպէս գրէ Կամբրոնացին ի բանս ժառանգաւորաց, յետ բարձման թագաւորութեան Բագրատունեաց ոչ ոք յիշխանաց մինչեւ ի ժամանակս իւր շինեաց զեկեղեցի, բայց ի միոյն

⁶ Հ. Բ. ԱՃԱՌՅԱՆ, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա., Երեւան, 1942, էջ 557–558:

⁷ Տէս Հ. Բ. ԱՃԱՌՅԱՆ, նշ. աշխ., հտ. Ե., էջ 26:

⁸ Վահրամայ բաբունեոյ Պատմութիւն Ռուբինեանց, կից «Տարեգիրք Սմբատայ Սպարապետի», Փարիզ, 1859, էջ 195:

⁹ Մ. ԶԱՄՉԵԱՆ, Պատմութիւն Հայոց, հատ. Գ., Վենետիկ, 1786, էջ 23:

¹⁰ ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑԻ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՂՆԵՐ, Ժամանակագրութիւն, աշխատ.՝ Կ. Մաթեոսյանի, Երեւան, 2014, էջ 201–202:

զոր կանգնեաց սա ինքն Թորոս յԱնարզաբա»¹¹: Համադրելով պատմական վկայություններն ու հետագա մեկնաբանությունները՝ կարելի է ենթադրել, որ անապատը գոյություն է ունեցել մինչև Թորոս իշխանի հաղթանակները Բյուզանդական տիրապետության ժամանակաշրջանում: Հոգեւոր հիմնարկությունը հավանաբար նախապես գործել է որպես հունական վանք, ապա հայերը վերածել են հայկական կենտրոնի: Մաշկեւորի նախահայկական անվանումն անհայտ է: Կարծում ենք՝ Թորոսի իշխանության շրջանում վանքը նորոգվել է: Հավանական է, որ Վահրամ Բաբունին «հռչակեալ», «մակադրեալ», «ձայնեալ» բառերի կիրառմամբ նկատի է ունեցել վանքի նորոգման եւ նոր անունով կոչելու հանգամանքը:

Մաշկեւոր վանքի անվան ծագման մասին վկայություններ չկան: Ղ. Ալիշանը բացատրում է այսպես. «...անունն այլ գուշակուրի մաշկեղէն՝ կաշիէ զգեստ հագնելուն համար»¹²: Հ. Ոսկյանը գրեթե կրկնում է նույնը՝ լրացնելով. «...կը խորհիմ, թէ այդ անունն առած ըլլա իր միաբաններու մաշկեղէն սքեմէն կամ նոյն իսկ Գրիգորի վարդապետի Մաշկեւոր յորջորջանքէն, եթէ զայն ինքը վանքէն չէ ժառանգած»¹³: Սեւ լեռներում բնակվող վանականների հանդերձանքի մասին Արիստակես Լաստիվերցին ունի հետաքրքիր հաղորդում, ըստ որի՝ նրանք բավարարվել են միայն այժի մագե ծածկույթով կամ բաճկոնով¹⁴: Քանի որ վանականները հագուստով չեն տարբերվել, կարծում ենք, «Մաշկեւոր» հետաքրքիր անունը կարող է կապված լինել վանքի արտաքին հարդարանքի կամ գույնի, ինչպես նաև այնպիսի բնորոշ առանձնահատկության հետ, որով տեղի վանականները տարբերվել են մյուս վանքերի հոգեւորականներից:

Մաշկեւոր վանքը ձեռագիր աղբյուրներում հիշատակվում է նաև «Մաշկուոր»¹⁵ կամ «Մաշկաւոր»¹⁶ անվանաձևերով, որակվում որպես

¹¹ Մ. ՉԱՄՁՅԱՆՑ, նշ. աշխ., էջ 23:

¹² Ղ. ԱԼԻՇԱՆ, Հայապատում, Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901, էջ 534:

¹³ Հ. ՈՍԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 235:

¹⁴ 1028 թ. Ռոմանոս կայսրը «եկեալ հանդիպի լերինն, որ կոչի Սեաւ, եւ տեսանէ անդ բազմութիւն վանորէից եւ զմենաստանս միայնակեցաց, որք ի մարմնի գոլով զանմարմնոցն բերէին զմանութիւն, որք միով այժենիւ կամ բաճկոնաւ շատանան (տես ԱՐԻՍՏԱԿԻՍԻ ԼԱՍՏԻՎԵՐՏՅՈՅ Պատմութիւն, աշխատ.՝ Կ. ՅՈՒՋԲԱՇՅԱՆԻ, Երեւան, 1963, էջ 42):

¹⁵ ՄՄ 1314, թերթ 308բ:

¹⁶ ՄՄ 6273, Ղ. ՓԻՐՎԱԼԵՄԵԱՆ, Նշխարք, թերթ 76, Ա. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Հիշ., ԺԳ., էջ 493:

սուրբ, հուշակավոր անապատ՝ «...շնորհեա՛ յարութիւն... ամենայն եղբարց Մաշկեւոր անապատի»¹⁷, «...ի սուրբ անապատս Մաշկեւոր»¹⁸, «Գրեցաւ... ի հուշակաւոր անապատս, որ կոչի Մաշկեւոր»¹⁹, մեծահուշակ, սուրբ ուխտ՝ «...զամենայն ժառանգաւոր ուխտիս Մաշկեւոր վանացն յիշեսցիք...»²⁰, «Գրեցաւ... ի մեծահուշակ ուխտս Մաշկեւորս»²¹, մեծանուն եղբայրանոց՝ «...եղև սկսեալ... ի մեծանուն եղբայրանոցն Մաշկաւոր կոչեցեալ»²², վանք՝ «...գրեցաւ... ի վանքս Մաշկեւորիս», «ի վանս, որ կոչի Մաշկուոր» (ՄՄ 1314, 308բ)²³:

Հստ մաշկեւորցի գրիչների վկայությունների՝ Մաշկեւոր վանական համալիրը բաղկացած է եղել տարբեր ժամանակներում կառուցված երեք եկեղեցիներից՝ Սուրբ Աստվածածին, Սուրբ Հովհաննես Կարապետ եւ Սուրբ Առաքելոց: Մաշկեւորի, ինչպես Կիլիկիայի այլ վանքերի պարագայում, արտաքին եւ ներքին նկարագրին վերաբերող փաստացի տեղեկություններ չեն հաղորդվում: Եկեղեցիների շինության ժամանակի մասին նույնպես չունենք տվյալներ: Հիմք ընդունելով անապատից մեզ հասած ձեռագրերի գրչություն հանգամանքները՝ կարող ենք հոգեւոր շինությունների կառուցման մոտավոր ժամանակի մասին կատարել որոշ ենթադրություններ: Նկատենք՝ Մաշկեւոր վանքից մեզ հասած առաջին մատյանը, որն արտագրվել է հավանաբար ԺԲ. դարի առաջին կեսին²⁴, գրչի հիշատակարանում եկեղեցիների մասին չունի որեւէ նշում: Սուրբ Աստվածածին եւ Սուրբ Կարապետ եկեղեցիների վերաբերյալ տեղեկություններ կան 1187–1322 թթ. օրինակված ձեռագիր հիշատակարաններում: Գրիչ Վարդանն իր արտագրած ձեռագրերում վկայում է. «...գրեցաւ... ի վանքս Մաշկեւորիս, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Կարապետիս եւ այլ սրբոցս» (1187 թ., 1192 թ.)²⁵:

¹⁷ Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ, Մայր ցուցակ ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց (այսուհետ՝ Ցուցակ), Վենետիկ, հտ. Բ., էջ 156:

¹⁸ Ն. ՊՈՂԱՐԵԱՆ, Ցուցակ, հտ. Զ., Երուսաղէմ, 1972, էջ 524, ՄՄ 1527, թ. 75բ, 141ա, 667ա:

¹⁹ ՄՄ 8438, թ. 316ա:

²⁰ Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ, Ցուցակ, հտ. Բ., էջ 155, ՄՄ 1527, 141ա:

²¹ Ա. ՍԻՐՄԵՆԵԱՆ, Ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի Ս.Թառասուն մանկունք եկեղեցւոյ եւ մասնաւորաց (այսուհետ՝ Ցուցակ), Երուսաղէմ, 1935, էջ 55, ՄՄ 9509, թերթ 326ա:

²² Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ, Ցուցակ, հտ. Ա., էջ 495:

²³ Ս. ՏԵՐ-ԱԻԵՏԻՍԵԱՆ, Ցուցակ, էջ 33, Ն. Պողարեան, Ցուցակ, հտ. Ա., էջ 351:

²⁴ ՏԵՆ Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ, Ցուցակ, հտ. Բ., էջ 146–155, Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսուան, էջ 407:

²⁵ Ս. ՏԵՐ-ԱԻԵՏԻՍԵԱՆ, Ցուցակ, էջ 33, Ն. Պողարեան, Ցուցակ, հտ. Ա., էջ 351:

Գրիչ Կիրակոսը նշում է. «Գրեցաւ... ի մեծահոշակ ուխտս Մաշկեւորի, ընդ հովանեաւ Սուրբ Աստվածածնի եւ Սրբոյ Կարապետին» (ՄՄ 9509, թ. 331), «...ի սոյն ամի եղեւ սկսեալ աստուածախաւսս այս մատեան, ի մեծանուն եղբայրանոցն Մաշկաւոր կոչեցեալ՝ առ դուռն Սուրբ Կարապետի»²⁶: Եկեղեցիների մասին վկայում է նաեւ Կոստանդին գրիչը. «...սկսա զսա ի սուրբ անապատս Մաշկեւոր, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, եւ Սուրբ Կարապետին եւ Մկրտչին Յովհաննու»²⁷: Կարելի է ենթադրել, որ երրորդ՝ Սուրբ Առաքելոց եկեղեցին ավելի ուշ է կառուցվել, քանի որ հիշատակվում է միայն 1322 թ. հիշատակարանում: Հոհանես գրիչը հայտնում է. «Գրեցաւ... ի հոշակաւոր անապատս, որ Մաշկեւոր կոչի, ընդ հովանեաւ ամէնաաւրհնեալ Սրբուհոյ Աստուածածնին եւ Սրբոյն Յովհաննու Կարապետի եւ Սուրբ Առաքելոցն Քրիստոսի...» (1322 թ., ՄՄ 8438, թ. 316ա):

Մաշկեւորը տարբերվել է Սեւ լեռների մյուս վանական հաստատություններից ոչ միայն իր արտաքին ու ներքին հարդարանքով, «մեծանուն» եւ «մեծահոշակ» որակումներով, այլեւ իր կարեւոր գործառույթներով. անապատը եղել է համանուն թեմի կենտրոն, որը եպիսկոպոսի նստավայրն էր²⁸: Այստեղ է գտնվել Սսի պալատի կրոնական գործերի կենտրոնական խորհուրդը²⁹:

Սեւ լեռների տարածքում գտնվող բազմաթիվ հայկական վանքերի, անապատների ճարտարապետական որոշ լուծումների մասին կան հաղորդումներ արաբագիր սկզբնաղբյուրներում³⁰: Հիմք ընդունելով հարակից վկայությունները՝ կարելի է ենթադրել, որ Մաշկեւոր վանքի տարածքը՝ եկեղեցիներով եւ ենթադրվող այլ կառույցներով՝ գրատուն-մատենադարան, կազմատուն, ճգնավորների համար կառուցված մենախցեր, տնտեսական նշանակության շինություններ, պարսպապատ է եղել: Տարածքում աշտարակ է եղել:

²⁶ Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ, Յուցակ, հտ. Ա., էջ 495:

²⁷ Ն. ՊՈՂԱՐԵԱՆ, Յուցակ, հտ. Զ., էջ 524:

²⁸ Ղ. Ալիշանը գրում է. «Ոչ լոկ մենաստան էր տեղիս այս, այլ եպիսկոպոսանիստ աթոռ թեմական... ի սահմանս Սեաւ լեբանց» (տե՛ս Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսուան, էջ 62, 408, Ն. ՄՈՎԱԿԱՆ, «Մաշկեւոր», «Սիոն», 1953, օգոստոս-սեպտեմբեր, էջ 243–244):

²⁹ Մ. ՃԵՒԱՀԻՐՃՅԱՆ, Կրիկիրայի Ակներ վանքի տեղադրությունը, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1982, թ. 3, էջ 126:

³⁰ Տե՛ս Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ, Հայկական վանքերի եւ եկեղեցիների հիշատակություններ Աբու Ալ-Մաքարիմի երկի անհայտ էջերում, Երեւան, 2018, «ԲՄ», 26, էջ 41:

Վանքի ավագ եւ կրտսեր վանականների համատեղ գործունեության արդյունքում անապատում կազմավորվել է Մաշկեւորի վանական միաբանությունը, որը պահպանել է իր կենսունակությունը երկու հարյուր տարուց ավելի (ԺԲ.—ԺԴ. դդ.): Միաբանության հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ: Կարծում ենք՝ եղբայրությունը գործել է ավելի վաղ՝ ունենալով որոշակի կազմակերպված ձեւ բյուզանդական տիրակալության ժամանակաշրջանում: Միաբանության հիմնադրման մոտավոր տարեթիվ կարելի է դիտարկել 1100–1102 թթ., երբ վանքը հովանավորում էին Ռուբինյանները:

Եղբայրության երկարատեւ գործունեությունը պայմանավորված էր անապատի առաջնորդ հայրերի, վանականների աշխատանքով: Կարեւորելով միաբան եղբայրների միասնությունը՝ մաշկեւորցի գրիչներն իրենց հիշատակարաններում «աղաչում» են հիշել «ամենայն եղբարց Մաշկեւորիս», «ամենայն եղբայրութիւնս», «զամենայն ժառանգաւոր ուխտիս», «բնակչաց սուրբ անապատիս», «միեղէն եղբայրց», «զկենդանիս եւ զհանգուցեալան», որոնք օգնել են միմյանց եւ «բարի եւ քաղցր խաւաւք»³¹, եւ ձեռագրաստեղծ տարբեր աշխատանքներով:

Մաշկեւորցի գրիչների հիշատակարանների հաղորդումներից առանձնացրել ենք միաբանության անդամների մասին հետեւյալ տեղեկությունները. Կիրակոս գրիչը հիշում է Թորոս եւ Ստեփանոս քահանաներին, որ «աւգնեցին յղորդելն» (1259 թ.)³², Ստեփանոս տնտեսին, ուսուցիչ Սարգիս քահանային՝ «զհանգուցեալան ի Քրիստոս» (ՄՄ 9509, 326ա, 329ա), Հեթում Ստեփանոս գրիչը՝ Հովհաննեսին, որ «նշանագրեաց զաւետարանս եւ զյիշատակս գրեաց»³³, իսկ Վարդան գրիչը՝ Թոմաս միակեցուն (1192 թ.): Հիշատակվում են միաբաններ Սարգիս քահանան, «որ ի յայսմ ամի (1301 թ.) հանկեաւ ի Քրիստոս», «պատուելի ծերունի» Բարսեղ քահանան, որ «աշխատեցաւ... յոյժ» (1301 թ., ՄՄ 1527, 58բ), պատանյակ Թորոսն ու Գրիգոր անունով երկու սարկավագները, որոնք «ձեռնտու եւ աւգնական եղեն» եւ «բազում աշխատեցան... ամենայն իրաւք, ի յաւրինակին բերելն եւ ի թղթին շինելն, եւ զամենայն պատրաստութիւն գրոցս անյապաղ արարին յարդեանց իւ-

³¹ Ն. ՊՈՂԱՐԵԱՆ, *Ցուցակ, հտ. Ա.*, էջ 351:

³² Ա. ՍԻՐՄԷՆԱՆ, *Ցուցակ*, էջ 56:

³³ Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ, *Ցուցակ, հտ. Ա.*, էջ 496:

րեանց» (ՄՄ 1527, 58բ, 78բ, 141ա, 210բ, 350ա, 372ա, 390ա, 418բ եւն), «հոգեւոր քար» Թեֆանեն, «որ յոյժ սպասաւորէ մեզ», աշակերտ Օշին դպիրը (141ա, 501բ, 608ա), «պատուելի եղբայր» Ներսես քահանան, որ 1322 թ. արտագրված Շարակնոցի «զաւրինակն շնորհեաց»: Հիշվում է «ի Տէր զեղբայրն մեր՝ զԳրիգոր զհանգուցեալն ի Քրիստոս» (ՄՄ 8438, 316ա–բ):

Ձեռագրական սկզբնաղբյուրների ու տվյալների ներկա ուսումնասիրութեան արդյունքում ավելացել են վանքի առաջնորդների նոր անուններ³⁴ եւ առանձին վանահայրերի մասին գնահատականներ: Վանքի հիմնադիր վանահայր է հիշատակվում Գրիգոր վարդապետ Մաշկեւորցին: Ալիշանը գրում է. «...զոր ի դէպ է կարծել հաստատեալ ի սոյն իսկ ի տարաբաղդիկ վախճանեալ փառաւոր վարդապետէն Գրիգորէ, ի սկիզբն ԺԲ. դարու»³⁵: Գրիգորին փոխարինել է եղբայրը՝ հայր Դավիթը³⁶: 1187–1192 թթ. վանքն առաջնորդել է հայր Դավիթը, որը հիշվում է իր քեռորդի Թորոսի հետ (1187 թ., 1192 թ.): Վանքի եկեղեցապաններից Թեոդոս փակակալի անունը հայտնում է 1259³⁷ թ. եւ 1269 թ. գրված մատյանների գրիչ Կիրակոսը (ՄՄ 9509, թ. 328ա): Մաշտոցյան ձեռագրի հիշատակարանում հիշվում է նաեւ «բարեպաշտ» Բարսեղը՝ «առաջնորդն տեղոյս»: Սուրբ ուխտի առաջնորդներից Հովհաննեսին 1301 թ. արտագրված մատյանի հիշատակարանի գրիչը բնութագրում է որպէս «զպատուելի, աստուածահաճոյ եւ հոգէմաքուր առաջնորդ», «զերջանիկ եւ զսրբազան րաբունի» (ՄՄ 1527, թ. 141ա, 223ա): Գրչի հիշատակարանում հիշվում են նաեւ «պատուելի քահանա» Թորոս փակակալը եւ «սրբազան եպիսկոպոսն տէր Թորոսն» (418բ): 1322 թ. օրինակված Շարակնոցի հիշատակարանը հաղորդում է Պողոս եպիսկոպոսի մասին՝ «սպասաւորին Սուրբ Կարապետին» (ՄՄ 8438, թ. 316ա): Սուրբ ուխտն առաջնորդել է նաեւ Հայրապետ եպիսկոպոսը (1325 թ.): Բարսեղ Մաշկեւորցին նրան գնահատել է որպէս «այր հեզ եւ բարէբարույ», որը «բազում խնամաւք խնամէր զմեզ ամենայն մարմնաւոր պիտոյիւք եւ իբրեւ զհայր հոգեւորապէս ի վիշտս եւ ի տրտմութիւնս սփոփէր եւ մխիթարէր» (ՄՄ 1314, թ. 308բ): Վանքի առաջնորդներից հիշատակվում են Թորոս եւ

³⁴ Հմմտ. Ն. ԾՈՒՎԱԿԱՆ, նշ. աշխ., էջ 243–244, Ղ. ԱՆԻՇԱՆ, Սիսուան, էջ 407–408):

³⁵ Ղ. ԱՆԻՇԱՆ, Սիսուան, էջ 407:

³⁶ Հստ Բ. Սարգիսյանի՝ հայր Դավիթի վանահայրութիւնը տեւել է 14 տարի (1116–1130 թթ.) (տե՛ս Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ, Յուցակ, հտ. Բ., էջ 156):

³⁷ Ա. ՍԻՐՄԵՆԵԱՆ, Յուցակ, էջ 55:

Գրիգոր (1342–1344 թթ.) եպիսկոպոսները, որոնք մասնակցել են Սսոււ գումարված եկեղեցական ժողովներին (1307 թ., 1343 թ.)³⁸:

Մատյաններ ստեղծելու ոչ դյուրին աշխատանքում, ինչպես նաև ձեռագրերի պահպանման գործում իրենց ներդրումն են ունեցել կազմարարները: Վերջինների, ինչպես եւ ձեռագրի նյութը մշակողների անունները փոխանցել են մաշկեւորցի գրիչները: Վանքում 1259 թ., 1265 թ. եւ 1274 թ. գրված երեք Ավետարան մատյանները կազմել է ժամանակի անվանի կազմարար Առաքել Հնազանդենցը: Երեք գրչագրերում էլ Առաքելը թողել է նույնաբովանդակ հիշատակագրութուն. «Ձեղկելի կազմաւղ սորա Առաքել Հնազանդենց, եւ զծնաւղսն իմ, եւ զհարազատսն իմ, զկարապետ քահանայ եւ զՊաւղոս սարկաւազ, եւ զուսուցիչն իմ զՍարգիս քահանայ, եւ զեղբարորդեակն իմ զԹորոս՝ հանգուցեալսն ի Քրիստոս, աղաչեմ յիշել ի Տէր. ի թուին ՉԻԴ. (1275 թ.) կազմեց[աւ]»³⁹: 1259 թ. ձեռագրում պահպանվել է նաև գրակապ Ավագ քահանայի հետեւյալ հիշատակագրումը. «Ձվերջին կապող սուրբ Աւետարանիս, որ կապեցի: Յիշեցէք զիս զանարժան, որ զանունս իմ Աւագ քահանայ եւ գործովս ոչ, զհայրն իմ եւ զմայրն իմ եւ զուսուցիչս իմ: Անմեղադիր լերուք սխալանաց եւ խոշորութիւն գրոցս, ամէն. վայ մեղաւորիս...»⁴⁰: Մաշկեւորի կազմարարներից է եղել Ներսեսը (ՄՄ 1527, թ. 667ա): Ձեռագրի նյութը մշակողներից հիշվում են Բարսեղ Լեոնկցու ազգատոհմի անդամները, «որք բազում աշխատեցան ի սմա եւ կոկեցին զնիւթ գրոցս եւ յարդեանց իւրեանց գնեցին զթուղթս գրոցս» եւ Գրիգորը, որը «յոյժ աշխատի... կոկելով զնիւթ գրոցս» (ՄՄ 1527, 141ա, 501բ):

Մատյանների ստեղծման պարագայում հատկապես կարեւոր է եղել պատվիրողների դերը, քանի որ ձեռագրերն օրինակվել են նրանց կողմնորոշումներին՝ ցանկութուններին, նախասիրութուններին, նյութական հնարավորութուններին համապատասխան: Մաշկեւորյան ձեռագիր վկայութուններում պատվիրատուներից հիշատակության են արժանացել միաբանության հոգեւոր եղբայրները, վանահայրերը: Այսպես՝ հայր Դավիթը «ետուն գրել մեծաւ փափագմամբ եւ յաւժարութեամբ սրտիւ»

³⁸ Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսուան, էջ 408, Մ. ՉԱՄՁՅԱՆՅ, նշ. աշխ., էջ 341, Ա. ՊԱՆՃԵԱՆ, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան, Վիեննա, 1878, էջ 74, 275:

³⁹ Ա. ՍԻՐՄԵՆԵԱՆ, Յուցակ, էջ 56, ՄՄ 9509, թերթ 329ա, Ն. ՊՈՂԱՐԵԱՆ, Յուցակ, հտ. 2., էջ 525:

⁴⁰ Ա. ՍԻՐՄԵՆԵԱՆ, Յուցակ, էջ 55:

(1116 թ.), հոգեւոր եղբայր Հուսեփ քահանան «աղաչեաց.... գրել իւր համար յիշատակ իւր եւ ծնողաց իւրոյ եւ ամենայն ննջեցելոց գնացելոցն առ Քրիստոս» (1259 թ.), «անպիտան կրաւնաւորս» Ծերունին «ցանկացող եղէ աստուածախաւս մատենիս» (1269 թ.), Ստեփանոս կրոնավորը (երկրորդ ստացող) ստացել է մատչանը «գնոյ արծաթոյ յարդար վաստակոց» (1269 թ.), իսկ Հակոբ կաթողիկոսը 1274 թ. օրինակված Ավետարանը՝ «ի յիշատակ բարեաց անձին եւ ծնաւդաց եւ հարազատաց իւրոց»։ Զեռագիրը «ի հալալ արդեանց» ստացել է Կոստանդին իշխանի որդին՝ Օշին մարաշախտը (երկրորդ ստացող) (1274 թ.)։ 1279 թ. գրված Ավետարանը զարդարվել է «ոսկով եւ արծաթով իւրո (այսպես) պատրոն Վաղտանգին»։ Ծերունի Բարսեղ Լեռնկցի «պատուեալ» քահանայի «ծախիւք եւ հրամանաւ» գրվել է մատչանը (1301 թ., ՄՄ 1527, թ. 58բ, 78, 298բ)։ Պողոս եպիսկոպոսի պատվերով՝ «ի վայելումն անձին իւրոյ եւ յիշատակ իւր եւ ծնաւդաց իւրոց» 1322 թ. օրինակվել է Շարակնոց մատչան (8438, թերթ 316ա)։

Վանքի գրատան գրիչները, նաեւ պատվիրատուները իրենց հիշատակարաններում փոխանցում են խնդրանք-խորհուրդներ մատչանները խնամքով օգտագործելու եւ պահպանելու մասին։ Այսպես՝ Կիրակոս գրիչը դիմում է եկեղեցու սպասավորներին. «Եւ քահանայ, որ սպասաւոր լիցի սուրբ եկեղեցոյն, զգաստ կացցէ սուրբ Աւետարանիս՝ իբր Աստուծոյ պատգամաւորի, պահել յամենայն վնասակարաց» եւ «խնամք տանին սուրբ Աւետարանիս ամենայն դիմաւք»⁴¹։ Պատվիրատու Ստեփանոսը, որը գնել էր ձեռագիրը եւ ավանդել Գլակա վանքի Սուրբ Կարապետի տաճարին, խնդրում է ձեռագիրը չհանել Սուրբ Կարապետ վանքից. «....եւ որ ոք զանց առնէ զբանիւք մերովք եւ հանել ջանա կամ զգիրս ջնջէ, ինքն ջնջեսցի ի գրոյն դպրութեան կենաց, եւ ընդ Կայենի եւ ընդ Ղամեքի զեօթնեկին եւ զեաւթանասնեկին եւթից վրէժս լուծցէ յայսմ եւ ի հանդերձեալն»⁴²։ Մեկ այլ պատվիրատուի հիշատակարանում կարդում ենք. «ԶԱւետարանս պինդ պահեցէ[ք], յամէն Զատկի դուք կարդացէք, թքոտ մատով ի շուռ մի տէք, մոմ ի վերայ մի կաթէք, ի ճրագէն զատ պահեցէք, ի գէճ տեղաց փախուցէք»⁴³։

⁴¹ Ա. ՍԻՐՄԵՆՅԱՆ, Յուլիս, էջ 55:

⁴² Բ. ՍԱՐԳՍԵԱՆ, Յուլիս, հտ. Ա., էջ 496: Հիշատակարանում Ստեփանոսը հիշում է Գրիգոր արհեստագործին եւ իր եղբորորդուն՝ Հովանեսին՝ իբրեւ «առաջին շինողը սուրբ Ուխտիս (Գլակա. - Հ. Բ.)»:

⁴³ Ն. ՊՈՂԱՐՅԱՆ, Յուլիս, հտ. Զ., էջ 525:

Մաշկեւորյան մատյանների ընդօրինակման համար ընտրվել են անսխալ եւ անթերի գաղափար օրինակներ: Կիրակոս գրիչը վստահեցնում է. «Եւ աղաչեմ զամենեսեան ես մեղուցեալս Կիրակոս՝ խոշորութեանն եւ սխալանաց չմեղադրել, զի աչքս վատ եղեւ: Բայց արինակս վստահ լիք, մանաւանդ ի համաբայքն, զի ընտիր է, որ գիտէ» (ՄՄ 9509, թ. 328բ): Վենետիկյան ձեռագրի գրիչ Գրիգորը տեղեկացնում է. «Արդ, աղաչեմ զաստուածասէր հարսդ եւ եղբարս, որք պատահէք սմա ընթերցմամբ կամ գաղաբար առնուլ՝ զի ի ստոյգ արինակէ գրեցաւ մեծաւ աշխատանաւք»⁴⁴:

Թերեւս չկան ուղղակի հիշատակություններ, սակայն ենթադրելի է, որ վանքին կից գործել է գրչութեան դպրոցը, ուր կրթվել են անապատի վանականները՝ արդյունքում ստեղծելով արժեքավոր գրչական ժառանգություն եւ դրանով հարստացնելով նաեւ վանքի մատենադարանը:

Մաշկեւորի գրատանն ստեղծված բազմաթիվ մատյաններից մեզ են հասել տասնմեկը. Ճառընտիր (1), Ճաշոց (1), Ներսես Լամբրոնացու «Մեկնութիւն Սաղմոսաց» (1), Շարակնոց (1), Բարսեղ Մաշկեւորցու «Մեկնութիւն Աւետարանին Մարկոսի» (1) եւ Ավետարան (6): Այս մատյաններից երկուսը պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, մյուսները՝ Վենետիկի, Երուսաղեմի, Հալեպի, Նոր Զուղայի ձեռագիր հավաքածուներում: Ձեռագրեր մատյաններից երեքը ԺԲ. դարից է, հինգը՝ ԺԳ. դարից, եւ երեքը՝ ԺԴ. դարից: 1325 թ. հետո թվագրված ձեռագրեր մեզ հայտնի չեն:

Մաշկեւորից հայտնի ամենահին մատյանը Ճառընտիր է⁴⁵: Մատյանը մեզ է հասել ոչ բարվոք վիճակում, թերի: Ըստ Բ. Սարգսյանի՝ ձեռագիրն արժեքավոր է իր հնությամբ, ընտիր ու անսխալ գրությունով⁴⁶: Մատյանը գրվել է մինչեւ ԺԲ. դարի կեսերը⁴⁷: Մաշկեւոր վանքի վանահայր Դավթի պատվերով: Ձեռագրի հիշատակարանում նշվում է հայր Դավթի եղբայր, ենթադրաբար վանքի միաբան Գրիգորը. «Եւ զեղբայր նորին զԳրիգոր, որ ի Քրիստոս փոխեցեալ, յիշեցէք ի տէր»⁴⁸: Ղ. Ալիշանի

⁴⁴ Բ. ՍԱՐԳՍԵԱՆ, Ցուցակ, հտ. Ա., էջ 494–496:

⁴⁵ ՏԵՍ Բ. ՍԱՐԳՍԵԱՆ, Ցուցակ, հտ. Բ., էջ 145–156:

⁴⁶ Ձեռագիրը կազմված է 216 թերթից, գրվել է միջին եւ սրանկյունաձեւ երկաթագրով (1ա–112բ) եւ երկաթագրից անցումային բոլորգրով (113ա–216ա) 26,5×17,5 մեծության նուրբ եւ փափուկ թղթերի վրա (տե՛ս Բ. ՍԱՐԳՍԵԱՆ, Ցուցակ, հտ. Բ., էջ 145):

⁴⁷ ՏԵՍ Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսուան, էջ 408:

⁴⁸ Բ. ՍԱՐԳՍԵԱՆ, Ցուցակ, հտ. Բ., էջ 155, Ա. ՄԱԹԵՆՈՍՅԱՆ, Ե.–ԺԲ. դարի հիշատակարաններ (այսուհետ՝ Հիշ. ԺԲ.), էջ 158:

ենթադրություններ՝ «գուցե նոյն ինքն Մաշկեւոր վարդապետն է յիշեալդ Գրիգոր», որը հիմնադրել է Մաշկեւոր վանքը⁴⁹: Գրիգոր վարդապետը, ըստ Մատթեոս Ուռհայեցու վկայության, մահացել է Մարաշի մեծ երկրաշարժի ժամանակ 1114 թ.՝ «Եւ եղեւ մերձ ի Մարաշ ի մեծ անապատին, որ ասի Յեսուանց, անկաւ եւ կործանեցաւ վանքն եւ ամենայն դասք կրօնաւորացն... մեծ եւ փառաւոր վարդապետն Հայոց Գրիգոր, որ ասի Մաշկեւոր, ի նմին տեղուջ կատարեցաւ»⁵⁰: Եթե Գրիգորն իրոք Մաշկեւորցին է, կարելի է ենթադրել, որ մատյանը գրվել է 1114 թ. կամ դրան մոտ ժամանակ: Բ. Սարգսյանի ենթադրությունները ճառընտիրը «ամբողջապէս» գրվել է 1116–1130 թթ.՝ «Դաւիթ հօր վանահայրութեան ժամանակամիջոցին»⁵¹:

Զեռագրի գրչության հանգամանքները գլխավոր հիշատակարանի բացակայության պատճառով անհայտ են: «Բազմամեղ» գրիչը, որի անունը հայտնի չէ, հավանաբար եղել է վանքի միաբաններից, քանի որ ընդգծում է իր պատկանելությունը «ուխտիս», «անապատիս», «Մաշկեւորիս»: Զեռագրի բազմաթիվ հիշատակագրություններում վկայվում են «ամենայն եղբարց Մաշկեւոր անապատիս»:

Անապատում արտագրված հաշորդ մատյանն Ավետարան է: Զեռագիրն ընդօրինակել է Վարդան «տառապեալ», «մեղապարտ» կրօնավորը 1187 թ.՝ «ի դիտապետութեան Տեառն Գրիգորի, որ Տղայն կոչուր եւ ի վերայկացութեանն իշխանութեան պատրոն Լեւոնի»⁵²: Համաձայն ձեռագրի նկարագրության՝ այն շատ լավ է պահպանվել: Ավետարանի նախագրություններն ու համաբարբառները լրացվել են հետագայում՝ բոլորգրով⁵³: Հավանաբար գրիչը մատյանը զարդարել է խորաններով (Յա–Տբ, 6բ), կիսախորանով (7ա), սեւ եւ գունավոր սկզբնատառերով: Հետագայի հիշատակարանագիրները հայտնում են մատյանի նորոգման եւ ստացողների

⁴⁹ Տե՛ս Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսուան, էջ 407–408: ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա., Երեւան, 1942, էջ 557–558:

⁵⁰ ՄԱՏԹԵՈՍ ՈՒՐՀԱՅԵՑԻ, Ժամանակագրութիւն, աշխատ.՝ Հր. Բարթիկյանի, Երեւան, 1991, էջ 364:

⁵¹ Բ. ՍԱՐԳՍԵԱՆ, Յուցակ, հտ. Բ., էջ 156: Ա. Մաթեոսյանը ձեռագիրը տեղադրել է 1130 թվաշարքում (տե՛ս Ա. ՄԱԹԵՈՍՅԱՆ, Հիշ., ԺԲ., էջ 158):

⁵² Ս. ՏԵՐ-ԱԻԵՏԻՍԵԱՆ, Յուցակ, էջ 33, Ա. ՄԱԹԵՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 252: Մատյանն ունի 312 թերթ, գրվել է միջին երկաթագրով՝ 24,9×17 սմ մեծության թղթյա թերթերի վրա՝ երկսյուն գրչությամբ:

⁵³ Անդ, էջ 33:

մասին. «բարէպաշտ եւ երկիրդած» ջուղայեցի Տերունը Կոստանդնուպոլսում ստացել է ձեռագիրը, իսկ խոճա Պետրոսը հիշվում է որպես վերջին ստացող: Մատյանը նորոգվել է 1643 թ. Հալեպ քաղաքում⁵⁴:

Վարդանի գրչությամբ մեզ է հասել երկրորդ ձեռագիրը՝ Ճաշոց⁵⁵: Մատյանը արտագրվել է 1192 թ.: Ըստ Ն. Պողարյանի՝ մատյանը գրվել է «վայելուչ եւ խնամեալ» երկսյուն գրչությամբ, լավ ուղղագրությամբ, միջին անկյունավոր երկաթագրով (երբեմն՝ բոլորգրով), զարդարվել է մեծ զարդագրերով եւ բազմաթիվ լուսանցազարդերով՝ նկարված մուգ կապույտ եւ կարմիր գույներով: Ծաղկողի մասին հիշատակում չկա. հավանաբար գրիչն է Ձեռագիրը գրվել է Գրիգոր Տղայի դիտապետության եւ «ի վերայկացութեանն իշխանութեամբ քաղցր եւ բարեպաշտ Պատրոն» Լեւոնի իշխանության շրջանում⁵⁶: Գլխավոր հիշատակարանում «զառլցեալս մեղաւք» Վարդանը ներկայացնում է 1187–1191 թթ. կատարված դեպքերի ժամանակագրությունը. «Բայց ի թուականիս Հայոց Ուջ. (1187 թ.), առաւ էրուսաղեմ, եւ խաւարեցաւ արեգակն: Եւ ի Ութ (1190 թ.) ամի, Փռանկն ել Ալամանն եւ մեռաւ: Եւ ի Ուհ. (1191 թ.), Ընկլէղ թագաւորն ել, եւ առ զԿիպրոս կղզի եւ զԱքայ եւ զԱսխալան: Եւ սով եղեւ այս երկու տարիս խիստ: Եւ ի ՈւհԱ. (1192 թ.) գրեցաւ գիրքս այս»⁵⁷: Գրիչը հիշում է նաեւ հայր Դավթին եւ նրա քրոջորդուն՝ որպես «առաջնորդք անապատիս», իր ծնողներին ու ազգակիցներին: 1318 թ. գրված հիշատակագրությունից տեղեկանում ենք, որ Դարանաղյաց գավառից Մաթեոսը ձեռագիրը, «որ էր քակտեալ», նորոգել է «ի կազմն պնդութեան» Երուսաղեմ քաղաքում՝ Սուրբ Հրեշտակապետաց վանքում:

Մաշկեւորի գրչատանը 1259–1269 թթ. աշխատել է վանքի միաբաններից Կիրակոսը: Նրա գրչությամբ մեզ է հասել երկու մատյան: 1259 թ. Կիրակոսն արտագրել, հավանաբար նաեւ նկարազարդել է մի Ավետարան՝ վանքի միաբան Հուսեփ քահանայի խնդրանքով՝ «ի հայրապետութեանն

⁵⁴ Անդ, էջ 34:

⁵⁵ Ն. Պողարեան, Յուցակ, հտ. Ա., էջ 338–352, Ա. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Հիշ., ԺԲ., էջ 266–267: Մատյանը կազմված է 698 թերթից (31×24 սմ), նյութը՝ թուղթ, թանաքը սրճագույն, ունի 23 տող:

⁵⁶ Որպես իրադարձությունների ժամանակակից՝ Վարդան գրչի երկու հիշատակարանային վկայություններն ակնարկում են, որ Լեւոն Բ.-ն իր գործունեության առաջին շրջանում կարգվել է ոչ թե Կիլիկիայի իշխան, այլ խնամակալ՝ «իշխանության վերակացու» (տես Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, Խաչակիրները եւ հայերը, Երեւան, 2007, էջ 164, 166):

⁵⁷ Ն. Պողարեան, Յուցակ, հտ. Ա., էջ 351:

տեառն Կոստանդեայ, եւ ի թագաւորութեանն Հեթմոյ՝ որդւոյ Կոստանդեայ, յայսմ ամի, որ զՀալ[ա]պն էառ եւ զբազում գաւառս, խառնիճաղանճ ազգն Ագարայ»⁵⁸: Ավետարանի մանրանկարչությունը՝ մասնավորապէս ավետարանիչների գունաթափ ուրվանկարները, Ա. Սյուրմեյանը գնահատել է բավական հաջող, իսկ զարդագրերը՝ «հասարակ», լուսանցազարդերն ու խորանները՝ «արժէքով համեստ», «նոյնատիպ», «անյաջող»⁵⁹: «Անիմաստ», «մեղուցեալ ծառայս» Կիրակոսը հիշատակարանում խնդրում է գրի խոշորութեան համար շմեղաղբել, «գի այսչափ էր կարն»⁶⁰: Ձեռագրում կարդում ենք Կոստանդին գրչի հիշատակագրությունը. «Ընդ նմին եւ զիս զմեղուցեալ ծառայս զԿոստ[անդին], որ զսակաւ բանքս յիշատակ գրեցի՝ աղաչեմ յիշել. Ի ԶԼԵ. (1286) եղաւ սա ի սուրբ եկեղեցին»⁶¹:

Հաջորդ Ավետարանը Կիրակոսն «ընտիր» օրինակից արտագրել է 1269 թ.՝ Կոստանդին հայրապետի եւ Հեթում թագավորի գահակալութեան ժամանակաշրջանում (ՄՄ 9509, 328ա)⁶²: Ձեռագիրը կազմվել է օրինակելուց մեկ տարի հետո՝ 1270 թ.: Մատյանն ունի տասը խորան՝ սովորական նախշերով, սեւ թանաքով, չորս կիսախորան՝ կարմրագիծ (6ա, 93ա, 154ա, 254ա): Գրիչը հիշում է Մարտիրոսին՝ Թեոդոսի եղբորը, իր ծնողներին եւ բոլոր ննջեցյալներին:

1269 թ. Մաշկեւորի գրատանն արտագրվել է Ավետարան⁶³՝ «ի թագաւորութեան բարեպաշտ արքային Հեթմոյ, ի յիշխանութեան որդւոյ Իւրոյ Լեւոնի, այն ինչ նորընծայ ի Պարոնութիւն, եւ ի հայրապետութեանն տեառն Յակոբայ, յորում էր թիւ տոմարին»⁶⁴: Համաձայն Բ. Սարգսյանի նկարագրութեան՝ մատյանն անթերի է, արտագրվել է խնամքով⁶⁵: Ձեռա-

⁵⁸ Տէս Ա. ՍԻՒՐՄԷՆԱՆ, Յուցակ, էջ 55, Ա. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Հիշ., ԺԳ., էջ 266–267: Մատյանը բաղկացած է 298 թղթյա (17,5×13) թերթերից, գրվել է միջակ բոլորգրով՝ երկսյուն գրութեամբ: Կազմը կաշեպատ, մասամբ արծաթապատ տախտակ է՝ լավ պահպանված ու բազմիցս նորոգված:

⁵⁹ Անդ, էջ 55:

⁶⁰ Անդ:

⁶¹ Անդ, էջ 56:

⁶² Մատյանը բաղկացած է 18,6×13,5–13,8 չափերով թղթյա 329 թերթերից, գրված է երկսյուն բոլորգրով, շագանակագույն կաշեպատ կազմը զարդարված է մետաղյա խաչով:

⁶³ Տէս Բ. ՍԱՐԳՍԵԱՆ, Յուցակ, հտ. Ա., էջ 491–498, Ա. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Հիշ. ԺԳ., էջ 378–381: Ձեռագիրն ունի 309 թերթ, նյութը թուղթ է (23,5×16, 17,5×10,5 սմ), գրությունը՝ երկսյուն, գիրը՝ մեծագիր բոլորգիր՝ հնաձեւ եւ ընտիր:

⁶⁴ Բ. ՍԱՐԳՍԵԱՆ, Յուցակ, հտ. Ա., էջ 495:

⁶⁵ Անդ, էջ 493: Ձեռագիրը չունի եւսեբեոսի թուղթն ու 10 համաբարբառ Կանոնները, ինչպէս նաեւ Նախաղորություններն ու Գլխացանկերը: Մատյանի ստորին լուսանցքում

գիրը զարդարված է խորանով (4), կիսախորանով (4), մարդապատկեր, մեծ եւ միջին լուսանցազարդերով, մարդադեմ, կենդանագիր եւ թռչնագիր զարդագրերով: Մատյանի գրիչն է «տառապեալ, նուաստ կրանաւոր» Գրիգորը: Նկարչի անունը հայտնի չէ, ամենայն հավանականութեամբ գրիչն է: Զեռագիրը գրվել է երկու վանքերում. սկզբնագրվել է «ի մեծանուն եղբայրանոցն Մաշկաւոր կոչեցեալ՝ առ դուռն Սուրբ Կարապետի» եւ ավարտվել «ի գերահոշակ Ուխտս Անդրիասանց՝ մերձ յանառիկն դղեակ Բարձր անուն կոչե[ցե]ալ. յառաջնորդութեանն տեառն Սիմէոնի եւ այլ միաբան եղբայրութիւնս ի դուռն մաւրս Սիոնի եւ կենսակիր եւ աստուածընկեալ Սուրբ Նշանիս»: Հիշատակարանից տեղեկանում ենք, որ «ցանկացող եղէ աստուածախաւս մատենիս» Ծերուն կրոնավորը. «...ստացա զսա ինձ եւ իմոցն գանձ երկնային»⁶⁶: Գրիչը ցանկանում է «բարի յիշման» արժանանալ եւ խնդրում «սիրով» ուղղել գրի թերութիւնները՝ «յաւելումն կամ պակասումն», որոնց պատճառը «ոչ թե ի ծովութենէ» կամ «ոչ իցէ ըստ կամաց», այլ ձեռագիրը գրվել է դժվար պայմաններում. «...զի անտուն, անտեղ շրջեաք՝ ոչ ունելով տեղի հանգստեան»⁶⁷: Ինչպէս նկատել է Բ. Սարգիսյանը, ձեռագիրը «նուիրական եւ յարգի է նաեւ պատմական պարագաներով»⁶⁸: Գրիգոր գրչի վկայութեամբ մատյանը գրվել է «ի նշա[նա]ւոր ժամանակի... քանզի շարժեալ սասանեցաւ երկիրս մեր... յերկիր կործանեցաւ՝ զամենայն բնակիչսն ծածկելով...»⁶⁹: Գրիգորն ականատեսի վկայութեամբ նկարագրում է «գերահոշակ» Արքակաղին վանքի ավերումը. «...եւ որ ընդ վիճակաւ նորա, բազում աղաւթանոցք եւ մենաստանք առ հասարակ ի վայր խաղաղացին», պատմում «անպատմելի վիշտսն», որ պատել էր Կիլիկիային. «Եւ ան[դ էր] տեսանել արժանի ողբոց պատահումն, եւ լսել ականջաց դառնութիւն, վասն զի ոմանք հեծին եւ այլք ի հառաչ, կէսք ի ճիչ, այլ[ք] յողբս,աւերումն եկեղեցեաց, քահանայիցն կորուստ, ժողովրդոց սպառումն, եւ ամենայն հասակի սո՛ղգ անմխիթար»⁷⁰: Հէթում Ստեփանոսը, հավանաբար վանքի միաբան, «սակաւ» մասնակցութիւն է

նշանակված են հին գլխահամարներն ու համաբարբառ տեղերը: Ունի նաեւ Կիրակագիրներ:

⁶⁶ Անդ, էջ 495:

⁶⁷ Անդ, էջ 496:

⁶⁸ Անդ:

⁶⁹ Անդ:

⁷⁰ Անդ, էջ 495:

ունեցել ձեռագրի գրչությանը. «Ձնուլաստ Հեթում Ստեփանոս, սպասաւոր բանին Աստուծոյ, եւ զծնաւղսն իմ յիշեցէք ի տէր, որ զսակաւս գծեցի ո՛վ սուրբ եղբարք իմ»⁷¹:

Հետագայի հիշատակարանը բացահայտում է, որ ձեռագիրը նորոգել եւ կազմել է երկրորդ անգամ «եղկելի եւ անարժան» Աբրահամ կրոնավորը՝ «ի ծովահայեաց քաղաքս Պաւնտոս, ի դրուն սուրբ Ամենափրկչիս, որ է վանք եւ տեղի կրանաւորաց»⁷²:

Վանքի գրատանը 1274 թ. երկսյուն գրչությամբ եւ կանոնավոր բոլորգրով արտագրվել է մագաղաթյա Ավետարան⁷³: Մատյանը զարդարվել է կարմրագիծ լուսանցազարդերով եւ խորանագարդ թերթերով (1ա, 175ա, 289ա, 477ա): Կազմվել է գրչությունից մեկ տարի հետո (1275 թ.)⁷⁴: Համաձայն ձեռագրի նկարագրության՝ մատյանը շատ լավ է պահպանված: Կոստանդին վարդապետն արտագրել է ձեռագիրը Հակոբ կաթողիկոսի պատվերով՝ Լեւոն թագավորի գահակալության ժամանակաշրջանում: Մատյանի օրինակումն սկսվել է «ի սուրբ անապատս Մաշկետոր» եւ ավարտվել «ի հռչակաւոր եւ Սուրբ ուխտս Դրագարկ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ այլ սրբոցս»⁷⁵: Ձեռագրում կարդում ենք Ավետարանի երկրորդ ստացողի անունը՝ «Աւշին մարալջախտ Հայոց, [զ]որդի բարեպաշտ իշխանաց իշխանին Կոստանդեա, տեառն Լամբրունին, թագայրի Հայոց»⁷⁶:

Ձեռագրում գրվել է մատյանի հետագա ստացող Միրզաջանի անթվական բոլորգիր հիշատակագրությունը⁷⁷: 1685 թ. Նոտրդիր հիշատակարանից պարզվում է, որ Ավետարանն ազատել է գրավից Զաքարիա վարդապետի աշակերտ թոխաթցի Իգնատիոսը՝ «հալալ արդեանց»⁷⁸:

Հաջորդ Ավետարանը 1279 թ. արտագրել եւ ոսկով եւ արծաթով նկարագրել է Շմավոն գրիչը Հակոբ հայրապետի եւ Լեւոն թագավորի ժա-

⁷¹ Անդ, էջ 496: Հավանաբար նկատի է ունեցել իր գրչությամբ հիշատակարանը:
⁷² Անդ, էջ 497: Աբրահամը խնդրում է «...բազում մեղաց թողութիւն հայցել ի Քրիստոսէ Աստուծոյ, զի վասն այս յուսոյս աշխատեցայ ի սմա»:
⁷³ Ն. ՊՈՂԱՐԵԱՆ, Յուցակ, հտ. 2, էջ 523–526, Ա. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Հիշ., ԺԳ. դար, էջ 445–446: Մատյանը կազմված է 25×17 սմ մեծության 626 թերթից:
⁷⁴ Անդ, էջ 525:
⁷⁵ Անդ, էջ 524:
⁷⁶ Անդ, էջ 525:
⁷⁷ Անդ. «...յիշեցէք մաքրափայլ յաղօթս ձեր զըռէս Միրզաջան, որ ստացաւ գԱւետարանս ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնօղացն...»:
⁷⁸ Անդ, էջ 526:

մանակաշրջանում. «Ես մեղուցեալ անձն Շմաւօն գրեցի զսա բազում փափագանօք»⁷⁹:

Մաշտոցյան Մատենադարանի թիվ 1527 ձեռագիրը բովանդակում է Ներսես Լամբրոնացու «Մեկնութիւն սաղմոսաց» գործը⁸⁰, որը գրված է թղթի վրա՝ բոլորգիր երկայուն գրչությամբ: Ձեռագիրը զարդարված է կիսախորանով (8ա, Հիսուսի, Սողոմոնի, Դավթի, Սահակի եւ Ներսեսի նկարներով՝ մակագրված), ճակատագարդերով (129բ, 223ա, 299ա, 372ա, 440ա, 506բ, 608ա), թռչնային, բուսական, տաճար լուսանցազարդերով, թռչնագիր եւ հանգուցագիր զարդագրերով: Օգտագործվել են կարմիր, կապույտ եւ դեղին գույները: Մանրանկարչի անունը հայտնի չէ: Ձեռագրի վիճակը գնահատվում է բավարար. այն նորոգվել է Ժէ. դարավերջին: Մատյանը 1301 թ. գրչագրել են «զբազմամեղ», «մեղապարտ», «սուտանուն» Թորիկ քահանա Հոռմկլայեցին (2ա–298բ) եւ «մեղաւոր», «սուտանուն», «փցուն» Վարդան գրագիրը (299ա–667ա)՝ «պատուելի ծերունի» Բարսեղ քահանա Լեռնկցու պատվերով: Գրիչները հիշում են իրենց ծնողներին, հարազատներին, ուխտի առաջնորդներին եւ միաբանության եղբայրներին՝ «աշխատողացն ի տառս եւ բնակչաց սուրբ անապատիս Մաշկեւորի» (75բ): Վարդան գրիչը թղթի մշակվածության եւ նշայի պատրաստման մասին ունի հետեւյալ փոքրիկ վկայությունը. «Ո՛վ եղբայր, նշայն խիստ է եփած նա շոր, վասն այն որ է»՝ կարծես փորձելով արդարանալ. «...նիւթս ես չեմ եփել» (341բ, 437բ):

Ձեռագրի 7ա եւ 667բ թերթերում Կիրակոս աբեղան 1379 թ. թողել է նույն բովանդակությամբ երկու հիշատակություն: Աբեղան պատմում է, թե ինչպես տեր Հովաննես քահանան 1379 թ. «սուրբ Յակոբայ պահոցն նաւեցաւ»՝ Սիս մայրաքաղաքում Կոստանդին հայրապետի կողմից ձեռնադրվել է արքեպիսկոպոս «ամենայն Լիսաց եւ Աւլախաց (Վլախաց)»: Կիրակոսը, որն իրեն համարում է «սպասաւոր» Հովհաննես արքեպիսկոպոսի, հայտնում է, թե ինչպես Հովհաննես արքեպիսկոպոսը «ի դառնալն իւրում յաշխարհն» բերել է «մեծաւ աշխատութեամբ եւ ծանր

⁷⁹ ՄՄ 6273, Ղ. ՓԻՐՂԱԼԵՄԵԱՆ, Նշխարք, էջ 76–77, Ա. ՄԱԹԵՐՈՍՅԱՆ, Հիշ., ԺԳ., էջ 493:

⁸⁰ Տես Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան մատենադարանի, կազմեց Օ. ԵԳԱՆՅԱՆԸ, հտ. Ե., Երեւան 2009, էջ 330–336, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ. դար, Կազմողներ՝ Լ. ԽԱԶԻԿՅԱՆ, Ա. ՄԱԹԵՐՈՍՅԱՆ, Ա. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ (այսուհետ՝ Հիշ., ԺԳ.), մասն Ա., Երեւան, 2018, էջ 9–11: Լ. Խաչիկյանը ձեռագիրը Կիլիկիայում գրվելը համարել է անորոշ, տե՛ս Հիշ., ԺԳ., էջ 9):

ծախիւք» «Մեկնութիւն սաղմոսաց»-ի մաշկեւորչան օրինակը՝ որպէս «մեծ գանձ», «մեծ ընծայ եւ լուսաւորիչ այսամ աշխարհի... մեծ նուէրք աշխարհիս ԸՌսաց///»: Կիրակոսը գեղեցիկ համեմատութեամբ գնահատում է մատչանը. «Որպէս [սուրբն] Գրիգոր Լուսաւորիչն մեր եբեր մեծ պարգեւք զնշխարք մեծին Յովաննու եւ Աթանագինէ ի լուսաւորութիւն Հայաստան աշխարհին, սոյնպէս եւ տէրս մեր տէր Յոհաննէս զար հոգիաբուխ մատեանս եբեր ի լուսաւորութիւն եւ ի պայծառութիւն սուրբ եկեղեցոյ եւ յիշատակ իւր եւ պարեն ի այնմ աշխարհին, նայեւ ծնողաց իւրոց հանկուցելոցն առ Քրիստոս»⁸¹:

1648 թ. հետագայի հիշատակարանի վկայութեամբ (129ա, 223ա) մատչանի վերջին ստացողն է Ղալաթիայի ժողովուրդը. «Յիշատակ է սուրբ գիրքս Ղալաթիո բոլոր ժողովրդեանն, որ ստացան զսա...»⁸²:

1322 թ. Մաշկեւորի գրատանը Հովաննես գրիչն օրինակել է Շարակնոց մատչան՝ «ի թագաւորութեան Հայոց Լեւոնի՝ որդույ արքային Հայոց Աւշնի եւ ի հայրապետութեանն Հայոց տեառն Կոստանդեա Լամբրունցոյ» (ՄՄ 8438, թ. 311ա, 316ա)⁸³: Թղթյա փոքրագիր Շարականը⁸⁴ զարդարված է կարմրագիծ կիսախորաններով (1ա, 119ա) եւ բուսական, թռչնային, եկեղեցի (30ա, 132ա, 192ա, 208բ, 214ա, 260ա), խաչ (109բ 209բ), ձուկ՝ բերանում մարդ (47բ) լուսանցազարդերով, հանգուցագիր, թռչնագիր, մարդագիր (28բ, 58ա, 270բ, 142ա) զարդագրերով, կարմրագիծ ճակատագարդերով (10ա, 50բ, 95բ, 165ա, 208բ, 259բ, 278ա, 297ա): Մատչանի գլխավոր հիշատակարանը հայտնում է, որ Հոհաննես գրիչը, որն իրեն անվանում է «յոզնամեղ», «անպիտան հողոյս» եւ «զանարժանս գծող», կատարել է աշխատանքը Պողոս եպիսկոպոսի պատվերով: Գրիչը հիշում է իր ծնողներին, եղբորը՝ հանգուցյալ Գրիգորին (316բ): Շարակնոցի վերջին ստացողն է Տիրատուր «աբեղայ անուամբ միայն, այլ ի գոր-

⁸¹ Անդ, էջ 334:

⁸² Ավագերեց տեր Կարապետի հորդորով՝ եկեղեցական Մանկինի եւ աթոռակալ Սողոմոնի միջնորդութեամբ ձեռագիրը դրվել է Սուրբ Լուսավորիչ եկեղեցում՝ «ի վայելումն անձանց իւրեանց»: Ըստ ձեռագրում պահպանված նոտրգիր երկու հիշատակարանների՝ գրչագիրը 1657 թ. գնել է ջուղայեցի Սաֆարը (666բ): 1670 թ. սպահանցի Թորոսի որդի Հոհանը «Իզմիր[էն] էս Սաղմոս Մեկնիցն Ս[տ]եփանոս պետն երեստ, որ հաս[ուցանէ] էջմիածին ի Յակոբ կաթող[իկոսի] ձեռն... Գրեցօ ի ք[աղաքն] Արզրումն...» (667բ):

⁸³ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ժ. Գ. դար, կազմողներ՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթեւոսյան, Ա. Ղազարոսյան, մասն Ա., Երեւան, 2018, էջ 445:

⁸⁴ Մատչանը կազմված է 330 թերթից, (14,9×9,5 սմ), գրութունը՝ միասյուն, գիրը՝ բոլորգիր, ունի 23 տող:

ծոց յոյժ թափուր, որ ըստացաւ սա ի հալալ արդեանց իմոց» (9բ): Ձեռագրի 316բ թերթում առկա է մեկ այլ ստացողի (անունն աղճատված է) հիշատակագրությունը. «Զվերջին ստացաւդ սորա զԱ///ատուր կրօնաւոր, որ ըստացա զսա ի հալալ ընչից իմոց. Աղաղակեմ յիշել յաղաւթս ձեր»:

1325 թ. Բարսեղ վարդապետը Մաշկեւորում գրել է «Մեկնութիւն ակետարանին Մարկոսի»⁸⁵ գործը (ՄՄ 1314)⁸⁶: Ինքնագիր հիշատակարանում գրիչը նկարագրում է, թե ինչպես «մեծ տաժանամբ եւ յոլով աշխատութեամբ» սկսել է եւ «գլուխ հանեալ» այս գործը: Մեկնութեան «վճարը» եղել է Լեւոնի թագավորութեան ժամանակ, «զորոյ զթագաւորութիւնն յաղագս տղայութեան իւրոյ» խնամել եւ հոգացել են երեք «մեծագոյն եւ փառաւոր» իշխաններ՝ պարոն Օշին եւ պարոն Կոստանդին հարազատ եղբայրները՝ «աստիճանաւ Աւագ պարոն եւ Գունդուստապլ կոչին», եւ պարոն Հեթում Նղրցին (308ա): Ձեռագիրը գրվել է Կոստանդին Դրազարկեցի կամ Լամբրոնացի⁸⁷ կաթողիկոսի հայրապետութեան շրջանում (1323–1326 թթ.)⁸⁸: Բարսեղն անդրադարձել է հայրապետի խաղաղասիրական գործունեությանը, որ «բազում աշխատութեամբ ջանայ եւ հնարի զխաղաղութիւն այսմ աշխարհի»: Ընտրվելով կաթողիկոս՝ Կոստանդին հայրապետը, որը «թէպէտ ծեր եւ տկար էր մարմնով», անձամբ գնացել եւ դիմել է Եգիպտոսի Նասր սուլթանին «եւ զխստութիւն եւ զգառնութիւն նորա ի կակղութիւն եւ ի քաղցրութիւն յեղաշրջեալ փոխեաց» (308ա) եւ կնքել տասնհինգ տարվա խաղաղութեան դաշինք:

Ամփոփելով Մաշկեւոր վանքի, միաբանության ու գրչատան պատմության եւ գործունեության արդյունքները՝ կարող ենք արձանագրել, որ նույն գրչության կենտրոնի դարավոր գոյության ընթացքում զարգացման ուղի անցած վանական մշակույթն ապահովել է Մաշկեւոր վանքի ուրույն տեղը հայ գրչարվեստի պատմության մեջ՝ սերունդներին փո-

⁸⁵ Տե՛ս «Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Մարկոսի. արարեալ երանելոյն Բարսղի շնորհալի վարդապետի ձոն կոչեցելոյ...», 1826, Կոստանդնուպոլիս:

⁸⁶ Ձեռագիրը կազմվել է թղթյա 308 թերթերից (26,5×18 սմ), գրվել է միասյուն գրութեամբ եւ համաչափ մանր բոլորգրով, կազմը շագանակագույն դրոշմագարդ կաշի է: Մատյանի գլխավոր հիշատակարանը տես Հիշ., ԺԴ., էջ 495–496:

⁸⁷ Տես Հ. ր. ԱՃԱՌՅԱՆ, Անձնանունների բառարան, Կոմ. Բ., Երեւան 1944, էջ 669:

⁸⁸ Ձեռագրում գրված համառոտ գրությունները հայտնում են մատյանի հետ առնչություն ունեցող անձանց անուններ. Անդրեաս վարդապետ՝ մատյանի «վերջին պատահող» (1685 թ.), ձոն Կարապետ՝ Կոստանդնուպոլսում օրինակել է գիրքը (ԺԷ.–ԺԸ. դդ.) (տես ՄՄ 1314, թերթ 1ա):

Խանցելով թեեւ սակավաթիվ, բայց գեղեցիկ հարդարված եւ արժեքավոր բնագրերով ու հիշատակարաններով ձեռագրեր:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Գրչարվեստ, վանական մշակույթ, գրչության կենտրոն:

РЕЗЮМЕ

Статья посвящена истории монастыря Машкевор, одного из региональных духовно-культурных центров Киликийской Армении XII–XIV веков, деятельности монастырских писцов, членов и служителей конгрегации и оценке наследия скриптория. Данная статья является первым полным исследованием и основана на рукописных источниках Матенадарана имени Маштоца, каталогах армянских рукописей, а также результатах историко-филологических исследований. Впервые изучены и представлены одиннадцать рукописей из Машкеворского монастыря, а также выявлены имена писцов и обстоятельства копирования рукописей.

SUMMARY

The article is dedicated to the history of the Mashkevor Monastery, one of the regional spiritual and cultural centers of Cilician Armenia between the 12th–14th centuries. This article discusses activities of monastic scribes and members of the congregation, circumstances of copying manuscripts, and the assessment of the scriptorium heritage. The research is based on the manuscript sources of Matenadaran named after Mashtots, catalogues of Armenian manuscripts from around the world, as well as the results of historical and philological research. For the first time, eleven manuscripts from the Mashkevor Monastery have been studied and brought to scholars' attention.



ՏՐԱՊԻԶՈՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ¹

1. ՏՐԱՊԻԶՈՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ 1895–1896 ԹԹ.

ա. 1895–1896 թվականների հայկական կոտորածները: 1894 թ. Սասունի ապստամբության պարտությունից եւ դրան հաջորդած հայերի կոտորածներից հետո Անգլիան, Ֆրանսիան եւ Ռուսաստանը համատեղ հանձնախումբ ստեղծեցին՝ տեղում ուսումնասիրելու թուրքական իշխանության վայրագությունների եւ կոտորածների պատճառներն ու հետեւանքները: Օսմանյան կայսրությունն այս միջամտությունը կանխելու համար փորձում էր սիրաշահել հայերին: Նույնիսկ թույլ տվեց, որ վերջիններս, սահմանադրական օրենքի համաձայն, պատրիարք ընտրեն. 1894 թ. դեկտեմբերի 7-ին պատրիարքական աթոռին նստեց Մատթեոս եպս. Իզմիրլյանը:

Այս եւ որոշ մանր-մունր զիջումները, սակայն, չէին կարող լիցքաթափել հակահայկական լարված մթնոլորտը: Թուրք հասարակության ամենատարբեր խավերի մեջ գլուխ էր բարձրացրել հայատյացության մի ալիք, որն ավելի էր ահագնանում երոպական պետությունների հայամետ հայտարարություններից եւ հայկական գավառներում բարենորոգումների ծրագրի իրականացման հեռանկարից:

Մի շարք բանակցություններից եւ քննարկումներից հետո Անգլիան, Ֆրանսիան եւ Ռուսաստանը 1895 թ. մայիսի 11-ին սուլթանին ներկայացրին հայկական վեց նահանգներում (Դիրբեքիր, Սեբաստիա, Խարբերդ, Վան, Բաղեշ, Կարին) բարենորոգումների ծրագիրը, որն ըստ էության դարձավ 1895–1896 թթ. հայերի կոտորածների բուն պատճառը:

Թեեւ Տրապիզոնի նահանգը չէր ընդգրկված բարենորոգումների ծրագրի մեջ, շատ շուտով այստեղ եւս տարածվեցին հակահայկական տրամադրություններ, որոնք բորբոքում էին նահանգային իշխանությունները:

¹* Ստացվել է՝ 22.04.2024, գրախոսվել է՝ 29.04.2024:

էլ. հասցե՝ haykazunalvrtsyan@yahoo.com:

Մթնոլորտը շիկանում է հատկապես 1895 թ. սեպտեմբերին, երբ Կ. Պոլիս մեկնելու նպատակով Տրապիզոն է ժամանում Վանի հայակեր կուսակալ Բահրի փաշան: Տրապիզոնցի երկու երիտասարդների հանձնարարվում է սպանել ոճրագործին, սակայն մահափորձը չի հաջողվում, կուսակալը փրկվում է՝ ընդամենն ստանալով մի թեթեւ վերք:

Այս իրադարձությունն ավելի է լարում առանց այն էլ գերլարված մթնոլորտը: Ծնունդով տրապիզոնցի, իրադարձությունների ականատես եւ մասնակից Հ. Հովակիմյանը (Արշակունի), որ «Պատմութիւն հայկական Պոնտոսի» արժեքավոր աշխատության մեջ հանգամանորեն անդրադարձել է այս իրադարձություններին, գրում է. «Պահրի փաշայի եւ զինուորական հրամանատարի Սեպտ. 20ի անյաջող մահափորձէն ետք, մինչեւ 26-ը Տրապիզոնի ժողովուրդը մնաց ընդհանուր ջարդի մղձաւանջի մէջ եւ 22ին, ուրբաթ գիշեր, թուրք խուժանը յարձակեցաւ հայկական թաղերու վրայ: Հայերը ուժեղ դիմադրութիւն ցոյց տուին եւ թշնամին նահանջեց երեք սպանեալ եւ 8 վիրաւոր տալով»²:

Հաջորդ օրը հայերը խոնվում են առաջնորդարանի դիմաց: Առաջնորդական փոխանորդ տեր Վահանը դիմում է իշխանություններին եւ օտարերկրյա հյուպատոսներին՝ հայերի համար անվտանգություն ապահովելու խնդրանքով: Կուսակալ Քադրի բեյը թե՛ հայերին, թե՛ հյուպատոսներին վստահեցնում է, որ այլեւս նման դեպքեր չեն կրկնվի: Սակայն հաջորդ օրը՝ 25-ին, հայերի ղեկավարներին կանչելով պալատ՝ պահանջում է իրեն հանձնել մահափորձի հեղինակներին: Նա հասկանում էր, որ իր պահանջն անիրագործելի է, քանի որ այդ մարդիկ վաղուց հեռացել էին Տրապիզոնից: Դա պատրվակ էր ջարդերը վերսկսելու հարմար:

Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 26-ին, «...վերին հրամանով սկսաւ Հայերու թալանն ու ջարդը:Նոյն օրը ճիշտ կէսօրին մինարէներէն հնչեց զինուորական փողը, եւ թուրք զորքն ու զինուած ամբոխը սկսան թալանել: Բոլոր այր մարդիկը դուրսն էին, ինչպէս նաեւ կիներէն շատեր: Հանդիպած Հայը կը սպաննուէր: Սակայն մաս մը հոծ հայաբնակ թաղամասեր գոց մնացին ջարդարարներուն առջեւ: Օտար հիւպատոսները անխտիր կծկուեցան իրենց տուններուն մէջ: Ռուսականը «հախ է Հայերուն» կ'ըսէր, իսկ անգլիականը, թուրք ջարդարարներու ճնշման տակ սարսափի մատ-

² Յ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ (ԱՐՇԱԿՈՒՆԻ), Պատմութիւն հայկական Պոնտոսի, Պէյրութ, 1967, էջ 151:

նուած, իր տունը ապաստանած քանի մը Հայերուն ալ դուրս կը նետէր... կը պատմէ ականատես Կարէնը»³:

Կոտորածների ու թալանի ալիքը տարածվեց Տրապիզոնի գավառի գյուղերում եւ մյուս գավառներում՝ Սամսոնում, Օրդուում, Գյումուշխանեում, Բաբերդում: Ամենուր պատկերը նույնն էր՝ զորքի աջակցությամբ զինված ամբոխը հարձակվում էր անպաշտպան գյուղերի վրա, թալանում եւ սպանում հայ գյուղացիներին: Բազմաթիվ էին նաեւ աղջիկների եւ կանանց առեւանգման դեպքերը:

Որոշ քաղաքներում եւ գյուղերում հայերը դիմադրություն կազմակերպեցին: Զարշամպայի գավառակում դիմադրության շնորհիվ կոտորածները զանգվածային բնույթ չստացան: Դիմադրության կազմակերպիչն ու ղեկավարը ողջ շրջանում մեծ հեղինակություն վայելող Մինաս Օղլին էր:

Օրդու քաղաքում երիտասարդությունը դուրս եկավ պաշտպանելու քաղաքը:

Հատկապես ուժեղ էր դիմադրությունը Սյուրմենեում: 2000 թուրք զինյալ երկար ժամանակ փորձում էր հնազանդեցնել բարձր լեռներում ապաստանած 90–95 տուն ունեցող բնակավայրի հայությունը, բայց հայերը շրջանում հեղինակություն ունեցող Սահրատի (Թոփալ Վաղարշակ) գլխավորությամբ կարողացան ուժեղ հակահարված տալ թշնամու մեծաթիվ զորքին: Կռիվներն ավարտվեցին սեպտեմբերի 30-ին⁴:

Տրապիզոնի նահանգի հայության կոտորածները, թալանը եւ հալածանքները ծանր հետեւանքներ ունեցան ժողովրդագրական վիճակի, տնտեսության, կրթական հաստատությունների եւ ազգային-հասարակական կյանքի այլ բնագավառների վրա:

1896 թ. ինչպես հայաբնակ այլ վայրերում, այնպես էլ Տրապիզոնի նահանգում կոտորածներն ու թալանը շարունակվում էին աճող դաժանությամբ ու լկտիություններով: Օտարազգի ականատեսներից մեկը նամակում պատմում է 1896 թ. սեպտեմբերի 26-ին Տրապիզոնում տեղի ունեցած սպանդի մասին: Նա գրում է, որ թուրք ամբոխը չէր խնայում «...էւ նրանց, ովքեր հանձնվում էին, էւ նրանց, ովքեր գուժ էին աղերսում, էւ նրանց, ովքեր փախչում էին: Ծերերը, երեխաները, երիտասարդները, բո-

³ Նույն տեղում, էջ 152:

⁴ Դեպքերի մանրամասն նկարագրական պատմությունն ու ժամանակագրությունը տե՛ս Յ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ (ԱՐՇԱԿՈՒՆԻ), նշ. աշխ., էջ 151–165:

լորն անգթորեն մորթվել են, կտոր-կտոր արվել այդ օրը՝ մոտ 300 հոգի, ի թիվս որոնց նաեւ մի քանի կանայք: Կային թուրքեր, որոնք սպանում էին իրենց հարեւաններին, ընկերակիցներին, բարեկամներին: Նրանք, մոլեգնած ինչպես գազաններ, փրթում էին նույնիսկ դիակները: Ողբալի տեսարան էին ներկայացնում հայկական թաղերը»⁵:

1895–1896 թթ. կոտորածներին Տրապիզոնի նահանգում զոհ գնաց մի քանի հազար հայ, իսկ ողջ կայսրության մեջ ընդհանուր առամամբ՝ 300 հազար: Բացի այդ՝ մահմեդականացվեց տասնյակ հազարավոր հայ, առեւանգվեցին հազարավոր կին եւ աղջիկ: Մեծ էր նաեւ նյութական կորուստը: Թալանվեցին հայերի գույքն ու ունեցվածքը, ոչնչացվեց այն ամենը, ինչ չէին կարող ոճրագործներն իրենց հետ տանել: Այրվեցին հազարավոր տներ, խանութներ, վարժարաններ, հաստատություններ: Շատ վանքեր ու եկեղեցիներ վերածվեցին ավերակների կամ դարձան մզկիթներ:

Բարձր դուռն այս ջարդերի ու արտագաղթի ճանապարհով փորձում էր լուծել հետեւյալ խնդիրները.

1. Սարսափ տարածել հայերի շրջանում, որպեսզի հրաժարվեն եւրոպական երկրների հովանու ներքո իրականացվելիք բարենորոգումների ծրագրից:

2. Կրճատել Արեւմտյան Հայաստանի գավառներում մեծամասնություն կազմող հայ բնակչության թիվը:

3. Սպանվածների եւ արտագաղթածների փոխարեն դատարկված բնակավայրերում անվստահելի հայերի փոխարեն կայսրության տարբեր շրջաններից վերաբնակեցնել վստահելի մահմեդականներին⁶:

Դեռեւս Բեռլինի վեհաժողովին ներկայացված «վիճակագրությունն»⁷ ապացուցում էր, որ իր պատմական հայրենիքում (այն նահանգներում,

⁵ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Մ. ԵՐԵՄՅԱՆԻ խմբագրությամբ, Երեւան, 1991, էջ 185:

⁶ «1895–1896 թթ. կոտորածների ժամանակ եւ նրան հաջորդած տարիներին հայաթափվեցին հարյուրավոր բնակավայրեր. հսկայական չափերի հասավ արտագաղթը, որն ուղեկցվում էր մահմեդական այլեւայլ ցեղերի ուժեղ ներհոսքով: Վերջիններս «մուհաջիրներ» («գաղթականներ») անվան տակ ավելի ու ավելի հիմնավոր կերպով էին հաստատվում Արեւմտյան Հայաստանում եւ Կիլիկիայում: Դա էր պատճառը, որ 1880-ական թթ. Օսմանյան կայսրության ավելի քան 3 միլիոն հայ բնակչությունը XX դարի սկզբին զգալիորեն նվազել էր՝ կազմելով 2 միլիոն 200 հազար մարդ...» (տե՛ս Հայոց պատմություն, հտ. III, Գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), Երեւան, 2010, էջ 538):

⁷ «Վիճակագիր Օսմանեան Հայաստանի», Բեռլինի վեհաժողովին են ներկայացրել Մ. ԵՐԵՄՅԱՆԸ, ՆԱՐ.ՊԵՅԸ ԵՒ Ս. ՓԱՓԱՋՅԱՆԸ:

որտեղ առաջարկվում էր բարենորոգումներ կատարել՝ էրզրումի ու Վանի վիլայեթներ, Դիարբեքիրի վիլայեթի հյուսիսային մասը, Արդնի, Սղերդի սանջակի հյուսիսային մասը եւ Տրապիզոնի ու Բաթումի միջեւ գտնվող Ռիզե նավահանգիստը) հայուիթյունը կազմում է բացարձակ մեծամասնուիթյուն, իսկ թուրքերը՝ հայերի թվաքանակի մեկ երրորդը: Որպես ապացույց՝ մատնանշվում էին Ուրիշինիի 1845 թ. մարդահամարի տվյալները, որոնց համաձայն՝ հայերի թվաքանակը, նույնիսկ խիստ նվազեցված, ներկայացված էր երկու եւ կես միլիոն, եւ արվում էր եզրակացուիթյուն, թե երեք տասնամյակի ընթացքում այդ թվաքանակը պետք է հասած լիներ երեք միլիոնի»⁸:

Կոտորածներից հետո թերեւս ամենամեծ աղետը նույն այդ կոտորածների, թալանի ու հալածանքների հետեւանքն էր՝ արտագաղթը: Հայերը հեռանում էին հիմնականում դեպի Ռուսական կայսրութեան սեւծովյան ափեր՝ Եկատերինոդարի (այժմ՝ Կրասնոդար) երկրամաս եւ Աբխազիա, ուր, սկսած ժԹ. դարի 50–60-ական թվականներից, ձեւավորվել էին համընդհանրահայուիթյան գաղթօջախներ: Այդ վայրեր գաղթողների թվի մասին կարելի է պատկերացում կազմել 1901 թ. Սամսոնի ռուսական փոխհուպատոսի նամակից՝ ուղղված Կ. Պոլսում դեսպան Զինովեւին. «1890 թվին ամբողջ սանջակում 22 000-ից ավելի հայ է եղել, մինչդեռ այժմ նրանք ընդամենը 12 000 են»⁹:

10 տարվա կտրվածքով վերցված այս տվյալներն ուշագրավ են այն տեսակետից, որ արտացոլում են խաղաղ ժամանակներում արտագաղթի չափը՝ տարեկան 1200 մարդ, որ կազմում է գավառի հայ բնակչութեան մոտ 5 տոկոսը:

Ինչպես նշվեց, 1895–1896 թթ. իրադարձութեւնները հետապնդում էին քաղաքական նպատակներ, որոնց իրականացման համար Օսմանյան կայսրութեան ղեկավարութեւնն ընտրեց քաջածանոթ միջոցները՝ կոտորածն ու թալանը: Սակայն արտաքին աշխարհին փորձում էր համոզել, որ մեղավորը հայերն էին, որոնք իրենց ազգային խնդիրներն ուզում էին լուծել զենքի միջոցով: Այս առումով կարեւոր են Օսմանյան կայսրութեւնում Ռուսաստանի եւ եւրոպական պետութեւնների դիվանագիտական ծառայութեւնների վկայութեւնները:

⁸ Հայոց պատմութեւն, հտ. III, Գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), Երեւան, 2010, էջ 443:

⁹ Հայերի ցեղասպանութեւնը Օսմանյան կայսրութեւնում, էջ 202–203:

Ռիզեռում Ռուսաստանի հյուպատոսը Կ. Պոլսի դեսպան Նելիդովին հղած գեկույցում գրում է. «Հիմք չկա ենթադրելու, թե մահմեդական բնակչությունը զինված է միայն Տրապիզոն քաղաքում, իսկ վիլայեթի մյուս վայրերում զինված չէ: Այսպիսով, թուրքական իշխանությունների այն խոսքը, թե հայերը զինված են եւ զինվում են, չի համապատասխանում մեր աչքով տեսածին, ինչը վկայում է, որ հայերը բնավ էլ զինված չեն ու չեն զինվում, այլ մահմեդականներն են զինված»¹⁰:

Ըստ ֆրանսիական հանրահայտ «Դեղին գրքի» փաստաթղթերից մեկի, ուր խոսվում է Տրապիզոնի վիլայեթում կոտորածների՝ պետության կողմից կազմակերպված լինելու մասին, ասվում է. «Ռա եղել է, առանց որեւէ կասկածի, դավադրություն՝ մանրամասն մտածված: Կանոնավոր գործերի մասնակցությունը ոճրագործություններին եւ կողոպուտների թուլատրումը ակնհայտ են»¹¹:

Այդ կոտորածների՝ կազմակերպված բնույթ կրելու, զինված ուժերի մասնակցության, ամբոխի զինված լինելու, մեկ կենտրոնից ղեկավարվելու, կոտորածներն ամբողջ կայսրության հայաբնակ գավառներում միաժամանակ սկսելու եւ միեւնույն միջոցներով կառավարելու հանգամանքները որեւէ կասկած չեն թողնում, որ կատարվածը ցեղասպանություն էր: Այս է պատճառը, որ պատմագիտության եւ ցեղասպանագիտության մեջ ընդունված է 1895–1896 թվականների կոտորածները դիտարկել որպես Հայոց ցեղասպանության սկիզբ:

1896–1908 թվականներ: Կոտորածներից մինչեւ 1908 թ. սահմանադրության ընդունումը կարելի է համարել վերականգնման եւ վերելքի շրջան, թեեւ իշխանությունները հայերի նկատմամբ ընդհանուր առմամբ չէին փոխել իրենց քաղաքականությունը: Շարունակվում էին հետապնդումներն ու հալածանքները: Տրապիզոնում կրկնապատկվում է ոստիկանների թիվը, խստացվում է վերաբերմունքը հայ բանտարկյալների նկատմամբ: Հաշվեհարդարների համար նշանավոր հայերին հաճախ ենթարկում են ծեծի¹²:

Խստանում է նաեւ հարկահանությունը. «Կառավարական հրամանով գիւղերէն հին ու նոր տուրքերը կը գանձեն. նոյնիսկ երկրէն հեռացողներուն տուրքերը մնացողը պարտաւոր է վճարել: Այսպէսով, Փլաթանայի

¹⁰ Անդ, էջ 151:

¹¹ Անդ, էջ 169:

¹² Յ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ (ԱՐՇԱԿՈՒՆԻ), նշ., աշխ., էջ 175:

շրջանին Հայերը, 1901ին 400 ոսկի տուրք կը վճարեն Ռուսաստան մեկնածներուն համար¹³»:

Անկախ այս ամենից՝ հայության կյանքն աստիճանաբար կարգավորվում է եւ սկսում վերելք ապրել: 1897-ից Զանիկը դառնում է անկախ թեմ, որի առաջնորդ է նշանակվում Բաբկեն վրդ. Գյուլեսերյանը, իսկ Տրապիզոնի առաջնորդ է դառնում Խոսրով վրդ. Բեհրիկյանը: Վերականգնվում է հոգեւոր, կրթական եւ մշակութային կյանքը, զարգանում են արհեստներն ու առեւտուրը:

Կյանքն աստիճանաբար մտնում է բնականոն հուն:

1908–1915 թվականներ: 1908 թ. Սահմանադրութունից հետո առ ժամանակ հայ-թուրքական հակամարտություններն ու թշնամանքը որոշ չափով մեղմացել կամ երկրորդական դիրքեր էին մղվել: Բայց բավական էր մի փոքրիկ առիթ, որ հակահայկական տրամադրություններն աշխուժանային: 1908-ի սեպտեմբերին, երբ ժողովուրդն ամենուր պատրաստվում էր խորհրդարանական ընտրություններին, Տրապիզոնի տների եւ այլ շենքերի պատերին հայտնվեցին թռուցիկներ՝ հայերին ջնջելու հետեւյալ կոչով. «Հայերուն եւ Յոյներուն ազատութիւն տալը տէրութեան կործանում կը նշանակէ եւ Օսմանեան կայսրութիւնը արդէն կանգնած է կործանումի վիճին առաջը, ուստի իսլամի ճշմարիտ բարեկամները լուրջ կերպով պիտի մտածեն եւ միջոցներ ձեռք առնեն Հայերը ջնջելու եւ պետութիւնը անկումէն փրկելու համար»¹⁴:

Հակահայկական տրամադրությունները գրգռում էին ոչ միայն հետադիմական տարրերը, այլեւ իրենց հեղափոխական հորջորջող երիտթուրքերը, որոնք ընդգծված թշնամական վերաբերմունք ունեին Հ. Յ. Դաշնակցության կողմից խորհրդարանի պատգամավորության թեկնածու առաջադրված Հ. Շահրիկյանի¹⁵ ծրագրի դեմ, որի 21 կետերից հատկապես անընդունելի էին համարում Հայաստանի ապակենտրոնացման գաղափարը («Ադեմի մերքեզի էրմենիստան»), որը պետք է դառնար Դաշնակցության եւ Իթիհատի միջեւ խորացող հակամարտության եւ ապա՝ թշնամանքի բուն պատճառներից մեկը¹⁶: Հարցը բարդանում էր նաեւ նրանով,

¹³ Անդ:

¹⁴ Անդ, էջ 180:

¹⁵ Հ. Շահրիկյանը, որ 1915 թ. ձերբակալված մտավորականների թվում էր, տանջամահ է արվում Անկարայից ոչ հեռու գտնվող մի վայրում:

¹⁶ Յ. Յոզաֆովիչ (Արտուրյան), նշ., աշխ., էջ 179:

որ թեմի առաջնորդ էմմանուել վարդապետը, որդեգրած լինելով հակադաշնակցական կեցվածք, անդամակցում է Իթթիհադին եւ պայքարում Դաշնակցության եւ նրա թեկնածուի դեմ: Այս ամենի հետեւանքը լինում է այն, որ Տրապիզոնի նահանգից որեւէ հայ պատգամավոր չի ընտրվում¹⁷:

Սահմանադրությանը հաջորդած տարիներին ինչպես ողջ Օսմանյան կայսրության տարածքում, այնպես էլ Տրապիզոնի նահանգում հայերը եւ ընդհանրապես քրիստոնյա փոքրամասնությունները հիմնականում հավատում էին բարեփոխումներին, հույսեր էին կապում սահմանադրության հռչակած ազատության եւ հավասարության սկզբունքների հետ: Շուտով մոռացվեցին ոչ միայն 1895–1896-ի կոտորածները, այլեւ Ադանայի սարսափելի ջարդերը:

Իրադարձությունների ժամանակակիցն ու հուշագիրը վկայում է. «Պատերազմից առաջ թուրքերի եւ հայերի յարաբերությունները շատ սիրալիր էին: ...Այս խաղաղ բարեկամությունը շարունակուեց մինչեւ 3–4 ամիս պատերազմից յետոյ»¹⁸:

2. ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆ

ՈՒ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ 1915 Թ.

ա. Պատերազմի սկիզբը: Ռուսաստանը Օսմանյան կայսրությանը պատերազմ է հայտարարում այն բանից հետո, երբ վերջինիս ռազմական նավատորմը 1914 թ. հոկտեմբերի 29-ին¹⁹ հարձակում է գործում Ռուսաստանի նավահանգիստ Սեւաստոպոլի վրա՝ ըստ էության ներկայացնելով Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցելու հայտ՝ հոգուտ Կենտրոնական տերությունների դաշինքի²⁰:

Թուրքական իշխանությունների համար պարզ էր, որ նավահանգստային Տրապիզոնը դառնալու է ռուսական առաջին թիրախներից մեկը, ուստի սկսում են կայսրության այլ շրջաններից զորքեր տեղափոխել Տրապիզոն: Վրացական «Սախալիսո գազեթի» թերթը 1914 թ. նոյեմբերի 15-ի թիվ 139-ում հրատարակել է հետեւյալ տեղեկությունը. «Օսմանցի-

¹⁷ Անդ, էջ 190:

¹⁸ Ե. ՖԵՏԻՍԵԱՆ, Յիշողություններ 1915-ի Տրապիզոնի ջարդի եւ տեղահանությունների օրերից, «Հայրենիք» ամսագիր, 1941, թիվ 10, էջ 56:

¹⁹ Ամսաթիվերը տրվում են նոր տոմարով:

²⁰ Դաշինքը կնքվել է Գերմանիայի եւ Ավստրո-Հունգարիայի միջեւ 1879 թ.: Բուլղարիան եւ Օսմանյան կայսրությունը միացել են Առաջին աշխարհամարտի տարիներին:

ները Ադրիանուպոլսից զորքեր են ուղարկել Տրապիզոն: Տրապիզոնում զորքերը կողոպտում են քրիստոնյաների խանութները: Սպանել են երեք քրիստոնյայի»²¹:

1914 թ. դեկտեմբերին ռուս-թուրքական ճակատում գործողությունները շատ արագ են զարգանում: Ռազմաճակատում ռուսական զորքերի հաջողությունները հատկապես Սարիղամիշում կանխորոշում են հայ եւ քրիստոնյա մյուս ժողովուրդների նկատմամբ թուրքական իշխանությունների հետագա վերաբերմունքը:

բ. Տրապիզոնի գավառ եւ Տրապիզոն ֆաղաֆ²²: 1915 թ. հունվարին ռուսական ռազմանավերի կողմից Տրապիզոնի ումբակոծությունը թուրք-մահմեդական բնակչության մեջ բորբոքում է հակաքրիստոնեական եւ առաջին հերթին՝ հակահայկական տրամադրություններ, որոնց տարածմանը նպաստում էին նահանգապետ Ջեմալ Ազմիրի եւ ռազմական հրամանատարության քարոզչությունը: Օսմանյան բանակի իրարահաջորդ պարտությունների պատճառներն ամբոխին բացատրում էին որպես հայերի դավաճանության հետեւանք: Արդեն գարնանն ստեղծվել էր այնպիսի մթնոլորտ, որ մահմեդականներին հասած բոլոր դժբախտությունների եւ ձախորդությունների համար մեղադրում էին հայերին: Որքան ռազմաճակատի գիծը մոտենում էր քաղաքին, այնքան ավելի էր բորբոքվում հակահայկական քարոզչությունը: Մահմեդական բնակչության մեջ արթնանում էր կրոնական մոլեռանդությունը, որը հետագայում պետք է օգտագործվեր հայերի տեղահանությունների եւ կոտորածների ժամանակ:

Տեղահանություններն ու կոտորածներն արդեն սկսվել էին ողջ կայսրությունով մեկ. 1915 թ. փետրվարի 12-ի կարգադրությամբ պաշտոնանկ արվեցին բոլոր հայ պաշտոնյաները, իսկ զինվորականները զինաթափվեցին²³:

1915 թ. փետրվար-ապրիլ ամիսներին հայերի սպանությունները, առեւանգումներն ու ձերբակալությունները Տրապիզոն քաղաքում եւ ողջ նահանգում դարձել էին սովորական երեւույթներ: Ապրիլի սկզբին այս

²¹ Հայոց ցեղասպանության թեման վրացական պարբերականներում 1914–1918 թթ., Վրացերենից թարգմանեց Հ. ԲԱՅՐԱՄՅԱՆԸ, Երեւան, 2017, էջ 29:

²² Այս ենթավերնագրի տակ արժարժվող հարցերն առավել մանրամասն տե՛ս Հ. ԱՆՎՐ-ՅՅԱՆ, Համշենը եւ համշենահայությունը. Արդի հիմնախնդիրները, Երեւան, 2016, էջ 73–84:

²³ Հ. ՂԱԶԱՐՅԱՆ, Ցեղասպան թուրքը, Բէյրութ, 1968, էջ 21–22, Հ. ՆԱԶԼԵԱՆ, Հուշերս, Բէյրութ, 1960, էջ 56–67, ԼԵՌՈՆ ՎԱՐԳԱՆ, Ժամանակագրութիւն Հայկական տասնհինգին, Բէյրութ, 1975, էջ 29–30:

գործողությունները վերածվում են զանգվածային կոտորածների: 1915 թ. ապրիլին «Մշակը» տեղեկացնում է. «Տրապիզոնում երեք օր ջարդ է տեղի ունեցել: Զարդը այն աստիճանի ուժեղ էր, որ հարկադրուած կանչել են զօրքերը»²⁴:

Նման տեղեկություններ են հաղորդում նաև այլ թերթեր: Սոֆիայում լույս տեսնող «Հայաստանը» գրում է. «Տրապիզոնի մէջ փախստականներ հետապնդելու համար զրկուած ժանտարմները անգթօրէն վարուեր են ազգաբնակութեան հետ, առանց խնայելու տարիք եւ սեռ. տասի շափ տներ այրեր են: Տրապիզոնէն Կարին ճանապարհի հայ գիւղերը ոչնչացած պիտի համարել»²⁵:

Բոլորը՝ եւ ապագա զոհերը, եւ դահիճները զգում էին, որ հանգուցալուծումը հեռու չէ: Իշխանությունները ապագա տեղահանություններն ու կոտորածները արդյունավետ իրականացնելու համար որոշում են խուզարկել հայերի տները եւ հավաքել զենքերը: Մտահոգությունն անտեղի չէր. Սահմանադրությունից հետո հայերը, նավահանգստային պաշտոնյա, իթիհահական սպա Յահյայի աջակցությամբ մեծ քանակով զենք էին մտցրել Տրապիզոն: Դեպքերի ականատես եւ մասնակից Ե. Ֆնտքյանն իր հուշերում գրում է. «Այժմ, երբ հայերի հետ վերաբերմունքը ուղղակի թշնամական էր, պարզ էր, որ ամէն բան տեղեկացրած էր (սպա Յահյայը. — Հ. Ա.) կառավարութեանը: Սակայն, զէնքերը համարեա ամբողջովին իր ժամանակին ուղարկուած էին երկիր՝ էրզրում, Վան: Ճիշդ է, գիւղացի հայերը, մասնաւորաբար Եօմուրիայի շրջանում, բաւական լաւ զինուած էին, սակայն կառավարական խուզարկութիւնը ոչ մի արդիւնք տուաւ»²⁶:

Եւ ահա ապրիլի 19-ին կուսակալի հրամանով սկսվում են Տրապիզոն քաղաքի եւ շրջակա հայկական գյուղերի վաղօրոք եւ գաղտնիության պայմաններում ծրագրված խուզարկությունները²⁷: Եռօրյա խուզարկություններից հետո իշխանությունները համոզվեցին, որ հայերը զինված չեն, սակայն միջադեպը մարդկանց մեջ սարսափ առաջացրեց: Ժամանակից շուտ անհարկի հուզումների եւ խմորումների տեղիք չտալու համար նահանգապետ Զեմալ Ազմին երեւելի հայերի մասնակցությամբ

²⁴ «Մշակ», օրաթերթ, Թիֆլիս, 1915, թիվ 72:

²⁵ «Հայաստան» օրաթերթ, Սոֆիա, 1915, թիվ 8:

²⁶ Ե. Ֆնտքեան, Յիշողութիւններ 1915-ի Տրապիզոնի ջարդի եւ տեղահանութեան օրերից. «Հայրենիք» ամսագիր, 1941, թիվ 10, էջ 57:

²⁷ Մ. Թոբուքեան, Օրերու հետ, Բէյրութ, 2001, էջ 240:

կյանքի կոչեց մի հանձնախումբ, որին պարտավորություն տրվեց շրջել քաղաքներում եւ գյուղերում՝ տագնապահար ժողովրդին հանգստացնելու եւ խաղաղեցնելու նպատակով²⁸։ Սակայն իրական նպատակը ժողովրդի զգոնությունը բթացնելն էր, ինչն էլ հիմնականում հաջողվեց։ Հանձնախումբը ձեւավորելիս հենց այս հանգամանքն էլ հաշվի էր առել Զեմալ Ազմին։

Ոստիկանական եւ ժանդարմական ծառայությունները գործակալական լայն ցանցի միջոցով աշալուրջ հետեւում էին նաեւ բանակից փախած հայ զինվորների եւ սպաների տեղաշարժերին, որոնց իշխանությունները զինաթափել էին եւ խիստ հսկողության տակ ուղարկել ճանապարհներ եւ կամուրջներ կառուցելու։ Նրանց մի մասին հաջողվում է թաքնվել հարազատների, բարեկամների կամ ծանոթների տներում։ Իշխանությունները փախստականներին հայտնաբերելիս մահվամբ էին պատժում ոչ միայն նրանց, այլեւ նրանց ապաստան տվածներին։ «Հորիզոնը» հաղորդում է հետեւյալ տեղեկությունը. «Տրապիզոն, 8 մարտի.— Սարսափի շրջան է փախստական զինուորները ձերբակալելու համար դրկած ժանտարմները տասի չափ տուններ վառեցին եւ անլուր անգթութիւններ արին, չխնայելով ոչ սեռի, ոչ տարիքի»²⁹։

Մայիսի սկզբին Տրապիզոն քաղաքում սկսվում են զանգվածային ձերբակալություններ։ Թեեւ 50 տարեկանից ցածր տարիքի տղամարդ քաղաքում չէր մնացել, ձերբակալում են նաեւ մյուսներին՝ զգուշանալով անակնկալներից։ Շուշիում լույս տեսնող «Փայլակ» թերթը հրատարակում է ծովային ճանապարհով մի կերպ Բաթում հասած փախստականների հաղորդած տեղեկությունը Տրապիզոնում մայիսի սկզբին ձերբակալված 30 հայի մասին³⁰։

Տեղահանությունից առաջ նախապես կազմած ցանկերով, սովորաբար գիշերները, ձերբակալում եւ ոչնչացնում էին հայերի հոգեւոր առաջնորդներին, մտավորականներին, քաղաքական ազդեցություն ունեցող եւ հեղինակավոր մարդկանց։ Էրզրոմի ռազմական ատյանի առջեւ ինչ-ինչ բացատրություններ տալու պատրվակով պահակախմբի ուղեկցությամբ էրզրոմ ուղարկվեց Տրապիզոնի հայոց թեմի առաջնորդ Գեորգ Թուրյա-

²⁸ Յ. Յոզաֆովիչ, (ԱրժԱՅՈՒՆԻ), նշ. աշխ. էջ 219։

²⁹ «Հորիզոն», Թիֆլիս, 1915, թիվ 90։

³⁰ «Փայլակ», Շուշի, 1915, թիվ 22։

նր: Նա դարձավ առաջին գոհը՝ ճանապարհին դավադրաբար սպանվելով իրեն ուղեկցողների կողմից: Շատ ու շատ նվիրյալ հայորդիների նման նա եւս վտանգի նախօրեին միացավ իր ժողովրդին³¹:

Հունիսի 11-ին քաղաքապետարան են հրավիրում քաղաքի ընտրանուց 42 մարդու, որոնց հարցաքննության համար Սամսուն տեղափոխելու պատրվակով դուրս են բերում քաղաքից եւ բոլորին բարբարոսաբար սպանում Պլատանա կոչվող վայրում:

Հունիսի 13-ին հրապարակեցին Տրապիզոնի հայության տեղահանության հրամանը: Մտավորականներից, հոգեւոր եւ քաղաքական առաջնորդներից զրկված ժողովուրդն ուղղակի չգիտեր անելիքը: Առաջնորդական փոխանորդ Շողա քհն. Զուլալյանը, հայր Ստեփանոս Սարյանը, պատվելի Զաքարիան (շրջանի Հայ Առաքելական, Կաթոլիկ եւ Ավետարանչական Եկեղեցիների առաջնորդները), մի քանի ազդեցիկ մարդկանց աջակցությամբ, որ փրկվել էին հրաշքով, ժողովրդի անունից դիմեցին նահանգապետ Զեմալ Ազմիին, հունական մետրոպոլիտին, Կաթոլիկ Եկեղեցու միսիոներներին, գերմանական եւ ամերիկյան հյուպատոսներին, սակայն ապարդյուն³²:

Հայերի նկատմամբ թուրքական զանգվածին թշնամացնելու գործում առաջնությունը բնականաբար պատկանում էր Իթթիհադին, որի ներկայացուցիչ Նայիլ բեյին էր հանձնարարված այդ գործը: Սա հակահայկական տրամադրությունները բորբոքելու եւ անհաշտ թշնամանքի վերածելու մեջ օգտագործում էր մոլլաներին, որոնք թուրքական գյուղերի մզկիթներում խոսում էին թուրքերի նկատմամբ «գյավուրներին» անհավատալի դաժան վերաբերմունքի եւ համատարած ջարդերի մասին: Այս քարոզչությունը կարճ ժամանակում տվեց ակնկալված արդյունքը: Թեեւ հայերն ամեն կերպ փորձում էին իրենց նկատմամբ օրեցօր աճող թշնամանքը չգրգռել, բայց ապարդյուն. իշխանությունները գաղտնի կերպով ծրագրում էին տեղահանության եւ կոտորածների մանրամասները:

Տեղահանությանը պատրաստվելու համար տրվեց 5 օր ժամանակ: Անակնկալի եկած հայերի հարցումներին նահանգապետն ու Նայիլ բեյը

³¹ Վարդապետ Գեորգ Թուրյանն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին գտնվում էր Կ. Պոլսում: Զգալով ժողովրդին սպառնացող վտանգը՝ շտապեց վերադառնալ Տրապիզոն: Նրա վերադարձից երկու օր անց նեղուցները փակվեցին:

³² Յ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ, (ԱՐԵՍՎՈՒՆԻ), նշ. աշխ., էջ 222:

պատասխանում էին. «Հրամանը Պոլսից է. թեեւ մենք հակառակ ենք, սակայն ոչինչ անել չենք կարող»³³:

Նահանգապետը, խիստ անհանգստանալով հայերի կողմից որեւէ անակնկալի հնարավորութիւնից, դարձյալ դիմում է փորձված միջոցի. ժողովրդի կողմից ընդունված եւ հարգված «քանի մը հայեր շրջանները ուղարկել ժողովուրդին համոզելու համար, որ ապստամբութեան չդիմեն՝ խոստանալով բոլոր տեղահանվածներին ապահով կերպով նշանակված վայրերը հասցնել»³⁴:

Այս ձեռնարկն ունենում է հաջողութիւն. քաղաքում բազմաթիւ հայեր դարձյալ հավատում են նահանգապետի խոստումներին, սակայն «... գիւղերում, մասնաւորաբար Եօմուրիայի շրջանում վերահաս վտանգի համար լուրջ կերպով պատրաստութիւն էր տեսնում: Հ.Յ. Դաշնակցութեան կոմիտէի եւ մասնաւորապէս մի քանի ազնիւ տղաների ջանքերով ամբողջ երիտասարդութիւնը մնացել էր տեղում: ...Որոշուած էր շտեղահանուել. դիմադրել եւ մեռնել տեղի վրայ: Այդ պատճառով էլ տարագրութեան հրամանից անմիջապէս յետոյ համարեա բոլոր ընտանիքները լեռ էին բարձրացած»³⁵:

Նույնիսկ այն մարդիկ, որ տեղահանութեան ազդարարութեան օրը Շանայի Դաշնակցական ռազմական մարմնի կողով եւ ղեկավարութեամբ բարձրացել էին Գյուշանա գյուղի մերձակա բարձունքները եւ պատրաստվել էին զինված դիմադրութեան, Ջեմալ Ազմիի ուղարկած հայ քարոզիչների ազդեցութեամբ իջնում են լեռներից: Մ. Թողաքյանը, որ դիմադրական գործողութիւնների կազմակերպիչներից եւ մասնակիցներից էր, համոզված է. «Եթէ լեռ բարձրացած հայ մարտիկները չհավատային թուրք ռճրագործի տուած «ազնիւ» խօսքերուն, այսօր Տրապիզոնի շրջանի պատմութիւնը թերեւս այլ ձեւով գրուէր, ինչպէս գրուեցաւ Մուսա լեռան, Շապին-Գարահիսարի, Վանի եւ Ուրֆայի հերոսամարտերը»³⁶:

Հայերի շրջանում տարածվող կասկածները փարատելու եւ անակնկալներից խուսափելու համար իշխանութիւնները նույնիսկ հունիսի 26-ին (հին տոմարով՝ 13-ին) տեղահանման հրամանը հանրայնացնելուց հետո՝ «...յունիսի 28-ին բերանացի լուր տարածեցին քաղաքում, թէ

³³ Ե. ՖԵՏԻՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 61:

³⁴ Մ. ԹՈՂԱՔԵԱՆ, նշ. աշխ., էջ 326:

³⁵ Ե. ՖԵՏԻՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 59:

³⁶ Մ. ԹՈՂԱՔԵԱՆ, նշ. աշխ., էջ 328:

կայսերական ներում է եղել, հայերը պիտի մնան, միայն հանցաւոր նկատուած մի քանի մարդիկ պիտի հեռացուեն: Այս բոլորը այնքան ճարակորէն էր կատարուած, որ մի բոլորէ կասկածողն էլ Նայիլի կամ կուսակալի անուշ ու յուսադրող խօսքերից յետոյ հանդարտուած էր»³⁷:

Պատրաստվելու համար հայերին տրվեց հնգօրյա ժամանակ: Անորոշության, կասկածների, վախի, մյուս կողմից՝ իշխանությունների կեղծ խոստումների ու ստի միջնորոտում անցան այդ օրերը, որոնց ընթացքում էլ, սակայն, սկսվեցին կոտորածները: Տրապիզոնի հուլյների մետրոպոլիտ, արքեպիսկոպոս Խրիսանթոսը, որ հետագայում դառնում է Աթենքի եւ ողջ Հունաստանի արքեպիսկոպոսը, «Տրապիզոնի եկեղեցին» խորագրով իր հուշագրության մեջ բավականին հանգամանալից անդրադառնում է հայերի տեղահանությանը եւ կոտորածներին: Նրա հաղորդած տեղեկությունների համաձայն՝ համընդհանուր տեղահանության հրամանի օրը՝ հունիսի 13-ին, հավաքում են 300 հայ երիտասարդի, տանում ծովի խորքը եւ ծովամուկն անում, իսկ տեղահանությունից մեկ օր առաջ՝ հունիսի 17-ին, կոտորում են նախօրոք զինաթափված եւ բանտարկված 500 հայ զինվորականի³⁸:

Հնգօրյա ժամկետում կազմվեց առաջին քարավանը՝ 6000 մարդ, որոնց քաղաքից դուրս հանեցին հունիսի 18-ի վաղ առավոտյան, տարան ծովափ, առանձնացրին 14–60 տարեկան տղամարդկանց, առանձին խմբերով տարան դեպի Ջանիկի լեռները եւ ճանապարհին՝ Ջելիզլիք գյուղի մոտ, բոլորին կոտորեցին: Կանանցից, ծերերից ու երեխաներից բաղկացած մնացյալ խմբին տարան Սրղանլի դաշտը, ուր առանձնացրին գեղեցիկ կանանց եւ աղջիկներին, իսկ մնացյալին կոտորեցին չեթեները:

Առաջին քարավանին հաջորդեցին մյուսները. բոլորին էլ սպասում էր նույն ճակատագիրը: Հուլիսի սկզբներին Տրապիզոնում հայ գրեթե չէր մնացել: Հուլիսի 28-ի տեղեկագրում ԱՄՆ-ի հյուպատոսը դեսպանին հաղորդում է. «Երեւոյի 6 Յուլիսին, Տրապիզոնի բոլոր հայ տուները, շուրջ հազար, պարպուած էին եւ իրենց բնակիչները տարագրուած: Չհաստատուեցաւ երբէք, թէ մէկը գտնուած ըլլայ, որ կառավարութեան դէմ ուղղուած շարժումի մը մասնակցած ըլլալու յանցանքը գործած ըլլայ»³⁹:

³⁷ Ե. ՖՆՏՔԵԱՆ, Յիշողութիւններ 1915-ի Տրապիզոնի ջարդի եւ տեղահանութեան օրերից, «Հայրենիք» ամսագիր, 1941, թիվ 10, էջ 61:

³⁸ Տէս Յ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ, (ԱՐՇԱԿՈՒՆԻ), նշ. աշխ., էջ 224–228:

³⁹ Անդ, էջ 231:

Տրապիզոնի հայաթափման փաստը գրեթե օրը օրին արձանագրում է ժամանակի հայկական մամուլը. հուլիսի 17-ին «Արեւելքը» հաղորդում է. «Տրապիզոնում ոչ մի հայ չի մնացել»⁴⁰, նույնն է վկայում «Հորիզոնը»՝ վկայակոչելով գաղթականների պատմածները⁴¹: «Հայաստանն» էլ նշելով, որ Տրապիզոնի եւ Սեւ ծովի ափերի հայերից «ոչ մէկ լուր կայ», վկայաբերում է Տրապիզոնի նահանգի հայերի բռնի տեղահանութեանն ու կոտորածներին մասնակցած մի թուրք սպայի հետեւյալ խոսքը. «...այն կողմի բոլոր հայերը ջարդեցինք մեծով պզտիկով»⁴²:

Տրապիզոնի կոտորածների մեջ յուրահատուկ էր մարդկանց բնաջնջելու մի եղանակ, որ այլ վայրերում չի հիշվում. նահանգապետ Զեմալ Ազմին կողմնակից էր հայերին ծովում խեղդամահ անելուն, ինչը կհեշտացներ դահիճների գործը, քանզի ճանապարհներին սպանվածներին թաղելու կարիք չէր լինի: Թեեւ ինչ-ինչ պատճառներով դա զանգվածաբար չկիրառվեց, շատերը ծովամուկն արվեցին: Բազմաթիվ երեխաներից բացի՝ այս կերպ վարվեցին այն հարուստների հետ, որոնք տարբեր ճանապարհներով խուսափել էին տեղահանությունից: Նույն կերպ վարվեցին նաեւ հղի 60 կնոջ հետ:

Զեմալ Ազմին, որ հայտնի է «Տրապիզոնի մսագործ» մականունով, բացի կոտորածներ կազմակերպելուց, նաեւ հավաքում էր մինչեւ 15 տարեկան աղջիկների եւ մինչեւ 10 տարեկան տղաների՝ նրանց տեղավորելով հարեմներում կամ մուսուլմանական ընտանիքներում: Նա հետագայում պարծանքով պատմել է. «10–13 տարեկան ամենագեղեցիկ հայ աղջիկներին պահում էի ինձ համար: Նրանցից մեկին նվիրեցի որդուս: Մնացածին խեղդեցի ծովում»⁴³:

Հատուկ դաժանությամբ վարվեցին այն 600 հայ երեխաների հետ, որոնք կարողացել էին մի կերպ փրկվել տեղահանությունից եւ ապաստանել քաղաքում կամ շրջակայքում: Հույների մետրոպոլիտն այս երեխաներին հավաքել էր եւ փորձում էր տեղավորել որբանոցներում: Իշխանությունները դիմեցին նենգություն, սկզբում համաձայնեցին, ինչը ոգեւորեց եպիսկոպոս Խրիստանթոսին. նա ամեն տեղից հավաքում էր որբ ու անտեր երեխաներին՝ աշխատանքների մեջ ներգրավելով բազ-

⁴⁰ «Արեւելք», Բաքու, 1915, թիվ 99:

⁴¹ «Հորիզոն», Թիֆլիս, 1915, թիվ 190:

⁴² «Հայաստան», Սոֆիա, 1915, թիվ 44:

⁴³ Տէս «Suçluya saygi: Mehmet Cemal Azmi Bey»

մաթիվ հույն հոգեւորականների: Երբ կարծես բոլորին հավաքել էին, իշխանությունները նրանց խլեցին հույն խնամակալներից: Այս որբերի հետ վարվում են հատուկ դաժանությամբ. «Տոքտ. Ազմին իր ձեռքով կը թունաւորէ այդ երեխաներէն մօտ հարիւր յիսուն հոգին, իսկ մնացածներուն ալ դայըխճիններու քեահիայի եւ Պայրաքտարօղլի Ռահիմի միջոցով պարկերու եւ սակառներու մէջ լեցուցած, ծովը կը թափեն: Այդ երեխաներէն հրաշքով կ'ազատին ութ-տասը հոգի»⁴⁴: Նույն ճակատագրին արժանացան նաեւ այն 500 հայերը, որոնք կաշառելով թուրք նավավարներին՝ ցանկացան փախչել Սամսոն, սակայն բոլորն էլ ծովամուկն արվեցին:

Տրապիզոնից եւ նահանգի այլ բնակավայրերից տեղահանվածներին հավաքում էին Երզնկայում, որպեսզի այնտեղից տեղափոխեին դեպի անապատներ, սակայն քչերն էին հասնում Երզնկա. «Ըստ կարգ մը օտար ականատեսներու (գլխաւորապէս յոյներու) պատմածներուն, ջարդերը Տրապիզոնէն Երզնկա սոսկալի եղած են:

Թուրքերը հայերու ձեռքով խոշոր փոսեր փորել տուած են եւ քանի մը հարիւրի հասնող խումբերը այդ փոսերուն մէջ լեցնելով ողջ-ողջ թաղած են: Կիներն ու աղջիկները բռնաբարելէ ետք խոշտանգած են եւ մինչեւ կուրծքերը հողին մէջ թաղելով՝ թողած են սովէն ու ծարաւէն մեռնելու տառապանքին»⁴⁵:

Սյուրմենէի գավառակի եւ Յոմուրիայի գյուղախմբի հայերին վիճակված էր նույն ճակատագրի, որը բաժին հասավ նահանգի հայության մյուս հատվածներին: Յոմուրիայի եւ Սյուրմենէի 5000 հայերից քչերը հասան մինչեւ Երզնկա. նրանց դեպի լեռնային արոտավայրերը տանող ճանապարհին դաժանաբար կոտորեցին⁴⁶:

Շատ վայրերում ժողովուրդը, գերադասելով անորոշությունը, հեռացավ անտառները կամ բարձրացավ լեռները՝ չպատկերացնելով, թե իրենց ինչ էր սպասելու ապագայում: Գաղտնի կերպով խումբ-խումբ հեռանում են նաեւ Յոմուրիայի գյուղերի երիտասարդները, որոնք մտադիր չէին հանձնվել: Ժողովուրդը հավաքվում է եւ վճիռ կայացնում. ով կարող է, պետք է հեռանա:

⁴⁴ Մ. ԹՈՌԱՔԵԱՆ, նշվ. աշխ., էջ 347, տե՛ս նաեւ ՍԵՊՈՒՋ ԱԿՈՒՆԻ, Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921, էջ 178:

⁴⁵ Մ. ԹՈՌԱՔԵԱՆ, նշ. աշխ., էջ 350:

⁴⁶ Յ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ, (ԱՐՇԱԿՈՒՆԻ), նշ. աշխ. էջ 253:

Կիրասոն քաղաքում իշխանությունները դիմեցին փորձած միջոցի. տեղահանելուց առաջ տարբեր խաբեություններով նախ ոչնչացրին համայնքի ղեկավարներին, ապա առանձնացրին երիտասարդներին եւ ինչ-ինչ պատրվակներով քաղաքից դուրս հանեցին ու բոլորին գնդակահարեցին: Անգլուխ եւ անպաշտպան մնացած ժողովրդին՝ մոտ 3000 մարդու, քարավաններով հանեցին քաղաքից եւ մեկ-երկու օր հետո առանձնացնելով 17–50 տարեկան տղամարդկանց՝ բոլորին կոտորեցին: Մյուսներին վիճակված էր մահվան ճանապարհով քայլ դեպի անապատները, ուր քչերը հասան:

Կիրասոնից փախած շորս հույներ «Արեւ» օրաթերթին տեղեկացնում են, որ Կիրասոնում այլեւս հայ չի մնացել. «Ամբողջ Սեւ ծովի ափերից հայերին քչել են երկրի խորքեր առանց սեռի եւ հասակի խտրութեան»⁴⁷:

«Հորիզոնը» տեղեկացնում է, որ Կիրասոնի 440 տուն հայությունը հունիսի 12-ին գաղթեցնելու պատրվակով հավաքում եւ քշում են Սեբաստիայի կողմերը եւ ճանապարհին իսպառ ոչնչացնում: Ազատվում են 10–15 իսլամ ընդունածները, որոնց քշում են Սամսոնի կողմերը: Եւրոպացի մի քանի հյուպատոսներ փորձում են աղետի դեմն առնել կամ փրկել երեխաներին, սակայն ապարդյուն⁴⁸:

Օրդուի կայմակամը վախկոտ եւ խիստ զգուշավոր անձնավորություն էր: Մոտ մեկ շաբաթ պահանջվեց հայերին իբր ցուցակագրելու համար. այդ նպատակով բոլորը կանչվեցին քաղաքային բանտ եւ արգելափակվեցին: Երբ բոլոր տղամարդիկ բանտում էին, հայտարարեցին, որ հայերի համար որպես բնակության նոր վայր է հատկացված Մուսուլի վիլայեթը: Հունիսի կեսերին սկսվում է արտագաղթը:

Հ. Յ. Դաշնակցությունն ու Հնչակյան կուսակցությունը ելքեր են որոնում ժողովրդին զինելու եւ դիմադրություն կազմակերպելու համար, սակայն այդ դժվարին պահին յունիացի եւ ֆաթսացի հայերն ուղարկում են վտանգավոր մի հեռագիր, որով տեղեկացնում են, որ իրենք, մահմեդականություն ընդունելով, փրկվել են, եւ օրդուցիներին հորդորում են վարվել նույն կերպ: Ինքնապաշտպանության մասին այլեւս խոսք չէր կարող լինել: Աքսորից փրկվելու համար Օրդուի հայերը նույնպես դիմում են կրոնափոխության: Կրոնափոխվողների թիվը, ըստ «Հայաստան» թերթի,

⁴⁷ «Արեւ» օրաթերթ, Բաքու, 1915, թիվ 99:

⁴⁸ «Հորիզոն», Թիֆլիս, 1915, թիվ 190:

բավականին մեծ էր. «Օրդուի երկու հարիւր քսան տունէն մահմետականացած է հարիւր վաթսունը»⁴⁹:

Կրոնափոխութիւնը, սակայն, օրդուցիներին չի փրկում. եթէ կայսրութեան այլ բնակավայրերում մինչեւ հուլիսի մեկի հայտնի հրահանգը, որով արգելվեց կրոնափոխութիւնը, հայերը կարողանում էին հավատափոխ լինելով փրկել իրենց կյանքն ու ունեցվածքը, ապա, ինչպէս տեսնում ենք, արդեն հունիսի կեսերին Ջեմալ Ազմին Օրդուի հայերի համար բացառում է այս հնարավորութիւնը:

Հունիսի կեսերին տղամարդկանց 80–100 հոգանոց խմբերով դուրս են բերում քաղաքից. ապա շորս-շորս մարդու իրար կապված տանում անտառների խորքերը եւ կոտորում, որի մասին քաղաքում մնացածները շատ ուշ իմացան: Անգլուիս մնացած ժողովրդի քարավանը անասելի տառապանքներով Սեբաստիա–Մալաթիա – Հյունի Մանսուր ուղեգծով շարժվում է դեպի Եփրատ, որը դառնում է շատերի գերեզմանը:

Այստեղ եւս մարդկանց մի մասին ծովամուկն են անում. դրանք այն հիվանդները, ծերերն ու անկարներն էին, որոնք ճանապարհորդելու ունակ չէին. սրանց հավաքում են, Սամսոն տանելու պատրվակով հանում քաղաքից դուրս եւ լցնում ծովը:

Որք մնացած երեխաները թաքնվել էին բարեկամ հույների, վրացիների եւ անգամ թուրքերի տանը, իսկ անտեր մնացածները թափառում էին քաղաքում՝ մի կտոր հաց կամ աշխատանք գտնելու հույսով: Շուտով վերջիններիս նույնպէս հավաքում են, առողջներին բաժանում թուրքական ընտանիքներին, իսկ հիվանդներին՝ նետում ծովը:

Գյումուշխանէի գավառ: 1915 թ. գավառում բնակվում էր 250 տուն հայութիւն, որից 150–160-ը՝ քաղաքում: Ուներ երկսեռ դպրոց, գրադարան, բավականին զարգացած ազգային հասարակական կյանք եւ տնտեսութիւն: Շրջակա գյուղերով հայ բնակչութեան թիվը 3000–3500 էր, որոնք գրեթէ ամբողջութեամբ բնաջնջվում են գաղթի ճանապարհին, սակավաթիվ փրկվածները ցրվում են աշխարհով մեկ: Գավառապետ Աբդուլ Գատիրը հայերի նկատմամբ իր դաժանութեան պատճառով հրեշի համբավ էր ձեռք բերել, սակայն քանի որ կեղծավոր ու նենգ մի արարած էր, «ինքզինքը հրէշապետ ձեմալ Ազմիի նման «հայասեր ցոյց կուտար»...»⁵⁰:

⁴⁹ «Հայաստան» օրաթերթ, Սոֆիա, 1915, թիվ 32:

⁵⁰ Յ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ, (ԱՐՇԱԿՈՒՆԻ), նշ. աշխ., էջ 554:

Պաշտոնական տեղեկություններով 1970-ականների սկզբին քաղաքում ապրում էր 330 հայ⁵¹:

Տրիպոլին Գյումրիի քաղաքից հետո գավառի հայկական ամենամեծ համայնքն էր՝ շուրջ 1000 բնակչությամբ, որոնք բոլորն էլ տեղահանվեցին եւ սպանվեցին արտագաղթի ճանապարհներին:

Զանիկի (Սամսոնի) գավառ: Ցեղասպանության նախօրեին գավառի հայության թիվը հասնում էր 30 000–32 000-ի, որից 5000-ը (այլ տվյալներով՝ 10 000) բնակվում էր գավառի կենտրոն Սամսոն քաղաքում, որը կազմակերպված եւ բարգավաճ համայնք էր: 1897 թվականից նորաստեղծ Թեմի առաջնորդանիստն էր:

Տնտեսական կյանքը հիմնականում հայերի եւ հույների ձեռքում էր: Հայտնի էր ծխախոտի արդյունաբերությամբ եւ արտահանմամբ:

Հունիսի 24-ին տրվում է տեղահանության հրամանը, ըստ որի՝ պատրաստվելու համար մարդկանց տրվում էր 10 օր ժամանակ: Անակնկալները կանխելու նպատակով նույն երեկոյան պաշարվում է քաղաքի հայկական թաղը: Հայոց առաջնորդի բոլոր դիմումներն իշխանություններին որեւէ արդյունք չեն տալիս: Կարված սպասումի 10 օրերն անցնում են, եւ սկսվում է տեղահանությունը: Սամսոն քաղաքի եւ գավառի բոլոր հայերը թողնում են տներն ու բռնում մահվան ճանապարհը:

Զանիկի գավառի մեջ էին մտնում նաեւ Բարձալի, Թերմթի, Յունիեի, Ֆաթսայի գավառականները, որոնց հայկական համայնքներին վիճակված էր նույն ճակատագիրը: Կոտորածներից հրաշքով փրկված Ֆիլոմեն Հեքիմյանը պատմում է թուրքական Չիֆլեք գյուղի մերձակայքում կատարված մի սահմուկեցուցիչ դեպքի մասին: Թուրքերն այստեղ են հավաքում Սամսոնից, Բաֆրայից, Չարշամպայից, Մարզվանից, Ամասիայից տեղահանվածներին, տղամարդկանց փակում են ախոռում, իսկ կանանց եւ երեխաներին թողնում բացօթյա՝ նրանցից որեւէ վտանգ չսպասելով: Որոշ ժամանակ անց՝ «Անվախ ու հանդուգն կիներ եւ աղջիկներ, զիրար քաջալերելով խմբուեցան եւ գերմարդկային ճիգով մը կատաղօրէն յարձակեցան իրենց դիմադրող զինեալ ժանտարմաներուն եւ գարշելի երիտասարդ թուրք պաշտօնեաներուն վրայ, ազատելու համար իրենց այր մարդիկը: ...Ա՛հ, եթէ այդ կիները զէնք կամ դաշոյն ունեցած ըլլային, հոն, տեղույն վրայ տեղի կ'ունենար ահաւոր արիւ-

⁵¹ Հայկական համառոտ հանրագիտարան, հտ. 1, Երեւան, 1990, էջ 676:

նահեղուծին մը եւ անիծապարտ թուրք գազանները կը գտնէին իրենց պատիժը»⁵²:

Ֆ. Հեքիմյանը եզրակացնում է, որ շարդերը քաղաքներում եւ գյուղերում չկազմակերպեցին, որովհետեւ այդ դեպքում կանայք էլ կմիանային իրենց տղամարդկանց եւ քաջաբար կռվելով՝ կպատժեին շարդարարներին:

Երբ երկրորդ օրն ախոռում փակված տղամարդկանց դուրս բերեցին կոտորելու, նրանց վրա հարձակվեց կացիններով, սրերով, դանակներով, նաեւ հրազենով զինված ամբոխը: Որոշ հայեր թաքցրած ատրճանակներ ունեին, որոնցով փորձում են դիմադրել: Սկսվում է մի դաժան սպանդ, որտեղ հայերն արիաբար մարտնչում են եւ սպանելով շատերին՝ իրենք էլ քաջաբար նահատակվում⁵³: Սպանդից հետո դիակների վրա նավթ են լցնում եւ այրում:

1915 թ. վերջերին նահանգում հայ գրեթե չէր մնացել: Տրապիզոնում Իտալիայի ընդհանուր հյուպատոս Պ. Գորինին 1916 թ. փետրվարին «Մեսաչերո» թերթի թղթակցին տված հարցազրույցում նշել է, որ 1915 թ. վերջերին քաղաքի 14 հազար հայերից մնացել էր ընդամենը 100 մարդ, մնացածները «կամ Սեւ ծովն էին թափվել, կամ Դեյիրմեն Դերեյի գետն էին նետված»⁵⁴:

Երբ 1916 թ. ապրիլին ռուսական բանակը մտավ Տրապիզոն, այստեղ բնակվում էին ընդամենը 15 հայ կին եւ 50 որբ հայ երեխա: Տրապիզոնի նահանգի 123 հազար հայերից փրկվեցին մի քանի հազարը, որոնք ցրվեցին աշխարհով մեկ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին Օսմանյան կայսրությունը, փաստորեն, փլուզվել էր: Թալեաթի պարտված կառավարությունը հրաժարական տվեց: Նոր կառավարությունն ու խորհրդարանը ստիպված էին պատասխանել մի շարք հարցերի՝ երկիրը ո՞վ ներքաշեց պատերազմի մեջ, ո՞վ կազմակերպեց հայերի տեղահանությունն ու կոտորածները եւ այլն:

⁵² Յ. Յոզաֆիմով, նշ. աշխ., էջ 679–680:

⁵³ Անդ:

⁵⁴ «Հուլիսի 1915 թ. Մեծ եղեռնի», էջ 475:

Այս հարցերին պատասխան տալու համար ստեղծվեց Կ. Պոլսի Ռազմական արտակարգ ատյանը, որը 1919–1921 թթ. կազմակերպեց հանցագործների դատը եւ կայացրեց համապատասխան վճիռներ⁵⁵:

60-ից ավելի դատական նիստերի արդյունքում դատավճիռներ կայացվեցին Հայոց ցեղասպանության պատասխանատուների՝ «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության կենտրոնական մարմինների ղեկավարների, երիտթուրքական կառավարության, կուսակցության շրջանային ղեկավարների, նահանգապետերի, քաղաքացիական եւ զինվորական այլ պաշտոնյաների նկատմամբ: Թալեաթը, էնվերը, Ջեմալը, Նազըմը հեռակա կարգով դատապարտվեցին մահվան, շատերն ազատազրկվեցին տարբեր ժամկետներով:

Տրապիզոնի հայերի տեղահանություններն ու կոտորածներն իրականացրած պաշտոնյաների վերաբերյալ դատավճիռը կայացվեց 1919-ի մայիսի 22-ին: Ութ հանցագործներից երկուսը՝ Ջեմալ Ազմին եւ Նայիմ բեյը, հեռակա կարգով դատապարտվեցին մահվան⁵⁶, մյուսները՝ տարբեր ժամկետներով ազատազրկման:

Այս դատավարությանը թուրքական իշխանությունները, փաստորեն, ընդունում են, որ տեղի ունեցածը Ցեղասպանություն էր՝ կազմակերպված պետության կողմից:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Պետականորեն կազմակերպված ցեղասպանություն, Տրապիզոնի նահանգի հայություն, համեշնահայ:

РЕЗЮМЕ

В конце Первой мировой войны Османская Империя по факту распалась. Проигравший в войне правительство Талаат-паши подал в отставку. Новое правительство и парламент были вынуждены ответить на ряд вопросов: кто

⁵⁵ Ատյանի դատական գործընթացների նյութերը եւ կայացրած վճիռները տե՛ս Մ. ԱՆՈՒՄՅԱՆ, Երիտթուրքերի 1919–1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, Երեւան, 2011:

⁵⁶ 1922 թ. ապրիլի 17-ին Ջեմալ Ազմին Բեռլինում սպանում է «Նեմեսիս» գործողության մասնակից Արշավիր Շիրակյանը:

вовлек Турцию в войну, кто организовал депортацию и резню армян и т. д.? Чтобы ответить на эти вопросы в 1919–1921 гг. сформировался Специальный военный трибунал в Константинополе, который организовал судебный процесс над преступниками. В результате более 60 судебных заседаний были вынесены приговоры в отношении ответственных лиц: руководители младотурецкого правительства, центральных органов партии «Единение и Прогресс», региональные руководители партии, губернаторы, другие гражданские и военные должностные лица. Талаат, Энвер, Джемаль и Назим были заочно приговорены к смертной казни, другие обвиняемые получили различные сроки заключения. Этим судебным процессом турецкие власти фактически признают, что произошедшее является геноцидом организованным на государственном уровне.

SUMMARY

By the end of World War I, the Ottoman Empire had effectively collapsed. Talaat's defeated government resigned. The new government and parliament had to answer a number of questions: who dragged the country into the war, who organized the deportation and massacres of Armenians, etc.? To answer these questions, the Extraordinary Military Court of Constantinople was established, which organized the trial and sentencing of criminals between 1919 and 1921. More than 60 trials resulted in the sentencing of the perpetrators of the Armenian genocide, central leaders of the "Unity and Progress" Party, the Young Turk government, district party leaders, governors, and other civilian and military officials. Taleat, Enver, Cemal, Nazim were sentenced to death in absentia and many were imprisoned for various terms. The verdict was passed on May 22, 1919 against the officials who carried out the deportations and massacres of the Armenians of Trebizond. Two of the eight perpetrators, Cemal Azmi and Nazim Bey, were sentenced to death in absentia, while the others were sentenced to various terms of imprisonment. With this trial, the Turkish authorities effectively admitted that what had happened was a state-sponsored genocide.



ԲԵԼԻՆԴԱ ՔՈՒՓԵՐ¹
ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄ²

ԹՈՒՐԲԵՐԸ, ՆԱՅԵՐԸ ԵՒ «G-WORD»³ ՎԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ⁴

Պատմությունն ունի վաղուց քողարկված իր պահանադաշտերը՝ նախազգուշացումներով առ այն, որ սահմանախախտները կարող են մտնել [այնտեղ] միայն իրենց վտանգելու պատրաստակամությամբ: Հաշվի առնելով առկա սպառնալիքները՝ ոգեւորիչ է այն հանգամանքը,

¹ Համաշխարհային քաղաքականության ինստիտուտի ավագ գիտաշխատող (առավել մանրամասն տե՛ս <https://www.humanrightscolumbia.org/profile/faculty/belinda-cooper%20> (ստ. 30.04.2024 թ.) (ծնթ.՝ մասամբ թրգմ.):

² Թուրք պատմաբան և հասարակագետ. առաջին թուրք գիտնականներից է, որ ճանաչում է բացահայտորեն քննարկում է Հայոց ցեղասպանությունը: Հեղինակ է բազմաթիվ գրքերի (տե՛ս Թ. Ա.ՔՉԱՄ, Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ: Հայոց ցեղասպանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում, Երեւան, 2015, և այլն) ու հոդվածների, սակայն նրա առավել հայտնի աշխատություններից է «A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility, New York, 2006» գիրքը, որը նույնպես թարգմանվել է հայերեն՝ «Նայտառակ Արարք. Հայոց ցեղասպանությունը և թուրքերի պատասխանատվության հարցը, Երեւան, 2021» (ծնթ.՝ մասամբ թրգմ.):

³ Ամերիկայի Միացյալ Նահանգների իշխանությունները դեռևս կանգնած են երկընտրանքի առջև՝ Օսմանյան կայսրության տարածքում Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի դեմ կազմակերպված գործողությունները բնութագրել «Genocide» («Ցեղասպանություն») բառով, թե հրաժարվել դրանից՝ հաշվի առնելով Ամերիկայի ռազմավարական դաշնակցի՝ Թուրքիայի նախազգուշացումները: Այդուհանդերձ, տասնամյակներ շարունակ սույն շրջանակում բազմաթիվ բանավեճեր են ծավալվել «Genocide» եզրույթի շուրջ, որը ձեռք է բերել այնպիսի մի գործություն, որ քաղաքական որոշ շրջանակներ հրաժարվում են բարձրաձայն արտաբերել այն՝ փոխարենը շրջանառելով «Genocide» բառի առաջին տառի հիմամբ մշակված մի նոր՝ «G-word» եզրույթը: Ըստ «Կարնեգի Եվրոպա» հետազոտական կենտրոնի ավագ գիտաշխատող Թ. դե Վաալի՝ սույն մտայնության պատճառն այն է, որ «ցեղասպանություն» բառը, հավանաբար, սպառել է իրեն. դրանից զատ՝ այն բովանդակում է չափազանց մեծ հուզական ներգործություն, չնայած որ ողբերգական իրադարձությունները նկարագրելու համար ճիշտ ընտրված հասկացություն է: Այնուամենայնիվ, հայերի մեծամասնության կարծիքով՝ Ցեղասպանության տարիներին կազմակերպված կոտորածներն ու հայ մարդու վերապրած դառը փորձառությունները լավագույնս կարող են բնութագրվել հենց «ցեղասպանություն» եզրույթով, իսկ թուրքական իշխանությունների համար ընդունելի է ցանկացած այլ բառ (առավել մանրամասն տե՛ս <https://carnegieeurope.eu/2014/12/16/g-word-armenian-massacre-and-politics-of-genocide-pub-57528> և <https://css.ethz.ch/en/services/digital-library/articles/article.html/5f374126-8d76-45b0-8f1b-7479ffb42504>, ինչպես նաև՝ <https://www.economist.com/international/2011/06/02/the-uses-and-abuses-of-the-g-word> (ստ. 30.04.2024 թ.) (ծնթ.՝ թրգմ.):

⁴ Տե՛ս B. COOPER & T. AKCAM, Turks, Armenians, and the “G-Word”, “World Policy Journal”, vol. 22, Issue 3, Fall 2005, էջ 81–93 (ծնթ.՝ թրգմ.):

որ թուրքերի ու հայերի նոր սերունդը նորովի է դիտարկում պատմական կարեւորագույն իրադարձությունը՝ կազմաքանդվող Օսմանյան կայսրութունում 1915 եւ 1920 թթ. միջակայքում տեղի ունեցած հայերի զանգվածային կոտորածը, որը տասնամյակներ շարունակ բաժանել է նրանց: Այդ կայսրութունից առաջացած Թուրքական Հանրապետությունը գրեթե ի սկզբանե անդրդվելիորեն հրաժարվում է ընդունել զանգվածային ջարդերի պատասխանատվությունը՝ դրանք բնութագրելով որպես Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում եւ դրանից հետո Թուրքիայի թշնամիներին՝ հայերի ցուցաբերած օգնության հետեւանք: Այդուհանդերձ, այլ երկրների պատմաբաններն այդ սպանությունները դիտարկում են իբրեւ Ի. դարի առաջին ցեղասպանություն. եւ, իրոք, եզրույթն ինքնին առաջացել է Անատոլիայում կազմակերպված արյունահեղության հիմամբ⁵:

[Պահպանված] ապացույցները երբեք էլ զուտ ակադեմիական քննարկման առարկա չեն եղել հենց այդ երկու ժողովուրդների համար. թուրք մտավորականները, որոնք կասկածի տակ են առել Հայոց ցեղասպանության պաշտոնական տարբերակը, արժանացել են պախարակության, իսկ թուրքական կառավարությունն ահռելի ջանքեր է գործադրել՝ օտարերկրյա կառավարությունների՝ ցեղասպանությունը ճանաչող բանաձեւերի ընդունման գործընթացի դեմ պայքարելու համար, մինչդեռ

⁵ Թեեւ սույն իրողության առնչությամբ առկա է թուր կարծիք, համաձայն որի՝ Ռ. Լեմկինը «ցեղասպանություն» եզրույթը սահմանել է հրեական կոտորածը՝ Հոլոքոստը բնութագրելու համար, այնուամենայնիվ, անհերքելի փաստ է, որ նրա առաջնային նպատակը եղել է հնագույն ռազմական մարտավարության բնութագրումը, որը վերակենդանացրել էին նացիստները (տես S. MANJIKIAN, Genocide and the Failure to Respond, in: “Civil Courage: A Response to Contemporary Conflict and Prejudice”, ed. by N. Kramer, New York, 2007, էջ 48, ամբողջական հոդվածը տես էջ 47–57): 1944 թ., երբ Ռաֆայել Լեմկինն ստեղծեց «ցեղասպանություն» եզրույթը, նա հիմք ընդունեց 1915 թ. Օսմանյան Թուրքիայում կազմակերպված հայերի ջարդերը՝ որպես հիմնարար օրինակ. «Որոշ ընթերցողներ արդեն գլխի են ընկել, թե ես ինչ նկատի ունեմ. այն է՝ երեսուն տարի առաջ թուրքերի իրականացրած գազանությունները հայերի նկատմամբ: Սակայն ոմանք կասեն, որ այդպես չեն մտածել: Ահա սա է մեր ժամանակների ողբերգությունը: Մենք չափազանց շուտ ենք մոռանում: Երեկ զոհերը «միայն» հայերն էին, այսօր «միայն» հրեաներն են, բայց նաեւ լեհերն ու այլ եւրոպական ժողովուրդներ: Իսկ սվ կլինի վաղը...» (սույն տողերն առաջին անգամ հրատարակվել են հետեւյալ ամսագրում՝ “Yivo Bleter: The Journal of the Yiddish Scientific Institute”, vol. XXVIII, № 2, 1948, սակայն հայերեն թարգմանությունը վերցրել ենք Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի պաշտոնական կայքէջից՝ <http://www.genocide-museum.am/arm/un.php> ստ. 30.04.2024 թ.): Նույն միտքն առկա է նաեւ այլոց աշխատություններում (առավել մանրամասն տես Y. AURON, The Banality of Denial: Israel and the Armenian Genocide, New Brunswick-New Jersey, 2003, էջ 9, ինչպես նաեւ J. GUTTMAN, The Beginnings of Genocide. A Brief Account of the Armenian Massacres in World War I, New York, 1948, էջ 3) (ծնթ.՝ թրգմ.):

աշխարհածավալ հայկական մեծ Սփյուռքում բնակվող հայերը վաղուց են թուրքական պատասխանատվությունը դարձրել երկու ժողովուրդների միջև հարաբերությունների բարելավման փորձաքար: Եւրոպական Միությանն անդամակցելու՝ թուրքիայի ներկայացրած հայտի հետեւանքով շարունակական այս բանավեճը նոր ուշադրության առարկա դարձավ: Հայոց ցեղասպանության նկատմամբ թուրքական ժխտողականության պատճառով բազմաթիվ եւրոպացիներ կասկածի տակ դրեցին Անկարայի՝ քաղաքացիական ու մարդու իրավունքների պահպանման առնչությամբ ստանձնած պարտավորությունները: Միեւնույն ժամանակ, որոշ եւրոպացիներ սույն վեճն օգտագործեցին իբրեւ պատրվակ՝ մահմեդական մեծամասնությունն ունեցող երկրների անդամակցությունն արգելափակելու կամ հետաձգելու համար:

Բարեբախտաբար, սառը պատերազմի ավարտը ո՛չ միայն գրգռեց թուրքիային իր անցյալի հետ առճակատման մղող ուժերին, այլեւ նախանշեց մի նոր օրակարգ, որի շրջանակում կարելի է այն դիտարկել, եւ, հետեւաբար, ընձեռեց [խնդրի] կարգավորման նոր հնարավորություններ: Վերջին երկու տասնամյակների ընթացքում կատաղի հակամարտությունների կամ բռնապետական իշխանության ժամանակաշրջանները հաղթահարած բազմաթիվ երկրների փորձառությունները ծնունդ տվեցին «Անցումային արդարադատության» նոր բնագավառին: Զատագովներն ու գիտնականները հավասարապես հետաքրքրված են այն միջոցներով, որոնց օգնությամբ երկրներն առնչվում են անցյալի անարդարության հետեւանքով ստեղծված ժառանգությանը, եւ այն հարցով, թե ինչպե՞ս է սույն գործընթացն առնչակցվում խաղաղ, ժողովրդավարական հասարակությունների զարգացմանը:

Անցումային արդարադատությունն ապահովում է հայեցակարգային օգտակար մի համակարգ, որի շրջանակում հնարավոր է տեղորոշել թուրքերի եւ հայերի միջև առկա հակամարտությունը: Սույն դիտանկյունից թուրքիան հետպատերազմյան Գերմանիայի, հետխորհրդային Արեւելյան Եւրոպայի կամ հետպատերազմյան⁶ Հարավային Աֆրիկայի հետեւողու-

⁶ «Ապարտեիդ» (անգլ. «apartheid») նշանակում է «ուսսայական խտրականություն, մեկուսացում» կամ «ուսսայական մեկուսացման քաղաքականություն» (տե՛ս Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ա. ՀԱՋԻ-ՀԱՎՈՐՅԱՆ, Անգլերեն-հայերեն բառարան միջազգային հարաբերություններին, քաղաքագիտությանն ու դիվանագիտությանն առնչվող տերմինների եւ արտահայտությունների, Երեւան, 2009, էջ 197, ինչպես նաեւ Ն. ԲԱՐՍԹՅԱՆ, Անգլերեն-հայերեն բառարան, Երեւան,

Թյամբ պետք է համառորեն պայքարի դրա դեմ եւ, վերջիվերջո, պետք է հաշտվի իր պատմութեան մեջ առկա մութ կետերի հետ՝ նախքան կկարողանա շարժվել առաջ՝ դեպի առավել ժողովրդավարական ապագան: Սույն գործընթացում թուրքերի ու հայերի՝ միմյանց մասին ունեցած պատկերացումները կարող են դուրս գալ սառեցված թշնամութեան շրջանակից, որն ի հայտ է եկել մոտ մեկ դար առաջ տեղի ունեցած իրադարձությունների հետեւանքով:

ՀԱՅԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԹ. դարավերջին, երբ Արեւմտյան տերութիւններն առավել հաճախ էին հնչեցնում անկումային իրավիճակում հայտնված Օսմանյան կայսրութիւնը միմյանց միջեւ բաժանելու սպառնալիքը, դրա սահմաններից ներս ազգային ու կրօնական փոքրամասնութիւններն անհամբերութեամբ սկսեցին ավելի մեծ ինքնավարութիւն պահանջել: Մահմեդական կայսրութեան մեջ քրիստոնեական փոքրամասնութիւնը համարվող հայերը, որպէս գյուղացիներ, առեւտրականներ ու արհեստավորներ, դարեր շարունակ ապրել են հիմնականում ներկայիս Արեւելյան Անատոլիայի տարածաշրջանում: Մյուս բոլոր ոչ մահմեդականների պէս նրանք նույնպէս ունեին զիմմի⁷ կարգավիճակ, որը մոտավորապէս համեմատելի էր

2011, էջ 53 եւ այլն): «Ապարտեիդ» եզրույթով բնորոշվում է սպիտակամորթների բռնապետական քաղաքական մշակութի վրա հիմնված գերիշխանութիւնը, որը պետական մակարդակով խրախուսում էր հարավաֆրիկյան բանտու ժողովրդի եւ ոչ սպիտակամորթ այլ բնակչութեան նկատմամբ սանձազերծված հալածանքները՝ ի շահ ազգային փոքրամասնութիւն կազմող սպիտակամորթ հարավաֆրիկացիների: Այն, որպէս պետական քաղաքականութեան հիմք, որդեգրվել էր 1948-ից: Մոտ կես դար հետո միայն՝ 1994 թ., Հարավաֆրիկյան Հանրապետութիւնում անցկացվեցին համընդհանուր ընտրութիւններ, որոնց արդունքում ձեւավորվեց ռասայականութեան վրա չհիմնված առաջին կառավարութիւնը, որն էլ ապարտեիդի վերացման վերաբերյալ կայացրեց համապատասխան քաղաքական որոշում: Թեեւ ռասայական խտրականութեան եւ ճնշման այդ քաղաքականութիւնը վաղուց արդէն մերժվել է, այդուհանդերձ տնտեսութեան եւ հասարակական հարաբերութիւնների բնագավառներում դրա դրսևորումները մինչ օրս էլ շարունակում են զգալ տալ իրենց (տե՛ս В. ГРИБАНОВА, Образование в Южной Африке. От апартеида к демократическим преобразованиям, Москва, 2003, V. BICKFORD-SMITH, Ethnic Pride and Racial Prejudice in Victorian Cape Town: Group identity and social practice, 1875–1902, Cambridge, 1995, ինչպէս նաեւ S. CROMPTON, Desmond Tutu: Fighting Apartheid, New York, 2007, T. Lodge, Sharpeville: An Apartheid Massacre and Its Consequences, Oxford, 2011) (ծնթ.՝ թրգմ.):

⁷ «Զիմմի» (արաբ.՝ պարտապան, հարկատու) բառը ոչ մահմեդական ազգաբնակչութեան հավաքական անվանումն էր մահմեդական պետութիւններում: Անվանումն առաջացել է արաբական արշավանքների ընթացքում (է. դար), երբ նվաճողները որոշ ժողովուրդների թուլատրեցին դավանել իրենց կրօնը: Արաբները պաշտպանում էին այդ ժողովուրդների

երկրորդ կարգի քաղաքացիության հետ, սակայն մշակութային, քաղաքացիական ու ֆինանսական հարցերում նրանց տրված էր լայն ինքնավարություն: Չնայած տարաբնույթ խտրականությանը, նրանք, ընդհանրապես, խաղաղ էին ապրում իրենց մահմեդական հարեւանների հետ: ԺԹ՝ դարում, սակայն, օսմանյան հասարակության ներսում տեղի ունեցած փոփոխությունները խախտեցին այդ հավասարակշռությունը: Քրիստոնյաները, այդ թվում նաեւ՝ հայերը, հիմնական շահառուները դարձան արտոնյալ առեւտրական համաձայնագրերի, որոնք [Օսմանյան] կայսրությանը պարտադրել էին Արեւմտյան տերությունները, վերջիններիս քաղաքացիները գերադասում էին գործնական հարաբերություններ ունենալ քրիստոնյաների հետ: Երբ նրանց տնտեսական ու հասարակական կարողությունները մեծացան, հայերը դարձան մահմեդական թուրքերի եւ ազգային այլ փոքրամասնությունների վրդովմունքի ու հարձակման թիրախ: Հայկական նորաստեղծ բարեփոխական շարժումն ու հեղափոխական խմբերը պաշտպանություն եւ իրավական հավասարություն էին պահանջում հայ ազգաբնակչության համար: Օսմանյան կայսրությունը թուլացնելու գործընթացին նպաստելու նպատակով եւրոպական [տերությունների] առաջնորդները խաղացին սուլյն լարվածության վրա եւ սատարեցին հայոց պահանջատիրությանը:

Արտաքին այս ճնշումից զատ՝ Ռուսաստանի մեծաթիվ հայ ազգաբնակչության ներկայացուցիչները, երբեմն վայելելով ցարական իշխանությունների աջակցությունը, հանդես էին գալիս բարեփոխումների պաշտպանությամբ՝ հօգուտ օսմանահպատակ հայերի: Հետեւաբար քրիստոնեական սուլյն փոքրամասնությունն առավել հաճախ էր դիտարկվում իբրեւ վտանգավոր, անհավատարիմ տարր: Մահմեդական մեծամասնությունը համախմբելու եւ կայսրությունը վերամիավորելու նպատակով՝

կրոնական համայնքները՝ պայմանով, որ նրանք հպատակվեն իրենց, օգնեն «անհավատների» դեմ մղվող «արբազան» պատերազմում եւ գլխահարկ վճարեն: Հայաստանում զիմմիների վիճակն ավելի ծանրացավ ԺԴ. դարում, երբ մոնղոլական իլխան Ղազանխանի օրոք մահմեդականությունը դարձավ պետական կրոն: Ժամանակի ընթացքում բազմապատկվեցին զիմմիներից բանձվող գլխահարկի չափերը, սահմանվեցին ծանր եւ ստորացուցիչ բազմաթիվ այլ հարկեր ու պարտավորություններ (առավել մանրամասն տե՛ս БАТ-ЙЕОР, Зимми: евреи и христиане под властью Ислама, т. 1–2, Иерусалим, 1991: Հմմտ. Հ. Փ. Ֆ. Ա. ՋՅԱՆ, Մեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, «Բանբեր Մատենադարանի», № 3, Երեւան, 1956, էջ 85–99, ԼեՆ, Երկերի ժողովածու, հտ. 3-րդ, գիրք 1-ին, Երեւան, 1969, էջ 110–111, ինչպես նաեւ՝ «Հայկական Սովետական Հանրագիտարան», Երեւան, 1977, էջ 689–690) (ծնթ.՝ թրգմ.):

սուլթան Աբդուլ Համիդը 1894–1896 թթ. միջակայքում կազմակերպեց գանգվածային կոտորածներ, որոնց ընթացքում սպանդի ենթարկվեց մինչև 200 000 հայ⁸, որը Եւրոպայում ու Հայաստանում լայն դատապարտության արժանացած առաջին արյունահեղությունն էր:

Օտարերկրյա միջամտության հանդեպ առկա օսմանյան մտավախությունները, ինչպես նաև՝ հայերի նկատմամբ թշնամանքը սաստկացան 1912 թ. Բալկանյան առաջին պատերազմի ժամանակ, հրեթացս որի կայսրությունը զրկվեց իր եւրոպական տարածքներից եւ այդ տարածքներում ապրող քրիստոնյա ազգաբնակչության մեծ մասից, եւ առավել ուժգնացան 1914 թ., երբ Արեւմտյան տերությունները տկարացած Օսմանյան կայսրությանն ստիպեցին պայմանագիր ստորագրել Ռուսաստանի հետ՝ խոստանալով հայերի համար ինքնավար մարզ ստեղծել Արեւելյան Անատոլիայում: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Թուրքիան դաշնակցեց Գերմանիայի հետ, որի առաջնորդներն ամենայն անկեղծությամբ սատարում էին օսմանյան հակազդեցությանը՝ ընդդեմ Արեւմտյան ճնշման: Երբ Ռուսաստանն սկսեց մասնակցել պատերազմական գործողություններին՝ միանալով դաշնակիցներին, երկու կայսրություններն էլ իրենց հերթին խրախուսում էին հակառակ կողմի տարածքում ապրող հայ բնակչությանը ապստամբել: Այդուհանդերձ, Թուրքիայում հայկական հիմնական միավորումը հավատարիմ մնաց կայսրությանը, եւ հայերը ծառայում էին օսմանյան բանակում, շնայած ռուսներին հաշտվեց ցարական բանակի կազմում ձեւավորել հայկական կամավորական զորամիավորումներ եւ խրախուսել հայերի ապստամբությունն Օսմանյան կայսրության տարածքում: Սուլյն իրողությունն ամրապնդեց Օսմանյան կայսրության վաղեմի համոզմունքը, համաձայն որի՝ հայ բնակչությունը ռուսամետ է, եւ Ռուսաստանի սահմանակից շրջաններում բնակվող հայությունը ենթարկվեց բռնաճնշումների ու սպանդի: Հայ գաղթականներն ապաստանեցին Թուրքիայի արեւելյան հատվածում տեղակայված Վան քաղաքում, որտեղ նրանք, ապավինելով ռուսական օգնությանը, ապստամբեցին:

1915 թ. օսմանյան կառավարությունը, վկայակոչելով Վանի ապստամբությունը, եւ որպես արդարացում՝ հենվելով հայ-ռուսական հա-

⁸ Ըստ տարբեր գնահատականների՝ 1894–1896 թթ. Համիդյան ջարդերի հետեւանքով կոտորվել է շուրջ 300 000 հայ, բռնի մահեղականացվել է 100 000-ը, նույնքանն էլ տարագրվել տարբեր երկրներ (ծնթ.՝ թրգմ.):

մագործակցության առնչությամբ առկա կասկածի վրա, կոչ արեց Անատոլիայից տեղահանել հայ ազգաբնակչությանը սիրիական ու իրաքյան անապատներ: Գիտնականների մեծամասնությունը համակարծիք է, որ օսմանյան իշխող կուսակցությունը սույն տեղահանությունները դիտարկել է որպես հայ ազգաբնակչությանը կազմակերպված ջարդերի եւ զրկանքների ենթարկելու միջոցով ոչնչացնելու հնարավորություն: Եւրոպացի ու ամերիկացի դիվանագետների, քաղաքական գործիչների, քարոզիչների եւ զինվորական սպաների՝ սույն իրադարձությունների առնչությամբ գրած սկզբնաղբյուր զեկուցագրերը բովանդակում են եկեղեցիների հրկիզման, զանգվածային ջրահեղձումների, ծեծերի, բռնաբարությունների եւ անդամահատությունների [բազմաթիվ] դեպքերի կենդանի նկարագրություններ: Ոճրագործները կառավարական գործադիրավորումները (այդ թվում նաեւ՝ ժանդարմները եւ կիսառազմականացված առանձնահատուկ կազմավորումները) եւ տեղի բնակիչներն էին, հատկապես՝ քրդերը: Օսմանյան կայսրության պարտությունից հետո թուրքական՝ նոր կազմավորված կառավարության ձեւավորած հետաքննիչ հանձնախումբը հաստատեց, որ 1915–1918 թթ. ընթացքում զոհվել է 800 000 հայ, ըստ այլոց գնահատականների՝ զոհերի թիվը հասել է 1 500 000-ի: Այս սպանող շարունակվել է նաեւ 1919–1920 թթ.՝ Թուրքիայի եւ հետպատերազմյան շրջանում կարճատեւ կյանք ունեցած մի երկրի՝ Հայաստանի միջեւ տեղի ունեցած պատերազմի ժամանակ, մինչդեռ որոշ հայեր հանուն վրեժխնդրության հարձակողական գործողություններ էին իրականացնում թուրքերի դեմ:

Թուրքերի ռազմական հաջողությունները եւ այն իրադարձությունները, որ 1923 թ. Մուստաֆա Բեմալ Աթաթուրքն ստեղծեց Թուրքիայի Հանրապետությունը, բացեցին պատմական մի նոր էջ: Հառնելով կործանված կայսրության մոխիրներից՝ հանրապետության հիմնադիրները ձգտում էին նոր ազգային ինքնություն ձեւավորել: Նրանք հույս ունեին այսկերպ վերացնել ցեղային տարբեր խմբերի միջեւ առկա լարվածությունը, որը նպաստել էր կայսրության փլուզմանը: Համաձայն քեմալիստական տեսակետի՝ մահմեդականության՝ առավել ընդհանրական հասկացության հետ օսմանյան նույնացման հետեւանքով դարեր շարունակ ջնջվել է թուրքական առանձնահատուկությունը, հետեւաբար նոր հանրապետության հիմնադիրներն անհրաժեշտություն համարեցին վերադառնալ նախամահմեդական, նախաօսմանյան թուրքակա-

նույն ժամանակահատվածում Մուսլիմ գործընթացի կարեւորագույն կողմերից մեկը լեզվի «թուրքացումն» էր, որի արաբական այբուբենը 1928 թ. փոխարինվեց լատինական տառերով⁹: Թեև սա արդիականացման ու արեւմտականացման ուղղութիւնով կատարված բացահայտ մի քայլ էր, սակայն այն ապագա սերունդներին արդյունավետ կերպով հեռացրեց նաեւ իրենց պատմութիւնից: Թուրքերի մեծամասնութիւնն

⁹ Հարկ ենք համարում նշել, որ այս գործընթացում առանցքային դերակատարութիւն է ունեցել հանրահռչակ լեզվաբան, թուրքագետ ու մանկավարժ Հակոբ Մարթայանը: Դրանից զատ՝ Մարթայանը ծառայութիւն էր մատուցել Թուրքիայի սահմանադրութիւնն ստեղծելու, հանրապետական կարգը կատարելագործելու, արաբատառ այբուբենը լատինատառ դարձնելու գործում: «Լատիներենի հիմամբ ժամանակակից թուրքական այբուբենը կազմել է Հակոբ Մարթայանը (Հակոբ Դիլաշար)» (“Truth, Silence and Violence in Emerging States: Histories of the Unspoken”, ed. by A. Russell, Milton, Routledge, 2019, ինչպէս նաև՝ “Mediterranean Modernism: Intercultural Exchange and Aesthetic Development”, ed. by A. Goldwyn & R. Silverman, New York, 2016, էջ 224): Նա է Թուրքիայում շրջանառութիւն մեջ դրել ազգանունները՝ Քեմալին կոչելով Աթաթուրք (այսինքն՝ թուրքերի հայր): Իր հերթին՝ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը թուրքերեն լեզվի ուսումնասիրութիւն մեջ Մարթայանի ունեցած ներդրման համար նրան շնորհել է «Դիլաշար» (այսինքն՝ «Լեզու բացող») ազգանունը: Ծնվել է 1895 թ. մայիսի 22-ին Կ. Պոլսում. կրթութիւնն ստացել է տեղի ամերիկյան քոլեջներից մեկում, որտեղ հետագայում աշխատել է որպէս անգլերենի ուսուցիչ, ապա՝ տնօրէն: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կռիւլ է կռոււիս ճակատում՝ Դիարբեքի շրջանում: Պատերազմի ավարտից որոշ ժամանակ հետո նրան շնորհվել է ամերիկյան ակադեմիայի մագիստրոսի տիտղոս, իսկ 1922 թ.՝ պրոֆեսորի կոչում: Մինչև 1932 թ. Բէյրութում, Սոֆիայում եւ այլ վայրերում զբաղվել է հալազիտութիւնով, ստանձնել Բէյրութի առաջին հայկական վարժարանի տնօրինութիւնը, հիմնել «Ռահվիրա» եւ «Մշակույթ» թերթերը (Սոֆիա), խմբագրել «Ղույս» շաբաթաթերթը (Բէյրութ), հողվածաշարերով հանդես եկել հայկական մամուլում: Այդ շրջանում հրատարակվել են նրա «Առաջին փորձութիւն» պիեսը (1922), Լ. Շանթի «Հին աստվածներ»-ի անգլերեն թարգմանութիւնը (1922), «Գրի ծագումը եւ տարածումը» (1928) եւ «Հարեթաբանութիւն» (1929) աշխատութիւնները, անգլիացի բանաստեղծներից թարգմանած «Ալբիոնի պարտեզներ» ժողովածուն (1929 թ.): 1932-ից աշխատել է Թուրքիայում, իսկ 1942 թվականից եղել Թուրքիայի լեզվաբանների միութիւնի գլխավոր փորձագետը: Տիրապետել է անգլերեն, թուրքերեն, ֆրանսերեն, հունարեն, իսպաներեն, իտալերեն, ռուսերեն, լեհերեն, բուլղարերեն եւ այլ լեզուների: 1936–1950 թթ. Անկարայի համալսարանում դասախոսել է «լեզվաբանութիւնի պատմութիւն» եւ «ընդհանուր լեզվաբանութիւն» առարկաները: Հեղինակ է թուրքական լեզվի տարբեր բնագավառներին վերաբերող մի շարք մենագրութիւնների, ինչպէս նաեւ հայագիտական աշխատութիւնների («Համայնապատկեր հայ մշակույթի» (1966), «1500-ամյակի խոհեր» (1951), «Աստվածաշունչը եւ աշխարհաբարը» (1956) եւ բազմաթիւ հողվածների: 1942–1970 թթ. եղել է թուրքական հանրագիտարանի տեխնիկական խորհրդատուն, ապա՝ գլխավոր խմբագիրը (տե՛ս «Ով ով է. Հայեր» հանրագիտարան, հտ. 2-րդ, գլխ. խմբ.՝ Հ. Ազգվազնյան, Երեւան, 2007): Մահացել է 1979 թ. սեպտեմբերի 12-ին Կ. Պոլսում:

Պահպանվել է հետաքրքրաշարժ մի պատմութիւն՝ կապված Անդրանիկի, Հակոբ Մարթայանի եւ Աթաթուրքի հետ, որին կարող եք ծանոթանալ հետեւյալ հղումով <https://azg.am/news/թուրքերեն-այբուբենի-հեղիակը-հակոբ-մա/> (ստ. 30.04.2024 թ.) (ծնթ.՝ թրգմ.):

այսօր չի կարող կարգալ իրենց նախնիներից պահպանված օրագրերը, ուր մնաց՝ թուրքական արխիվներում պահվող պատմական գրառումների ընթերցումը: Աթաթուրքն ինքն է մի քանի անգամ ընդունել ու դատապարտել հետպատերազմյան վաղ տարիներին կազմակերպված հայերի սպանությունները, իսկ Անկարայում կենտրոնացած նրա ազգայնական շարժումը նույնիսկ համաձայնել է, որ պատասխանատվությունն անհրաժեշտություն է: Զավթիչ դաշնակիցների հորդորներով 1919 թ. Հայոց ցեղասպանության պատասխանատուների դեմ տեղի ունեցան մի շարք անհաջող դատավարություններ, որոնց ընթացքում ներկայացվեցին փաստացի կարեւոր ապացույցներ: Սակայն հանրապետության հիմնադրումից հետո որդեգրվեց ժխտողական մոտեցումը: Օսմանյան զինյալ ուժերի գործողությունները մեկնաբանվեցին որպես կայսրության համարձակ պաշտպանություն արեւմտյան ու ռուսական նկրտումներից եւ քրիստոնեության ոտնձգություններից: Հանրապետության հիմնադիրներից ոմանք ներգրավված են եղել Հայոց ցեղասպանության [կազմակերպման] գործընթացներում. նրանք փառաբանվեցին իբրեւ [պետության] հերոսական հիմնադիր հայրեր, իսկ նրանց ռճրագործություններն անհետացան պաշտոնապես ընդունված պատմությունից:

Միաժամանակ, հայերը ցարքուցրիվ եղան աշխարհածավալ Սփյուռքում, մեծաթիվ համայնքներ հաստատվեցին Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Եւրոպայում եւ Ռուսաստանում (հայկական մի փոքրիկ համայնք պահպանվել է նաեւ Թուրքիայում, եւ այժմ դրա անդամների թիվը հասնում է 80 000-ի, որոնք հիմնականում բնակվում են Ստամբուլում): Ցեղասպանության շղացնցումը դարձավ Սփյուռքի ինքնության որոշիչ տարր, ինչպես եւ հրեաների պարագայում՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, որը կարծրացավ թուրքերի շարունակական ժխտողականության հետեւանքով: Անարդարության զգացում ունենալով՝ որոշ հայեր [հարցի լուծման] նախաձեռնությունը վերցրին իրենց ձեռքը: 1921 թ. [Հայոց ցեղասպանությունը] վերապրած Սողոմոն Թեհլերյանը Բեռլինի փողոցներից մեկում սպանեց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ Թալեաթ փաշային: Տասնամյակներ անց՝ 1980-ական թվականների սկզբներին, հայկական ծայրահեղական խմբավորումը սպանեց 31 թուրք դիվանագետի՝ թուրքերի ու հայերի միջեւ ստեղծելով տարածայնությունների հավելյալ եւ խիստ շղացնցող մի կետ:

Այնուամենայնիվ, 1980-ական թվականներից սկսած՝ հայկական խմբավորումները նույնպես դիմեցին դիվանագիտությունը՝ տարաբնույթ ճնշումներ գործադրելով ազգային կառավարությունների վրա, որպեսզի վերջիններս ընդունեն հիշատակի բանաձևեր, որոնցում դարասկզբի սպանությունները որակվում են որպես ցեղասպանություն: Թուրքիան սույն գործընթացներին հակազդեց պատժամիջոցների սպառնալիքով՝ ներառյալ ռազմահենակետերի փակմամբ. հաշվի առնելով Անկարայի՝ որպես Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության դաշնակցի կարեւորությունը՝ դա, ընդհանուր առմամբ, բավարար էր քաղաքական գործողությունների կանխարգելման համար (դեռեւս ոչ վաղ անցյալում՝ 2000 թ., թուրքական ճնշման պատճառով խափանվեց Ամերիկայի Միացյալ Նահանգների Կոնգրեսի՝ նմանատիպ հայտարարություն ընդունելու նախաձեռնությունը): Այդուհանդերձ, մեկ տասնյակ երկրներ, այդ թվում՝ Ֆրանսիան, Կանադան, Իտալիան, Շվեյցարիան, իսկ բոլորովին վերջերս՝ նաեւ Գերմանիան, ընդունել են ցեղասպանությունը ճանաչող բանաձևեր՝ որոշ դեպքերում հորդորելով Թուրքիային անել նույնը:

Լրացուցիչ դժվարություններ ստեղծվեցին այն ժամանակ, երբ Հայաստանի նախկին խորհրդային հանրապետությունը 1991 թ. ձեռք բերեց անկախություն: Այդ նույն թվականին, մեծավ մասամբ հայերով բնակեցված Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական անկլավն իրեն միացնելու նպատակով, Հայաստանը կռվեց եւ հաղթանակ տարավ Ադրբեջանի հետ պատերազմում: Թուրքիան անցավ մահմեդական Ադրբեջանի կողմը եւ փակեց իր՝ Հայաստանի հետ ունեցած սահմանը: Սահմանը դեռեւս դժվարանցանելի է, շարունակվում է հայ-թուրքական հարաբերությունների սառնությունը, իսկ Թուրքիայի ու Հայաստանի միջեւ առկա շփումները սահմանափակ են:

«G-WORD» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Ցեղասպանություն» եզրույթը 1944 թ. սահմանել է Ռաֆայել Լեմկինը՝ Լեհաստանում ծնված մի հրեա, որը հայրենի երկրի [համալսարաններից մեկի] իրավաբանության բաժնում ուսանելու տարիներին, ընթերցելով Բեռլինում Թալեաթ փաշային սպանած անձի դատավարության մասին, ապշահար էր եղել հարակարծությամբ: Համաձայն որոշ վկայությունների՝ Ռ. Լեմկինն այդ ժամանակ հարցրել է հետեւյալը. «Թե՛հիրյանի

համար մարդասպանությունը հանցանք է, բայց մի՞թե ոճրագործություն չէ իր կեղեքչի համար ավելի քան մեկ ու կես միլիոն մարդու սպանությունը»¹⁰: Թեև եզրույթն ինքնին գոյություն չի ունեցել 1915 թ., որակավորված բազմաթիվ պատմաբաններ համակարծիք են այն հարցում, որ 1915–1920 թթ. իրադարձությունները ցեղասպանություն էին: Անցումային արդարադատության միջազգային կենտրոնը, որը Նյու Յորքում տեղակայված մարդու իրավունքների պաշտպանության՝ ոչ կառավարական կազմակերպություն է, 2003 թ. պատվիրեց իրավական եզրակացություն, համաձայն որի բովանդակության՝ հայերի սպանող լիովին համապատասխան է [ցեղասպանություն] եզրույթի՝ ընդունված իրավաբանական սահմանմանը¹¹: Ինչպես սահմանված է Միավորված ազգերի կազմակեր-

¹⁰ Սույն դեպքի առնչությամբ Ռ. Լեմկինը նաև հարց է ուղղել իր պրոֆեսորին՝ Յուլիոս Մակարեւիչին. ինչո՞ւ Քալեասթ փաշան չէր կարող իր հանցագործությունների համար դատվել գերմանական դատարանում: Ազգային-պահպանողական Մակարեւիչը պատասխանել է, որ պետական ինքնիշխանության՝ հիմնարար սկզբունքների համակարգն իրավունք է տալիս կառավարություններին ներքին գործերը վարել այնպես, ինչպես իրենց է հարմար, եւ հավելել է. «Հավերի երամ ունեցող ագարակատիրոջ դեպքը հաշվի առեք, նա սպանում է նրանց, եւ դա իր գործն է. եթե դուք միջամտում եք, ապա անհանգստացնում եք նրան» (հմմտ. <http://www.genocide-museum.am/eng/Lemkin120.php>) ստ. 30.04.2024 թ.): Լեմկինը զայրանալով պատասխանել է. «Բայց հայերը հավ չեն», որից հետո վերջնականապես եզրակացրել է ինքնիշխանությունը չի կարող ընկալվել որպես միլիոնավոր անմեղ մարդկանց սպանելու իրավունք» (առավել մանրամասն տե՛ս D. IRVIN-ERICKSON, Raphael Lemkin and the Concept of Genocide, University of Pennsylvania Press, 2016, էջ 36–37, և St. Ihrig, Justifying Genocide: Germany and the Armenians from Bismarck to Hitler, Harvard University Press, 2016, էջ 371: Հմմտ. R. TAATOVYAN, Stefan Ihrig, Justifying Genocide: Germany and the Armenians from Bismarck to Hitler, Cambridge, 2016, “International Journal of Armenian Genocide Studies”, vol. 3, Issue 1, Yerevan, 2016, էջ 101) (ծնթ.՝ թրգմ.):

¹¹ Անցումային արդարադատության միջազգային կենտրոնը (անգլ.՝ “International Center for Transitional Justice”, հասպվում՝ “ICTJ”) սույն եզրակացությունը պատվիրել է Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի (անգլ.՝ “Turkish-Armenian Reconciliation Commission”, հասպվում՝ “TARC”) խնդրանքով, որը Թուրքիայում, Հայաստանում եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների հայկական սփյուռքում բնակվող ականավոր հայերից ու թուրքերից կազմավորված մի հանձնախումբ է. վերջինիս անդամներն ԱՄՆ Պետդեպարտամենտի աջակցությամբ 2001–2004 թթ. միջակայքում պարբերաբար հանդիպել են ԱՄՆ-ում, Եւրոպայում եւ Թուրքիայում՝ հայ-թուրքական համագործակցության հնարավոր ոլորտները քննարկելու համար: Այդ եզրահանգման (դրանում առկա են այն մտահանգումները, որ ցեղասպանության մասին 1948 թ. Համաձայնագիրը հետադարձաբար չի տարածվում Հայոց ցեղասպանության վրա, եւ այն չի կարող հիմք հանդիսանալ իրավական որեւէ պահանջի համար) պատվերը Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի հիմնական ձեռքբերումն էր: Այն միտումնավոր կերպով խուսանավեց պատմական բանավեճը որեւէ այլ կերպով հանգուցալուծելու մտադրությունից, իսկ այլ հարցերում մեծ ազդեցություն չունեցավ ոչ Թուրքիայում, ոչ էլ՝ Հայաստանում: Թուրքական կառավարության՝ Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գոյությունը հանդուրժելու պատրաստակամությունը, այնուամենայնիվ, բացահայտեց նրա ցեղասպանության հարցի առնչությամբ միջազգային կարծիքի նկատմամբ ունեցած զգաց-

պոլիտիկայի [համապատասխան] համաձայնագրում, «ցեղասպանություն» նշանակում է ազգային, ցեղային, ծագումնաբանական կամ կրոնական որեւէ խմբի ամբողջական կամ մասնակի ոչնչացման դիտավորություն: Այն չի ենթադրում մի ամբողջ ժողովրդի ոչնչացում, ոչ էլ նույնիսկ՝ սպանություն. գործածական լեզուն վերաբերում է հավաքական ինքնությունը ոչնչացնելու միտումնավոր փորձին¹²: Չնայած այն բանին, որ Հոլոքոստը ցեղասպանության ամենաբացահայտ տիրահոլակ օրինակն է, Կամբոջայում, Իրաքում, Բոսնիայում եւ Ռուանդայում մեկ դար տեւած ցեղասպանություններից կամ գրեթե ցեղասպանություններից հետո մենք, ցավոք, գիտակցում ենք, որ ոճրագործությունը կարող է տարաբնույթ դրսևորումներ ունենալ:

Այդուհանդերձ, Թուրքիան կտրականապես հերքում է այն իրողությունը, որ Օսմանյան կայսրության տարածքում կազմակերպված հայ բնակչության սպանող ժողովրդին ոչնչացնելու դիտավորյալ փորձ է եղել: Նա համառում է, որ հայերը պատերազմի ժամանակ փորձել են կործանել կայսրությունը, եւ իրենք են անթիվ-անհամար թուրքերի կոտորել, եւ որ օսմանյան իշխանությունները պարզապես ցանկացել են հայերին տեղահանել Ռուսաստանին սահմանամերձ ոչ բարենպաստ բնակավայրերից: Համաձայն թուրքական կողմի՝ որոշակի չափով հակասական տարբերակի՝ «քաղաքացիական սուլն պատերազմի» ընթացքում երկու կողմից էլ արձանագրվել են մահերի բազմաթիվ դեպքեր, եւ որ տեղահանություններն ուղեկցվել են [մարդկային] կյանքի նվազագույն կորուստներով:

Սույն տեսակետը, սակայն, չի սահմանափակվում միայն պետական պաշտոնյաների մոտեցմամբ: Տասնամյակներ տեւած լուծվյան,

մոնքայնությունը. Անկարան, հավանաբար, հույսեր էր փայփայում, որ վերոնշյալ հանձնախումբը պիտի կարողանար շեղել [միջազգային հանրության] ուշադրությունը հայկական սփյուռքի ցեղասպանության վերաբերյալ առաջադրած բանաձեւերից (ամերիկյան ատենապետության դիտանկյունից թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության առավել լավատեսական գնահատականի առնչությամբ տես DAVID L. PHILLIPS, *Silencing the Past: Track Two Diplomacy and Turkish-Armenian Reconciliation*, New York, 2005):

¹² Հայերի կոտորածներին համապատասխանում է նաեւ «մարդկության դեմ կատարված հանցագործություններ» սահմանումը, որը ներառում է կառավարական օժանդակությամբ կամ հանդուրժողականությամբ կազմակերպված տարատեսակ սպանություններ, խոշտանգումներ ու խտրական գործողություններ: Այդուհանդերձ, «ցեղասպանության» մեղադրանքն ամենավիճարկելին է՝ հավանաբար, այն պատճառով, որ որոշակի հիշողություններ է արթնացնում Հոլոքոստի մասին, որը դարձել է ծայրահեղ շարիքի չափանիշ, եւ որովհետեւ ցեղասպանությունը համարվում է միջազգային հանցագործություններից վատթարագույնը:

պատմական նյութերի սահմանափակ հասանելիության, ինչպես նաև վերջին շրջանում եռանդուն կերպով իրականացվող քարոզարշավների հետեւանքով թուրք հասարակության մեծամասնությունը համոզվել է պաշտոնական դիրքորոշման ճշմարտացիության մեջ: Կառավարության՝ հակադիր քարոզարշավը որպես թուրքական պատվի ու ազգային գոյության վրա օտարերկրյա թշնամիների հարձակում ներկայացնելու ունակությունը ժողովրդական լայն հնչեղություն է հաղորդել վերջինիս մեկնաբանությանը:

Մինչդեռ հայերի համար «ցեղասպանություն» բառը ձեռք է բերել գրեթե սրբազան նշանակություն: Հետեւաբար, «G-Word» եզրույթի կիրառության շուրջ ծավալված պայքարն այսօր սովորաբար որեւէ առնչություն չունի պատմական բանավեճի հետ, բայց ավելի շատ հիշեցնում է միմյանց փոխադարձաբար բացառող հավաքական ինքնությունների համար մղվող խորհրդանշական մի մրցապայքար, որը կարող է վերածվել քաղաքական գերազանցության: Սույն եզրույթի գործածման պատրաստակամությունը կամ պարտադրանքը շատերի համար դարձել է լակմուսի թուղթ, քանի որ հայերը հավատարիմ են այն տեսակետին, համաձայն որի՝ թուրքերը, նախքան հետագա քննարկման հնարավորությունը, պետք է բացահայտորեն ընդունեն այն իրողությունը, որ Օսմանյան կայսրությունն իրականացրել է ցեղասպանություն, մինչդեռ թուրքերն արժանահավատություն չեն ընծայում բոլոր նրանց, ովքեր օգտագործում են այդ եզրաբանությունը:

ԱՆՑՅԱԼԻ ԲԵՌԸ

Հակառակ Օսմանյան կայսրության՝ պատմական ժառանգությունը լռության մատնելու փորձերին՝ նորաստեղծ թուրքական հանրապետությունը ժառանգեց կայսրության ռազմական եւ բյուրոկրատական բռնապետության թիկնոցը: Արեւմտյան տերությունների հետ ունեցած հարաբերությունների ընթացքում Օսմանյան կայսրության կուտակած փորձառությունը թուրքիայի առաջնորդներին ներքին ու արտաքին «թշնամիների» հանդեպ համակել էր խելացնոր վախով: Թուրքիայի բազմազգ բնակչությունը դիտարկվում էր որպես այդ սպառնալիքների սադրիչ եւ միատարր թուրքական ինքնության ձեւավորման ճանապարհին առկա խոչընդոտ: Կառավարությունը, փաստորեն, հայտարարեց, որ գո-

յուրթյուն չունեն հասարակական ու ցեղային տարբեր խմբեր: Այսպես, օրինակ՝ անօրինական հայտարարվեցին քրդական ծագումնաբանական պատկանելության գոյություն մասին առկա պնդումները, կամ՝ դասակարգային պայքարի վերաբերյալ խոսակցությունները, ինչպես նաև՝ երկրում արգելվեց մահմեդական արժեհամակարգի վավերացումը: Չնայած ոչ մի օրենք հատուկ արգելք չէր սահմանում Հայոց ցեղասպանության վկայակոչման առնչությամբ, այդուհանդերձ՝ սույն արգելադրումը խիստ համատարած էր դարձել:

Տարիներ շարունակ թուրքական անվտանգության ուժերը կռվել են ձախակողմյան խմբավորումների, մահմեդական ֆունդամենտալիստների¹³, եւ քրդական անջատողական ուժերի դեմ: Յուրաքանչյուր դեպքում

¹³ Ֆունդամենտալիզմ (լատին․՝ «fundamentum»)՝ «հիմնադրում» բառից) եզրույթը ծայրահեղ պահպանողական կրոնական, փիլիսոփայական, բարոյական եւ հասարակական հոսանքների հավաքական անվանումն է: Այն հաճախ քաղաքական հակազդեցություն է արդի հասարակություններում տեղի ունեցող համընդհանրացման ու աշխարհականացման գործընթացներին: Ընդհանրապես, գիտնականները տարբերում են ֆունդամենտալիզմի երկու՝ կրոնական եւ ոչ կրոնական ուղղություններ: Կրոնական ֆունդամենտալիզմը միտում է, որ արտահայտում է կրոնական պահպանողական շրջանակների (ժթ.՝-Ի. դդ.) ժխտողական վերաբերմունքն աշխարհականացման նկատմամբ: Կրոնական ուղղությունում ընդգրկված են ֆունդամենտալիզմի՝ քրիստոնեական (բողոքական, կաթոլիկ եւ ուղղափառ), մահմեդական, հուդայական, հինդուիստական եւ այլ հոսանքներ: Չնայած սույն եզրաբանությունն ունի երկդարյա կիրառության պատմություն, իսլամական ֆունդամենտալիզմի երեւույթն ու դրան հատուկ ծայրահեղականությունը սկզբնավորվել է է. դարում՝ Խարիջիտների առաջացման ժամանակահատվածում, որոնք ծայրահեղական ուսումունք ստեղծելով՝ իրենց առանձնացրել էին մահմեդականության երկու հիմնական ճյուղերից՝ շիաներից եւ սուննիներից, ու ռամկավարական հասարակապետություն, կատարյալ ազատություն, եղբայրություն եւ հավասարություն էին պահանջում իրենց երկրի համար (հմմտ. Ե. ԹՈՓՉԵԱՆ, Իսլամ. իսլամի աղանդաւորները, «Տարազ», № 9, Թիֆլիս, 1899, էջ 220–224 եւ, հատկապես, էջ 222): Խարիջիտները հատուկ մոտեցում ունեին նաեւ թաքֆիրի (իսլամում անհավատության մեղադրանք) նկատմամբ. նրանք մյուս մահմեդականներին մեղադրում էին անհավատության (կաֆիր) մեջ եւ պնդում, թե նրանք արժանի են մահվան: Ավելի ուշ՝ հետագուղթային շրջանում նույնպես նկատվել է «իսլամական ֆունդամենտալիզմի» երեւույթը, որը հռչակում էր, թե մահմեդականները խստագույնս պետք է հետեւեն Ղուրանում եւ սրբազան մյուս գրքերում առկա պահանջներին, ինչպես նաեւ պետք է «ազատագրեն մահմեդական հողերը գաղութարարներից» (հմմտ. A. GOLDSCHMIDT JR., A Concise History of the Middle East, Boulder, 1988, էջ 231, ինչպես նաեւ՝ «The Muslim Almanac: A Reference Work on the History, Faith, Culture, and Peoples of Islam», ed. by A. A. Nanji, Detroit - New York, 1996, էջ 123 եւ այլն): Իսկ Ջ. Հսպոզիտոն իր «Իսլամական սպառնալիք. առասպել, թե՛ իրականություն» գրքում սույնի առնչությամբ նշում է, որ «Մահմեդական պետության թուլությունն ու ենթակա դիրքը հետեւանք են մահմեդականների անաստվածության, որոնք շեղվել են Աստծու նախանշած ուղուց եւ նախընտրել աշխարհիկ, նյութական գաղափարախոսություններն ու Արեւմուտքի կամ Արեւելքի արժեքները՝ կապիտալիզմը կամ մարքսիզմը» (տես J. L. ESPOSITO, The Islamic Threat: Myth or Reality?, New York, 1992, էջ 165): Իսլամական ֆունդամենտալիզմի տեսությունն ու գործնա-

հակամարտությունը, վերջիվերջո, հանգեցնում էր արգելադրման չեղարկմանը: Այսօր կառավարությունը գլխավորում է ծայրահեղ հոսանքների չհարած Իսլամական կուսակցությունը, քրդերը կարող են իրենց սեփական մշակութային գործունեությունը ծավալել, իսկ ձախ կուսակցությունները նպաստում են քաղաքական բնույթի բանավեճերին: Մնացել է միայն Հայոց ցեղասպանության հանդեպ արգելադրումը:

Արգելադրման շարունակական բնույթի առնչությամբ առկա են մի շարք պատճառներ, որոնցից մի քանիսը կարող է վերագրվել թուրք հասարակության պատմականորեն ձեռավորված հոգեբանությանը¹⁴: Թուրքերի մեծամասնությունը ցեղասպանության մեղադրանքները դիտարկում է որպես քրիստոնյա Արեւմուտքի թուրքերին՝ իբրև բարբարոսների նսեմացնելու պատմական դիտավորության շարունակություն: Թուրքերի (եւ մահմեդականների) նկատմամբ քամահրական սուլյն վերաբերմունքը ձեռավորվել է Վերածննդի դարաշրջանում եւ շարունակվել նաեւ Առաջին աշխարհամարտի ընթացքում, երբ Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Լլոյդ Ջորջը օսմանյան թուրքերին բնութագրեց որպես «մարդկության վրա [գոյացած] քաղցկեղ՝ մի վերք՝ ներթափանցած երկրագնդի մարմին, որն այն վատ է կառավարել»¹⁵: Օսմանյան թուրքերը, իսկ ավելի ուշ՝ նաեւ Աթաթուրքը, շատ լուրջ վերաբերվեցին սուլյն կարծիքին եւ տոգորվեցին վճռականությամբ՝ դրա դեմ պայքարելու համար: Սակայն թուրքերը դեռեւս համոզված են, որ իրենց սխալ են հասկացել ու ճիշտ ձեռով չեն ներկայացրել, եւ հավատացած են, որ Արեւմուտքի բնակիչներն արհամարհում են իրենց: Հետեւաբար, նրանք հերքում են ցեղասպանության մեղադրանքը՝ որպես Թուրքիային նացիստական Գերմանիայի հետ հավասարեցնելու զրպարտական մի փորձ:

կան կիրառությունը տարբերվում են իրենց բազմազանությամբ: Մի շարք երկրներում ֆունդամենտալիստական շարժումը ներկայանում է որպես ընդդիմություն, որը պայքարում է աշխարհիկ կամ ավանդական պետական կառույցների դեմ, իրենց նպատակին հասնելու համար՝ ֆունդամենտալիստական առանձին խմբավորումներ դիմում են նաեւ ահաբեկչական մեթոդների (տես Լ. CAPLAN, *Studies in Religious Fundamentalism*, London, 1987, Լ. DAVIDSON, *Islamic Fundamentalism*, Greenwood, 2003) (ծնթ.՝ թրգմ.):

¹⁴ Թուրքական ժխտողականության նախապատմության ու համատեքստի առավել մանրակրկիտ քննարկման առնչությամբ տես Կ. AKCAM, *From Empire to Republic: Turkish Nationalism and the Armenian Genocide*, London, 2004:

¹⁵ Տես DOĞAN AVCIOĞLU, *Milli Kurtuluş Tarihi 1838'den 1995'e*, vol. I, Istanbul, 1981, էջ 35–36: Հմմտ. Կ. AKCAM, նշ. աշխ., 2004, էջ 72, ինչպես նաեւ Ա. BELLAMY, *Massacres & Morality: Mass Atrocities in an Age of Civilian Immunity*, Oxford University Press, 2012, էջ 67 (ծնթ.՝ թրգմ.):

Դրանից զատ՝ հայերը մշտապես ընկալվում են իբրև թուրքական պատմության ամենացավալի իրադարձությունների՝ կայսրության կազմաքանդման եւ դրա տարածքների մեծամասնության կորստի խորհրդանշական հիշեցում: Օսմանյան կայսրության գոյության վերջին հարյուրամյակում տիրապետում էր եւրոպական տերությունների ձեռամբ ոչնչացվելու ու մասնատվելու մշտական վախը: Բնաջնջված լինելու սույն ահը խոր արմատներ է ձգում՝ արթնացնելով հիշողություններ, որոնք թուրքերը նախընտրում են մոռանալ: Այլաբանորեն ասած՝ Թուրքիայի Հանրապետությունը պատկերացնում է իրեն որպես կործանված Օսմանյան կայսրության մոխիրներից հառնող փյունիկ, իսկ հայերն այդ մոխրակույտի հիշեցումն են: Թուրքական մշակույթը շատ հաճախ հակվածություն է դրսևորում նաև Անատոլիայի ժողովրդական մահմեդականության մեջ¹⁶ արմատավորված ճակատագրապաշտության հանդեպ:

Առավել կարեւոր է այն, որ Հայոց ցեղասպանության պաշտոնական տարբերակը կասկածի տակ առնելու հանգամանքը լի է պաշտոնապես ընդունված պատմական բազմատեսակ բոլոր ժողովածուները հանգամանալից ուսումնասիրության առարկա դարձնելու վտանգով: Քանի որ հանրապետությունը կազմավորվել է անցյալի՝ միտումնավոր խեղաթյուրված տարբերակի հիման վրա, սա կնշանակեր կասկածի տակ դնել ժամանակակից Թուրքիայի բուն հիմքերը: Պարզապես ընդունումը, որ հանրապետության որոշ հիմնադիրներ, որոնք ցայժմ փառաբանվում են իբրև հերոսներ, ներգրավված են եղել ցեղասպանության կազմակերպման գործընթացներում, կարող է սպառնալ պետության օրինականության

¹⁶ «Ժողովրդական մահմեդականություն» համապարփակ եզրույթը վերաբերում է մահմեդական հավատալիքներին եւ փորձառություններին, որոնք տարբերվում են առավել ուղղափառ իսլամի դավանանքից ու կրոնական փորձագործությունից: Ժողովրդական իսլամը, ի տարբերություն ուղղափառ կամ «բարձր» իսլամի (տե՛ս «Ernest Gellner & Contemporary Social Thought», ed. by S. Malešević & M. Haugaard, Cambridge University Press, 2007, էջ 189), նկարագրվել է որպես «քաղաքային աղքատների, գյուղացիների եւ ցեղերի իսլամ» («Major World Religions: From Their Origins To The Present», ed. by L. Ridgeon, London-New-York, 2003, էջ 280): Տարբեր սովորույթներ եւ հավատալիքներ նույնպես նույնացվել են «ժողովրդական իսլամ» հասկացության հետ: Դրանք ներառում են՝ մոգության ավանդական համակարգերի եւ հիպոմալիական ծեսերի նկատմամբ հավատ (տե՛ս G. MAKRIK, Islam in the Middle East: A Living Tradition, Oxford, 2006, էջ 49), սրբավայրերի պցելություն եւ հուռույթների կիրառություն (տե՛ս «Ideology and power in the Middle East: studies in honor of George Lenczowski», ed. by P. Chelkowski & R. Pranger, London, 1988, էջ 286), ինչպես նաև՝ սրբերի կամ ջինների պաշտամունք (տե՛ս R. HINDE, Why Gods Persist: A Scientific Approach to Religion, Routledge, 2009, էջ 99), ու ոգեպաշտական համոզմունքներ (տե՛ս I. KHAN, Islam in Modern Asia, New Delhi, 2006, էջ 281) (ծնթ. թրգմ.):

նր՝ ճիշտ այնպես, ինչպես, օրինակ, այն գիտակցությունը, որ Ամերիկայի հիմնադիրները եղել են ստրկատերեր, եւ որ մեծարված պատմական գործիչները վավերացրել են տեղաբնիկ ամերիկացիների ցեղասպանության իրագործման ծրագիրը. ահա սույն իրողություններն անխուսափելիորեն մարտահրավեր են նետում մեր՝ սեփական ազգային ինքնության մասին ունեցած պատկերացումներին: Թուրքիայի պես՝ ինքնաբնականապես անսովոր պետության համար վերոնշյալը կարող է լուրջ անհանգստության պատճառ լինել:

Բազմաթիվ թուրքեր պատմական անարդարությունն առնչվող քննարկումը դիտարկում են իբրեւ Պանդորայի արկղ: «Ուրտեղ է դա վերջանալու», – հարցնում են նրանք: Վերջիվերջո, հայերը միակ տուժած խումբը չեն. Օսմանյան Թուրքիայում զանգվածային բռնությունների պատմությունը երկար է, եւ ժամանակակից Թուրքիան նույնպես ունի իր մոլթ կետերը: Հայերին առնչվող հիմնահարցերի վերաբերյալ պատմական՝ ավելի ազատ քննարկումները կարող են հանգեցնել ո՛չ միայն կայսրության մյուս՝ ոչ մահմեդական ազգաբնակչության, այլ նաեւ՝ հանրապետության տարածքում բնակվող քրդերի, հույների եւ լեւելիտների¹⁷ հանդեպ գործադրված բռնաճնշումների՝ առավել լայն վերանայմանը, որը կարող է ֆաշիստ ազգայնականների եւ ձախակողմյան խմբավորումների միջեւ վերջերս տեղի ունեցած բախումներին, անհետացումներին, մահապարտ ջոկատներին եւ խոշտանգումներին վերաբերող բանավեճերի պատճառ դառնալ: Բռնապետական սկզբունքներով ձեւավորված հասարակության համար նմանատիպ համընդգրկուն բանակոծիչը ըստ հնարավորին ապակայունացնող հետեւանքների առնչությամբ մտավախություններ է առաջացնում: Շարունակական արգելադրման առավել իրական պատճառը, որի մասին ամեն առիթով բարձրաձայնում են թուրք քաղաքական առաջնորդները, հիրավի այն վախն է, որ ցեղասպանության ճանաչումը կհանգեցնի հայկական տարածքային պահանջներին ու մեկ դար առաջ բռնագրավված սեփականությունը վերադարձնելու [կամ այն փոխհատուցելու] կոչերին:

¹⁷ Մահմեդականության ներսում ձեւավորված կրոնամշակութային մի համայնք, որի ներկայացուցիչները հայտնի են նաեւ «ալավիտներ», «ալաուիներ», «ալիականներ» եւ այլ անուններով (սուլնի առնչությամբ առավել մանրամասն տես Մ. ՍԻՔՍ-ՀՈՂԵՆԲԱՒԵՆՆ, Եզդիների 72-րդ Ֆիրմանը. «Քողարկված ցեղասպանություն»՝ կազմակերպված Առաջին աշխարհամարտի ընթացքում, մաս Բ., «էջմիածին», Ե., 2023, էջ 87–88, ծնթ. 14-րդ) (ծնթ.՝ թրգմ.):

Այդուհանդերձ, վերջին տարիներին թուրքական հասարակությունը բուռն փոփոխություններ է կրել: Սառը պատերազմի ավարտն ավելի նվազեցրեց Արեւմուտքի՝ թուրքական իշխանավարությունը¹⁸ խրախուսելու պատրաստակամությունը, իսկ Թուրքիայի՝ Եւրոպական Միությանն անդամագրվելու ցանկությունը նպաստեց առավել ժողովրդավարական մշակույթի նկատմամբ նոր՝ անկեղծ վերաբերմունքի ձեւավորմանը: Սույն փոփոխություններն իրենց հերթին հանգեցրին քաղաքացիական գործունյա հասարակության՝ ներառյալ գործարարական միությունների ու հիմնադրամների, տեղեկատվական մամուլի, արհեստակցական միությունների եւ մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպությունների առաջընթացին: Այս տեսակետից՝ Թուրքիան արդեն տիպիկ եւրոպական պետության է նմանվում:

Մինչ վերջերս Թուրքիայում մտագարական գործընթացի պատճառով, որը նաեւ նկատելի է եղել արեւելաեւրոպական համայնավարության գոյության վերջին շրջափուլում, պետությունն ու հասարակությունն ավելի ու ավելի շատ էին հեռանում միմյանցից: Որպես գոյատեւման ռազմավարություն՝ քաղաքացիները հրապարակայնորեն ընդունեցին թուրքական պատմության պաշտոնական տարբերակը, սակայն գաղտնաբար ավելի շատ էին վիճարկում այն: Իսկ ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանությանը, ապա Թուրքիայի տարածաշրջանային ու ցեղային ենթախմբերը մեզ են փոխանցել բանավոր պատմություններ, որոնք էականորեն տար-

¹⁸ «Ավտորիտարիզմ» կամ «իշխանավարություն» եզրույթն առաջացել է լատիներեն «auctoritas», այսինքն՝ «ընդհանուր իշխանություն», «ազդեցություն» բառից եւ նշանակում է «իշխանությանը կուրորեն հնազանդվող», «բռնապետական» (տե՛ս Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Օտար բառերի բառարան, Երեւան, 2011, էջ 64. այսուհետ՝ Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, նշ. աշխ., 2011): Սույն եզրույթով բնութագրում են քաղաքական մի համակարգ, որին բնորոշ է իշխանության կենտրոնացումը մեկ մարդու կամ պետական որեւէ մարմնի (սովորաբար՝ գործադիրի) ձեռքում (հմմտ. Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Գ. ԳԵՂԱՄՅԱՆ, Նորագույն պատմություն, Երեւան, 2001, էջ 155): Ընտրությունների համակարգը սահմանափակ է, մարդիկ օտարված են իշխանությունից: Կրոմլին արգելված կամ սահմանափակված է օրինական ընդդիմությունը, քաղաքական բնագավառում բացակայում է մրցակցությունը: Իշխանավարության դրսեւորման ձեւերն են բացարձակ միապետությունը, բռնապետությունը, ամբողջատիրության տարատեսակները, ինչպես նաեւ թեոկրատական իշխանությունը եւ այլն (սույնի առնչությամբ առավել մանրամասն տե՛ս B. LAI & D. SLATER, Institutions of the Offensive: Domestic Sources of Dispute Initiation in Authoritarian Regimes, 1950–1992, “American Journal of Political Science”, vol. 50, № 1, 2006, էջ 113–126, եւ N. M. EZROW & E. FRANTZ, Dictators and Dictatorships: Understanding Authoritarian Regimes and Their Leaders, London-New-York, 2011, էջ 17, ինչպես նաեւ F. CERUTTI, Conceptualizing Politics: An Introduction to Political Philosophy, Routledge, 2017, էջ 17) (ծնթ.՝ թրգմ.):

բերվում են կառավարության որդեգրած դիրքորոշումից. Այսպիսով՝ Անատոլիայի բնակիչներն անձնապես ու բացահայտորեն սկսում են խոսել իրենց նախկին հայ հարեւանների եւ նրանց ճակատագրի մասին: Ներկայիս՝ առավել հանգիստ մթնոլորտում սկսվում է պատմության՝ պաշտոնական ու մասնավոր համագոյակցված տարբերակների հակադրությունը միմյանց: Սույն գործընթացը, որը թուրք գիտնականներն անվանել են Հայոց ցեղասպանությունը պարուրող «լուծյան վարագույր», ավելի թափանցիկ է դարձել, իսկ ցեղասպանության քննարկումը՝ հնարավոր:

Այդուհանդերձ, թուրքական կառավարությունը ցանկանում է հասնել նրան, որ հայերի սպանությունների առնչությամբ իր որդեգրած դիրքորոշումը դառնա գերիշխող տեսակետ: Ի պատասխան Հայոց ցեղասպանության ճանաչման եւ ներքին հետաքննություն սկսելու առնչությամբ արտաքին աշխարհից ներկայացված պահանջների՝ պաշտոնական լուծյունն իր տեղը զիջեց բացահայտ ժխտողականությանը: Եթե նախկինում դպրոցներին չէր տրամադրվում հայերի վերաբերյալ որեւէ տեղեկություն, ապա 2002 թ. [Թուրքիայի] Կրթության նախարարությունը նախապատրաստական դասարանների համար վավերացրեց ուսումնական մի ծրագիր, որտեղ ջերմեռանդորեն ժխտվում է ցեղասպանությունը եւ Հայոց պահանջատիրությունը բնութագրվում է որպես «անհիմն» հավակնություն, ինչպես նաեւ՝ ընդգծվում են հայերի անջատողականություն¹⁹ ու Օսմանյան կայսրության հովանու ներքո ապրած թուրքերի սպանդի կազմակերպման հանգամանքները: 2023 թ. հատուկ հրահանգով խրախուսվում էր ուսանողների մասնակցությունը «Առաջին աշխարհամարտի ժամանակ հայկական ապստամբությունը» թեմայով կազմակերպված փորձագրությունների մրցույթներին: Ուսուցիչներից պահանջվում էր հաճախել «Պայքար ընդդեմ ցեղասպանություն անհիմն պահանջների» խորագրով դասընթացներին:

¹⁹ «Անջատողականություն» կամ «սեպարատիզմ» եզրույթը ծագել է լատիներեն «separatus», այսինքն՝ «առանձին, գատ, անջատված» բառից (հմտ. Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, նշ. աշխ., 2011, էջ 504): Այն ինչ-որ գաղափարախոսության վրա հիմնված քաղաքական եւ այլաբնույթ շարժումների առանձնահատուկ մի տեսակ է, որը պայմանավորված է մշակութային, ծագումնաբանական, ցեղային, կրոնական, ռասայական, կառավարական ու այլ գործոններով եւ հիմնականում տեղի է ունենում քաղաքացիական հուզումների ժամանակ արտահայտելով երկրի ներսում գտնվող ինչ-որ շրջանի կամ ժողովրդի անջատվելու, մեկուսանալու ձգտումը: Քաղաքագետների մեծամասնությունն անջատողականությունը դիտարկում է որպես ինքնորոշման ծայրահեղ ու արմատական մի ձև (տե՛ս “Secessionism and Separatism in Europe and Asia: To Have a State of One’s Own”, ed. by J.–P. Cabestan & A. Pavković, Routledge, 2013, ինչպես նաեւ՝ D. KINGSBURY, Separatism and the State, London, 2021) (ծնթ.՝ թրգմ.):

Դրանցից մեկի ընթացքում, երբ մի ուսուցիչ կասկածի տակ դրեց սույն ձեւակերպումը, դատապարտվեց կարճատեւ ազատազրկման ու ժամանակավորապես հեռացվեց աշխատանքից: Այս ամենը տեղի ունեցավ, չնայած որ Անկարան բազմիցս խոստացել էր իր դասագրքերում տեղ գտած կանխակալ կարծիքները վերացնելու նպատակով՝ Եւրոպական Միության կարգավորումների համաձայն վերանայել դրանք:

Հայոց ցեղասպանության հիշատակությունն ավանդաբար չբեականացվեց. արգելադրումն ավելի շատ հոգեբանական բնույթի էր, քան իրավաբանական, որը հարկադրվել էր սոցիալական ճնշումների հետեւանքով, սակայն այս հարցում եւս կառավարությունը, թվում է, հրաժարվում է ինչ-որ բան փոփոխելուց: 2004 թ. Եւրոպական Միությունը քննադատեց Թուրքիայի՝ խմբագրված քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածը, որն արգելում էր «ազգային հիմնարար շահերին հակասող գործողությունները», որոնց միջոցով որեւէ անհատ «ուղղակիորեն կամ անուղղակիորեն օգուտ է քաղում օտարերկրյա անձանցից կամ կազմակերպություններից»: Օրենքի պաշտոնական բացատրության մեջ լուսաբանված որոշումների շարքում ընդգրկված էր նաեւ մի դրույթ, համաձայն որի՝ արգելվում էր «մամուլի կամ հրապարակումների միջոցով իրականացնել լայնածավալ քարոզչություն, որը կպնդեր, թե հայերը ցեղասպանության զոհ են դարձել»: Ներպետական եւ միջազգային ծանր քննադատություններից հետո այդ հատվածը հեռացվել է օրենքի հրապարակված տարբերակից: Այսպիսով՝ դեռեւս հստակ չէ, թե ինչպես է կիրառվելու սույն օրենքը նմանատիպ դեպքերում, չնայած որ այն, անկասկած, զսպող ազդեցություն է ունենալու: Սույն օրենսգրքի մեկ այլ՝ ազգամիջյան ատելություն (հանցագործություն՝ ներառված եւրոպական բազմաթիվ քրեական օրենսգրքերում) հրահրումն արգելող հատվածի հիմամբ պաշտոնական առաջին մեղադրանքը ներկայացվել է Անկարայի փաստաբաններից մեկին՝ Օսմանյան կայսրությունում կազմակերպված «հայերի կոտորածները» բացահայտորեն դատապարտելու համար: Նախկինում սույն դրույթը գործադրվել է, հիմնականում, այլախոհների դեմ, որոնք վկայակոչում էին Թուրքիայի «բազմամշակութայնության» հանգամանքը: Ամենահատկանշական իրողությունն այն է, որ Թուրքիայի ականավոր վիպասան Օրհան Փամուքին, որի ստեղծագործություններում մեծարվում է օսմանյան հարուստ պատմությունը, մեղադրանք է ներկայացվել օրենսգրքի մեկ այլ՝ «թուրքական ինքնությունը հրապարակայնորեն նսեմացնելու» մասին

դրույթի հիմամբ. դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ նա 2005 թ. փետրվար ամսին շվեյցարական թերթերից մեկին տված հարցազրույցի ընթացքում բացահայտաբար դատապարտեց հայերի ու քրդերի սպանությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եւրոպական Միությանն անդամակցելու հարցն այժմ դրված է օրակարգում, իսկ ազգային խտրականությունն արգելված է մարդու իրավունքներին վերաբերող Եւրոպական օրենքներով՝ սույն դեպքերը կարելու փորձություն կլինեն Թուրքիայի դատական համակարգի համար:

Թուրքական կառավարությունը դրամական աջակցություն է ցույց տալիս եւ օժանդակում է նաեւ հայրենի «գիտնականներին»՝ պաշտոնական դիրքորոշմանը համապատասխան քարոզչություն իրագործելու համար: Պաշտոնական շրջանակից դուրս գիտական միտքը նա դիտարկում է իբրեւ կործանարար եւ պետությանը սպառնացող իրողություն: Ցեղասպանության կամ նույնիսկ Օսմանյան կայսրությունում ապրած հայերի մասին անաշառտ են գրող գիտնականներին պարբերաբար վերագրվում են հայերից դրամական օժանդակություն ստանալու մեղադրանքներ: Եւ ընդհակառակը, պաշտոնապես ընդունված պատմաբանների հեղինակած պատմական աշխատությունները, եթե նույնիսկ դրանք զուտ քարոզչություն են, գովազդվում են իբրեւ տեղեկատվության վավերական սկզբնաղբյուրներ:

Քանի որ թուրք գիտնականներն իրենք են սկսել մարտահրավեր նետել պաշտոնապես ընդունված պատմությանը, կառավարությունը որդեգրել է պաշտպանողական դիրքորոշում: Անցած ամռանը²⁰ թուրքական երեք առաջատար համալսարաններ համատեղ կազմակերպեցին Օսմանյան կայսրության սահմաններում բնակված հայերի վերաբերյալ մի գիտաժողով, որին պետք է մասնակցեին բացառապես թուրքական ծագմամբ գիտնականները, որոնք համաձայն չէին պաշտոնապես որդեգրված պատմական ընթացքին: Գիտական ժողովի մեկնարկից քիչ առաջ խորհրդարանական արտահերթ նիստում արդարադատության նախարարը մասնակիցներին մեղադրեց «ազգին մեջքից դաշունահարելու» մեջ, մինչդեռ իշխանական եւ ընդգիմադիր կուսակցությունների պատգամավորները դատապարտեցին նրանց՝ որպես «ժողովրդի դավաճանների»: Սույն գերլարված մթնոլորտում կազմակերպիչները, մտահոգվելով մասնակիցների անվտանգության համար, հետաձգեցին գիտաժողովը:

²⁰ Հավանաբար հեղինակը նկատի ունի 2005 թ. ամառը (ծնթ.՝ թրգմ.):

Հավելենք, որ խառնաշփոթ սույն միջադեպը խիստ քննադատության պատճառ դարձավ ոչ միայն արտասահմանում, այլ նաև անսովոր ծավալուն բանավեճ բորբոքեց երկրի ներսում: Նույնիսկ թերթերն ու մամուլի տեսաբանները, որոնք սովորաբար աջակցում էին Հայկական հարցի առնչությունները կառավարության որդեգրած դիրքորոշմանը, քննադատում էին նրա կեցվածքը՝ որպես խոսքի ազատության կոպիտ խախտում: Դեռավելին, խորհրդարանական այն պատգամավորներն ու պաշտոնյաները, որոնք դատապարտել էին գիտաժողովը, ըստ երեւույթին, հանդես չէին եկել ողջ կառավարության անունից՝ արտացոլելով Եւրոպական Միության անդամակցության՝ առավել մեծ հարցի առնչությամբ առկա ներքին տարաձայնությունը: Որոշվեց գիտաժողովը կազմակերպել աշնանը, իսկ բարձրաստիճան թուրք քաղաքական գործիչները, այդ թվում նաև՝ օրվա վարչապետ [Ռեջեփ] Թայիփ Էրդողանը, իրենց աջակցությունը հայտնեցին սույն նախաձեռնությանը:

«Ցեղասպանության մեղադրանքները» վիճարկող եռանդուն քարոզչության միջոցով ներքին լսարաններն արմատականացնելու քաղաքական արշավից զատ՝ թուրքական կառավարությունն իր գործունեությունն ուղղել է նաև դեպի արտաքին աշխարհ: 2005 թ. ապրիլին Թուրքիայի Ազգային ժողովը մի նամակով, որը ստորագրել էին թե՛ գործող վարչապետը եւ թե՛ ընդդիմության առաջնորդը, Մեծ Բրիտանիայից պահանջեց ներողություն խնդրել Թուրքիայից՝ ընդդեմ հայերի կազմակերպված թուրքական հանցագործությունների նկարագրությունները բովանդակող «կապույտ գրքի» համար, որն Առաջին աշխարհամարտի ընթացքում պատրաստվել էր բրիտանական կառավարության պատվերով: Այդուհանդերձ, շատ շանցած՝ ակնհայտ դարձավ, որ կապույտ գիրքը, թեև կազմվել էր քարոզչական նպատակներով, պարփակում էր ճշմարտության²¹ մի մեծ հատիկ:

Միեւնույն ժամանակ, Թուրքիայի կառավարությունը բոլորովին վերջերս Հայաստանի իշխանություններին առաջարկեց, որ Թուրքիան ու Հայաստանը ձեւավորեն պատմաբանների համատեղ հանձնաժողով՝ իրենց համընդհանուր անցյալը հանգամանորեն ուսումնասիրելու համար: Այնուամենայնիվ, հաշվի առնելով հատկապես Անկարայի՝ առավել ահագնա-

²¹ Առավել մանրամասն տե՛ս T. AKCAM, A Scandal: The Letter from the Turkish Parliament, or Where Are Sükrü Eledag and Justin McCarthy Leading This Country?, published in Turkish in Birikim, Istanbul, 2005, մայիս, էջ 89–105:

ցող հարձակողական կեցվածքը, եւ խնդրո առարկա հարցի առնչությամբ խստաշունչ հոետորաբանությունը՝ կասկածելի է, որ նրա նախատեսած հանձնախումբը կբավարարի պատմության անկեղծ վերագնահատման ջատագովների պահանջները: Սա, մասնավորապես, անհավանական է, եթե նկատի առնենք այն իրողությունը, որ կառավարությունն անցյալում արդեն սահմանափակել է գիտական հասանելիությունը սկզբնաղբյուրներին՝ հերքելով որոշակի փաստաթղթերի առկայությունը, կամ՝ օսմանյան արխիվներում աշխատելու թույլտվություն տրամադրելու հարցում մերժելով հետազոտողներին: Թեեւ, ըստ ոմանց տեղեկությունների, աշխատանքային պայմանները բարելավվում են, սակայն գիտնականները պատմում են նաեւ արխիվներից իրենց վտարելու կամ ծանոթատեստերը բռնագրավելու դեպքերի մասին: Արխիվի անձնակազմի անդամները հրաժարվել են ներկայացնել առանձնահատուկ փաստաթղթեր եւ հաճախակի անհանգստացրել ու հարցաքննել են գիտնականներին՝ պահանջելով բացատրել ինչու են նրանք որոնում նմանաբնույթ տեղեկություններ եւ ում համար են աշխատում:

Ընդհանուր առմամբ, թուրքական կառավարությունը կարծես թե ճշմարտության փնտրտուքը համարում է անարդյունավետ եւ նույնիսկ՝ վտանգավոր (մի թուրք պաշտոնյա հեղինակներից մեկին ասել է, որ Հայոց ցեղասպանության մասին խոսելը կարող է զայրացնել թուրք ազգաբնակչությանը եւ նրան տրամադրել ընդդեմ հայերի): Այդուհանդերձ, նա տարբերակում է պատմական փորձերն ու Հայաստան երկրի կամ հայկական Սփյուռքի ներկայացուցիչների հետ՝ առավելապես ապագային միտված «հաշտեցումը» միմյանցից: Հետեւաբար, Անկարան հանդուրժել կամ հավանություն է տվել Հայաստանի եւ սփյուռքահայերի հետ տնտեսական, կրթական ու մշակութային հարցերի շուրջ որոշակի համագործակցությանն ուղղված փորձերին՝ այնպիսի կազմակերպությունների միջոցով, ինչպիսիք են Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովն ու Թուրք-հայկական գործարարության զարգացման խորհուրդը: Հանդիպումներ են տեղի ունենում երկու երկրների մասնագիտական խմբերի միջեւ, իսկ որոշ դեպքերում հանդիպում են նաեւ նրանց արտաքին գործերի նախարարները՝ երկկողմ հարաբերությունները քննարկելու համար: Սակայն, ընդհանուր առմամբ, Թուրքիան Հայաստանի հետ իր հարաբերությունները հասցրել է նվազագույն մակարդակի:

Շարունակելի

Անգլերենից թարգմանեց եւ ծանոթագրեց
ՅՈՒՍԿ ՍՐԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ



ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԿՐՈՆԱՎՈՐԻ ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄԸ ՄՆՁՈՒՐՈՒ ՊԱՏՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Նայ գրականության ամենաուշագրավ ներկայացուցիչներից մեկը Հակոբ Մնձուրին (Հակոբ Տեմիրճյան, 1886–1978), ծնվել էր Արեւմտահայաստանի Երզնկա գավառի Արմտան գյուղում: Ի. դարասկզբին Թուրքիայում իրականացված պատմաքաղաքական վայրագությունների պատճառով դադարեց գոյություն ունենալ մի ամբողջ հայրենի եզերք ու խաղաղ աշխատավոր մի ժողովուրդ: Ճակատագրի բերումով Մնձուրին ողջ մնաց: Ողջ մնաց՝ ասելու ու խոսելու այդ ամենի մասին, շարունակելի դարձնելու համար նրանց կյանքը, եւ ստեղծեց մի գրականություն, որ բարձր գեղարվեստականություն պարունակելուց զատ՝ նաեւ վկայություն եղավ, վկայություն, որ այդ մարդիկ եղել են, վկայություն, որ այդ մարդիկ սիրել ու արարել են իրենց մայր հողի վրա, եւ որ նրանց հիշատակն անանց է: Խաղաղասեր այդ մարդկանց կյանքի մի հատվածն էլ կապված էր իրենց կրոնքի ու նրա սպասավորների հետ: Ընդամենը չորս էջից բաղկացած «Հուսիկ» պատմվածքում (անվան արմատը հույս, հենց պատկերվող հերոսի բուն էությունն է կազմում) գործողությունները ծավալվում են Հուսիկի մորաքրոջ «մեկեն ի մեկեն» վատանալու, մերձիմահ վիճակում հայտնվելու առնչությամբ: Մեռնելուց առաջ հիվանդին հաղորդություն տալու համար Տեր պապ գտնելու հույսով Հուսիկը դռնեդուռ է ընկնում՝ գյուղից գյուղ, տեղից տեղ:

Իրենց գյուղի քահանան ո՛չ տանն է, ո՛չ էլ եկեղեցում, գնացել է յայլաները՝ խոտհնձի: Վազքով հարեւան գյուղ հասած Հուսիկը երեցկնոջից

* Ստացվել է՝ 13.03.2024, գրախոսվել է՝ 20.03.2024: էլ. հասցե՝ armphilology@ysu.am:

տեղեկանում է, որ Տեր պապը գոմեշները գետում լողացնելու է տարել: Մի երրորդ գյուղի ճանապարհին արտերում աշխատող գյուղացիներից իմանում է, որ նրանց Տեր պապը հեռավոր արտում հերկ է անում:

Գտնելով կրոնավորին Հուսիկը պարտականությունը կատարած մարդու գոհունակությամբ վերադառնում է իրենց գյուղ, բայց նրան ասում են, որ իր մեկնելուց ընդամենը մի քանի ընթացք անց մորաքույրն արդեն մահացել էր: Հուսիկը, որ համոզված էր, թե եթե հիվանդի վրա Ավետարան կարդային, անպայման կապաքինվեր, իր հուսաթափության ու շարժարանքի զայրույթը թափում է կնոջ վրա. «...դուն չըսէիր, որ շարուխ կարէ, ես կանուխէն կերթայի տերպապը կբերէի»²՝ այդպես էլ «անտեսելով», որ մորքուրը «կանուխէն» չի վատացել, որ կինը «կանուխէն» իրեն «շարուխ» կարել չտար, եւ հիվանդանալու լուրն իրենց տվել են ոչ առավոտյան («Առտուն աղեկ էր»):

Թեեւ հոգեբանական առումով եւ մտածողությամբ գյուղացի Հուսիկի նման պահվածքը հետաքրքիր ու գրավիչ է, սակայն պատմվածքը բացահայտում է շատ կարեւոր մեկ այլ բան: Հուսիկի գյուղից գյուղ, հանդից հանդ որոնումները ցույց են տալիս, որ կրոնավորը ոչ մի բանով չի տարբերվում սովորական աշխատավոր գյուղացուց. նա հունձ է անում, գոմեշներ լողացնում, վար ու ցանքս կատարում. «Արտի մը մէջ, կտաւէ կապոյտ շալվարով, հին, սեւ ֆէսով ծեր մը, առաջը լուծք մը եզ, արօրին մաճը բռնած, կհերկէր» (Երկեր, էջ 20–21): Թվում է, թե գյուղի Տեր պապն այդ ամենից դուրս պիտի լիներ: Բայց նա ոչ միայն գյուղական կյանքի ամենօրյա աշխատավորն է, այլեւ իր հագուկապով հին ու մաշված հագուստներով, չի գանազանվում մյուսներից. նույն շարքաչ գյուղացին է, նույն հայ մարդը, որ, սակայն, Ավետարան կարդալ գիտե, հաղորդություն տալ գիտե, մարդկանց մխիթարել գիտե: Եւ ուրիշ ինչ հագուստ կարող էր ունենալ հոգեւորականը, երբ, ինչպես գրում է Մնձուրին «Մեր ժամը» պատմվածքում, «կալե կալ տունգլուխ երկու կոտ ցորեն» էր տրվում նրան, եւ ամեն արարողությունը ձրի էր. «Մեր ժամը աղոթելու տեղ մըն էր միայն, ոչ լումա կար, ոչ լումայափոխ: Իր հիմնադիրին Հիսուսի ուզած ժամն էր» (Երկեր, էջ 220): Դեռ ավելին. որոշ կրոնավորներ իրենց հագուստով ավելի «քրդերու սէյիտների» էին նման, քան հայի տերտերների. «Մեր

² Հ. ՄՆՁՈՒՐԻ, Երկեր, Երեւան, 1986, էջ 21 (այսուհետ այս գրքից կատարված մեջբերումների հղումները՝ շարադրանքում):

Տէր Պօղոսը Շաֆախի քուրդերուն էնթարին, հաստ սալթան կը հագնէր: Եթէ ժամը փրկոնը վրան չառնէր, կամ Սեպուհ լերան Առաջնորդը Աւագ վանքին Վարդան վարդապետը հին փակեղ մը տուեր էր իրեն եթէ երբեմն չդնէր, բիրը ձեռքը, գլխին սեւ թաղիքին շուրջի սեւ շէրպէթէովը... Տուժիկի քրդերուն սէյիտներէն կամ Ղարապուտախի ղզլպաշ գիւղերու տէտէներէն պիտի կարծէիք, հարիւր վկայ պէտք էր հայու տէրտէր ըլլալը հաստատելու համար»³:

Կրօնավորի ուրիշ ինչ նկարագիր տար Մնձուրին, որ ավելի գրավիչ լինէր քրիստոնյա նվիրյալ, հասարակ, անարատ ու հավատավոր ծառայի համար⁴:

Հուսիկի գյուղ ու դաշտ որոնումներին զուգընթաց, Մնձուրին պատկերում է գյուղական մի շարք տեսարաններ՝ ծխախոտի, եգիպտացորենի դաշտեր, հասուն ցորենի արտեր, ջրուտ ու ճահճուտ վայրեր, մօեղների բազմություններ, խոտ քաղողներ, հերկվորներ, հողաշեն տներ, ասել է՝ բնաշխարհը, գյուղն ու մարդիկ իրենց առօրյա գործերով ու կենցաղով միմյանց ձուլված ու միմյանց լրացնող:

Արեւմտահայ մարդու այդ կենցաղի մեջ էր մտնում նաեւ տարին մեկերկու անգամ կրկնվող ուխտագնացությունը: Նման մի ուխտագնացության մասին Մնձուրին գրում է «Հարսիկը» պատմվածքում. «Վարդավառը կը մոտենար...»: Երկար ճանապարհ անցնելուց հետո ուխտավորները բարձրանում էին Վարդավառի լեռը, որտեղ իրար էին ձուլված հայրենի բնության գեղեցկություններն ու հոգեւոր խորհրդի կառույցները. «Դեղջուրի ձորին վրայ...: Մէկ կողմն ալ Խորան-աղբիւրին պէս աղբիւր մը...» (Մենք, էջ 30–31): Սրբազան ու դրախտային մի վայր շրջապատված ծառերով ու կանգուն մատուռով, ներքեւից հոսող գետով:

Կրօնական այդ ուխտագնացությունները ոչ միայն տուրք էին պաշտված սրբերին ու եկեղեցական տոներին, այլեւ ժողովրդական տարերքի ու վայելքի դրսեւորումներ եւ ուղեկցվում էին մատաղներով ու աղոթքներով,

³ Յ. ՄՆՁՈՒՐԻ, Մենք, Անթիլիաս, 2018, էջ 223 (այսուհետ այս գրքից կատարված մեջբերումների հղումները կտրվեն շարագրանքում):

⁴ «Տեղեր ուր ես եղեր եմ» ինքնակենսագրական գրքում, խոսելով մահմեդական կրօնավորի մասին, Մնձուրին (ի տարբերություն հայ կրօնավորի) գրում է. «Մոլլա Մուսթաֆան ալ Հասանին պէս ղզլպաշ էր, երկուսն ալ Շահնիերացի էին, գրել կարգալ չէին գիտեր, ինքնիրենց մոլլայութեան տուեր էին» (տես Յ. ՄՆՁՈՒՐԻ, Տեղեր ուր ես եղեր եմ, Իսթանպուլ, 1984, էջ 164):

սեղանների շուրջ կատարվող երգերով ու պարերով, երբեմն էլ հեթանոսական խրախճանքներով, գոռում-գոչյուններով, հրացանաձգություններով, այն աստիճանի, որ, ինչպես գրում է Մնձուրին, հեռվից տեսնողները կարող էին կարծել, թե այդ մարդիկ «քրիստոնեականներ» չեն:

Մինչդեռ այդ մարդիկ իսկական քրիստոնյա ուխտավորներ էին, որ երկրպագում էին Աստծուն եւ պանծացնում կյանքը, ճիշտ այնպես, ինչպես որ պաշտում էին իրենց ընտանիքի անդամներին, ուրախանում ու ցնծում բնության գրկում բացված առատ սեղանի առջեւ, ինչպես որ հիանում ու հրճվում էին, երբ ներս էին մտնում սրբատան դռնից եւ կամ մանգաղը ձեռքներին կանգնում հասունացած ցորենի արտի առջեւ:

Մնձուրու վերաբերմունքը, իհարկե ինչ-որ չափով ինչպես կրոնական որոշ ծիսակատարությունների, հավատալիքների, այնպես էլ կրոնի նկատմամբ փրկիսոփայական առումով, երկակի է: Մի կողմից նա իր ողջ գրականության մեջ ցույց է տալիս քրիստոնեական հավատքի ու քրիստոնյա մարդու առավելությունները այլակրոնների համեմատությամբ, մյուս կողմից, ասենք, ինքը Մնձուրին, երբեք պաս չէր պահում, սիրում էր խաչակնքել, հաճախում էր եկեղեցի, բայց չէր ընդունում եկեղեցական որոշ գրականություն. «Յոբն ալ գիրք է որ պիտի կարդայի...»: Դրա փոխարեն գնահատում էր «Դանիելին գիրքը». «Եւ սրնգի, եւ տաւղի, եւ քնարի...» (Մենք, էջ 308–309): Այլ կերպ չէր էլ կարող լինել: ԶԸ՞ որ Մնձուրին իր ուղն ու ծուծով գլուղացի էր, բնության զավակ ու մասնիկ, եւ նրա աշխարհընկալումները հաճախ բխում ու կազմավորվում էին այդ բնության օրենքներով: Նա անգամ այն համոզումն ուներ, որ իրենց ամբողջության մեջ կրոններն ի վիճակի չեղան փոխելու մարդու միտքը եւ հենվեցին անդենականի եւ վախի վրա, ավելի խորացան աստվածաբանության մեջ, փոխանակ խորանալու մարդագիտության մեջ, եւ որ գրականությունն է, որ պիտի ստանձնի մարդու վերափոխման ծանր գործը: Սփյուռքահայ մտավորական, գրող, խմբագիր Ռոպեր Հատտեճյանին հասցեագրած մի գրության մեջ Մնձուրին իր այդ միտքը հետեւյալ ձևով է արտահայտում. «Մարդուն պատմութիւնը մեր մոլորակին վրայ, նախամարդէն մինչեւ այսօր, զիրար սպաննելու, պատերազմելու պատմութիւն մըն է: Իր միւս պատմութիւնները անկէ ետքը կուգան եւ անոր ենթակայ են: Քրիստոնեութիւնը այսօր ալ, երկու հազար տարիներէ վերջը մագաչափ մը անգամ չփոխեց մարդը, մարդը բնաջնջելու մեր բնագոյը» (Տեղեր, էջ 198): Այդուհանդերձ՝ Մնձուրին, որքան էլ մտածողությամբ նախապատվությունը

տար գրականությունը, իր էությունամբ նույն հայ գյուղացի մարդն էր, նույն հավատքի կրողը եւ կյանքի նույն պայմաններում ապրողը: Մի կողմից՝ նա կարող էր իր «Սուրբ Գեորգ» պատմվածքում կերտած հերոսին Շիրինին, Սուրբ Գեորգի հասցեին հանդիմանանքի խոսքեր ասել տալ, որ նա տեսնում է իր ողբերգությունը եւ չի օգնում, մյուս կողմից՝ այդ նույն Շիրինի միակ հույսն ու ապավենը նորից սրբի հետ կապել:

Մնձուրին իր մի շարք պատմվածքներում ցույց է տալիս, որ գյուղական կյանքի ահագին հատվածը կապված է եկեղեցու եւ կրոնական արարողությունների հետ: Այդ առումով առանձնանում է հատկապես «Մեր ժամը» պատմվածքը, որտեղ պատկերվում են ոչ միայն զանազան եկեղեցական արարողություններ, օրենքի ու ժ ստացած սովորույթներ ու պահվածքներ, այլեւ տարբերակիչ առանձնահատկություններ, որ կային կանանց եւ տղամարդկանց միջեւ անգամ եկեղեցում. տղամարդկանց տեղը առջեւում էր՝ ատյանին մոտ, կանանցը՝ հետնամասում, նաեւ վերնատանը, եւ այն էլ՝ վանդակորմված, որը ցույց է տալիս բարոյական նկարագրի քրիստոնեական կարգավորիչ ավանդույթների անբեկանելիությունը: Մնձուրին գրում է, որ ամեն մարդ ուներ իր «տոշակը» (բարձր), որի վրա կանգնում էր: Ընդ որում՝ ունեւորների բարձերը ճոխ էին, գունավոր, թավ բրդից, եւ նրանց տերերի տեղն էլ եկեղեցու պատվելի տեղերում էր, իսկ բոլորովին աղքատների «բարձերը»՝ «հին քուրջեր էին, գետեգերքի աղբընոցները նետէին չէիք ծուր ու վերցներ» (Մենք, էջ 223):

Ընդհանրություն մեջ լինելով հայկական քրիստոնեական հավատքի մաս՝ Մնձուրու պատկերած այդ աշխարհն ուներ կրոնաարարողակարգային իր տարբերիչ գծերը, օրինակ՝ եկեղեցում ժամերգություններն առանց մոմեր վառելու էին տեղի ունենում (մոմեր վառվում էին միայն հեռավոր մատուռներ այցելելիս): Եկեղեցու ջահերն ու կանթեղները վառվում էին միայն Զատիկի, Ծննդի եւ այլ տոների օրերին: Դրամի երեւալը եւս հագվադեպ էր՝ Դանիելի գիրքը կարդացվելու ժամանակ, մեկ էլ՝ եկեղեցուն ժողովրդի կողմից տրվող «մէկ փարան», որն իրականում դրամ չէր, այլ խաչի նշան ունեցող կլոր թիթեղ: Աղոթքի արարողությունը եւս տարբերիչ երանգներ ուներ. աղոթում էին ծնրադրած: Իսկ «մեղքերի խոստովանութիւնից» հետո կատարվում էր «մեղքերի թողութիւնը», որն արտահայտվում էր բազում ծնրադրությունների ձեւով «երեք ծունկէն սկսեալ մինչեւ տասնըհինգ, քսան ծունկ», օրը երկու անգամ առավոտյան եւ երեկոյան:

Աղոթքն ու ծնրադրումը «ընդունելի» էին համարվում՝ անկախ, թե որտեղ էր արվում տանը, դաշտում, լեռներում...

Այստեղ եւս «ամէնէն շատ ծնրադրութիւնը» հարսներին էր տրվում, քանի որ նրանք ավելի «մեղաւոր» կարող էին լինել մանավանդ սեռային մեղանշումների առումով:

Պահքի օրերին այր ու կին պետք է անկողնու մեջ իրարից հեռու պառկեին. պահք էր անգամ համբուրվելը: Իսկ պահքերը շատ էին՝ ամեն չորեքշաբթի, ուրբաթ, շաբաթ օրվա պահքերը, Մեծ պահքի յոթ շաբաթները. «Տարուան հարիւր ութսունը չորս օրը պահք» էին: Նկատենք, որ առանց այն էլ ուտելիքները բազմատեսակ եւ սննդարար չէին եւ հիմնականում այգիներից ու դաշտերից հավաքված մրգեր կամ բանջարեղեն էին. «Շատ քիչ միս կուտեինք: Տարին երեք անգամ, Զատկին, Ծնունդին, Բարեկենդանին...» (Մենք, էջ 226):

Մնձուրին մի պատմվածք ունի՝ «Ես կըսեմ աս մարդը հայ չէ», որտեղ, ինչպես «Բիրիտետեցի Տիմիթը», «Ղուռուչայցիները», «Սի փարա, հոթուզ փարա», «Մօլլա էօմէրին էշը» եւ մի քանի այլ գործերում պատկերում է հայերի եւ այլազգիների փոխհարաբերությունները, որոնք երբեմն թշնամական, երբեմն հակադիր, երբեմն էլ բարեկամական դրսեւորումներ ունեին: Հայկական, քրդական, ղզլբաշական, թուրքական բնակավայրերը խառն էին՝ իրար հարեւան, քիչ չէին խառը բնակչութուն ունեցող գյուղերը: Այստեղից էլ մի շարք սովորույթներ, կենցաղավարութեան ձևեր շատ բաներով իրարից չէին տարբերվում: Մտաբերենք թեկուզ «Մեր ժամը» պատմվածքում ներկայացվող ծնրադրումով աղոթելու օրինակը, եւ կամ այն, որ Մնձուրու պատմվածքներում հերոսները լիովին տիրապետում էին միմյանց լեզուների: Նրանք հաճախ լավատեղյակ էին նաեւ միմյանց երգերին (հիմնականում՝ հայրեններին) ու բարքերին, ինչպես նաեւ կրոնական օրենքներին ու ծիսակատարություններին:

Մնձուրին ներկայացնում է հայ եւ թուրք գյուղացի մարդկանց կյանքի մի դրվագ, որտեղ ընդգծելով հանդերձ այդ հարաբերությունների չգրված օրենքի ուժ ունեցող՝ օտար կամ ճանապարհորդ մարդուն հյուրասիրելու անբեկանելի պատրաստակամութիւնը (ինքը Մնձուրին, բազմիցս հյուրասիրվել է այլազգի ընտանիքներում, այդ մասին գրել է իր «Տիվրիկցի Միսաքը», «էյուպ աղան» եւ այլ գործերում), որոշ երգիծական երանգապատումներով «ցոյց» է տրվում պատմվածքի հերոսներից մեկի ազգային պատկանելիութունը:

Թեղուտի գզիրը Քեմախի Բագառիջներից ճանապարհ է ընկնում դեպի տուն, բայց սարերում ու ձորերում ճամփան կորցնում է, վրա է հասնում գիշերը: Հայկական Հասանովա գյուղի արտաքաղի դաշտերից մեկում նա հանդիպում է ամուսինների, որոնք աշխատանքն արդեն վերջացրել եւ խրձեր էին բեռնում ավանակին: Խորամանկ գզիրը հայերեն բարեւում է ամուսիններին լավ իմանալով, որ եթե ասի, որ ինքը հայ է, «եղբոր պէս կը տաքանան վրադ, կը սիրեն քեզ, կը բացուին քեզի»: Ասում է, որ ինքը խուռնավուցի է, որպեսզի գրուցակիցները չկասկածեն իր ազգությանը, ասում է, որ Պալենց տնից է, անունը Սարգիս է, եւ խնդրում է՝ գյուղում թեկուզ դպրոցի դռան հետեւում կամ եկեղեցու օդայում, գիշերելու տեղ տրամադրեն իրեն: Ամուսինները վիրավորվում են, թե՛ «հայ աղբար մըն ես, ու քեզ դճուրսը պիտի ձգենք»⁵:

Գյուղում դաշտից ավելի վաղ եկածները, որ արդեն ճաշել վերջացրել էին եւ ըստ սովորության՝ նստած էին իրենց դռների առջեւ, հարցնում են անծանոթի մասին: Իմանալով, որ ճանապարհին մնացած մարդ է, իրենց տներն են առաջարկում գիշերելու համար, բայց ամուսինները չեն համաձայնում իրենց հյուրին ուրիշ տեղ ուղարկել եւ տանում են իրենց տուն: Կինը սեղան է բացում, եւ պիտի սկսեին ուտել..., բայց հյուր Սարգիսը երեսը խաչակնքում է, ասում, որ աղոթք չարած, «Հայր մերը» չասած, սովորություն է, ինքը չի կարող ուտել եւ հատիկ-հատիկ սկսում է. «Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս, Յանուն Հօր եւ Որդուց եւ Հոգուցն սրբոյ, ամէն: Հայր մեր որ յերկինս ես..., զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն» (Արմտան, էջ 85):

Ճաշի ընթացքում փողոցից լսվում է երգի ձայն. «Երբ կուգայ գարուն, Սոխակը սիրուն, Վարդի թուփի տակ, Հայրիկ ճան, կերգէ Հայրենիք»:

«—Հէյ գիտի Հայրիկ, լոյս իջնի գերեզմանիդ»,— ասում է Սարգիսը եւ շարունակում երգի տողերը. «Վասպուրակնի երիտասարդներ եւ օրիորդներ, Հայրիկ ճան, սեւեր են հագեր»:

Ուտելուց հետո հյուրը նորից է խաչակնքում, շնորհակալություն հայտնում: Նրա համար անկողին են գցում, ճանապարհի պաշար դնում, որ առավոտյան հետը տանի:

⁵ Յ. ՄՆՁՈՒՐԻ, Արմտան, Իսթանպուլ, 1966, էջ 83 (այսուհետ այս գրքից կատարված մեջբերումների հղումները կտրվեն շարադրանքում):

Սարգսի քունը չի տանում, եւ պատի հետեւից լսում է ամուսինների խոսակցութիւնը. Կինը Թառոն, ամուսնուն Արսենին, ասում է. «—Ես կըսեմ աս մարդը հայ չէ...»:

«—Հայտի, ծօ»,— պատասխանում է ամուսինը,— «դուն հայ ես, ան հայ չէ եղեր, քու գեղիդ մէջ ժուռ գաս անանկ հայ մը կը գտնե՛ս, դուն ի՛նչ կը հասկնաս հայը ո՞վ է... դուն անոր կիսուն չափ հայերէն գիտե՛ս, Հայր մեր մը ըսաւ, ես անգամ չեմ կրնար անոր պէս ըսել, Հայրիկ ճանը գիտէ, դուն գիտե՛ս» (Արմտան, էջ 86):

Բոլորը քնում են, առավոտյան Սարգիսը, իսկ իրականում թուրք Մուհարրեմը, ճանապարհ է ընկնում, «Զուազեղ աղբիւրի» մոտ ուտում է հետը դրված պաշարը եւ մտորում, թե Թառոն «ինչէն հասկցաւ» իր հայ չլինելը. հայերեն իրենցից լավ է խոսում, կրոնական արարողութիւնները, երգերը իրենցից լավ գիտե... Այդպես էլ չի կռահում, որ հենց այդ ամենի կառարյալ իմացութիւնն է, մինչ այդ այդպիսի մեկին հանդիպած չլինելն է կնոջ մեջ կասկած հարուցել:

Ժողովրդական բուռն տարերքի ու բարեպաշտ կրոնավորի խառը համադրութիւն ներկայացնող մի անձ է «Մեր Վերիգեղին Տէր Պօղոսը» պատմվածքի հերոսը: Տեր Պօղոսը⁶, որքան էլ իր հագուկապով առանձնանում է սովորական կրոնավորից, իր էութեան մեջ կրում է արմատանյան կյանքին բնորոշ շատ հատկանիշներ: Մնձուրին նրան պատկերում է որպէս մի քահանայի, որը նախ եւ առաջ նույն բնութեան զավակն է եւ ուրեմն բնույթով որքան որ Աստծու ծառան է, նույնքան էլ բաբախուն կյանքի ընթացքին ձուլված անձնավորութիւն է: Մնձուրին գրում է, որ գլուղացիները հաճախ էին հիվանդանում մալարիայով: Այդ ջերմով, որն արտահայտվում էր դողէրոցքով եւ «կրակուելով», հիվանդին «հալեցնելով», հիվանդանում էին բոլորը մեծերն ու փոքրերը, բայց ոչ երբեք՝ Տեր Պօղոսը: Նույնը նաեւ աչքի ցավը՝ հետեւանք կալերի փոշիների, ինչպէս որ առաջինը դաշտ ու ձորերում ամեն ջուր եւ ամեն ուտելիք օգտագործելուց, եւ դարձյալ. «Վերիգեղին մէջ մինակ Տէր Պօղոսը աչքի ցավ չէր ըլլար», եւ դա՛ «հակառակ որ ամէն օր մեզի նման կալերու փոշիներուն մէջ էր» (Մենք, էջ 175): Տեր Պօղոսը չէր հիվանդանում անգամ «ձմեռթուլ», «աշնթուլ» կոչված հիվանդութիւններով, որոնք սկսվում էին ամեն աշնան եւ ձմռան վերջավորութիւններին: Ավելին. նա այդ ընթացքում Ավրզնի

⁶ Տեր Պօղոսը Մնձուրու հարազատ քեռին էր:

ձորում մեն մենակ «աղբիւր կը շինէր կամ կը նորոգէր»: Արմտանում նա կառուցել էր երեք աղբյուր՝ իրենց ավազաններով, ինչպես նաեւ ամեն տարի բարդիներ եւ ուռիներ էր տնկում առվեզրերին: Եւ այդ բոլորն այն դեպքում, որ «իրեն բնաւ չէր նայեր», օգտագործում էր ամենաթունդ ծխախոտը, որի խումը եթե սովորական մարդը երկու անգամ ներս քաշեր, «գլուխը կը դառնար»:

Տեր Պողոսն ամեն տարի կարասներով գինի է քամում, խմում ինքն ու ուրիշներին հյուրասիրում: Տեր Պողոսը գինի է խմում անգամ թանապուրի հետ, «բազկըթանի» ապուրի հետ: Մնձուրին գրում է. «...մինչեւ իրիկուն իր սենեակը կը լեցուէր ու կը պարպուէր վարի գիւղացիներով, թեղուտցիներով, ձեռք պագնելու եկողներով» (Մենք, էջ 177), նաեւ ազգական բարեկամներով: Խմում էր, բայց երբեք չէր հարբում «աւելի կը փայլէր, կը շէննար»:

Տեր Պողոսն ամենուր է. ներկա գյուղական բոլոր աշխատանքներին, մասնակցում է Կապանի փլվածքի աշխատանքներին, գետի կամրջի շինարարութեանը. «Փակեղը, ճիւղապէն կը հանէր, էնթարին մէջքը կը ժողվէր, մօրուքը կուրծքին փռած կաշխատէր» (Մենք, էջ 178):

Մնձուրին նրան օժտել է նաեւ հումորի զգացողութեամբ. Տեր Պողոսի կինը վաղուց մահացել էր: Հավատարիմ կնոջ հիշատակին՝ նա չէր ամուսնանում, բայց սիրում էր հաճախ կատակել գյուղի երիտասարդների հետ՝ ասելով, որ նրանց բոլորին ինքն է ամուսնացրել, իսկ նրանք իրեն չեն կարողանում «կարգել»:

Զմռանը՝ Սուրբ Սարգսի պահքի ժամանակ, լուր է տարածվում, որ Տեր պապը հիվանդացել է, «աւրուեր»: Եւ երբ նրա քրոջ որդին, այսինքն՝ Ակոբը (ինքը՝ Մնձուրին), գնում է նրան տեսութեան, նրան գտնում է վարտիք-շապիկով, կուրծքը բաց, ձյան վրա նստած. «Կը հեւար, քրտինքներու մէջ էր... չէր կրնար շնչել» (Մենք, էջ 179):

Նա մերժում է անկողին մտնել, հարազատներին ասում է՝ թողեք, որ «պաղշկիմ»: Ամենքը մտածում են, որ տերտերը խելքը գցել է եւ շուտով կմեռնի: Եւ առավոտյան... Տեր Պողոսը «աղեկցեր» էր, եկեղեցի գնացել եւ անգամ արարողութուն կատարել:

Ազնիվ ու անարատ մեկ այլ կրոնավորի մասին Մնձուրին գրում է նաեւ իր «Տեղեր ուր ես եղեր եմ» գրքում, որտեղ ներկայացնում է Գուրուչեշմեի եկեղեցու քարոզչին, որին բնութագրում է հակիրճ, բայց շատ բան ասող մի որակումով. «Խրիմեանին շարունակութիւնն էր» (Տեղեր, էջ 94):

Կրոնական հարցերի վերհանմանը զուգահեռ՝ Մնձուրին իր պատմվածքներում նաեւ տեղագրական, ազգագրական, ժողովրդագրական ու բարքագրական խնդիրներ է շոշափում, նշում ազգային հատկանիշների, սովորույթների, կենցաղավարության, այսպես ասած, արմտանյան առանձնահատկություններ: Օրինակ՝ Մնձուրու գրություններից ենք իմանում, որ մահ ունեցող տունը յոթ օր կերակուր չէր եփում, օջախ չէր վառում: Ամեն օր հերթով համագյուղացիներն էին այդ ընտանիքին ճաշ տանում. «Խոռով ալ ըլլար, տարաւ: Պարտաւոր էր»: Եթէ շտաներ, «կը բանադրուէր գիւղէն»: Մեկ այլ՝ «չգրուած օրէնք» էլ այն էր, որ հանգուցյալի տուն գնում էին միայն «քառասունէն վեր» տարիք ունեցող կանայք, որը եւս իր նշանակությունն ուներ:

Մնձուրու շատ գործեր նաեւ երկրագիտական արժեք ունեն: Նրա գրեթե բոլոր պատմվածքներում պատկերվում, նկարագրվում, հիշատակվում են կամ ծավալվող գործողությունների մասնակիցներն են Արմտանի եւ Արմտանին հարակից գետերը՝ Եփրատը, Ղորուչայը (Չորգետը), լեռները՝ Տուփկի (Մնձուրի), Զրկորուսի բլուրներն ու սարերը՝ Իննսունինի բարձունքները, Կաքավուքի խորխորատները, ձորերը՝ Բերդովենի, Քաշտանի, Խառիձակի, աղբյուրները՝ Զվագեղի, Դեղջուրի: Այդպես նաեւ դաշտերը, ճանապարհները, այգիները... Ինչպես եւ կրոնատեղիները, որոնց թիվը քիչ չէր. Սուրբ Եղիայի բլուրը՝ իր մատուռով, Խաչքարի Դարը, Սուրբ Դավիթը, Սուրբ Գեւորգը, Սուրբ Երեւումը, Արակայի եւ այլ սրբավայրերը, որտեղ պարբերաբար ուխտագնացություններ եւ մոմավառություններ էին կատարվում: Կրոնական տոնակատարությունները մանավանդ Վարագա Խաչի, Ծննդոցի, Զատիկի, մեծ շուքով էին նշվում եւ կրում էին պարտադիր եւ զանգվածային բնույթ:

Գյուղն ու գյուղացին Մնձուրու պատմվածքներում իրենց կենսաձեւով հիմնականում կապված էին հողին, որի հետ աշխատանքը համարվում էր կյանքի մեծագույն իմաստը: Կրոնը, սրբերն ու աստվածները այդ կյանքի անբաժան ու հոգեւոր մասն էին կազմում, մարդու համար հենարան ու ապավեն ծառայում: Աստված՝ որպես այդ ամենի մարմնավորում, ներկա էր ամենուրեք աղոթելիս, աշխատելիս, կենցաղավարության ու խոսքի մեջ. եթե որեւէ բանի համաձայնություն էին տալիս, ասում էին՝ «Աստուած այդպէս է կամեցէր, այդպէս թող ըլլայ», ունեցվածքից գոհության դեպքում ասում էին՝ «Աստուած տուածէն կան», վար անող եւ սերմ ցանող գյուղացուն անցվորն ասում էր՝ «Աստուած կարողութիւն տայ...»

քեզ ու եզնոցդ Աստուած բարի ուտել տայ»։ Այդպես Աստծու, սրբերի ու սրբությունների փրկարար ուժի հետ էր իր հույսը կապում աշխատավոր գյուղացին նաեւ հիվանդություններից ապաքինվելու համար։ Կիրառվում էին զանազան հմայեկներ, օգտագործում էին քառասուն աղբյուրից բերված ջուր, քառասուն սերմերից պատրաստված խյուսեր, Իննուսիննի բլուրին էլ հղի կանայք քար էին նետում՝ իմանալու համար՝ ծնվելիք երեխան տղա՞ է լինելու, թե՞ աղջիկ։

Առկա էին նաեւ նախապաշարումներ, սնոտիապաշտության իրողություններ։ «Նորեն Նուռ մամը» պատմվածքում պահքի օրերին հավկիթ ուզող Շողիկին մեծերը վախեցնում են, թե եթե հավկիթ ուտի, Տեր պապը քար կդնի բերանը, կկարի, իսկ Սուրբ Սարգիսը կկապի իր ձիու պոչից եւ կքաշի քարերի վրայով, եւ՝ «Մենք ալ Շողիկ շենք ունենար» (Մենք, էջ 82)։ «Սուրբ Գեւորգ» պատմվածքում էլ Մնձուրին գրում է, որ գյուղացի Շիրինը Սուրբ Գեւորգին «խոշոր մոմ» է խոստանում՝ ժայռածերպով հաջող գնալու եւ վերադառնալու հավատով։

Ուշագրավն այն է, որ մարդիկ իրոք հավատում էին իրենց պաշտած սրբերին ու փրկվելու, բուժվելու ընդունված զանազան միջոցներին։ «Մեր հիւանդութիւնները միմիայն աչքէ կուզան, ատ ալ հիւանդը որ օրը որո՞ւ հանդիպած է»,— գրում է Մնձուրին։ «Աչքով տալու» հիվանդությունն ուներ իր բուժումը, «...ով իրեն աչք ըրած է, անոր տանը շեմէն կը տաշենք, կամ առանց գիտցնելու հագածներէ մէկ-երկու թել կը բրցնենք, այրելով մուխը հիւանդին կուտանք, կը շնչէ, կաղէկնայ» (ընդգծ.— Ա. Ա.) (Մենք, էջ 66)։ Այդպես՝ «Եզեր» պատմվածքում գյուղացիներն անասունների համաճարակի վերացումը կապում են սրբագործության հետ. «Սեպուհի Ավագ վանքեն Դեղթափն ու Թադեոս առաքյալի աջը բերելով, յուրաքանչյուր գյուղին մեջ խաչհանգիստ ընելով ու բոլոր եղջյուրավոր անասուններուն խաչհանգիստ ջուր խմեցնելով միայն կրցան, վերջապես, համաճարակը կեցնել» (Երկեր, էջ 145)։

Քրիստոնեական հավատքն ու հավատալիքները Մնձուրու պատկերած աշխարհում ամենուր են ու անանց, անկախ այն բանից, թե որտեղ է գտնվում հայ մարդը դաշտում, այգիներում թե օտարության մեջ։ Վերջինիս վկայություններից մեկի մասին Մնձուրին գրում է իր «Սիլա» պատմվածքում։

Ինչպես Մնձուրու գավառ Երզնկան, այնպես էլ Չմշկածագը, Ակնը, Արաբկիրը «պանդխտութեան զրկող» հիմնական գավառներից էին, որի

պատճառով տղամարդիկ պանդխտում էին եւ տուն էին վերադառնում հինգ, տասը տարին մեկ՝ իրենց հոգում պահելով սերն ու նվիրումը հայրենի եզերքի, հարազատների, ինչպես նաեւ իրենց կրոնական ծխի, եկեղեցու հանդեպ: Այդպիսի մի տունդարձի (սիլայի) մասին է գրում Մնձուրին իր այս պատմվածքում, որտեղ հերոսը՝ Վահան Սըլոյանը, իր հարազատներին բերած նվերների թվում եկեղեցու համար «Մնտուկ մը ճերմակ ըսբառմաչէթ (ընտիր.– Ա. Ա.) մոմ ու խունկ է» բերում՝ լավ գիտակցելով այն մեծ դերը, որ կատարում էր եկեղեցին մարդկանց կյանքում, համայնքի կյանքում եւ ազգային ինքնության պահպանման գործում: Եթե նկատի ունենանք այն իրողությունը, որ պատմվածքում կերտված հերոսը հենց ինքը՝ Մնձուրին է, որի կենսագրական շատ տարրեր մարմնավորված են Սըլոյանի կերպարում, ապա կարող ենք ասել, որ եկեղեցու նկատմամբ նրա այդ հոգատարությունը հենց Մնձուրու վերաբերմունքն է առ այդ ազգապահպան ու համայնքապահպան սուրբ կառույցը:

Մնձուրին գրում է, որ շնայած կյանքի փորձություններին՝ քրիստոնեական հավատքը շատ ամուր էր նստած այդ մարդկանց մեջ: Անգամ այն դեպքում, երբ խառնամուսնություններ էին լինում, հայ կինը գրեթե միշտ պահում էր իր ազգությունն ու կրոնը՝ խոսում էր եւ անգամ իր երեխաներին սովորեցնում հայերեն, իր վզից կախում խաչ, քնելուց առաջ «Հայր մեր» ասում: Այդ մասին նա պատմում է իր «Տաղլուենց Մարոն» պատմվածքում, իսկ քրիստոնյա հայերի մեկ ճյուղավորման՝ հայ հոռոմների վերաբերյալ, որոնք բնակվում էին Ակնում, Մնձուրին գրում է, որ թեեւ «Անասդաս, Տիմիթրի. Վանկել էին անունները», բայց «...ո՛չ այրերը, ո՛չ կիները յունարէն գիտէին, հայերէն կը խօսէին: Սուրիոյ Դամասկոսի թեմ էին, Դամասկոսի յոյն պատրիարքութիւնը կը հովուէր զինքը» (Մենք, էջ 324):

Մնձուրու պատկերած աշխարհը բազմաբնույթ է, գործող հերոսներն էլ՝ երբեմն տարբեր կրոնների ու դավանանքների մարդիկ, բայց նա հիմնականում գրել է իր գյուղի Արմտանի կյանքի, սովորույթների, հավատալիքների ու նվիրումների մասին, այն մարդկանց մասին, որոնց համար ընտանիքը, աշխատանքը, քրիստոնեական բարքերը ազնվությունը, անարատությունը, սրբություններ էին, այլ խոսքով՝ հայ մարդու էությունը կազմող արժեքների ազգային ավանդույթների, կրոնի, հայրենի հողի, ազգային դիմագծի ու մշակույթի պահպանման մասին: Եւ հենց դրա շնորհիվ է, որ Մնձուրու շատ պատմվածքներում որպես առանձնա-

հատուկ, այսպես ասած՝ «անձնավորված» հերոսներ են հանդես գալիս մարդասիրությունը, ազնվությունը, կարեկցանքը, բարությունը, նվիրումը, քրիստոնեական հավատքը:

Մնձուրին ինքն այդ գյուղացիներից մեկն էր, յուրատեսակ նվիրյալ քրիստոնյա⁷ ու մաքրամաքուր մարդ, տուն ու երկրից զրկված հայ մարդ, որ եղեռնի հետեւանքով կորցրել էր ոչ միայն իր ծննդավայր գյուղը, այլև ողջ գերդաստանը, շորս զավակներին, որոնցից ամենամեծը վեց տարեկան էր, ամենից փոքրը ինը ամսական: Պաշտոնապես «Անհայտ վայր» տարված հայերին խողխողել էին մոտակա ձորակներում, եւ պատահականությամբ փրկված Մնձուրին (նա բռնագաղթի ժամանակ Պոլսում էր) ստիպված եղավ այլևս գավառ չվերադառնալ, մի ողջ կյանք ապրել եղեռնածին այդ քաղաքում՝ դառնալով մի ուրիշ նահատակ ապրելու համար հարդ ու ածուխ վաճառելով, իսկ կյանքի վերջին երկու տասնամյակներին աշխատելով Պոլսի Սուրբ Հարություն եկեղեցում՝ որպես... եկեղեցապան ու մոմավաճառ, ամեն օր ապրելով ու վերապրելով իր հարազատների կորուստը, դառնալով այդ կորուստների կենդանի վկան եւ իր գրականությամբ այդ նախճիրների դատապարտողը, համոզված, որ՝ «Գիրը չի մեռնի, գիրը անմահ է»⁸: Մնձուրու կերպավորած կրոնավորներն էլ՝ իրենց քրիստոնեական նկարագրով ու հավատավորությամբ, այդ նույն սպանողների ու անմարդկայնության յուրովի բանադրողներն են, իսկական ու արդար մարդկային կյանքի ջատագովները:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Վկայություն, եկեղեցի, կրոնավոր, քրիստոնյա, ուխտագնացություն, ազգային, ավանդույթներ, ազգապահպան, սրբատեղի, ինքնություն:

⁷ Նրա այդ նկարագրի վկայությունից է նաեւ այն իրողությունը, որ նա իր կրտսեր որդուն մկրտել էր Նաշո անվամբ:

⁸ Պոլսում գտնվող Մնձուրու շիրմաքարին այս տողն է փորագրված:

РЕЗЮМЕ

В статье выявляются образы священнослужителей представленные в рассказах писателя из армянской диаспоры Акопа Мндзури. Большая часть сельской жизни была связана с церковью, религиозными верованиями и обрядами. Святые и боги являлись неотъемлемой частью этой жизни и служили опорой для армян. Мндзури создает образы таких священнослужителей, которые сколько же преданные вере в быту и в деятельности, столько же преданные земле и труду. Таким синтезом народной бурной стихии и набожности является отец Погос, который и проводил обряды и строил родники для деревни. В его родном селе Армтане и в соседних районах были достаточно много святых мест; холм Св. Егиа, склон хачкара, часовни Св. Давида, Св. Геворга и Св. Еревум и т.д. В этих святых местах проводились религиозные празднования, совершались паломничества, восхвалили творение и труд. Одно из больших мест в мире изображенном Мндзури—это чужбина. Мужчины отсутствовали в течении 10–20 лет в семье, но не потеряли веру и любовь как к родным, так и к церкви. В рассказе «Возвращение» описывает как после длительного отсутствия Ваган Слюян возвращается домой и в числе подарков для родных он привез один ящик со свечами и ладаном, хорошо осознавая большую роль Церкви в святом деле сохранении нации и общины. Самую большую часть своих произведений Мндзури написал после Геноцида армян. Описывая западноармянскую деревню и крестьянина, изображая армянского священнослужителя, Мндзури в лице священнослужителей олицетворяет идею творения и мира, осуждает погром и резню.

SUMMARY

The article highlights the characters of clergymen depicted in the stories of Diaspora Armenian classical writer Hakob Mndzuri.

A large part of rural life was connected with the church, religious beliefs and rituals. Saints and gods were an integral part of this life; they served as a support and hope for the Armenian people. Mndzuri creates types of clergy who, by their way of life and activity, are both adherents of the faith and men of the land and labor. Fr. Poghos, who performs rites and builds springs for the village, is such a combination of popular elements and piety.

There were many sanctuaries and shrines in and around Armtan, Mndzuri's birthplace: St. Yeghia Hill, Khachkari Dar, St. David's Chapel, St. Gevorg, Holy Apparition, etc., where religious festivals and pilgrimages were held and creativity and labor were glorified. One of the painful aspects of the world depicted by Mndzuri was wandering. The men were away from their families for 10–20 years, but did not lose their faith and love for their families and the church. In the story «Sila,» Mndzuri depicts Vahan Siloyan returning home after a long absence and bringing a box of candles and incense for the church among gifts to his family, realizing the great role the church plays in the sacred task of preserving the nation and the community.

Mndzuri wrote most of his works in the post-genocide period. Depicting Western Armenian villages and villagers, portraying the Armenian clergy, Mndzuri embodies the ideas of creation and peace, and condemns the massacre and slaughter.



ՄԱՐԳԱՐԻՏԱ ԽԱՉԱՏՐԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ԳԻ

ԱՉՊԱՅԻՆ ԱԲԱՆԴՈՅԹՆԵՐՆ ՈՒ ՍԷՍԵՐԸ ԱՐԱՄ ՀԱՅԿԱԳԻ ԵՐԿԵՐՈՒՄ¹

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Արամ Հայկազը (Զեքեմեան², 1900–1986 թթ.) ծննդավայրի՝ Շապին Գարահիսարի հերոսամարտի մասնակիցներից էր: Բերդից իջնելիս տեսալական գնդակահարուած հոր դիակը, նրա ու մոր աչքի առաջ թուրքն սպանեց Արամի հորը՝ Հայկազին (1898–1915 թթ.)՝ երկու որդի ունենալը հայ մոր՝ տիկին Իզաբելի համար համարելով շռայլություն: Արամը մոր հետ անցավ Եղեռնի՝ դէպի անյայտություն տանող անյոյս ճամփաներով: Զեքեմեան գերդաստանի վերջին շառաւիղն էր եւ մոր խնդրանք-պարտադրանքով հաւատափոխ եղաւ: Յետագայում ասում էր՝ Նախախնամությունն իրեն փրկեց, որ գրի ծննդավայրի ու նրա հերոսամարտի մասին:

Թուրքերի ու քրդերի մէջ յայտնուած ապագայ գրողի համար օտարութեան մէջ ապրած շոր տարիները հասունութեան շրջան էին: 1919-ի գարնանն իմացաւ, որ ինքն ու իր հետ ապրող մի քանի հայ երիտասարդները թուրքական եաթաղանից փրկուած միակ հայերը չեն, եւ փախաւ Քիւրդիստան կոչուող լեռնաշխարհից ու հասաւ Պոլիս: Այստեղ՝ «Կեդրոնական» վարժարանում, աշակերտեց Յակոբ Օշականին (Քիւֆէճեան, 1883–1948 թթ.), որի ուշադիր հայեացքից չվրիպեց շնորհալի սանի գրական ձիրքը:

Արամ Հայկազի խորթ եղբայրը՝ Յակոբ Կարմիրեանը (1888–1970 թթ.), յիշում է, որ Շապին Գարահիսարում կարգաւ-գրել իմացողը, ի տարբերություն հարուստ աղաների, ճանաչում էր իբրև «մեծ մարդ»³: Դպրոցը

¹ Ստացուել է՝ 17.01.2024, գրախօսուել է՝ 31.01.2024:

էլ. հասցէ՝ margarit2011@gmail.com:

² ԱՄՆ ներգաղթելիս Արամ Զեքեմեանը պաշտօնեայի անփութութեան պատճառով կորցրեց ազգանունն մի տառի ճիշտ գրությունը: Գրողի գաւակները կրում էին Չէֆեմեան ազգանունը:

³ Ա.Ր.Ս.Մ. Հ.Յ.Կ.Ա.Չ., Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը, Երևան, 2023, էջ 28:

եւ ուսուցիչները, հոգևոր գործիչները տասնամեակներ շարունակ նուիրուել են «հայրենասէր ու դաստիարակուած երիտասարդ բազմաթիւ շրջանաւարտներ»⁴ ունենալու ազգանուէր գործին: Այս հարցում բացառիկ է արմաշականների⁵ դերը: «Մէկ խօսքով, ուսման ծարաւ ժողովուրդ եղած են գարահիսարցիք»⁶, – գրում է Յակոբ Կարմիրեանը: Նա հպարտութեամբ է յիշատակում համաքաղաքացի ճարտարապետ Թորոս Թորամանեանի (1864–1934 թթ.) անունը եւ մէջբերում նրա խօսքը ծննդավայրի մայր եկեղեցու՝ հայ ճարտարապետութեան գլուխգործոցներից մէկի մասին⁷:

Յակոբ Կարմիրեանի հրաւերով՝ Արամը 1921-ի մայիսի 28-ին Նիւ Եօրք հասաւ: Նա ապրեց Բնօրրանից ովկիանոսով բաժանուած այդ երկրում, բարեբախտաբար 1969-ի աշնանը 21 օր Խորհրդային Հայաստանում վայելեց ամէն քայլափոխին հայերէն խօսք լսելու բացառիկ հաճոյքը: Կեանքի այս տարբեր հանգրուանները նրան գրելու հարուստ նիւթ տուեցին, իսկ մանկութեան, պատանեկութեան անուշ յուշերի մէջ կենդանի ապրում էին Բնօրրանի պատկերը, մանկութեան օրերի անկրկնելի քաղցրութիւնը, որոնցից անբաժան էր կորուստի ցաւի դառնութիւնը:

Այս անմոռանալի յիշատակներից է կազմուած երջանկութեան՝ տաք ու հոգին ջերմացնող պատկերը. «Այն օրերուն այդ պզտիկ բաներով մուրէն սեւցած կտուրներու տակ երջանիկ էինք, լման երջանիկ (ընդգծումը. – Մ. Խ.): Տղայութիւննիս էր պատճառը, թէ՛ ոչ՝ հայրենի հողին վրայ ըլլալնիս: Հիմա իսկ այդ մանր ու աննշան թուող բաներուն վերյիշումը կ'արագացնէ սրտիս բարբախումը:

Ինչո՞ւ անդառնալի կերպով կորսուած, անցած ամէն բան այդքան անո՞ւշ ըլլալ կը թուի, ինչո՞ւ...»⁸:

⁴ Անդ, էջ 29:

⁵ 1889 թ. սեպտեմբերի 18-ին Իզմիթի շրջանի Արմաշ գիւղի Չարխափան Սուրբ Աստուածածին վանքում Կ. Պոլսի պատրիարք (1884–1894) Խորէն արքեպիսկոպոս Աշրգեանի (1842–1899) հովանաւորութեամբ բացուել է դպրեվանք: Այս կրթօջախի սանն ու շրջանաւարտը լինելը հայ իրականութեան ամենապատուաւոր կոչումներից էր: 1915-ին թուրքերն աւերեցին դպրեվանքը:

⁶ 5 Անդ, էջ 28:

⁷ Անդ, էջ 43:

⁸ ԱՐԱՄ ՀԱՅՎԱԶ, Մոռացուած էջեր, բնագիրը եւ ներածութիւնը Մ. Խաչատրեանի, հտ. Բ., Երեւան, 2011, էջ 85:

ԲՆՕՐՐԱՆԻ ԱՆՄՈՒԱՑ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

Բոլորովին էլ պատահական չէ, որ Արամ Հայկազի գրական առաջին փորձերը պատանեկութեան շորս տարիների մասին էին⁹, իսկ առաջին գիրքը՝ «The Fall of the Aerie» («Արծուաբնի անկումը», 1935 թ.)՝ Շապին Գարահիսարի հերոսամարտի, որին նուիրեց նաև «Շապին Գարահիսարն ու իր հերոսամարտը» հատորը: Նա սուր յիշողութեամբ ու պատկերաւոր լեզուով նկարագրում է իր կեանքի տարբեր շրջանները՝ միշտ պահելով երկիւղած խոնարհումը ՀՈՂի ու նրա արդար մշակների յիշատակի առաջ:

Տասնհինգ տարի ընտանեկան կեանքի հեքիաթի մէջ ապրած մարդու յիշողութիւնը բերեղացրել է անցեալի յիշատակների պատառիկները, որոնք տասնամեակներ անց էլ յուզիչ են ու վարակիչ. «Յամենայն դէպս, երբ տօնական օրերը մօտենան, հին յիշատակներու հետ հին հաւատքէս ալ կայծ մը կը բոցովառուի հոգիիս մէջ, ու ես կը դառնամ հին գաւառացի հաւատաւոր տղան, որ մինչև մէջքը հասնող ձիւները ակօսելով՝ եկեղեցի կ'երթայ՝ հաղորդուելու...»¹⁰:

Ամենաթանկը ծնողների՝ յատկապէս մօր, եղբայրների ու ընկերների յիշատակներն են: Արամ Հայկազի «Մանկութեան յիշատակները» յուշագրութեան բնաբանը շատ խօսուն է. «Մօրս ու բոլոր այն մայրերուն, որոնց անսահման հաւատքը չի կրցաւ փրկել զիրենք Եփրատի ալիքներէն»¹¹: Առանց մօրը նուիրուած տողերի՝ գրողի մանկութեան ու պատանեկութեան պատկերը թերի կը լինէր. «Հիմա չկայ ան, եւ իմ մէջ խախտած ու կործանուած է ամէն բան, որ սուրբ էր ու նուիրական այն օրերուն: Իր ինձ ճանչցուցած հզօր ու ամենակարող Աստծոյն պատկերը չբացած է մտքէս՝ տարակոյսի մշուշէն հալածական: Հատած են մանկական բոլոր յոյզերս ու սէրերս, հատած է իր ներշնչած հաւատքը: Միայն իր անսահման սիրոյն յիշատակն ու անշէջ կարօտն է, որ կը պահեմ հոգուս ամենա-

⁹ «Հայրենիք» ամսագրի 1924 թ. 2-րդ, 3-րդ եւ 12-րդ համարներում լոյս են տեսել Արամ Հայկազի «Մանկութեան յիշատակները», «Մղձաւանջը» եւ «Աէրը եւ մահը» յուշագրութիւնները (տե՛ս ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ, Մոռացուած էջեր, բնագիրը եւ ներածութիւնը՝ Մ. Խաչատրեանի, հտ. Ա., Երեւան, «Տիգրան Մեծ», էջ 129–148, 149–154 եւ էջ 117–128): Նոյն ամսագրի 1927 թ. 4-րդ եւ 6-րդ, 7-րդ, 9-րդ համարներում լոյս են տեսնում Արամ Հայկազի «Մնունդի գիշեր» եւ «Շապին Գարահիսարի ինքնապաշտպանութիւնը» յուշագրութիւնները (տե՛ս ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ, նշ. աշխ., էջ 170–173 եւ 174–224):

¹⁰ ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ, Ապրող ծառ մը (պատմուածքների ժողովածու), բնագիրը՝ Մ. Խաչատրեանի, Երեւան, «Հայաստան», 2012, էջ 83:

¹¹ ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ, Մոռացուած էջեր, հտ. Ա., էջ 149:

նուիրական խորքերուն մէջ՝ միշտ թարմ, միշտ բաբախուն, միշտ անգին ու ցանկալի»¹²:

ԱՂՕԹՔ: ՀԱՅ: ՅԱՐԳԱՆՔ ՄԵԾԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Արամ Հայկազի ծննդավայրի՝ Շապին Գարահիսարի ընդհանուր պատկերի մէջ առանձնանում են մայր եկեղեցին ու նրա հովանու տակ յառնող դպրոցը: «Զբօսնելու համար առտու կանուխ կը լքէինք գիւղը եւ կ'իջնայինք դպրոցի բակը: Հոս կը հանուէինք կիսով, կը բոպիկնայինք ու կը վազվզէինք խօլարշաւ¹³: Բայց երբ զանգակը զարնէր, զինուորական կարգով կ'երթայինք մեծ սրահի կեդրոնը ու գիւղացի տղու մեր խակ, առողջ ու ճշան ձայներով կ'աղօթէինք: Կը խնդրէինք Արարչէն, որ իր իմաստութիւնը մարգերուն վրայ իջնող ցօղին պէս մեր վրայ իջնէ (բնաւ ալ չիշաւ), իսկ իրիկունը՝ տուն երթալէ առաջ, կը կրկնէինք նոյն աղօթքը՝ իմաստութիւնը փոխարինող ողորմութեամբ:

Գիւղին վրայ բացուող պատուհաններէն մեր երգ-աղօթքը կը յորդէր ու դիմացի քարին կը զարնուէր: Գիւղի կիները օճախները կը վառէին ու կ'ըսէին իրարու.

– Տղաքը կ'աղօթեն, տա՛ր, հիմա ուր է ուր չէ՝ կու գան»¹⁴, – սա նիւեօր-քաբնակ գրողի յուշերից մի պատառիկ է:

Արամ Հայկազի՝ «անուշ ծննդավայրի»¹⁵ տօներին, սովորութիւններին նուիրուած ծաւալուն ու շատ հետաքրքիր, բազմաբովանդակ նիւթերից յատուկ ուշադրութեան են արժանի ՀԱՅԻՆ նուիրուած ու մեծերի նկատմամբ յարգանքի մասին պատմող տողերը. «Միւռոնի ու Հաղորդութեան համահաւասար նուիրական էր եւ հացը: Զայն գետինը նետել, վրան կոխել, հետը խաղալ աններելի մեղքեր էին. գետինը գտնուած հացի փշրանք մը պէտք էր վերցնել ու դնել պատի մը վրայ, որ թռչուններն ուտեն»¹⁶, «Ծերերու եւ քեզմէ մեծերու հանդէպ յարգանքը պարտաւորիչ էր. իր ծնողքն ու մեծերը չյարգողը, չսիրողը չէր կրնար սիրելի ու յարգել իր Աստուածը»¹⁷: Յաւելեմ մի հատուած Արամ Հայկազի «Կը յիշեմ» յուզիչ պա-

¹² Անդ, էջ 154:

¹³ Սրբնթաց

¹⁴ Անդ, էջ 251:

¹⁵ ԱՐԱՄ ՀԱՅՎԱԶ, Մոռացուած էջեր, հտ. Բ., էջ 28:

¹⁶ ԱՐԱՄ ՀԱՅՎԱԶ, Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը, Երեւան, 2023, էջ 59:

¹⁷ Անդ, էջ 60:

տումից. «Մեր տան սովորութիւնն էր, որ սեղան նստելէ առաջ փոքրերը կը համբուրէին մեծերուն ձեռքերը ու անոնց օրհնութիւնն առնելէ վերջ կ'արտասանէին վարժապետին սորվեցուցած «Կաղանդի ճառը»¹⁸:

«Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը» հատորի հետաքրքիր էջերից են «Ուխտատեղիները», «Տօներ, բարքեր, սովորութիւններ, նախապաշարումներ» գլուխները, ժողովրդական բանահիւսութեան բազմաթիւ նմուշները՝ սիրոյ, հարսանիքի, հունձքի, պանդխտութեան թեմաներով երգերն ու պարերգերը:

Նշեմ՝ հայերից ու միւս բնիկ ժողովուրդներից Հայրենիք զաւթած թուրքը (իր համար՝ պարզապէս հող) աշխատանքային երգ չունի:

ԿԱՂԱՆԴ

Արամ Հայկազը Կաղանդի թեմային յաճախ է անդրադարձել. բնօրրանի կարօտը տարիների ընթացքում վերածուեց իւրատեսակ հեքիաթի, հոգին ջերմացնող յիշողութեան: Արամ Հայկազ «Մոռացուած էջեր» գրքի եօթ հատորներում ներկայացրել եմ այս բովանդակութեամբ մի քանի պատմուածքներ՝ «Կաղանդի երգ», «Այս գիշեր», «Մանկութեան յիշատակներ», «Ծնունդի գիշեր մը», «Դեկտեմբերի վերջին գիշերը»¹⁹, «Մեր քաղաքի Կաղանդը (Երբ պատանի էինք)», «Վարդավառ», «Հին յուշ», «Կը յիշեմ», «Հայկական Կաղանդ»²⁰, «Գարուն եւ Զատիկ», «Զատիկ», «Ո՛րտայր ինձ...», «Օտար երկնքի տակ»²¹, «Օրհնութիւն մը, որ չհասաւ ինձի»²², «Հին օրերու Կաղանդը»²³, ինչպէս նաեւ՝ «Մեր քաղաքի Ծնունդը»²⁴ յուշապատումը:

Քաղաքում մեծացող Արամի կեանքում պակաս չէին գիւղաբնակ երեխաների կեանքի մեծ ու փոքր ուրախութիւնները՝ խաղեր, աշխատանք մեծերի հետ, դպրոց, եկեղեցի: Աւանդապաշտ ընտանիքի զաւակ Արամը տասնամեակներ անց էլ սիրով ու հոգու արցունքներով է յիշում համա-

¹⁸ Ա.Ր.Ա.Մ ՀԱՅԿԱԶ, Մոռացուած էջեր, հտ. Բ., էջ 85:

¹⁹ Ա.Ր.Ա.Մ ՀԱՅԿԱԶ, Մոռացուած էջեր, հտ. Ա., էջ 62–64, 96–98, 149–154, 170–173, 291–292:

²⁰ Ա.Ր.Ա.Մ ՀԱՅԿԱԶ, Մոռացուած էջեր, հտ. Բ., էջ 28–30, 84–86, 144–148, 184–187, 213–216:

²¹ Ա.Ր.Ա.Մ ՀԱՅԿԱԶ, Մոռացուած էջեր, բնագիրը եւ ներածութիւնը՝ Մ. Խաչատրեանի, Երեւան, 2013, հտ. Գ., էջ 100–103, 120–122, 219–222, 222–225:

²² Ա.Ր.Ա.Մ ՀԱՅԿԱԶ, Մոռացուած էջեր, բնագիրը եւ ներածութիւնը՝ Մ. Խաչատրեանի, Երեւան 2013, հտ. Գ., էջ 73–79:

²³ Ա.Ր.Ա.Մ ՀԱՅԿԱԶ, Մոռացուած էջեր, բնագիրը եւ ներածութիւնը՝ Մ. Խաչատրեանի, Երեւան, 2014, հտ. Ե., էջ 3–6:

²⁴ Ա.Ր.Ա.Մ ՀԱՅԿԱԶ, Մոռացուած էջեր, հտ. Բ., էջ 83:

Ու Նոր տարին, ոտքերուն փակած ձիւնը թօթուելով, պաշտօնապէս կը մտնէր մեր կեանքէն ու տունէն ներս:

Ճրագը պատուհանին առջև մինչև լոյս բաց կը ձգէինք այդ գիշեր, որ Բեթղեհէմի Աստղին պէս հոն շողար մինչև առաւօտ: Շողար մինչև առաւօտ, որ, ո՞վ գիտէ, եթէ տունին Նահապետը մեզի այցի գար մեր քնացած պահուն, գիտնար, որ իր գալուտին կը սպասէինք...»²⁹: «Կաղանդի գիշերը, որքան ալ որ քամին՝ ուժեղ, ու ցուրտը խածան ըլլար, մայրս չէր շեղեր աւանդական սովորութենէն: Ափ մը գարի առած, գլուխը պլած բուրդէ շալի մը մէջ, աղօթքի կտոր մը ծամելով, ծունկերուն հասնող ձիւնը ակօսելով՝ կ'երթար աղբիւրը կաղնդելու:

– Ես քեզ տամ գարի, դուն ինձի տուր բարի:

Ու կը բռնէր սափորը հոսուն ու շոգի արձակող ջուրին դէմ:

Ո՞վ էր ըսած իրեն, թէ Նոր տարոյ գիշերը Հայաստանի բոլոր աղբիւրներէն պահիկ մը ոսկի կը հոսի... Կը հաւատամր այդ բանին, չգիտեմ: Բայց ամէն տարի՝ ժամը ճիշդ գիշերուան տասներկուքին, երբ հին տարին կը հատնի սպառած մոմի մը պէս, ու իր տեղ նորը կու գայ, երբ ծովափնեայ քաղաքներու շոգենաւերը սուլել կը սկսին, ու դահլիճներու լուսաշող կամարներուն տակ մարդիկ կիներ ու գինիի բաժակները կը համբուրեն, մայրս աղբիւրի ճամբան կ'ըլլար իր ափ մը գարիով ու ջուրին սափորով:

Ու հաւատացէք՝ լման տարին հացը մեր տաշտէն ու կրակը մեր օճախէն պակաս չէին ըլլար...

Ալ ի՞նչ կ'ուզէինք:

Հիմա, որ աղբիւրը պաղ ու տաք ծորակներով մեր խոհանոցն է եկած, միտք կ'ընենք ժամը տասներկուքին՝ ճիշդ կէս գիշերին, թաս մը կամ փարջ մը ջուր առնելու այդ ծորակէն... Ո՞վ կը հաւատայ ատանկ յիմար բաներու... Հիմա ժամը տասներկուքին Նոր տարին դիմաւորելու ինքնախաբէութեամբ կէս մը կամ լման գինով կ'ըլլանք...

Ու եթէ պատահի, որ տունին Նահապետը այցի գայ մեզի, կ'ամ մեզ տունը չի գտներ եւ կ'ամ, եթէ գտնէ իսկ, մեր շունչին ապականութենէն քիթը բռնած՝ կը փախի դուրս...»³⁰:

Արամի մանկութեան ամենայուզիչ պահերից էր Կաղանդին նախորդող օրերի սպասումը. «Կաղանդ»ը դուրս կու գար այնպէս ուժեղ ու լուսեղէն, որ կարծես արևը տեղէն թռած ու հոգիիս մէջ ինկած ըլլար:

²⁹ Անդ, էջ 86:

³⁰ Անդ, էջ 30:

Ամբողջ ամիս մը տօնական այդ օրուան գալը կը լեցնէր հոգիս, ու անոր յապաղումով դժբախտ էի ու անպայմանօրէն գալուն վստահութեամբը՝ երջանիկ:

Ինչ աղուոր օրեր էին»³¹:

Տասից աւելի քաղաքներում ու գիւղերում Նոր տարի դիմաւորած հայ մարդու համար նարինջը միայն անցեալի յիշատակ չէ («Մենք տարին միայն մէկ անգամ նարինջ կ'ունենայինք եւ անով երջանիկ էինք»³²), այլ «խորհուրդի, առասպելներու եւ հրաշքի մէջ թաթախուած», «ծխնելոյզներէն անշնորհ վար իջնելու եւ տղաքը երջանկացնելու գաղտնիքը» իմացող Կաղանդ Պապային հանդիպելու երազանքի հնարաւորութիւն: Ահա՛ հեքիաթային գիշերուայ հրաշքի պատկերը. «Ինծի տուէք մրտաած գերաններով գեղջուկ տան մը մէջ պզտիկ անկողին մը ու բարձիս տակ դրէք նարինջ մը: Կը խոստանամ դանակը երբեք չդնել այդ պտուղին վրայ, օ՛, հաւատացէք, կը բաւականանամ միայն հոտոտելով երջանիկ ըլլալ ու լուռ խայտալ վերմակիս տակ»³³:

«Գերազանցապէս փոքրերու տօնն է Կաղանդը»³⁴ տողով է սկսւում Արամ Հայկազի «Օտար երկնքի տակ» պատկերը, բայց քիչ անց պարզւում է՝ արդէն կէս դար առաջ Բնօրրանը հարկադրաբար լքած 65-ամեայ հայ մարդու հոգու ծալքերում կայ, ապրում է հրաշքի սպասումը. «...տունին Նահապետը իր ճամբան գտնէ ու գայ (ինչքան լեռներ ու ծովեր ունի կտրելու), ճրագը տեսնէ պատուհանին մէջ եւ իմանայ, թէ իրեն է, որ կը սպասենք...»

Եւ ինչո՞ւ պիտի չգայ կամ չգտնէ ճամբան»³⁵:

«Օրհնութիւն մը, որ չհասաւ ինծի» պատկերն այս շարքի ամենացաւոտ պատումն է. օտար հողում իր գոյութիւնը Բնօրրանի Կաղանդի ու Սուրբ Ծնունդի յիշատակներով իմաստաւորող մարդը ցաւ ի սիրտ արձանագրում է, որ չի կարողանում ու չի կարողանայ ոչինչ մոռանալ. «Կ'ըսեն, թէ Աստուած աշխարհը ստեղծելէ ետք, երբ յոգնած, երջանիկ ու իր ստեղծագործութեան առարկայով հպարտ, փէշերը ժողուած՝ կը պատրաստուէր վեր երթալ, իբրև վերջին օրհնութիւն, երկրի վրայ մարդոց

³¹ ԱՐԱՄ ՀԱՅՎԱԶ, 2013, հտ. Գ., էջ 219–220:

³² Անդ, էջ 221:

³³ Անդ, էջ 222:

³⁴ Անդ, էջ 222:

³⁵ Անդ, էջ 223:

թողուց մոռնալու եւ մխիթարուելու կարողութիւնը: Մխիթարուել՝ թերեւս, բայց մոռնալ չեմ կրնար ես:

Արդեօք շատ հեռու տեղ մը կամ դռան ետեւն էի ես, որ այդ օրհնութիւնը չհասաւ ինծի...»³⁶:

ԲԱՐԵԿԵՆ ԴԱՆ

Արամ Հայկազը «Մանկութեան յիշատակները» յուշագրութեան մէջ, «Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը» գրքի «Բարեկենդանին» գլխում ներկայացնում է «տէրան փօստելու»՝ Մեծ պահքի սկսուելու մասին յայտարարած քահանային եկեղեցու բարձերով «ծեծելու» ուրախ պատմութիւնը: Նա շատ լաւ է յիշում երեխաների այդ «քաջագործութիւնների» կազմակերպիչներից մէկին՝ տասներեքամեայ Լևոնին՝ «դպրոցին մէջ ամենափոքր խելքը եւ ամենամեծ անառակի համբաւն»³⁷ ունեցող պատանուն, որը հրահանգում էր եկեղեցում հաւաքուել: «Սերունդէ սերունդ մեզի հասած անգիր օրէնք էր աս. ինչո՞ւ քահանան Մեծ պահքի եօթը անտանելի շաբաթներու երկար շարքը կը բերէր:

Լևոնը հպարտ ու ինքնավստահ զօրավարի մը վճռականութիւնով կ'առաջնորդէր դեռատի ստահակներու մեր փոքրիկ խումբը, որ փողոցէ փողոց կը ստուարանար ու կը մեծնար: Եկեղեցիին փողոցը դեռ չի հասած՝ կը ցրուէինք մենք աննշմարելիօրէն՝ կանխորոշուած դիրքերուն վրայ իրար գտնելու համար»³⁸, – գրում է Արամ Հայկազը:

Այս ամէնն աւարտուում էր Տէր Կօր ձեռքից նշխար ստանալով ու միայն քահանային «տեսանելի վերի Ամենակալին» ուղղուած բարեխօսութեամբ...

Շապին Գարահիսարում Բարեկանդանին նուիրում էին հետաքրքիր մի ներկայացում՝ գարնանային զարթօնքը խորհրդանշող հարսի ու փեսայի պատկերով³⁹: Հետաքրքիր փաստ. Արամ Հայկազը շեշտում է՝ շապինգարահիսարցիներն ուխտագնացութիւններից յետոյ յատուկ սիրով ու նախնիներից ժառանգած հեթանոսական նուիրումով յանձնուում էին

³⁶ Ա.Ր.Ա.Մ. Հ.Ա.Յ.Վ.Ա.Ձ, Մոռացուած էջեր, հտ.Դ., էջ 75–76:

³⁷ Ա.Ր.Ա.Մ. Հ.Ա.Յ.Վ.Ա.Ձ, Մոռացուած էջեր, հտ. Ա., 2010, էջ 151:

³⁸ Ա.Ր.Ա.Մ. Հ.Ա.Յ.Վ.Ա.Ձ, Չորս տարի Քիւրտիստանի լեռներուն մէջ, էջ 50, նոյնի «Ապրող ծառ մը» (պատմուածքների ժողովածու), բնագիրը՝ Մ. Խաչատրեանի, Երեւան, 2012, հտ. Բ., էջ 84–86:

³⁹ Ա.Ր.Ա.Մ. Հ.Ա.Յ.Վ.Ա.Ձ, Չորս տարի Քիւրտիստանի լեռներուն մէջ, Երեւան, 2022, էջ 50:

կերուխումի, որ սովորաբար աւարտուում էր ծեծկռտուքով ու արիւնոտ տեսարաններով...

Հագար անգամ ճիշտ էր Համաստեղը (Համբարձում Կելէնեան, 1895–1966), երբ հային բնորոշում էր «կէս-քրիստոնեայ» եւ «կէս-հեթանոս» սահմանումով:

ՊԱՀՔ

Հաւատաւոր ու բառի բուն իմաստով՝ հաւատացեալ միջավայրում մեծանում էին աստուածավախ զաւակներ: Նրանցից մէկը՝ Արամը, տասնամեակներ անց յիշում է մանկութեան ու պատանեկութեան տարիների դէպքերից ամենատպաւորիչները: Արամն ու դասընկերները պահել են Պահքի կանոնները եւ արժանացել Սուրբ Հաղորդութիւն ստանալու երջանկութեանը, բայց... Մանուկը չի կարողանում կուտ տալ Սուրբ նշխարը: «Մանուկը բերանը բացաւ, որ պատասխանէ, ցաւը պատմէ, ու... նշխարի կտորը բերնէն ինկաւ վար՝ մինչև ծունկերը հասնող ձիւնին մէջ, — յիշում է գրողը:— Մատը կոխեց, որ տեղը ստուգէ, բռնէ, դուրս հանէ: Անօգուտ աշխատանք... Օրհնուած հացի կտորը կորա՛ւ կակուղ ձիւնին մէջ, ու զայն գտնելու ամէն ճիգ անցաւ ապարդիւն...»

Ան տուն գնաց սրտաբեկ ու հիւանդ: Ու չգտաւ ինքզինքը, մինչև որ ծնողքը, մտահոգուած իր վշտաբեր երևոյթէն, յաջողեցան խոստովանեցնել զայն ու հետերնին առած՝ գացին տեսնելու Տէր Նաթանը: Տէր Նաթան՝ բարի ու լուսամիտ Քահանայ, իր աջը Մանուկի գլխին դրած, համբերութեամբ ու գորովով բացատրեց, թէ ակամայ գործուած մեղքերը մեղք չեն համարուիր, եւ Քրիստոս, որ դարեր առաջ աշխարհ եկաւ, եկաւ քաւելու համար մեր մեղքերը՝ «աղամորդիներու» մեղքերը...

— Հապա՛, որդի՛, Քրիստոս ներող է, անսահման ներող, բարի...»⁴⁰:

Մանկութեան ամենայուզիչ յիշատակներից են տւական պահքի օրերին խորամանկութեամբ համեղ պատառ փախցնելու փորձերը. ահա՛ «ոսպապուրին հեռապատկերէն սարսափած» Արամի համար մօր եփած ձուածեղի կենդանի, թրթռուն ու համով-հոտով յիշողութիւնից մի հատուած (քիչ մնաց գրէի՛ պատառ). «Այրած կարագին քմքապարար ու ախորժելի հոտը կը գրաւէր ուշադրութիւնս, բերնիս ջուրը արագ-արագ

⁴⁰ ԱՐԱՄ ՀԱՅՎԱԶ, Ապրող ծառ մը (պատմուածքների ժողովածու), բնագիրը՝ Մ. Խաչատրեանի, Երեւան, 2012, էջ 83:

կույ կու տայի, ջուրին տակ երկար ատեն մնացողի մը աճապարանքով կը շնչէի ու երկնցած տեղէս աչքիս պոչով մօրս կը դիտէի: Կռնակը դարձուցած էր ինծի: Ուրախութենէս կը շտկուէի: Ահա չը՛թ-չը՛թ, հաւկիթը տապակի եզերքին զարնելով, կը կոտրէր, որուն կը յաջորդէր հաճելի ու եռանդուն թշրտոց մը, ու վերջապէս եփեցաւ»⁴¹:

Բերդից քաղաք իջած շապինգարահիսարցիները հաւաքուեցին թաւանուած եկեղեցու բակում ու ենթարկուեցին կեանքի «անմիջական պահանջներ»ին, որոնց մէջ առանձնակի տեղ ունէր աղօթքը. «Մարդկային ըմբռնողութենէ դուրս, սրտակեղեք ու անանուն բան մըն էր այդ աղօթքը, հաւաքական այդ ցոյցը Արարչին դէմ:

Պաղատանքի, արցունքի, մեղմ ու վախկոտ դժգոհութեան, արտայայտուելու, պոռթկալու վախցող բողոքի, համակերպութեան, ապաշաւի⁴² եւ վիշտի անանուն խառնուրդ մը: Ամէն ոք, ամէն ընտանիք հարուածուեր էր, ճղակոտոր եղեր, եւ ամէն մարդ ու ամէն ընտանիք, տարբեր ձևով ունն առած իր խաչը, տարբեր ձևով կը խօսէր այդ խաչը իր ուսերուն կամեցողին հետ:

Բարեխօսութեան եւ օգնութեան հասնելու հրաւէր կար բոլոր մեծ ու փոքր Սուրբերուն, բոլոր Առաքեալներուն, բոլոր կոյսերուն եւ բոլոր մարտիրոսներուն: Զօրութիւննին ցոյց տալու կը հրաւիրուէին Յիսուսը, Աստուածածինը, Խաչուած Քրիստոսը, Սուրբ Գէորգը, Սարգիսը, Եղիան, Լուսաւորիչը, քարկոծուած Ստեփանոսը, Սուրբ Կոյսը, Սուրբ Յակոբը...»⁴³:

Ուրախութեան ու վշտի պահերին սրբերին ապաւինող, Տիրոջը շնորհակալութիւն յայտնող գարահիսարցիներն օգնութիւն է խնդրում Փրկչից, Աստուածամօրից ու բոլոր Սրբերից. սպանուած Գեղամի մայրը «Ո՛ր է, Աստուածածին, իմինս ո՞ւր է» անպատասխան հարցով արտայայտում է որդեկորոյս մայրերի ցաւը: Տատիկներից մէկը, թաւանուած ու կիսաւեր եկեղեցում երկար աղօթելուց յետոյ Աստծուն, որ «չտեսնելու եկեր էր ամէն բան», հարցնում-դժգոհում է. «...Այդքան ծո՞վ էր մեր մեղքը, Տէ՛ր, ինչո՞ւ հրաշք մը չցուցուցիր... Մէկ հատ, միայն մէկ հատ կը բաւէր... Այդքան ծո՞վ էր մեր մեղքը, Տէ՛ր, մենք քու ղուլդ՝ ծառագ չէինք... Զօրու-

⁴¹ Ա.ՐԱՄ ՀԱՅԿԱՋ, Մոռացուած էջեր, հտ. Ա., 2010, էջ 153:

⁴² Զղջում:

⁴³ Ա.ՐԱՄ ՀԱՅԿԱՋ, Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը, Երեւան, 2023, էջ 283:

թեանդ ղուրպան, Տէր, ինչո՞ւ անտեսեցիր մեզ, մեր վիշտը, մեր ցաւը, մեր արիւնը, մեր աղօթքը: Քու ժողովուրդդ չէ՞նք մենք, Տէր, ինչո՞ւ ուշացուցիր հրաշքդ...»⁴⁴:

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Սուրբ Ծնունդի պատկերները զուգադրում են բնութեան զարթօնքի ու գարնան հրաշքի հետ: Նիւ Եօրքի Քուլինզ արուարձան, որ Արամ Հայկազն անուանում է «մեր գիւղը», գարունը մուտք է գործում «լամբակին վրայ դեղին ծաղիկ մը ու կոնակին՝ կանաչ վերարկու», «խնդալով ու տղմուտ ոտքերը լայն բացած»⁴⁵: Յայտնում են թռչունները, խոնավ հողից բարձրացող գոլորշին օծանելիքի բուրմունք ունի: Գրողի ուշադրութիւնից չեն վրիպում «արեւդէմ պատերուն տակ» նստոտած ու փողոցի անցուդարձը քննարկող ծերունիները:

Բայց նա մտովի Բնօրրանում է, որտեղ գարունը վարուցանքի շրջան է, աղօթք է, «Հորովել» է, Զատիկ է: Ու գարնանային այս զրնգուն ուրախութեան մէջ ծնւում է կորցրածի հետ կենդանի կապի պատրանքը՝ գրողը կնոջը պատուիրում է հաւաքել սոխի կեղևը, որ Զատիկի հաւկիթները դրանով ներկեն, ինչպէս անում էին իրենց նախնիները: «Դարու մը չափ երկար ժամանակ անցած է այդ օրերէն ի վեր»⁴⁶, բայց հայ մարդը ոչինչ չի մոռացել եւ ուզում է հին օրհնութեան պէս պահել-պահպանել պապենական սովորոյթը, թէեւ ցաւով գրում է. «...ա՛յ հին հաւատացեալը չեմ...»⁴⁷:

«Մահուամբ զմահ կոխեաց եւ Յարութեամբն Իւրով մեզ զկեանս պարգևեաց...» աւետիսը Բնօրրանի Սուրբ Ծնունդի մասին առաջին կենդանի ու թրթռուն յիշատակն է, որով սկսւում են անվերջանալի յիշողութիւնները՝ գարնանային շքեղ բնապատկերներով, հողի աշխատաւորի տքնանքով, Պատարագի անկրկնելի վայելքով, ձուերի «ծեծկըռտուելու» խաղով ու նաեւ՝ խաղընկերներից մի քանիսի մեծ ու փոքր խարդախութիւններով... Ու հիմա տարիքն առած մարդը պատրաստ է «նոյնիսկ խարդախներուն, անկուշտներուն, չարերուն» տալ իր բոլոր հաւկիթները, «որովհետեւ ես զանոնք անգամ կարօտցած եմ...»⁴⁸:

⁴⁴ Անդ, էջ 281:

⁴⁵ ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ, Մոռացուած էջեր, հտ. Գ., էջ 100:

⁴⁶ Անդ, էջ 103:

⁴⁷ Անդ:

⁴⁸ Անդ, էջ 122:

ՎԱՐԴԱՎԱՌ

Քաղաքի բնակիչների սովորոյթներից էր Վարդավառի տօնակատարութիւնը Թամզարայ շէն գիւղում: «1914-ի Վարդավառը տօնուեցաւ բացառիկ շուքով»,— յիշում է Արամ Հայկազը ու պատմում, որ յաջորդ օրը կարկամած կարգացին զօրակոչի ծանուցումները, որ փակցուած էին ամէնուր. «Հայրենիքը վտանգի մէջ է, ի զէն»⁴⁹:

Հայրենիքը... Հայերը պատրաստ էին պաշտպանել իրենց պապերի Բնօրրանը ու զէնք վերցրին, բայց թուրքական բանակում հայ զինուորն անհաւատարիմ տարր էր ճանաչուել, ու թուրքական իշխանութիւնների ծանր լուծը գործում էր եւ բանակում, եւ թիկունքում:

«Խաղաղասէր ու բարի մարդ է հայրս. յեղափոխական եղած էր երիտասարդութեան օրերուն»⁵⁰,— պատմում է Արամ Հայկազը եւ յիշում, որ հայրը դէպքեր էր պատմում 1895-ի կոտորածներից ու եզրակացնում. «...այն ատեն 8–10 զոհ միայն տուինք, քանի մը օր գործի եւ առևտուրի չկրցանք նայիլ. խուժանն ու զօրքը մեր թաղերէն հեռու պահեցինք, եւ անոնք գացին իրենց անասնական վրէժը լուծեցին խեղճ Թամզարայէն... Առաջները քսանէչորս ժամէն, շատ-շատ երկու օրէն «դադրեցուցէք»-ի հրամանը կու գար, եւ հայ ժողովուրդը դուրս կու գար՝ արևուն տակ իր վէրքերը լզելու: Այս անգամ խնդիրը տարբեր ձեւ առաւ. այս անգամ պիտի կրնան մեր վզին պլլել պետութեան դէմ ապստամբած ըլլալու մեղադրանքը... Առաջ անիծուած սուլթանին ու անօթի թուրք ժողովուրդին համար հայ ժողովուրդը պտղատու ծառ էր. Կառավարութիւնն ու իր շունները կը կողոպտէին հայութիւնը, կը կտրէին ծառին ճիւղն ու պճեղը, բայց բունին կացին չէին զարներ: Այս անգամ հարցը տարբեր ըլլալ կը թուի... այս անգամ կացինը մեր արմատին ուղղուած է...»⁵¹:

Արսէն Չէքեմեանը, դժբախտաբար, չէր սխալուում...

«Վարդավառ» պատմուածքը գրողի յիշողութեան մէջ վառ գոյներով ապրող տօնակատարութեան կենդանի պատկերն է՝ Վահագնին, Արտաշէսին, Սաթենիկին նուիրուած երգերով: Այս իրական հեքիաթին հակադրում են ամերիկաբնակ մարդու ցաւոտ ապրումները՝ «ամենամօտ

⁴⁹ Ա.Ր.ԱՄ ՀԱՅԿԱԶ, Չորս տարի Քիւրտիստանի լեռներուն մէջ, էջ 137:

⁵⁰ Անդ, էջ 154:

⁵¹ Անդ, էջ 189:

հայկական եկեղեցին կառքով երեք ժամուայ ճամբայ հեռու էր մեզմէ»⁵², «Հազար փոսոս, որ Հայաստանի լեռները սրանց նման անտառապատ չեն», նաեւ՝ «մինչև Աստուածածին» խաղող շուտելու արգելքը, որին Հայրենիքում հնազանդում էին բոլորը, իսկ այս երկրում հայրենակիցներին շօրհնուած խաղող հիւրասիրող հայն իր իմացած աղօթքներով օրհնում է ամէն մի ողկոյց...

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Թէկուզ եւ երկար, երեխաների կարծիքով՝ շատ երկար սպսումից յետոյ վերջապէս գալիս էր Նոր տարին՝ աղբիւրը կաղնդելու հեքիաթային սովորութեամբ ու նարնջի անմոռանալի հոտով:

Գարահիսարցի երեխաների համար ձմռան բացառիկ հաճոյքներից էր նարինջ ուտելը. «Ձմռան ու Նոր տարիին մօտեցած օրերուն էր, որ Սեւ ծովի ափերէն մեր բքառատ լեռներն ու անանցանելի կիրճերը ճեղքող ջորիներու կոնակներով մեր քաղաքը կը հասնէին նարինջի առաջին դէզերը:

Ա՛, ինչ անուշ կը բուրէին անոնք, ինչ անուշ... Ու եթէ պատահէր՝ հատ մը, երկուք ձեռքս անցնէր անոնցմէ, օրերով կը դողայի վրանին... Բարձիս տակ կը պահէի ու շատ սիրած ընկերներուս քթին առջև բռնած՝ կը թոյլատրէի, որ հոտուըտան զայն: Ուտելն ու ուտելու համար զայն մաքրելն ալ ինքնին արարողութիւններ էին: Նախ՝ սուր ու լման ակոսներով (երանելի՛ օրեր) կեղևէն կը խածնես կտոր մը. բերանդ կը լեցուի դեղին բուրումով, յետոյ տղու աղտոտ բթամատդ կ'անցընես այդ բացուածքին մէջ ու մեծ զգուշութեամբ մը, որ միտէն ալ բան մը չփոցնես, կը կեղուես զայն: Կեղևի ամէն մէկ բեկորը կը դնես գրպանդ՝ թաշկինակդ բուրումնաւէտելու եւ, ինչ որ աւելի կարևոր է, անոնցմով ապացուցանելու ընկերներուդ, որ դուն ալ նարինջ ես կերած...»

Յետոյ կ'ուտես: Կ'ուտես՝ ըմբռնելով քիչ մը թթու ու քիչ մը անուշ այդ պտուղը, որ մեր լեռներէն անցած պահուն եթէ սառած է, դառն համ մը ունի իր մէջ: Բայց ինչ հոգ. կ'ուտես»⁵³:

Արամ Հայկազի այս խօսուոն ու յուզիչ տողերով աւարտեմ ասելիքս:

⁵² ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ, Մոռացուած էջեր, հտ. Բ., 185:
⁵³ Անդ, էջ 86:

Հ Ի Մ Ն Ա Բ Ա Ռ Ե Ր

Շապին Գարահիսարի հերոսամարտ, հարկադիր հաւատափոխութիւն, օտար միջավայր, մանկութեան ու պատանեկութեան անմոռաց յիշատակներ, հողի պաշտամունք:

РЕЗЮМЕ

Арам Айказ (Чекемян, 1900–1986), родом из Шапин Гарахисара, был одним из участников героической битвы своей Родины в 1915 году. Он был последним потомком своей семьи, и обратился в религию по принуждению матери, оказался среди турок и курдов. Арам прибыл в Нью-Йорк 28 мая 1921 года по приглашению своего сводного брата Акопа Кармиряна. Писатель жил в этой отделенной от родины океаном стране. К счастью, осенью 1969 года, в течение 21 дня в Советской Армении он имел исключительное удовольствие слышать армянскую речь на каждом шагу.

Эти разные этапы в жизни писателя дали ему богатый материал для написания, а образы Родины, неповторимая сладость детских дней, сладкие воспоминания юности, от которых была неотделима горечь боли утраты, оставались живыми.

Он описывает разные периоды своей жизни с острой памятью и ярким языком, всегда преклоняясь перед памятью ЗЕМЛИ и ее праведных земледельцев.

SUMMARY


Aram Haigaz (Chekenian, 1900–1986), born in Shabin Karahisar, was one of the participants in the heroic battle of his homeland in 1915. He was the last descendant of his family, and converted to Islam at the compulsion of his mother, ending up among the Turks and Kurds.

Aram arrived in New York on May 28, 1921, at the invitation of his half-brother Hagop Garmirian. The writer lived in this country separated from his homeland by an ocean. Fortunately, during his 21 days in Soviet Armenia in the fall of 1969, he had the exceptional pleasure of hearing Armenian speech at every turn.

These different stages in the writer's life gave him rich material for writing, and the images of the Homeland, the unique sweetness of childhood days, the sweet memories of youth, from which the bitterness of the pain of loss was inseparable, remained alive.

He described different periods of his life with a keen memory and expressive language always keeping respect towards the memory of the LAND and its righteous dwellers.





ՅԵՂԱՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՂԵԿՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՍԿԵՏ ԶՈՒՆԵՆ՝

Ի. դարում տեղի ունեցած երկու ամենամեծ ողբերգությունները՝ Հայոց ցեղասպանությունը եւ Հոլոքոստը, համաշխարհային շարիքի խորհրդանիշներ էին, որոնք մարտահրավեր նետեցին կյանքի հոգեւոր հիմքերին, կասկածի տակ դրեցին մարդու բարոյական նկարագիրը: Դրանք մոռանալն անհնար է, հիշելը՝ տառապանք, բայց եւ հրամայական՝ նորանոր աղետներից խուսափելու համար:

«Յեղասպանություն» եզրույթը 1944 թ. շրջանառության մեջ դրեց հրեական ծագումով լեհ իրավաբան պրոֆեսոր Ռաֆայել Լեմկինը: Այն համադրությունն է հունարեն «jeno» բառի, որը նշանակում է ազգություն կամ ցեղ, եւ «side» եզրի, որն առաջացել է լատիներեն «սպանել» բառից: Լեմկինի ընտանիքը հրեական Հոլոքոստի զոհերից էր, եւ այս եզրույթով նա ցանկանում էր նկարագրել ու սահմանել սպանությունների ու բռնությունների նացիստական համակարգված քաղաքականությունը, ինչպես նաեւ 1915 թ. Օսմանյան կայսրությունում հայերի դեմ իրագործված վայրագությունները:

Ցավով պիտի արձանագրենք, որ տեխնոլոգիական աննախադեպ առաջընթացի հասած ԻԱ. դարը եւս որեւէ կերպ ապահովագրված չէ մարդկության դեմ հանցագործություններից, այդ թվում՝ ցեղասպանություններից եւ զանգվածային տեղահանումներից: Ամենաթարմ օրինակը Ադրբեջանի կողմից արցախահայություն տեղահանումն է իր բնօրրանից 2023 թ. սեպտեմբերի 19-ին: Ադրբեջանական այդ վայրագությունից ամիսներ անց ամբողջ աշխարհում դեռեւս միայն Լեմկինի Յեղասպանության

* Ստացվել է՝ 11.04.2024, գրախոսվել է՝ 26.4.2023: էլ. հասցե՝ ahov1969@rambler.ru:

կանխարգելման ինստիտուտն է տեղի ունեցածը կոչել ցեղասպանություն՝ հայտարարելով նաև Հայաստանի նկատմամբ ցեղասպանության սպառնալիքի գոյություն²: Մեծ տերություններն ու միջազգային կազմակերպությունները խուսափում են այս իրադարձությունների վերաբերյալ տալ ցեղասպանության իրավական սահմանմանը համապատասխանող բնորոշումներ:

Ուստի ցեղասպանությունների ուսումնասիրությունը կարելու է խնդիր է՝ առավել հստակեցնելու դրանց բնույթը, սահմանումները, տարատեսակները: Դա գիտական հանրույթից պահանջում է միջառարկայական մոտեցում, որը ներառում է պատմական, իրավական, հասարակագիտական, մշակութաբանական եւ այլ հարթություններ: Նյութը ոչ միայն չի կորցրել գիտական արդիականությունը, այլև ունի հասարակական հնչեղություն՝ կապված Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Մարդու իրավունքների կարելու ման հետ. գաղափար, որը դարձել է Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր արժեքներից մեկը:

Այս գիտակցումով է ամբողջացվել Մոսկվայում լույս ընծայված «Հոլոքոստի եւ ցեղասպանությունների պատմություն. 20-րդ դար» (ռուսերեն) ձեռնարկը՝ Ռուսաստանի պետական հումանիտար համալսարանի պրոֆեսոր Ի. Ա. Ալտմանի խմբագրությամբ³: Այն բաղկացած է ներածությունից, ութ գլխից, սկզբնաղբյուրների եւ հանձնարարելի գրականության ցանկից:

Ձեռնարկը պատրաստվել է եբրայերեն, անգլերեն, հայերեն, գերմաներեն եւ ռուսերեն աղբյուրների եւ գիտական գրականության հենքի վրա: Այն հիմնված է Հայաստանի եւ Ռուսաստանի՝ Հոլոքոստի եւ ցեղասպանությունների պատմության մասնագետների հետազոտությունների վրա:

Առաջին գլխում՝ «Եզրաբանություն. աղբյուրներ. պատմագրություն», շարադրվում են «Ցեղասպանություն» եւ «Հոլոքոստ» եզրույթների առաջացման նախադրյալները, դրանց կիրառման սկզբունքները, առանձնահատկությունները, վերաբերելիությունը: Հոլոքոստի եւ Ի. դարի ցեղասպանությունների պատմությունը ներկայացվում է մեծ թվով աղբյուրների եւ գրականության հիման վրա:

² Տե՛ս <https://monumentwatch.org/hy/2023/09/25/>:

³ Տե՛ս История Холокоста и геноцидов: XX век, Учебное пособие для вузов, Под ред. И. Альтмана, Москва, 2022, էջ 176:

Հաջորդ գլխում՝ «ՄԱԿ-ը եւ ցեղասպանության երեւույթը», անդրադարձ է արվում 1948 թվականի դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի կողմից ընդունված՝ «Ցեղասպանության հանցագործության կանխման եւ դրա համար պատժի մասին» Համաձայնագրին (convention), որը տվել է այս հանցագործության իրավական սահմանումը՝ հիմնված Ռաֆայել Լեմկինի առաջարկած նախագծի վրա: Նախագիծը կազմվել էր 1915–1923 թվականներին հայ ժողովրդի հետ տեղի ունեցած իրադարձությունների վերլուծության հիման վրա:

Համաձայնագիրը ցեղասպանությունը սահմանում է որպես միջազգային հանցագործություն: Ցեղասպանություն են որակվում այն գործողությունները, որոնք կատարվել են ազգային, էթնիկ, ծագումնաբանական կամ կրոնական որեւէ խմբի ամբողջովին կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ:

Փաստաթուղթը սահմանում է, որ ցեղասպանությունը, լինի իրականացված խաղաղ պայմաններում թե պատերազմի ժամանակ, միջազգային իրավունքի համաձայն՝ հանցագործություն է, որի համար Համաձայնագրի կողմերը պարտավորվում են կանխարգելիչ եւ պատժիչ միջոցներ ձեռնարկել: Ցեղասպանության կանխարգելման առաջնային պատասխանատվությունը կրում է այն պետությունը, որտեղ կատարվել է հանցագործությունը:

Գրքում ամենածավալունը 3-րդ եւ 4-րդ գլուխներն են, որոնք վերաբերում են Հայոց ցեղասպանությանն ու Հոլոքոստին:

«Հայոց ցեղասպանությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» խորագրով ակնարկը պատրաստել է Երեւանի պետական բժշկական համալսարանի դոցենտ, պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող Արմենուհի Ղամբարյանը՝ Ա. Անտոնյանի մասնակցությամբ: Այս գլխում արտացոլված է առաջին հերթին նյութի լուսաբանման հայ պատմագրության փորձը: Դիտարկվել են Ցեղասպանության նախադրյալները, պատճառները, իրականացման փուլերը, հետեւանքները, միջազգային հանրության դիրքորոշումը դրա նկատմամբ եւ թուրքական ժխտողականության առանձնահատկությունները:

Ցեղասպանության նախադրյալները: ԺԹ. դարի սկզբին հայոց պատմական հողերի մեծ մասը շարունակում էր մնալ Օսմանյան կայսրության տիրապետության տակ: Հայ բնակչությունը, ինչպես քրիստոնյա մյուս ժողովուրդները, նրա իրավագուրկ քաղաքացիներն էին: 1877–1878 թթ.

առև-թուրքական պատերազմի ավարտից հետո արեւմտահայերի հարցն առանձին հողավածով առաջին անգամ դիտարկվեց խաղաղութիւն պայմանագրում եւ դարձավ միջազգային դիվանագիտութեան հարց, որը հայտնի է որպէս «Հայկական հարց»: Այն ենթադրում էր բարեփոխումների իրականացում եւ արեւմտահայերի կյանքի ու ունեցվածքի անվտանգութեան ապահովում մեծ տերութիւնների վերահսկողութեան ներքո: Սակայն բարեփոխումներ իրականացնելու փոխարեն սուլթան Աբդուլ Համիդը բացահայտորեն որդեգրեց բռնութեան քաղաքականութիւնը: ԺԹ. դարի վերջին տեղի ունեցած արյունալի շարժերի հետեւանքով սպանվեց ավելի քան 300 հազար արեւմտահայ:

1908 թվականի հունիսին Թուրքիայում տեղի ունեցավ պետական հեղաշրջում, երկրում հաստատվեց սահմանադրական միապետութիւն, եւ իշխանութեան եկան երիտթուրքերը՝ «եղբայրութեան, հավասարութեան եւ բարեկամութեան» կարգախոսներով: Սակայն շուտով երիտթուրքերը մոռացան իրենց խոստումների եւ կարգախոսների մասին: Արդեն 1909 թ. ապրիլի սկզբին նրանք Ադանայում (Կիլիկիա) կազմակերպեցին հայերի կոտորած, զոհվեց ավելի քան 30 հազար հայ:

Ի պատասխան երիտթուրքերի կամայականութիւնների՝ 1912—1914 թթ. արեւմտահայերը ազգային-ազատագրական պայքար ծավալեցին: Ամենայն հայոց կաթողիկոս Գեւորգ Ե. Սուրենյանցի գլխավորութեամբ որոշվեց դիմել եւրոպական մեծ տերութիւններին՝ խնդրելով քննել Հայկական հարցը եւ ապահովել խոստացված բարեփոխումների իրականացումը հայկական վեց վիլայեթներում:

1913 թ. Ռուսաստանի ներկայացրած բարեփոխումների նախագիծը մերժվեց: Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի երկդիմի քաղաքականութեան եւ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի եւ Իտալիայի բացահայտ հակահայկական դիրքորոշման պատճառով Հայկական հարցի քննարկումը նույն թվականի ամռանը ձախողվեց:

Յեղասպանութեան պատճառները: Հայոց ցեղասպանութիւնն Օսմանյան կայսրութեան սահմաններում պատահական չէր: Սա մանրակրկիտ մշակված ծրագիր էր, որն ուղղակիորեն բխում էր սուլթան Աբդուլ Համիդի դաժան, ազգայնական քաղաքականութիւնից եւ շարունակվում էր երիտթուրքերի կողմից: Այս պաշտոնական, պետական քաղաքականութիւնն ուղղված էր կայսրութեան բոլոր ոչ թուրք ժողովուրդների դեմ, բայց հատուկ ուժով էր իրականացվում հայերի նկատմամբ:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի սպանությունները կազմակերպվել եւ ծրագրվել էր միակ նպատակով՝ ազգը բնաջնջելու (ինչը հենց ցեղասպանություն է) եւ պատմական հայրենիքից զրկելու (հայրենասպանություն): Արդեն 1915 թ. վերջին երիտթուրքերի առաջնորդները շնորհավորում էին միմյանց հայ բնակչությունից «Թուրքիան ազատագրելու» կապակցությամբ: Նրանք հպարտությամբ հայտարարում էին, որ բառացիորեն մեկ շաբաթում ավելի շատ բան են արել, քան Աբդուլ Համիդը 30 տարի շարունակ: «Չկա հայ, չկա Հայկական հարց, չկա բարեփոխումների խնդիր, չկա եւրոպական միջամտություն Թուրքիայի ներքին գործերին»,— հայտարարում էին նրանք:

Ցեղասպանության հիմնական պատճառը երիտթուրքերի պանթուրքիստական գաղափարախոսությունն էր: Սալոնիկում երիտթուրքական «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության համագումարում որոշվել էր Օսմանյան կայսրության «բոլոր ոչ թուրք ժողովուրդների թուրքացման» մասին: Պանթուրքիստական քաղաքականության հիմնական նպատակը «մաքուր թուրքական» պետություն ստեղծելն էր (թուրքալեզու ժողովուրդների միավորում): Կոտորելով հայերին՝ երիտթուրքերը հետապնդում էին նաեւ հետեւյալ նպատակները՝ ձերբազատվել տնտեսապես իշխող ժողովրդից, որը գտնվում է թուրքերին բազմակի գերազանցող մշակութային զարգացման բարձր մակարդակի վրա, եւ միաժամանակ յուրացնել նրանց կապիտալը, ինչպես նաեւ Արեւմտյան Հայաստանի տարածքները բնիկներից մաքրելու միջոցով ապացուցել «թուրքական տեղաբնիկությունը» Հայկական բարձրավանդակում: Երիտթուրքերի ծրագրերի մեջ էր մտնում նաեւ Արեւելյան Հայաստանը եւ Պարսկաստանի սահմաններում գտնվող հայաբնակ տարածքները հայերից ազատագրելը:

Հայոց ցեղասպանության իրականացման փուլերը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հայոց ցեղասպանության իրականացումը պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլի:

Առաջին փուլ: Երիտթուրքերը Հայոց ցեղասպանության գործնական իրականացումն սկսեցին հարվածելով թուրքական բանակի հայ զինծառայողներին: Նրանց վերացմամբ հայ բնակչությունը մնում էր առանց դիմադրունակ պաշտպանների: 1914 թ. սեպտեմբեր—հոկտեմբեր ամիսներին թուրքական բանակում հայ զինվորները (60 հազար) զինաթափվեցին, տեղափոխվեցին աշխատանքային գումարտակներ, ապա (1915 թ. փետրվարին) մեկուսացվեցին եւ գնդակահարվեցին:

Հայկական բնակավայրերում զուգահեռաբար իրականացվում էր հայ քաղաքացիական բնակչության զինաթափումը: Այստեղ հիմնականում մնացել էին կանայք, ծերերն ու երեխաները: Հայերի ունեցվածքը թալանում էին, այրում տները, տղամարդկանց սպանում էին տեղերում կամ խմբերով տանում ապրելատեղիների ծայրամասեր ու գնդակահարում, կանանց բռնաբարում ու տանում հարեմներ:

Երկրորդ փուլ: Նպատակ էր դրվել հայ հասարակությանը զրկել ազգային, քաղաքական եւ հոգեւոր ուժից՝ մտավորականությունից, եւ թողնել առանց առաջնորդների, առանց ղեկավար եւ կազմակերպող մասի: 1915 թ. ապրիլի 24-ից սկսած՝ Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսում եւ այլ քաղաքներում առանց որեւէ մեղադրանքի ձերբակալվեց եւ աքսորի ենթարկվեց հասարակական եւ պետական կյանքի տարբեր ոլորտների 2500 ներկայացուցիչ՝ փաստաբաններ, ուսուցիչներ, բժիշկներ, մշակույթի, եկեղեցու, հասարակական գործիչներ, գրողներ, հրապարակախոսներ եւ անգամ Թուրքիայի խորհրդարանի անդամներ: Եզակի բացառություններով նրանք՝ բոլորն էլ, դաժանաբար սպանվեցին աքսորի ճանապարհին կամ նշանակման վայրում:

Երրորդ փուլ: Արեւմտյան Հայաստանում, Կիլիկիայում եւ Օսմանյան կայսրության այլ շրջաններում տեղի ունեցան հայերի զանգվածային ձերբակալություններ, խոշտանգումներ եւ բացահայտ սպանություններ: Երրորդ փուլի վերջին քայլը գոհերին ուժասպառության եւ վերջնական կործանման հասցնելու գործընթացում տեղահանությունն էր:

«Պետական անվտանգության» նպատակով օսմանյան իշխանությունները հրաման արձակեցին ձեռնամուխ լինել հայ բնակչության զանգվածային տեղահանմանը Օսմանյան կայսրության արեւելյան եւ հարավարեւելյան հեռավոր շրջաններ՝ Միջագետքի եւ Սիրիայի անապատներ: Սակայն իրականում հայերը տեղահանվեցին ոչ միայն ռազմական գործողությունների գոտիներից, այլեւ կայսրության ողջ տարածքից՝ բացառությամբ Կ. Պոլսի եւ Իզմիրի, որտեղ կային օտարերկրյա դիվանագիտական եւ առեստրային բազմաթիվ ներկայացուցչություններ:

Բռնի տեղահանությունն ու աքսորն սկսվեցին 1915 թ. գարնանից: Առաջին հարվածը կրկին ուղղվեց Կիլիկիայի հայերին: Մարտի վերջին Զեյթունից աքսորվեց ավելի քան 30 հազար մարդ: Տեղահանվածների միայն 10 տոկոսն էր հասնում նշանակման վայր: Նրանց մեծ մասը ճանապարհին մահանում էր սովից, ծարավից, հիվանդություններից:

Տեղահանություն եւ բնաջնջման երթուղին ավարտվում էր Դեյր էզ-Զոր, Ռաքքայի, Ռաս ուլ Այնի անապատներում: Միայն առանձին վայրերում՝ Վանում, Շատախ Շապին-Գարահիսարում, Ուրֆայում, Մուշում, Մուսա-լեռում (Կիլիկիա), հայերը կարողացան զինված դիմադրություն կազմակերպել եւ պաշտպանվել:

Հայոց ցեղասպանության հետեւանմները: 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը համազգային ողբերգություն էր՝ ճակատագրական հետեւանքներով ողջ հայ ժողովրդի համար:

— Մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմը Օսմանյան կայսրությունում ապրում էր ավելի քան 2,5 մլն հայ, որոնցից 1,5 մլն զոհվեցին պատերազմի տարիներին՝ ցեղասպանության, սովի եւ համաճարակների հետեւանքով:

— Վերջ դրվեց Թուրքիայում հայերի ժողովրդագրական ներկայությունը: Հայ ժողովուրդը կորցրեց իր հայրենիքի մեծ մասը՝ Արեւմտյան Հայաստանը, որը կազմում էր պատմական Հայաստանի 9/10-ը:

— Օսմանյան կայսրության հայկական գավառներում մնացած՝ Հայոց ցեղասպանությունը վերապրած շուրջ 250 հազար հայ (հիմնականում՝ կանայք եւ երեխաներ) բռնի կերպով թրջացվեց:

— Արեւմտահայերի ֆինանսական կորուստը կազմեց առնվազն 20 միլիարդ ֆրանկ: Օսմանյան կառավարությունը թալանված գումարից 100 միլիոն գերմանական մարկ ոսկի ուղարկեց Բեռլին: Իշխանությունները յուրացրին հայերի ավանդներն օսմանյան բանկերում, ինչպես նաեւ շարժական եւ անշարժ գույք՝ կալվածքներ, տներ, ընտանի կենդանիներ եւ այլն:

— Ոչնչացվեցին կամ յուրացվեցին հայ ժողովրդի հազարամյա պատմամշակութային արժեքները: Թալանվեց նաեւ Հայ Առաքելական Եկեղեցուն պատկանող գույքը: Պատերազմի ընթացքում թալանվեցին եւ ավերվեցին 2350 եկեղեցի եւ վանք: Ոչնչացվեցին 1500 դպրոց եւ վարժարան, ավելի քան 20 հազար հայկական ձեռագիր եւ հնատիպ գիրք: Մշակութային ցեղասպանությունը շարունակվեց նաեւ հաջորդ տասնամյակներում:

— Ողջ մնացած հայ փախստականներն ապաստան գտան աշխարհի շուրջ քսան երկրում՝ բոլոր մայրցամաքներում՝ Եւրոպայում, Ասիայում, Աֆրիկայում, Ամերիկայում՝ ձեւավորելով հայկական Սփյուռքը:

Համաշխարհային տեղությունների եւ միջազգային հանրության դիմադրությունները: Առաջին համաշխարհային պատերազմն սկսած մեծ տերու-

Թյունները տարբեր կերպ արձագանքեցին հայ ժողովրդի ցեղասպանությանը: Անտանտի գլխավոր տերությունները 1915 թվականի մայիսի 24-ի համատեղ հռչակագրում նախազգուշացրին, որ պատասխանատվության կենթարկեն թուրքական կառավարության անդամներին: Կայզերական Գերմանիան եւ Ավստրո-Հունգարիան, տեղյակ լինելով տեղի ունեցողին, գործնական քայլեր չձեռնարկեցին ցեղասպանությունը կանխելու կամ կասեցնելու համար: Ի պաշտպանություն հայերի՝ գործունեություն էր ծավալել Գերմանա-հայկական ընկերությունը՝ նախագահ Յոհան Լեփսիուսի գլխավորությամբ:

Ամերիկյան միսիոներները, որոնք գործում էին հայկական վիլայեթներում եւ Օսմանյան կայսրության այլ շրջաններում, առաջինն իրազեկեցին համաշխարհային հանրությանն այն մասին, թե իրականում ինչ է կատարվել արեւմտահայերի հետ: 1916 թ. անգլիացի իրավագետ, պատմաբան Ջեյմս Բրայսը հրատարակեց 1915–1916 թթ. Օսմանյան կայսրությունում հայերի վիճակի մասին փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու: Անգլիացի հայտնի պատմաբան Առնոլդ Թոյնբին եւս 1915 թ. աշխատություն գրեց հայերի կոտորածների մասին:

Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանությունը դատապարտեցին տարբեր երկրների հասարակական, քաղաքական եւ պետական բազմաթիվ գործիչներ՝ Ա. Ֆրանսս, Ռ. Ռոլան, Ֆ. Նանսեն, Մ. Գորկի, Վ. Բրյուսով, Վ. Վիլսոն, Հ. Մորգենթաու, Դ. Լոյդ Ջորջ, Ջ. Քերզոն, Ժ. Կլեմանսո եւ այլք: Այնուամենայնիվ՝ մարդկությունը մի քանի տասնամյակ մոռացության էր մատնել երիտթուրքերի կողմից իրականացված ոճրագործությունը:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում: Իրավական տեսանկյունից Հայոց ցեղասպանության ճանաչման առաջին լուրջ քայլը կատարել է հենց թուրքական կառավարությունը: 1918 թ. Օսմանյան կայսրության պարտությունից եւ Մուդրոսի զինադադարից հետո Անտանտի երկրները Թուրքիայի նոր կառավարությունից պահանջեցին պատժել ռազմագերիների եւ հայերի դեմ հանցագործությունների մեղավորներին:

1919–1920 թթ. Կ. Պոլսում ձեւավորվեց ռազմական դատարան, որն ապացուցված համարեց երիտթուրքերի առաջնորդների կողմից հայերի՝ կազմակերպված սպանության փաստը եւ դատից բացակայող էնվերին, Ջեմալին, Թալեաթին ու դոկտոր Նազիմին մեղավոր ճանաչեց՝ նրանց դատապարտելով մահապատժի:

Երիտթուրքերի վերնախավի դատավճիռը մնաց թղթի վրա, քանի որ դեռ 1919 թ. Հունվարին՝ դատավարության սկզբում, հիմնական մեղավորները փախել էին Թուրքիայից: Տեսնելով, որ էլ թուրքական կառավարությունը, էլ դաշնակիցները հետեւողականություն չեն ցուցաբերում այս հարցում, Հ. Յ. Դաշնակցությունը 1919 թ. որոշում կայացրեց ոչնչացնել հայերի սպանություններին մեղսակից ու մասնակից երիտթուրք առաջնորդներին:

Գործողությունը կոչվեց «Նեմեսիս»՝ վրեժխնդրության հին հունական աստվածուհու անունով: Այն ղեկավարելու համար կազմակերպվեց պատասխանատու մարմին (ղեկավար՝ ԱՄՆ-ում Հայաստանի Հանրապետության դեսպանորդ Արմեն Գարո) եւ հատուկ հիմնադրամ (ղեկավար՝ Շահան Նաթալի):

Թալեաթ փաշան հայտնաբերվեց եւ սպանվեց 1921 թ. մարտին Բեռլինում՝ Սողոմոն Թեհլիրյանի կողմից, որն այնուհետեւ արդարացրեց գերմանական դատարանը: 1921–1922 թթ. սպանվեցին նաեւ Սահղ Հալիմ փաշան, Ջեմալ Ազմին, Բեհաէդդին Շաքիրը, Ջեմալ փաշան, էնվերը: Ավելի ուշ (1926 թ.) Հանրապետական Թուրքիայում հակաքեմալական շարժմանը մասնակցելու համար կախաղան հանեցին Նազիմին: Այսպիսով՝ ի կատար ածվեց ցեղասպանության գլխավոր մեղավորների դատավճիռը:

Ի. դարի 80-ական թվականներից սկսած՝ Հայոց ցեղասպանությունը դարձել է միջազգային ամենաքննարկվող հարցերից մեկը: Օսմանյան կառավարության կողմից դրա իրականացման փաստը ճանաչվել է աշխարհի ավելի քան 30 երկրի օրենքերով, բանաձեւերով եւ որոշումներով, բազմաթիվ միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ Եւրախորհրդարանի (1987 թ.) կողմից:

Հայոց ցեղասպանության ժխտում: Թուրքիայի Հանրապետությունը ոչ միայն չի ճանաչում պատմական փաստերը, այլեւ պետական մակարդակով վարում է Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականություն: Ինչպես արդարացիորեն նշել է անվանի ցեղասպանագետ Գ. Սթենթոնը⁴, ցեղասպանության ժխտումը ցեղասպանության վերջին փուլն է, այսինքն՝ դրա շարունակությունը:

Թուրքական կառավարությունը միջազգային ասպարեզում գործուն քայլեր է ձեռնարկում նոր երկրների կողմից ճանաչման ու դատա-

⁴ Տե՛ս GR. H. STANTON, Ten Stages of Genocide. <http://www.genocidewatch.org/genocide/tenstagesofgenocide.html>

պարտման բանաձևերի ընդունումը կանխելու նպատակով: Թուրքիայի ղեկավար շրջանակները նախկինում որդեգրած Հայոց ցեղասպանութիւնի մոռացութեան քաղաքականութիւնից անցել են ժխտողականութեան քաղաքականութեան:

Այսօր թուրք, ինչպէս նաեւ եւրոպացի եւ ամերիկացի որոշ հետազոտողներ (որոնք դա անում են նաեւ ոչ անվարձահատույց), խեղաթյուրելով պատմական անցյալը, առաջ են քաշում մեկնաբանութիւններ, որոնք, ընդհանուր առմամբ, համահունչ են Հայոց ցեղասպանութեան ժխտման հակազիտական պատմագիտական ուղղութեան հիմնադիրների թեզերին:

Առաջին հերթին նպատակ է դրվում բացառել քրեական դիտավորութեան հանգամանքը, ինչ թույլ կտա ժխտել ցեղասպանութեան իրողութիւնը: Թուրք պատմաբանների բարձրացրած ապատեղեկատվութեան ալիքը ներկայացնում է «երեւակայական ցեղասպանութեան» պատճառների եւ իրադարձութիւնների թուրքական տարբերակը:

Թուրքական «հայեցակարգի» գլխավոր բաղադրիչն արդեն ավանդական դարձած «հայերի դավաճանութեան եւ զինված ապստամբութեան» մասին թեզն է: Այստեղ միահյուսված են նախկինում հայերին արդեն ներկայացված երկու մեղադրանքները՝ Օսմանյան կայսրութեան դավաճանութիւնն ու Ռուսաստանի կողմն անցնելը եւ զինված ապստամբութեան նախապատրաստումը:

Այսօր թուրքական պատմագրութիւնը նաեւ փորձում է ապացուցել, որ հայերը եկվորներ են, այլ ոչ թե տարածաշրջանի բնիկներ եւ երբեք ինքնուրույն պետականութիւն չեն ունեցել: Սրա նպատակն է չեզոքացնել ցեղասպանութեան ամենագլխավոր հետեւանքներից մեկը՝ հայրենագրկումը:

Ժխտման «հայեցակարգի» հիմնական մասից բխում է երկու դրույթ՝ «ազգամիջյան բախումներ» եւ որպէս հետեւանք՝ «հայերի վերաբնակեցում»:

Նշենք, որ պետութեան հովանավորութեան եւ ֆինանսավորման շնորհիվ այս հայեցակարգն այնքան է կատարելագործվել, որ աշխարհին ներկայացվում է որպէս ճշմարտանման, արտաքուստ համոզիչ եւ տրամաբանական: Պատմական «իրականութեան» միակողմանի (թուրքական) ներկայացման դեպքում նման «հայեցակարգը», եթե չհերքվի, հեշտութեամբ կարող է մոլորութեան մեջ գցել միջազգային հանրութեանը:

Գրքում ուշագրավ մի դիտարկում է արվում այն մասին, որ Հայոց ցեղասպանութիւնից բացի՝ ցեղասպանութիւն են որակվում նաեւ Առա-

ջին համաշխարհային պատերազմի տարիներին եւ անմիջապես հետո Օսմանյան կայսրությունում քրիստոնյա այլ ժողովուրդների (հույների եւ ասորիների, ինչպես նաեւ եզդիների) զանգվածային սպանությունները: Սակայն թեեւ մի շարք պետություններ այդ ջարդերը ճանաչել են ցեղասպանություն, համաշխարհային մակարդակով դրանք որպես ցեղասպանություն դեռ լիարժեքորեն չեն ճանաչվել:

«Հոլոքոստը որպես ցեղասպանության ձև» խորագրի ներքո պարզաբանվում է, որ «Հոլոքոստ» եզրույթն առաջացել է հին հունարեն «հոլոկոստիս» բառից, որը բառացի նշանակում է «ողջակիզում» եւ կիրառվում է 1933–1945 թվականներին նացիստական Գերմանիայի, նրա դաշնակիցների եւ աջակիցների կողմից հրեաների հետապնդման եւ ոչնչացման քաղաքականության առնչությամբ, որին զոհ գնաց շուրջ վեց միլիոն եւրոպացի հրեա՝ Եւրոպայի հրեա բնակչության մոտավորապես երկու երրորդը: Իսրայելական պատմագրության մեջ կիրառվում է երբայեցերեն «շոա» (աղետ) եզրը:

1933-ին Գերմանիայում ապրում էր 566 հազար հրեա: Դա ազգային ամենախոշոր փոքրամասնությունն էր երկրում, որի ներկայացուցիչները նշանակալի դեր ունեին Գերմանիայի քաղաքականության, գիտության, մշակույթի եւ այլ ոլորտներում: Մինչեւ Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը գերմանական հրեաներն օրենսդրական մակարդակով զրկվեցին զրեթե բոլոր իրավունքներից՝ ազգային խտրականության բոլոր դրսեւորումներով: 1938 թ. ճնշումներն արդեն գործնական բնույթ ստացան: Հրեաների սպանության մեկնարկը տրվեց նոյեմբերի 9–10-ի, այսպես կոչված, «Բյուրեղապակյա գիշերվա» դեպքերից սկսած: 1939 թ. հունվարի 30-ին Ռայխստագի նիստում Հիտլերը հայտարարեց, որ Եւրոպայում չի հաստատվի հավասարակշռություն, եթե չլուծվի հրեական հարցը: Նացիստներն օգտագործում էին «հրեական հարցի համապարփակ» եւ «վերջնական լուծում» հասկացությունները: Առաջինի դեպքում նրանք հասկանում էին Գերմանիայից հրեաների ամբողջական վտարումը: Երկրորդի ներքո նկատի ունեին հրեա ժողովրդի համատարած ոչնչացումը:

Սկսած 1933 թվականից՝ նացիստները Գերմանիայում կառուցեցին համակենտրոնացման ճամբարների ցանց՝ քաղաքական հակառակորդների ու «անցանկալի» համարվող մարդկանց համար: 1939 թ.՝ Լեհաստան ներխուժումից հետո, վարչակարգն ստեղծեց գետտոներ՝ հրեաներին մեկուսացնելու համար: Հիմնադրվեցին ավելի քան 42 հազար ճամբար,

գետտո եւ այլ կալանավայրեր: Հրեաների տեղափոխումը գետտոներ նացիստների կողմից իրականացվող ոչնչացման քաղաքականության հանգուցալուծումն էր, որը կոչվեց «Հրեական հարցի վերջնական լուծում» եւ քննարկման դրվեց նացիստական բարձր պաշտոնյաների կողմից 1942 թվականի հունվարին Բեռլինում կայացած Վանզեի համաժողովում: Գերմանական զորքերի՝ դեպի արեւելք շարժվելուն զուգահեռ՝ հակահրեական գործողությունները դարձան ավելի արմատական: ՍՍ-ի համակարգմամբ եւ նացիստական կուսակցության առաջնորդների հրահանգներով սպանություններ են իրականացվում Գերմանիայի տարածքում, նրա կողմից բռնազավթված Եւրոպայում եւ Առանցքի ուժերի կողմից վերահսկվող բոլոր տարածքներում: Մինչեւ 1942 թվականի կեսերը զոհերը բեռնատար գնացքներով գետտոներից տեղափոխվեցին մահվան ճամբարներ, որտեղ կենդանի մնացածներն սպանվեցին գազի խցիկներում:

Հոլոքոստի տարիներին Գերմանիայում ոչնչացվեց 145 հազար հրեա: Մոտ երեք միլիոն հրեա սպանվել է բռնազավթված Լեհաստանում, 700 հազարից մինչեւ 2,5 միլիոն հրեա՝ Խորհրդային Միության գրավյալ տարածքներում: Հարյուր հազարավոր հրեա էլ ոչնչացվել է Եւրոպայի մնացած տարածքներում:

Այս գլխում խիստ ուշագրավ զուգահեռում է կատարվում Հայոց ցեղասպանության եւ Հոլոքոստի միջեւ, վեր են հանվում երկուսի նմանություններն ու առանձնահատկությունները:

Երկու հնագույն ժողովուրդների՝ հայերի եւ հրեաների նպատակային զանգվածային ոչնչացումը, համապատասխանաբար, Առաջին եւ Երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ, տեղի է ունեցել Օսմանյան կայսրությունում եւ Գերմանիայում, ինչպես նաեւ նրա կողմից գրավված պետությունների տարածքներում:

Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Հոլոքոստի իրագործմանը նպաստել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արեւմտահայերի նկատմամբ իրականացված հանցագործության անպատժելիությունը:

Հայտնի է Հիտլերի՝ 1939 թվականի օգոստոսին գերմանական բանակի հրամանատարության հետ հանդիպման ժամանակ արած արտահայտությունը. «Ով է այսօր հիշում հայերի բնաջնջման մասին»:

Եւ Հայոց ցեղասպանությունը, եւ Հոլոքոստը Ի. դարի զանգվածային մյուս կոտորածներից տարբերվում են նախ եւ առաջ իրենց երկար նախա-

պատմությունը: Հայերն ու հրեաները, համապատասխանաբար, Թուրքիայում եւ Եւրոպայի տարբեր պետություններում դարեր շարունակ եղել են ազգային եւ կրոնական փոքրամասնություններ եւ ունեցել հպատակ քաղաքացիների կարգավիճակ: Եթե հայերն իրենց հայրենիքի տարածքում հպատակների են վերածվել թուրքական նվաճումների պատճառով, ապա հրեաներն այդ վիճակում են հայտնվել մշտական վերաբնակեցման հետեւանքով: Երկու ժողովուրդներն էլ ենթարկվել են խտրականության տարբեր ձևերի: Վերջիններիս գումարվում էր նաեւ կրոնական առկա թշնամանքը, որի պայմաններում հակահայկական եւ հակահրեական հետապնդումներն ավելի էին սաստկանում: Առաջին եւ երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ իթիհադականները (երիտթուրքերը) եւ նացիստները հաշվի են առել եւ օգտագործել նախկինում իրագործված հակահայկական եւ հակահրեական քաղաքականության ժառանգությունը: Նրանց գործունեության հիմքում քաղաքական գաղափարախոսություններն էին՝ համապատասխանաբար պանթուրքիզմն ու նացիոնալ-սոցիալիզմը, որոնց, ըստ էության, բնութագրական է ցեղասպանական բովանդակությունը:

Երկու գաղափարախոսություններն էլ մեծ կարեւորություն էին տալիս էթնիկապես միատարր կայսրության ստեղծման գաղափարին: Դրանց բնորոշ էր երեւակայական կայսրություններ ստեղծելու ձգտումը: Պանթուրքիզմի դեպքում այն արտահայտվում էր Մեծ Թուրանի գաղափարով, որը պետք է տարածվեր մինչեւ Հեռավոր Արեւելք՝ համախմբելով բոլոր թյուրքալեզու ժողովուրդներին: Նացիստական կայսերական նկրտումներն արտացոլվում էին «Լեբենսստրաումի» կամ «կենսատարածքի» ծավալապաշտական քաղաքականության մեջ, որի տիրույթները ձգվում էին Արեւմտյան Եւրոպայից մինչեւ Ուրալ:

Հայոց ցեղասպանության եւ Հոլոքոստի իրականացման համար նպաստավոր գործոններ էին համաշխարհային պատերազմները, որոնց թոհում հարմար էր իրագործել հանցավոր ծրագրերը՝ այդ թվում խաղաղ բնակչության զանգվածային ոչնչացումը: Երկու ցեղասպանությունների գաղափարախոսները համապատասխանաբար հայերին եւ հրեաներին օգտագործել են «ներքին թշնամու» կերպար ստեղծելու համար: Երիտթուրքերն իրենց քարոզչության մեջ հայերին նույնացնում էին թշնամական քրիստոնեական երկրների՝ մասնավորապես Ռուսաստանի հետ: Եւ հայերին մեղադրում էին «դավաճանություն» եւ «թիկունքից հարված» հասցնելու ցանկության մեջ:

Ի տարբերություն հայերի՝ հրեաներին վերագրվում էին ավելի համընդհանուր «մեղադրանքներ», ինչպիսիք են՝ «վտանգ ամբողջ Եւրոպայի համար, համաշխարհային աղետի աղբյուր, չարի մարմնացում...»: Նացիստները հայտարարում էին, որ բոլշեւիկյան Ռուսաստանը դեկավարվում է հրեաների կողմից, ուստի իրենց պայքարը Եւրոպայի հրեականության դեմ պայքար է «հրեա-բոլշեւիկյան» խորհրդային Միության դեմ:

Երկու ցեղասպանությունների կարեւոր ընդհանրություններից էր երիտթուրքերի եւ նացիստների կողմից իրենց զոհերի դեմ իրականացված գործուն քարոզչությունը: Դրանով հող էին նախապատրաստում հայերի եւ հրեաների մեկուսացման, տեղահանման եւ վերջապես՝ բնաջնջման համար:

Խոսելով Հայոց ցեղասպանության եւ Հոլոքոստի իրականացման ընթացքում կիրառված զանգվածային սպանությունների տարբեր եղանակների մասին՝ հարկ է նշել, որ տարբերությունները պայմանավորված են առաջին հերթին տնտեսական եւ գիտատեխնիկական զարգացման տարբեր մակարդակներով: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայերի ոչնչացումը տեղի է ունեցել շատ դեպքերում սառը զենքի միջոցով: Գնդակահարությունների հազվագեպ կիրառվող միջոցը մի տեսակ «շքեղություն» էր հայերի համար: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նացիստները նախապատվությունը տալիս էին ավելի արդյունավետ կերպին՝ գազային խցիկներին:

Այնուամենայնիվ, երիտթուրքերը, սպանելով հայերին, կանգ չէին առնում սպանության միջոցների կատարելագործման առաջ: Հայերին սպանում էին ողջակիզելով, ուժանակով պայթեցնելով եւ այլն: Կիրառվել են նաեւ գազի խցիկների նմանություններ, օրինակ՝ մարդկանց փակ տարածքներում խեղդելը մեծ կուտակումների հետեւանքով:

Եկեղեցիներում, տներում կամ քարանձավներում փակված հարյուր հազարավոր հայեր խեղդվել են վառվող չոր կամ խոնավ ծղոտի ծխից: Գերմանական պահոցներում վերջերս հայտնաբերված աղբյուրները վկայում են նաեւ հայերի բնաջնջման համար գազի խցիկների օգտագործման մասին:

Երկու ցեղասպանությունների դեպքում էլ զանգվածային բնաջնջման միջոցների շարքում տեղ էին գտել ծովերի եւ մեծ գետերի ջրերում մարդկանց խեղդելը, արհեստականորեն կազմակերպված սովի եւ վա-

րակիչ հիվանդությունների միջոցով ոչնչացնելը: Հարկ է նշել, որ թուրք բժիշկները քառորդ դարով առաջ են անցել իրենց գերմանացի գործընկերներից. բժշկական փորձերի են ենթարկվել երիտասարդ, առողջ հայ կանայք, երեխաներ:

Որոնք են հիմնական տարբերությունները Հայոց ցեղասպանության եւ Հոլոքոստի միջեւ:

Հիմնական տարբերությունը հրեա ժողովրդին ամբողջովին ոչնչացնելու աննախադեպ ծրագիրն է: Հրեաներին չեն փրկել ո՛չ կրոնափոխությունը, ո՛չ էլ Գերմանիայի սահմաններից դուրս ապրելը: Նրանք ենթարկվել են հատուկ գետտոյում գրանցման, նույնականացման եւ տարանջատման: Նրանց ոչնչացման համար կառուցվել են մահվան ճամբարներ:

Անվիճելի տարբերությունն արդարադատության եւ մեղքի ճանաչման հարցն է: Եթե Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ողջ աշխարհը դատապարտեց նացիստների ոճրագործությունները, ապա Հայոց ցեղասպանությունից հետո հանցագործները մնացին անպատիժ, աշխարհի մեծ մասը լռեց, իսկ Թուրքիան մինչ օրս շարունակում է ժխտել ցեղասպանության փաստը:

Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ գլխավոր տարբերությունը Հոլոքոստից հայրենիքի գործոնն է. հայերին ոչնչացրել են պատմական հայրենիքում, որից 9/10-ով զրկվել են հենց ցեղասպանության հետեւանքով: Հայերին փոխհատուցելու իրավունքը դեռ չի ճանաչվել:

Հինգերորդ գլխում հանգամանալի քննվում է գնչուների ցեղասպանությունը: Գերմանիայում նացիստական կուսակցության հաղթանակը լրջագույն սպառնալիք դարձավ ոչ միայն հրեաների, այլեւ գնչուների համար: Հիտլերի իշխանության գալու ժամանակ Գերմանիայում գրանցված էր մոտ 30 000 գնչու:

1936 թվականին Բեռլինում կայացած ամառային օլիմպիական խաղերի ժամանակ նրանց վտարեցին մայրաքաղաքից: 1938-ին գնչուներին զանգվածաբար աքսորեցին համակենտրոնացման ճամբարներ: 1943-ին շուրջ 23 000 գնչու բանտարկվեց Աուշվիցի առանձնացված ճամբարում: Բանտարկյալների մի մասին ուղարկում էին այլ ճամբարներ, իսկ հետո վերադարձնում՝ ոչնչացնելու նպատակով: Ճամբարը գոյատևեց մոտ մեկ տարի: Կալանավորների զգալի մասը մահացավ սովից եւ հիվանդություններից: Մյուսներին ոչնչացրին գազախցիկներում: Վերջին խումբը մահկանացուն կնքեց 1944-ի աշնանը:

Ընդհանուր առմամբ՝ նացիստական տիրապետության ժամանակահատվածում Երրոպայում եւ նախկին գրավյալ տարածքներում զոհվեց 200 000—500 000 գնչու՝ այդ թվում ԽՍՀՄ գրավյալ տարածքում՝ 30 000-ից 50 000:

Գնչուների ցեղասպանությունը Գերմանիայում ճանաչվեց 1982 թվականին, որից հետո ճանաչեցին նաեւ այլ երկրներ: Հայդելբերգի համալսարանում ստեղծվեց այդ ողբերգության ուսումնասիրության կենտրոն: Հիշատակի օրն աշխարհի շատ երկրներում նշվում է օգոստոսի 2-ին: Այն նվիրված է 1944 թվականին Աուշվիցում գնչուական ճամբարի ոչնչացման տարելիցին:

Գրքում զգալի տեղ է հատկացված նաեւ Ռուանդայում եւ հարավսլավական նախկին Սրբերենիցայում կատարված ցեղասպանություններին (գլուխ 7 եւ 8):

Գրքի ութերորդ գլուխը նվիրված է Հայոց ցեղասպանության եւ Հոլոքոստի վերաբերյալ գեղարվեստական-գեղագիտական արձագանքներին Ի. դարում եւ ԻԱ. դարասկզբին:

Հայոց ցեղասպանության արհավիրքին գեղարվեստի հարթությունում արձագանքող առաջին ստեղծագործողներից էր ռուս բանաստեղծ Վալերի Բրյուսովը, որը կազմեց եւ 1916 թ. ընթերցողի սեղանին դրեց «Հայաստանի պոեզիան»⁵ ժողովածուն: «Անհրաժեշտ են համաշխարհային աղետներ, թուրքական կոտորածի անօրինակ սարսափներ կամ մի ողջ ազգի վայրի հալածանքը (ինչպես եղավ, օրինակ, ներկայիս մեծ պատերազմի սկզբին), որ մենք կրկին ուշադրություն դարձնենք «բազմաչարչար ժողովրդի» հետ կատարված աղետին: Մենք՝ ռուսներս, ինչպես նաեւ ողջ Երրոպան, հայերին հիշում ենք միայն այն ժամանակ, երբ օգնության ձեռք է պետք՝ փրկելու նրան սուլթանի գազազած հորդանների բնաջնջումից: Մինչդեռ հայերն առավել մեծ իրավունք ունեն մեր եւ ողջ աշխարհի ուշադրությանն արժանանալու համար. դա այն բարձր մշակույթն է, որ հայ ժողովուրդն ստեղծել է իր ինքնուրույն գոյատեւման բազում դարերի ընթացքում, եւ այն բացառիկ հարուստ գրականությունը, որ Հայաստանի ավանդն է մարդկության գանձարանում»⁶,— առաջաբանում արձանագրում է Արծաթե դարի նշանավոր բանաստեղծը:

⁵ Տե՛ս В. Я. Брюсов, Пoesия Армении, Ереван, 1966:

⁶ Նույն տեղում:

Հայոց բանաստեղծությունը համարելով ազգի «ազնվականության վկայական», հայ ժողովրդին էլ՝ «բանաստեղծ ժողովուրդ»՝ Վ. Բրյուսովը շեշտում էր հայոց բանաստեղծական ժառանգության համաշխարհային արժեքն ու հնչեղությունը, մի հանգամանք, որ գրականից բացի՝ իր ժամանակի համար հայտնի չափով ուներ նաև քաղաքական կարեւորություն: Ժողովածուի շապիկը եւ ճակատանկարը պատկերազարդարել են Վ. Սուրենյանցն ու Մ. Սարյանը՝ հայ մանրանկարչության օրինակով եւ ոճով:

Ի. դարասկզբին Հայոց ցեղասպանության թեմային անդրադարձել են Վլադիմիր Նեմիրովիչ-Դանշենկոն, Սերգեյ Գորոդեցկին, Վլադիմիր Սոլովյովը եւ այլք: Հայոց ցեղասպանության մասին գրական ամենահայտնի ստեղծագործությունն ընդունված է համարել Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը, որը հրատարակվել է 1933 թվականին. այն նացիստական իշխանությունների կողմից հայտարարվել է «ոչ ցանկալի»: Կուրտ Վոննեգուտը 1988 թվականին գրել է «Կապույտ մորուս» հորինված պատմությունը, որի բովանդակության առանցքային բաժիններից մեկը վերաբերում է Հայոց ցեղասպանությանը: Այս նյութին է անդրադարձել նաև էդգար Հիլզենրաթը 1989 թվականին իր «Վերջին մտքի հեքիաթը» եռամաս վեպում, որի համար արժանացել է Ալֆրեդ Դոբլինի մրցանակի: Ռիչարդ Կալինովսկին գրել է «Նուսնային հրեշ» թատերգությունը, որը պատմում է երկու մարդկանց մասին, որոնք վերապրել են Հայոց ցեղասպանությունը:

Մեծ եղեռնը մշտապես եղել է հայ պոեզիայի ու արձակի երեւելիների գրչի նյութը՝ Հ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Վ. Տերյան, Ե. Չարենց, Հ. Շիրազ, Պ. Սեւակ, Վ. Դավթյան, Հ. Սահյան, Ս. Կապուտիկյան, Գ. Էմին, Զ. Եսայան, Ավ. Ահարոնյան Դ. Դեմիրճյան, Ա. Բակունց, Խ. Դաշտենց, Մ. Գալշոյան, Ստ. Ալաջաջյան, Վ. Փափագյան եւ այլք:

Ի. դարում եւ ԻԱ. դարասկզբին մշակույթի այլ ճյուղերում եւս ստեղծվեցին Հայոց ցեղասպանության թեմատիկան արտացոլող գործեր:

Հայոց ցեղասպանության մասին առաջին շարժանկարը եղել է «Հոգիների աճուրդը» (1919), որից պահպանվել է 15 բոպեանոց մի հատված: Ցավոք, Հայոց ցեղասպանության մասին փաստագրական շարժանկարների քանակը խիստ սակավ է: Օսմանյան կայսրության գրաքննությունն արգելում էր լուսանկարել հայերի տեղահանումը եւ սպանողը: Ռազմական գործողությունների վայրերում լրագրողների ազատ տեղաշարժը սահմանափակված էր: Այդուհանդերձ՝ որոշ քանակությամբ լուսանկարներ,

որոնք արել էին քրիստոնյա քարոզիչները եւ գերմանացի մասնագետները, հասել են Արեւմուտք: Ամենահայտնի լուսանկարները հեղինակներն են Կարմիր խաչի աշխատակից, գերմանացի մարդասեր Արմին Վեգները եւ ԱՄՆ-ի հյուպատոս Լեսլի Դեւիսը: Յեղասպանության մասին առաջին փաստագրական շարժանկարը եղել է «Որտեղ է իմ ժողովուրդը» ֆիլմը (պրոդյուսեր՝ Մայքլ Հակոբյան), որը մեծ էկրան է բարձրացել 1965 թվականին՝ Մեծ եղեռնի 50-ամյակի առթիվ: 1976 թվականին ցուցադրվել են «Մոռացված ցեղասպանություն» եւ «Հայկական նախադեպ» շարժանկարները: Ի.—ԻԱ. դարերի ընթացքում նկարահանվել է փաստագրական մի քանի գործ, որոնցից ամենահայտնին եղել է «Թաքնված Հոլոքոստը»: 2000 թվականին նկարահանված «Ձայներ լճից» շարժանկարը ներկայացնում էր Հայոց ցեղասպանության խնդիրը թուրքական ոչ մեծ շրջանի օրինակով, որտեղ իրադարձությունները նկարագրվում էին ականատեսների աչքերով: «Գերմանիան եւ ցեղասպանության գաղտնիքները» (2003 թ.) շարժանկարն ուսումնասիրում էր Հայոց ցեղասպանության եւ Բեռլին—Բաղդադ երկաթուղու աշխատանքի միջեւ կապը: Թուրքիան խոչընդոտում է ցեղասպանության վերաբերյալ շարժանկարների նկարահանման գործընթացը: ԱՄՆ-ի պետքարտուղարության վրա Թուրքիայի ազդեցության պատճառով Մետրո-Գոլդուին-Մայեր ընկերությունը մի քանի անգամ կասեցրել է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի հիման վրա համանուն շարժանկարի նկարահանումը: Հայոց ցեղասպանության որոշ տեսարաններ ցուցադրվել են էլիա Կազանի «Ամերիկա, Ամերիկա»-ում: Հայոց ցեղասպանության մասին առաջին գեղարվեստական կտավը «Մայրիկն» է, որը 1991 թվականին նկարահանել է Ֆրանսուազ Լեժանդրը Անրի Վերնոյը: Յեղասպանության նյութն արժարժվում է նաեւ Դոն Ասկարյանի «Կոմիտաս» (Գերմանիա) եւ Հենրիկ Մալյանի «Նահապետ» (ՀԽՍՀ) շարժանկարներում: Նույն նյութին է նվիրված նաեւ Ատոմ էգոյանի «Արարատ» շարժանկարը (2002)[7]: Իտալացի հայտնի ռեժիսորներ Վիտորիո եւ Պաոլո Տավիանինները Անտոնիա Արալանի համանուն գրքի հիման վրա նկարահանել են «Արտույտների ազարակը»: Այն մեծ էկրան է բարձրացել 2007 թ.: 2014 թ. թուրք ռեժիսոր Ֆաթիհ Աքընը Վենետիկի կինոփառատոնի ժամանակ առաջին անգամ ներկայացրել է իր «Սպի» գործը, որը նվիրված էր Հայոց ցեղասպանության 100-ամյակին եւ իր տեսակի մեջ առաջին ֆիլմն է, որ ցուցադրվել է Թուրքիայում: 2015 թվականին հայկական Ման փիքշըրս կինոստուդիան նկարահանել է

«Փրկության քարտեզ» փաստագրական շարժանկարը, որը նվիրված էր Յեղասպանության 100-ամյակին: Ֆիլմը պատմում է եւրոպացի հինգ կին քարոզիչների մասին, որոնք դարձել էին Հայոց ցեղասպանության ակա-նատես եւ հիմնել մահվանից հրաշքով փրկված կանանց եւ երեխաների խնամքի կենտրոններ:

Յեղասպանությունը՝ որպես ցավի եւ պատմական ինքնագիտակց-ման աղբյուր, արտացոլվել է հայկական երգարվեստում՝ այդ թվում նաեւ երաժշտության մեջ: «Հայկական երաժշտության հայր» երգահան Կոմիտասի երաժշտական ժառանգության մեծ մասը շի փրկվել: Սակայն պահպանված երգերն էլ արտացոլում անմարդկային ողբերգության ողջ խորությունը:

Յեղասպանության վերաբերյալ բանավոր պատմություններն ար-տացոլվում են երգերում, որոնց մեծ մասը ներկայացված են Վերժինե Սվազյանի «The Armenian Genocide in the Memoirs and Turkish Language Songs of Eye-Witness Survivors» ձայնագրությունների փաթեթի մեջ: Վերլուծելով երգերը՝ Սվազյանը նշում է, որ այդ երգերն ստեղծվել են պատմական իրադարձությունների անմիջական ազդեցությամբ, ու թեեւ երգերի մի մա-սը թուրքերեն է, նրանք ունեն հայկական ծագում: Երգերի մեջ ամրագր-ված բանավոր ավանդույթը Յեղասպանության ապացույցներից մեկն է:

Ամերիկյան «System of a Down» ռոք խմբի երաժշտացանկում հաճախ քննարկվում է ցեղասպանության նյութը:

Ամերիկացի կոմպոզիտոր եւ երգիչ Դանիել Դեբերը, համագործակ-ցելով կոմպոզիտոր Արա Գեւորգյանի հետ, գրել է «Ադանա» երգը, որը նվիրված է Ադանա քաղաքում տեղի ունեցած կոտորածին:

Հայ կերպարվեստում եւս հայտնի են եղեռնին վերաբերող ստեղծա-գործություններ: Արեւմտյան Հայաստանում հայերի ջարդերին են նվիր-ված Վարդգես Սուրենյանցի «Ոտնահարված սրբություն» (1895), «Ջարդից հետո» (1899) կտավները: Արշիլ Գորկին իր կտավների մեծ մասը նկա-րել է վերապրած իրադարձությունների ազդեցությամբ: Նրա նշանավոր «Նկարչի եւ նրա մոր դիմանկարը» կտավը ռեժիսոր Ատոմ Էգոյանի «Արա-րատ» շարժանկարում կարեւոր տեղ է զբաղեցնում:

Հայ ճարտապետության յուրօրինակ գլխուգործոց դարձավ Երեւանի Ծիծեռնակաբերդի բարձունքում վեր խոյացած՝ Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրը (1967 թ., ճարտարապետներ՝ Արթուր Թարխա-նյան եւ Սաշուր Քալաչյան): Հուշահամալիրն զբաղեցնում է 4500 քմ տա-

րածք եւ բաղկացած է երեք հիմնական կառույցից՝ Հուշապատ, Հավերժության տաճար՝ անմար կրակով, «Վերածնված Հայաստան» հուշասյուն: 1995 թ. ապրիլին՝ Հայոց ցեղասպանության 80-րդ տարելիցին, հուշահամալիրում բացվել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը (ճարտարապետներ՝ Սաշուր Քալաշյան, Լյուդմիլա Մկրտչյան, քանդակագործ՝ Ֆերդինանդ Առաքելյան):


Տեղին է նշել, որ աշխարհի տարբեր անկյուններում տեղադրված են մեծ թվով խաչքարեր՝ ի հիշատակ Մեծ եղեռնի անմեղ զոհերի:

* * *

Քաղաքակիրթ մարդկության պարտքն է մշտապես բարձրաձայնել ճշմարտությունը եւ հիշեցնելով ու դատապարտելով կատարված հանցագործությունները՝ կանխարգելել ապագա ոճիրները:

Խնդրո առարկա ձեռնարկը, անշուշտ, նման ջանքի օրինակ է՝ հույժ դրվատելի եւ ուսանելի, քանզի ի մի բերված փաստերն ու փաստարկները մարդկության պատմության մեծագույն ոճրագործությունների՝ ցեղասպանությունների վերաբերյալ կարեւոր կռվան են դառնում հասարակական-քաղաքական խոսույթում այս նյութին վերաբերող քննարկումների ժամանակ:

ԱՐՄԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, ԵՊՀ



СОДЕРЖАНИЕ

В ожидании Мецатуняна. *От редакции*. 5

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Послание **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО
ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН**, по случаю Дня памяти
свв. мучеников Геноцида армян 11

ПРОПОВЕДИ

Проповедь **АРХИЕПИСКОПА ВАЗГЕНА МИРЗАХАНЯНА**,
произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне 13

РЕЛИГИОВЕДЕНИЕ

МЕХАК АЙВАЗЯН — Проблема восприятия монашеского образа жизни
в рамках деятельности Нарекаванка 17

АРЕГ ВАРДАНЯН — Размышления Мхитара Гоша о первичной
свободе человека и становление архимандритской ступени
в средневековой Армении 26

АВЕТИС КАЛАШЯН — Его Святейшество Гарегин II, Верховный Патриарх
и Католикос Всех Армян и школы армянской диаспоры. 36

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

АСМИК БАДАЛЯН — Монастырская конгрегация Машкевора и рукописное
наследие скриптория (XII–XIV вв.) 55

АЙКАЗУН АЛВРЦЯН — Геноцид армян Трапезундского вилайета 74

БЕЛИНДА КУПЕР, ТАНЕР АКЧАМ — Турки, армяне
и понятие «G-Word». 96


СООБЩЕНИЯ

АРЦРУН АВАГЯН — Образ священнослужителя в рассказах Мндзури 119

МАРГАРИТА ХАЧАТРЯН — Национальные традиции и ритуалы
в произведениях Арама Айказя 134

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

АРМЕН ОВАКИМЯН — Преступления геноцида не имеют срока давности . . 150



CONTENTS

While waiting for Metsatounian: *as an editorial* 5

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, on the occasion of the Commemoration Day of the holy martyrs of the Armenian Genocide 11

SERMONS

Sermon delivered by **H.E. ARCHBISHOP VASKEN MIRZAKHANYAN** during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery 13

RELIGIOUS STUDIES

MEKHAK AYVAZYAN — Problem of perceiving the monastic way of life within the framework of activities of the Monastery of Narek 17

AREG VARDANYAN — Mkhitar Ghosh’s reflections on people’s original freedom and the formation of the class of masters in medieval Armenia 26

AVETIS KALASHYAN — His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, and the Diaspora Armenian School 36

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

HASMIK BADALYAN — The Mashkevor monastic congregation and the heritage of its scriptorium (12th–14th centuries) 55

HAYKAZUN ALVRTSYAN — Genocide of the Armenians of Trebizond Province . . . 74

BELINDA COOPER, TANER AKCAM — Turks, Armenians, and the “G-Word” . . . 96


ESSAYS

ARTSRUN AVAGYAN – Clergymen’s characters in the stories of Mndzuri 119

MARGARITA KHACHATRYAN – National traditions and rituals
in Aram Haigaz’s works 134

LITERARY REVIEW

ARMEN HOVAKIMYAN – Genocide crimes have no statute of limitations 150



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեծատունեանին սպասելիս. *իրրև խմբագրական*. 5

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ուղերձը
Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների յիշատակի օրուայ առիթով. 11

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

Տ. ՎԱԶԳԷՆ ԱՐՔ. ՄԻՐՉԱԽԱՆԵՆՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ
վանքում մատուցուած Ս. Պատարագին 13

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ՄԵԽԱԿ ԱՅՎԱԶԵԱՆ – Վանական ապրելակերպի ըմբռնման խնդիրը
Նարեկավանքի գործունէութեան ծիրում 17

ԱՐԵԳ ՎԱՐԴԱՆԵԱՆ – Մխիթար Գոշի խորհրդածութիւնները մարդկանց
նախնական ազատութեան մասին եւ վարդապետաց դասի կայացումը
միջնադարեան Հայաստանում (*վարկած*) 26

ԱԲԵՏԻՍ ՔԱԼՇԵԱՆ – Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք
եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ սփիւռքահայ դպրոցը 36

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԱՍՄԻԿ ԲԱԴԱԼԵԱՆ – Մաշկեւորի վանական միաբանութիւնը
եւ ձեռագրական ժառանգութիւնը (ԺԲ.—ԺԴ. դդ.) 55

ՀԱՅՎԱԶՈՒՆ ԱԼՎՐՅԵԱՆ – Տրապիզոնի նահանգի հայութեան
ցեղասպանութիւնը 74

ԲԵԼԻՆԴԱ ՔՈՒՓԵՐ, ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄ – Թուրքերը, հայերը եւ «G-Word» հասկացութիւնը	96
--	----


ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱՐԾՐՈՒՆ ԱԲԱԳԵԱՆ – Կրօնաւորի կերպաւորումը Մնձուրու պատմուածքներում.	119
--	-----

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԽԱՉԱՏՐԵԱՆ – Ազգային աւանդոյթներն ու ծէսերը Արամ Հայկազի երկերում.	134
---	-----

ԳՐԱԽՕՍՈՒԹԻԻՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻԻՆ

ԱՐՄԷՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ – Յեղասպանութեան յանցագործութիւնները վաղեմութեան ժամկէտ չունեն	150
---	-----



ISSN 1829-4243
eISSN 2953-7843

Հրատարակում է
Գէորգեան հոգևոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխատրույթեամբ եւ որոշմամբ

Հրատարակչական բաժնի տնօրէն՝
Տ. Արարատ քինյ. Պօղոսեան

Իմբրագրութեան հասցէն՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱԴԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com
Հեռ. (+374-10) 517-276

Ստորագրում է տպագրութեան՝ 20.05.2024 թ.



ԻՆՅՐ ԼԹՈՒ ԽՈՒԲ
ԷՋՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ